

ՈՍՏԱՅՆ 6

ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐ

Վրէժ-Արժէշ

Մինչքրիստոս
2017

Ժամադրավայրը մեր երջանկության, էջ 3

Հայաստանեան հանդիպումներ, էջ 61

Դարձեալ եւ միշտ Հայաստան, էջ 90

Հայաստանեան խճանկար – 2009, էջ 167

*Խորին շնորհակալութիւններս բժ. Արմենակ Եղիայեանին՝ հայերէնի մերօրեայ
նաստիկանապետին, լեզուական խտտորումներս նուագագոյնի իջեցնելուն համար:*

Առաջին էջին՝ Քասախի կիրճը, 2005

ԺԱՄԱԴՐԱՎԱՅԻՆ ՄԵՐ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ

Ես տեսայ ծովաշարժը



Ծիծեռնակաբերդ, 2005 ապրիլ 24

2005 ապրիլի 24-ը կեանքիս ամենէն անմոռանալի օրը դարձաւ. իսկ անոր նախորդող օրերէն սկսեալ իրականացաւ հայկական ծովաշարժը (որուն մղձաւանջը կ'ապրէր թշնամին), որ շարունակուեցաւ անկէ ետք եւս, եւ որուն արձագանգները լսուեցան աշխարհի չորս ծագերէն: Եւ պէտք է լսուին դեռ երկար ժամանակ:

Ես ալ մէկն էի այն հարիւր-հազարաւորներէն, որոնք բարձրացան Ծիծեռնակաբերդի յուշարձան եւ ծաղիկ մը դրին անմար կրակին շուրջ: Երեկոյեան ծաղիկներու դեզի բարձրութիւնը անցած էր արդէն մարդու հասակը, իսկ երթը կը շարունակուէր...

Այդ երթը սկսեր էր ուրբաթ կէսօրէ ետք, պահանջատիրական ուխտագնացութեամբ, շարունակուէր էր շաբաթ երեկոյ՝ երիտասարդական ջահերթով, եւ կէս գիշերէն ետք՝ երաժշտական յատուկ համերգին յաջորդելով, վերսկսեր կիրակի, 24 ապրիլի առաւօտեան կանուխ ժամերուն եւ մինչեւ ուշ գիշեր տակաւին վերջ չէր գտեր:

Ծովաշարժը, սակայն, միայն Ծիծեռնակաբերդի մէջ չէր: Ամբողջ Երեւանը Մեծ Եղեռնի 90-ամեակի ոգեկոչման մթնոլորտին մէջն էր՝ փողոցներուն վերեւ կախուած ցուցանակներով, պաստառներով, պատերուն փակցուած որմագրերով, գեղարուեստական տասնեակ ու տասնեակ միջոցառումներով, տակաւին երկօրեայ գիտաժողովով, որուն կը մասնակցէին ոչ միայն հայրենի ու սփիւռքահայ մասնագէտներ, ոչ միայն բազմաթիւ երկիրներէ ժամանած պատմաբաններ եւ քաղաքական դէմքեր, այլեւ լուսամիտ թուրք անձնաւորութիւններ, որոնց ելոյթները քաջալերական նախաքայլերը կրնան հանդիսանալ իրենց երկրի դէպի քաղաքակիրթ աշխարհ կողմնորոշման...

Ամբողջ հայրենի գրաւոր մամուլը, այլեւ մանաւանդ բանաւոր մամուլը՝ իր այլազան կայաններով, օրեր շարունակ անդրադարձան ու կ'անդրադառնան Մեծ եղեռնին: Տեսակցութիւններ, վաւերագրական նիւթեր, քննարկումներ ու մանաւանդ արձագանգները տարբեր երկիրներու մէջ եւս տեղի ունեցող իրադարձութիւններուն:

Եւ տակաւին համացանցը, որուն վրայ պիտի գտնեմ միջազգային մամուլի ուշագրաւ արտայայտութիւնները, պիտի գտնեմ մանաւանդ Ապրիլ 24-ի օրը արձակուած կայքէջը՝ www.twentyvoices.com, նուիրուած Մեծ եղեռնէն վերապրողներու վկայութիւններուն՝ իրենց բնակավայրերու վերաբերեալ ազգագրական, պատմական, մշակութային

տեղեկություններով: Կայքէջ մը, որուն երկարամեայ պատրաստութեան ականատեսն էի եղած՝ որպէս պատրաստողին հայրը...

Կը դժուարանամ այս բոլորը այսքան կարճ ժամանակի ընթացքին ընկալելու եւ ընթերցողին հաղորդելու՝ ընդունելի ձեւի մը մէջ: Այդ պատճառաւ ալ առայժմ այս կարճ նամակը միայն՝ ցնոր գրութիւն:

Երեւան, 26 ապրիլ 2005

Մենք՝ ինչպէս որ ենք

Հիմա արդէն Մոնթրէալ ենք: Երկու շաբաթը անցաւ երազի պէս, ու ես արտագաղթածի նման կը զգամ հոս:

Հոն՝ ուխտագնաց, բայց երբեք զբօսաշրջիկ, հակառակ վզէս կախուած լուսանկարչական գործիքին, որ երբեմն նաեւ գրպանս կը դնէի՝ ճիշտ այդ տպաւորութիւնը չձգելու համար: Հոն՝ տեղաբնիկ, հակառակ արեւմտահայերէնին, որմէ կը փորձէի չբաժնուիլ երբեք՝ դիմադրելով այնքա՛ն հեշտութեամբ կարգ մը բառեր արեւելահայերէնով փոխարինելու փորձութեան:

Ինքզինք այդպէս հարագատ հայաստանցի զգալուն մեծապէս պիտի նպաստէր անշուշտ այն իրողութիւնը, որ իջեւանեցինք ընկերոջ մը բնակարանը, եւ ոչ՝ հետզհետէ աւելի ու աւելի շքեղացող պանդոկներէն մէկն ու մէկը: Տնեցի դարձանք Երեւան ժամանած առաջին վայրկեանէն: Տնեցի, միաժամանակ թիրախը տանտիրոջ տեւական մշտումին՝ «ե՞րբ պիտի գաս ու հոս հաստատուիս վերջնականապէս...»:

Իրենք՝ Ատգէն ու Յասմիկ Արմենեանները այդպիսի որոշում տուին 12-13 տարի առաջ, նորանկախ Հայաստանի բառացիօրէն ամենէն մութ օրերուն, եւ դիմացան, եւ դիմացան այնքան, որ միայն ստիպողաբար եւ կարճ ժամկետերով կու գան Գանատա՝ իրենց զուակները եւ հարագատները տեսնելու:

Ու կը մտածեմ:

Մինչեւ անկախութիւն բացատրելի էին վարանումները, արդարանալի նոյնիսկ, բայց անկախութենէն ասդի՞ն:

Հայութիւն, հայապահպանում, Հայ դատ... Եկուր հո՛ւ գործէ, ալ ի՞նչ կընես դուրսը,– դարձեալ Ատգէնն է գրգռողը՝ ժպիտը, այդ հեզնական ժպիտը դեմքին:

Ու կը մտածեմ:

Այսօր հողին, հայրենիքին հետ առնչութեանդ աստիճանը չէ՞, ի վերջոյ, որ կը սահմանէ հայութիւնդ, հայութեան՝ ն հետ առնչութիւնդ. որքան կապուած ես առաջինին, այնքան կապուած ես երկրորդին:

Չեմ ուզեր արուեստական կամ բռնագրօսիկ դասակարգումներ կատարել, ջոկել իրարմէ աւելի լաւ կամ նուազ լաւ հայերը, սակայն գայթակղութիւնը մեծ է, ու չեմ կրնար չտեսնել հետեւեալ ստորաբաժանումները, որոնք առաւել կամ նուազ չափով կրնային կիրարկուիլ բոլոր ժամանակներուն, եթէ պահ մը անտեսենք առարկայական ազդակները:

Այսպէս, հայրենաբնակ հայերուն առաջին եւ հայագոյն տեսակը անոնք են, որոնք ուխտած են երբեք չհեռանալ հայրենի հողէն: Անոնք են, որ հայրենի հողը կը պահեն, եւ վստահ եմ, որ անոնք են, որ առաջինը զենք կը վերցնեն պաշտպանելու համար զայն: Այդպիսի հայ մըն է ժողովրդական արուեստագէտ Մահակ Մահակեանը, որուն հանդիպեր եմ 1981-ին, Մոնթրէալի մէջ կայացած հայաստանեան ցուցահանդէսին, որուն մէջ ինք

փայտէ գլանիկներու վրայ հայկական տարագով (եւ եռագոյն) պուպրիկներ կը նկարէր: Երբ մտերմացանք ու խօսք եղաւ արտագաղթի մասին, որ այն օրերէն արդէն ծայր տուած էր մեր երկրէն, Սահակ պատկերաւոր կերպով խօսեցաւ. «Իմ ոտքերս խորունկ խրուած են մեր հողին մէջ»,– ըսաւ ան: Երրորդ անգամն է Հայաստան կերթամ, տակաւին չյաջողեցայ զինք գտնել, թէեւ այս անգամ գրեթէ պիտի ըլլար կարելի, եթէ քանի մը օր եւս մնայի հոն:

Կան նաեւ հայեր, որոնք հայրենի հողէն հեռանալու մասին չեն կրնար մտածել, պարզապէս անոր համար, որ ծայրագոյն աղքատութեան մէջ կապրին եւ որեւէ միջոց չունին իրենց գիւղէն կամ թաղէն քովի գիւղը կամ թաղամասը երթալու... Ափսոս, քիչ չէ նմաններուն թիւը: Անոնց կրնաս հանդիպիլ քիչ մը ամեն տեղ, մանաւանդ եկեղեցիներուն, թանգարաններուն եւ ճաշարաններուն կամ հանդիսասարահներուն առջեւ. մուրալու դիրքին մէջ... Կրկնապէ՛ս ափսոս:

Կան ուրիշներ, որոնք միշտ տնտեսական պատճառներով մի քանի տարիով կը հեռանան Հայաստանէն՝ ցաւ ի սիրտ, պանդխտութեան կերթան Ռուսաստան, Եւրոպա կամ այլուր, բայց անպայման կը վերադառնան: Անոնց ընտանիքները կը մնան Հայաստան, ձեռով մը գրաւականը հանդիսանալով իրենց վերադարձին: Ահա անոնցմէ մէկն էր Յովիկ Պաղտասարեանը, ազնուական գիտնական մը, որ եկած էր Քեպէզ քաղաք, իր մասնակցութիւնն ալ բերաւ այնտեղ «Համազգային»-ի կորիզ մը ստեղծելու (կիսատ մնացած) աշխատանքին, բայց ի վերջոյ տուն դարձաւ, վստահաբար տնտեսապէս նեղ կացութեան մը մատնուելով այդ դարձէն ետք: Աւա դ, զինքն ալ չկրցայ տեսնել, քանի որ քանի մը օրով կը բացակայէր քաղաքէն:

Բայց կան նաեւ ուրիշներ՝ այլ գիտնականներ, բժիշկներ, արուեստագէտներ, դասախօսներ, որոնք կը մեկնին ու կը ստուարացնեն սփիւռքահայութեան զանգուածները, յաճախ հեռու մնալով սակայն անոնց կառոյցներէն: Անոնք կը մեկնին, որովհետեւ Հայաստան չի կրնար գործ հայթայթել, շուկայ տրամադրել իրենց կարողութիւններուն եւ տաղանդին: Անոնց մեծ մասը կապուած կը մնան հայրենիքին՝ զգացական եւ արինակցական կապերով, սակայն անգամ մը որ վարժուին արտասահմանի կեանքին, մանաւանդ (եւ ինչ-ինչ նկատումներով) երբ օտարներու հետ ամուսնանան՝ իրենց վերադարձը աւելի ու աւելի անհաւանական կը դառնայ:

Դեռ կան միւսները, որոնց համար հայրենիքը բնակավայր է միայն, ուր հաց հոն կաց, եւ երբոր մեկնին՝ անոնց աչքը ետեւ չի մնար, վերադառնալու մասին միտքէն իսկ չեն անցըներ եւ որքան հեռանան հայութենէն՝ այնքան երջանիկ կը զգան գուցէ իրենք զիրենք:

Ի հարկէ բնակչութեան մէկ փոքր տոկոսն ալ անոնք են, որոնք բոլոր զարտուղի ճանապարհները օգտագործելով անբաւ հարստութեան տէր կը դառնան, իրենք կորոշեն ե՛րբ անձրեւ պիտի ըլլայ, երբ՝ արեւ...

Իսկ սփիւռքահայէ՛րը...

Սփիւռքահա՛յն ալ, մանաւա՛նդ սփիւռքահայը կը բնորոշուի իբր հայ՝ Հայաստանի նկատմամբ իր դիրքորոշմամբ:

Եթէ մինչեւ անկախութիւն այդ բնորոշումը գլխաւորաբար կը կայանար համայնավար վարչակարգին նկատմամբ ընդդիմադիր կամ համախոհ կեցուածքներուն մէջ, այլեւ Հայրենիքին հանդէպ կարօտաբաղձութեան ու Հայաստանի իրականութեան նկատմամբ հետաքրքրութեան մէջ, անկախութենէն ասդին աւելի բազմաշերտ, միեւնոյն ատեն աւելի բնականոն յարաբերութիւններով է, որ ի յայտ կու գայ մեր առնչութիւնը մեր երկրին հետ:



Հաղարծին՝ բնութեան գիրկը

Ինչպէս հայրենահայուն, նոյնպէս սփիւոքահայուն պարագային ամենէն հայավայել կեցուածքը երթալ ու Հայաստան հաստատուիլն է, այսինքն՝ հրաժարիլ «սփիւոքահայ» պիտակէն, մէկ կողմ նետել զաղթականութեան ցուպը ու արմատ նետել հողին վրայ:

Այդպիսի որոշում են առեր ընկերներէս ոմանք, Գեորգն ու Սիլվան, Համբիկն ու Մարիան, Նիկոլն ու Զապէլը, Ռաֆֆին ու Լարան, Կիրոն, Լիզան, շատ ուրիշներ եւ ի հարկէ մեր հիւրընկալները՝ Ատզէնն ու

Յասմիկը: Իրենց այդ քայլը տեսաբար կը յուշէ մեզի՝ «ինչո՞ւ նոյնը չէք ըներ»:

Եւ ի հարկէ նման ճակատագրական որոշում տալ կամենալը չի բաւեր: Անհրաժեշտ է ապահով ըլլալ, որ վերադառնալով Հայրենիք՝ ապրուստդ պիտի կարենաս հոգալ, ինքզինք պահել եւ օգտակար գործ տեսնել եւ ոչ թէ անգործներու թիւը աւելցնել: Կայ նաեւ, ի հարկէ, կեանքիդ հանգստեան օրերը հոն անցընելու հեռանկարը, որ սակայն անձնական գոհացում մը տալէն անդին չանցնիր: Հայապահպանման տեսակէտէն կարելորը զուակներդ հոն տանիլ ու գաղթականութեանդ վերջ տալ է վերջնականապէս...

Դիրին գործադրելի որոշում մը չէ ատիկա, այդ պատճառաւ ալ ոմանք, գէթ առժամաբար, ընտրած են միջին ճամբան եւ երկրորդ բնակարան մը հաստատած Հայաստանի մէջ, ինչպէս Հրաչն ու Սեդան, Ֆրանսուան ու Սիւզին, Այդան եւ դեռ շատ-շատեր, որոնք յաճախ կ'երթան հոն, մէկ-երկու օրուան, մէկ-երկու շաբթուան կամ մէկ-երկու ամսուան համար... Անոնք կ'երթան, կը վերանորոգուին ու կը վերադառնան իրենց երկիրները՝ իրենց գործերուն, զուակներուն...

Ուրիշներ, եթէ տակաւին վերջնականապէս Հայաստան չեն հաստատուած, հոն գործ են ստեղծած, սակայն, ու այդ ճամբով ալ աւելի յաճախ կու գան Հայրենիք ու ի վերջոյ կը յանգին այն եզրակացութեան, որ օտարութեան մէջ ապրիլը անհեթեթ է. պէ՛ տք է հաստատուիլ հայրենի հողին վրայ: Նման տրամադրութիւններ կը սնուցէ, օրինակ, Ճէյմսը՝ ամերիկացիին այդ տղան, որ շատ յաջող գործարար մըն է, բայց իմաստ չի տեսներ տակաւին երկար դուրսը մնալուն մէջ. եւ յաջող գործառնութիւններ, ինք համոզուած է, որ կրնայ Հայաստանէն ալ կատարել եւ այցելութեան կարգով միայն արտասահման երթալ: Նոյնն է պարագան Յակոբին, որ տարիներէ ի վեր Հայաստան պատրաստած իր արտադրանքը կը սպառէ արտասահմանի մէջ:

Կան նաեւ անոնք, որոնք այս կամ այն ձեւով բարեգործութիւն կը կատարեն Հայաստանի մէջ. որք կը պահեն, եկեղեցի կը նորոգեն, գիւղերու կամ պատմական յուշարձաններու վերականգնման աշխատանքներուն կը մասնակցին, վերջապէս ձեւով մը կ'առնչուին Հայաստանի առօրեային: Անոնք եւս կրնան հետզհետէ աւելի կապուիլ ու ի վերջոյ որոշել վերջ տալ իրենց պանդուխտի իրավիճակին:

Կան տակաւին մեզի պէս հայեր, որոնք կ'այցելեն, կը խանդավառուին, բայց առարկայական կամ ենթակայական պատճառներով չեն համարձակիր ներգաղթել:

Բայց շատ են այն սփիւոքահայերը, որոնք Հայրենիքը կը սիրեն, մասնակցած են ու տակաւին պիտի մասնակցին անոր ի նպաստ կատարուող հանգանակութիւններուն, կը հետաքրքրուին անոր լուրերով, նոյնիսկ ամեն միջոցի կը դիմեն ստանալու համար

Հայաստանի Հ1 հեռուստակայանի կամ միւս կայաններու հեռարձակումները, բայց դեռ չեն այցելած, չեն զգացած սեփական հողին վրայ կանգնելու, քալելու այդ ջերմութիւնը:

Հապա անոնք, որոնք ոչ այցելած են, ոչ ալ որեւէ միտք ունին այցելելու...

Վերջապէս անոնք, որոնք ոչինչ կ'ուզեն իմանալ Հայաստանի, հայութեան մօտէն կամ հեռուէն առնչուող որեւէ բանի մասին...

Այո՛, այս բոլորն ենք մենք, զարմանալի, անհասկնալի ժողովուրդ մը, որ կ'ընդգրկէ մարդկային նկարագրի բոլոր տարբերակները, ծայրայեղ դրականէն ծայրայեղ բացասականը: Ի՞նչ կրնանք ընել, ա՛յս ենք մենք: Եւ իրաւունք ունի մեր զարմուհին՝ Անայիսը, որ հրա՛ջ ժողովուրդ ենք, կ'ըսէ, (ինքն ալ Հայաստան հաստատուելու երազը կը անուցէ):

Վերջին հաշուով, սակայն, բոլորս ալ, մեր բոլոր տարատեսակներով, հայ ենք, հայութեան մաս կը կազմենք եւ ուզենք կամ չուզենք, սիրենք կամ չսիրենք, մեր ժամադրավայրը, մեր միակ ժամադրավայրը Հայաստանն է, հոն ապրինք թէ դուրսը (եւ դեռ դուրսը ապրիլը յարաբերական է, քանի որ մեր էութեան խոր ծալքերուն մէջ մենք ֆիզիքապէ՛ս միայն դուրսն ենք):

Շատ ճիշտ կ'ըսէր Լեւոն Շանթ աստենին, «Համազգային»-ի հիմնադրութեան օրերուն: Հայրենիքն է, որ մեզ պիտի ձուլէ իրարու, անկարելորդ դարձնէ մեր գաղափարական, դաւանական, ընկերային թէ այլ տարբերութիւնները ու մեզմէ ազգը գոյացնէ:

Ի՛նչ բնական կը թուէր ինձի, երբ քալելով Երեւանի փողոցներուն մէջ յանկարծ Միտնիէն Վարուժը առջեւս կելլէր, Թորոնթոյէն՝ Անին կամ հիմա արդէն Հայաստան գործող Ռաֆֆին, կամ Ծիծեռնակաբերդի յաւիտենական կրակին շուրջ յարգանքի ծաղիկս դրած աստեն՝ քովիս դնողը Մոնթրէալի Ռաֆֆին էր, կամ Յակոբը:

Մեր երջանկութեան ժամադրավայրն է, իրօք, այս երկիրը, որ երրորդ անգամ ըլլալով կըրցայ այցելել, աւելի ճիշտ՝ երթալ ուխտի:

Ահա ուրեմն պիտի փորձեմ ձեզ ալ տանիլ հետս այդ ուխտագնացութեան:

Գաւաթը կիսով լեցո՛ւն է...

Հայաստան այցելողը, հայ ըլլայ թէ օտար, չի կրնար անտարբերութեամբ դիտել երկիրը, պարզ զբօսաշրջիկ մը հանդիսանալ ու վերադառնալ իր տունը: Յատկապէս հայր չի կրնար նման չեզոքութիւն ցուցաբերել, մանաւանդ եթէ առաջին անգամ չէ, որ Հայրենիք կու գայ (տակաւին ինքզինքս հոն զգալով է, որ չեմ գրեր՝ «կ'երթայ»...):

Զգացական մարդը, յատկապէս իր իսկ հայութեան նկատմամբ ստորակայութիւն չունեցող հայ մարդը, չի կրնար չխանդավառուիլ Հայաստանի ներկայ վիճակով:

Ճիշտ է, Խորհրդային Միութեան փլուզման հետեւանքները տակաւին չեն անհետացած: Երկրին տնտեսական վիճակը հեռու է նախանձելի ըլլալէ, եւ ճարտարարուեստի լճացումը, արտադրութեան պակասը համատարած անգործութեան կացութիւն մը ստեղծած են:



Արթարիճ

Այդ վիճակին մեջ մեծ է դժգոհողներու թիւը, որոնց մեջ կան նոյնիսկ հին, ստրկութեան օրերու կարօտող տառապողներ: Այդ մասին կրնանք մեր խօսակցութիւնը Արփիին հետ Արթարիճ ճաշարանին մեջ (ինչո՞ւ այս օտարամուտ Artbridge անունը՝ այնքան հաճելի, համակրելի այս գրատուն-ճաշարանին վրայ): Արփին դիտել կու տայ, որ նախաձեռնութեան տէր անհատներ անպայման կը յաջողին գործ մը գտնել, գործ մը իրե՛նք ստեղծել, նոյնիսկ եթէ իրենց մասնագիտութիւնը չէ ստիկա: Օրինակները քիչ չեն, եւ մենք գոնէ կը հանդիպինք թաքսիի վարորդներու, որոնցմէ մէկը երգիչ էր, Գագօ ջան կոչեցեալ, որ երաժշտութեան ընկերակցութեան բաժինը ժապաւէնով կը ձայնասփռէ, իսկ ինք կերգէ՝ թէկուզ 5-10 վայրկեան առնէ ճաշարանէն տուն դարձի ճամբան երեկոյեան:



Սակայն աւելի հիմնական դժգոհութիւնը այն կատաղի դրամատիրական համակարգին նկատմամբ է, համակարգ, որ թոյլ կու տայ չնչին փոքրամասնութեան մը իշխանապետութեան հաստատման: Այդ փոքրամասնութիւնը «մաֆիա» կոբակեն, ճիշտ կամ սխալ, որովհետեւ ամեն ինչ (ամեն շահաբեր նախաձեռնութիւն) իրենց ձեռքը կեդրոնացնելու եւ որեւէ մրցակցութիւն թոյլ չտալու ընթացքին մեջ են անոր անդամները:

Միւս դժգոհութիւնը համատարած կաշառակերութեան հանդէպ է, որուն արմատախլման համար անգօր կը մնան իշխանութիւնները, որոնք կամբաստանուին նաեւ անկէ օգտուելու մեղադրանքով: Խիստ է քննադատութիւնը յատկապէս մեր՝ Դաշնակցութեան նկատմամբ, որ մաս կը կազմէ կառավարութեան մը, որ այս ախտերէն չի կրնար ձերբազատել երկիրը:

– Ի՞նչ օգուտ իշխանութեան մաս կազմելով, եթէ բան մը չէք կրնար ընել. ուրեմն դո՛ւք ալ կ'օգտուիք կացութենէն,– կըսեն ինծի ամենայն համոզմամբ, ցոյց տալով, թէ որքան մեծ են իրենց ակնկալութիւնները «աւանդական» այս կուսակցութենէն, եւ որքան մեծ՝ նաեւ յուսախաբութիւնը, որ ոչինչ չի բարելաւուիր:

– Գէթ ձգեն, որ քանի մը տարի շունչ քաշենք, մի քիչ շտկենք մեր կոնակը, յետոյ սկսինք տուրք վճարել,– կըսէ Խաչատուրը, որ, իբր ճարտարագէտ գործ չգտնելով, թաքսիի սպասարկութիւն մըն է ստեղծած, անթերի՝ սպասարկութիւն մը, 7-8 ինքնաշարժներով, որոնց կէտը իրն է, կէսն ալ ուրիշներու կը պատկանի: Ինքն ալ, միւսներն ալ վարորդ են ու կապուած են իրենց ցանցին. կը հեռաձայնես, կ'ապսպրես կառքը, հինգ վայրկեանէն ետ կը հեռաձայնեն, կը յայտնեն, որ 5-7 վայրկեանէն կը հասնի կառքը: Երբ դրանդ առջեւ է՝ դարձեալ հեռաձայնով լուր կու տան: Ճամբայ ելած պահուն վարորդը կը կապուի կեդրոնին, կու տայ հասցէն, ուր պիտի տանի յաճախորդը եւ դիմացի կողմէն կը ստանայ «բարի երթ» մաղթանքը: Հաճելի զգացում մը կը պատէ քեզ. թէ՛ մտերմական ոճը, թէ՛ հայերէնը հարազատութիւն մը կը ստեղծեն:

– Դժգոհ չեմ, դէպի լաւն ենք ընթանում, բայց շատ դանդաղ,– կ'աւելցնէ Խաչատուր:

Ուրիշներ այնքան ուրախ չեն: Վազգէնը, օրինակ, ինքն ալ վարորդ է, սակայն պաշտօնեալ է, ու կաշխատի... 24 ժամ: Չեմ հաւատար ականջիս:

– Բայց, – կըսեմ,– կենթադրեմ որ մէկ օր կաշխատիս, մէկ օր հանգիստ կընես, ուրիշ մէկը կը վարէ ինքնաշարժը: Չէ՞ք կրնար 12 ժամ հերթով աշխատիլ:

Կը բացատրէ, որ գիշերը շատ յաճախորդ չըլլար, ուստի ռեւէ մէկը չուզէր գիշերուան հերթը ընել. այս ձեւով երկուքով թէ՛ բանուկ ժամերը եւ թէ՛ մեռեալ ժամերը կընեն: Արդա՛ր է, բայց... սպառի չ:

Դիւրին գործ չէ թաքսի – կամ պարզապէս ինքնաշարժ – քշելը Հայաստանի մէջ. բացի Երեւանի կարգ մը գլխաւոր պողոտաներէն ու փողոցներէն՝ մնացեալ ճամբաներէն շատեր, քաղաքին մէջ թէ քաղաքներուն միջեւ, խղճալի վիճակի մէջ են, եւ Մոնթրէալը դիւրաւ իր տեղը կընայ Երեւանին զիջիլ որպէս փոսառատ քաղաք: Ատգէնը՝ մեր հիւրընկալը, շատ կարեւորութիւն չի տար իր Այգեճոր փողոցի բազում փոսերուն, ու իր հետ ճամբայ կտրողը պատրաստ պէտք է ըլլայ անակնկալ «վերիվայրում»ներու, սակայն թաքսիի վարորդները շատ զգոյշ են ու օձապտոյտ գալարումներով կը վարեն՝ թէ՛ յաճախորդներուն անհաճոյ ցնցումներ խնայելու, թէ՛ ալ մանաւանդ, կենթադրեմ, ինքնաշարժներուն երկարակեցութիւնը ապահովելու համար:

– Գողցա՛ն, գրպաննին դրին նուիրատուութիւնները, իրե՛նք հարստացան, փողոցները «էսէնց» մնացին, – կը բացատրէ երրորդ վարորդ մը՝ Ստեփանը: Խօսքը կը վերաբերի Մփիւռքէն, յատկապէս Լինսի հիմնարկէն եկած գումարներուն: Ճի՛շտ է, թէ՛ սխալ, – Աստուած գիտէ, սակայն դժբախտաբար ա՛յդ է տպաւորութիւնը, որ իշխանութիւնները կը թողուն ժողովուրդին վրայ:

Դժգոհութիւնները այդքանով չեն վերջանար:

– Գողե՛ր, աւագակնէ՛ր են աթոռներուն վրայ նստողները, – կը կրկնէ ընկերս տեսաբար: – Անընդունելի է յատկապէս կրթական ու առողջապահութեան մարզերուն մէջ տիրող անիշխանական վիճակը, կաշառակերութիւնը: Ահա, դաշնակցականներն ալ բան չըրին, ո՛ր է ձեր ընկերվարութիւնը, աղքատին իրաւունքներու պաշտպանութիւնը, – կաւելցնէ ան:

– Մարդիկ ստիպուած են գումարներ մուծել՝ ձրի ուսումէն, ձրի բժշկական խնամքէն օգտուելու համար: Կրցողը կու տայ, բայց չկրցո՞ղը, որ մեծամասնութիւն կը կազմէ...


Ոմանք կը մուրան: Սա՛ ամենէն անհանգստացնող, նոյնիսկ ընդվզեցնող երեւոյթն է:

Գլխաւոր հրապարակին վրայ ենք, Արմենիա-Մարիոթ պանդոկէն ոչ շատ հեռու:

Անուշիկ, փոքրիկ աղջնակ մը կը մօտենայ կնոջս ու հաճելի խօսակցութիւն մը կը սկսի: «Ես շատ կը սիրեմ քո օդերը», կամ նման բան մը կըսէ, մինչ որոշ տարիքի կին մը կը հետեւի քիչ մը հեռուէն: Ես մտիկ կընեմ քանի մը քայլ անդին: Օուղակ մըն է, որ կը լարուի կարծես, ու կը փորձեն Նազիկին զգացումներուն հետ խաղալ՝ իրմէ բան մը փրցնելու համար:

– Վաղը եթէ գաս՝ քեզի բան մը կու տամ, – կըսէ կինս, ու կը հեռանանք: Գիտեմ, հետը մանուկներու փոքրիկ նուէրներ բերած է, բայց կանդրադառնամ, որ կազմակերպուած դրամշորթութեան արար մըն է:

Նման երեւոյթներու կը հանդիպինք այլուր: Սեւանայ թերակղզիին վրայ, զոյգ վանքերուն մօտակայքը, վեր տանող սանդուխներու ստորոտը տարեց կին մը նստած է. քեզի աւետարան պիտի կարդայ՝ ողորմութեան փոխարէն. «կարդալիք» բաժինն ալ յատուկ ընտրուած է՝ աղքատներուն



Էջմիածին

օգնելու վերաբերեալ (եթէ բացած էջերուն աչք մը նետես, կանդորադառնաս, որ «կարդացած»ը, որ գոց սորված է, կապ չունի այդ էջերուն վրայ գրուածին հետ...):

Անխտիր բոլոր «գործող» եկեղեցիներուն առջեւ ու մէջ նման մուրացկաններ կը գործեն, ոմանք իսկապէս ցնցոտիներու մէջ, ուրիշներ աւելի վայելուչ հագուած, սակայն նոյն այդ գթաշարժ վիճակը որդեգրած: Ծերերէն աւելի նեղացուցիչը երիտասարդներն են:



Էջմիածին – Գեորգեան ճեմարանի պատմական շէնքը

Գեղարդի մուտքին, Խոր վիրապի մուտքին խուճկով կեցած են, ձեռքին՝ աղաւնիներ: Կուզեն քեզի համար թոցնել, փոխարէնը բան մը ստանալ: Կըսենք շնորհակալ ենք, չենք ուզեր. կը պնդեն:

– Ինչո՞ւ հոս պարապ-պարապ կը դեգերիք, ինչո՞ւ չէք աշխատիր,– հարց կու տայ Նազիկը:

– Հիմա ոչ ցանքի, ոչ քաղի ատենն է, մեզի պէտք չունին,– կը բացատրէ տղոցմէ մէկը:

Սակայն անոնցմէ ռեւէ մէկը այնքան կոշտ ու անկիրթ չգտնուեցաւ, որքան գիշեր մը Աբովեանի վրայ մեզ կեցուցած երիտասարդը:

– Ողորմութիւն չէ ուզածս, միայն ինձմէ բան մը գնեցէք,– ըսաւ:

– Շնորհակալ ենք, չենք ուզեր,– ըսինք:

Պնդեց, եւ ի վերջոյ տեսնելով որ տեղի չենք տար, «Աստուած ալ ձեզի ցոյց տայ...» մը նետեց ու գետինը թքնելով գլուխը առաւ ու գնաց: Մենք իրարու երես նայեցանք:

Ի հարկէ, ասիկա ըսել չէ, որ բոլոր մուրացկանները վկայեալ գողեր են: Մեծ է իրապէս ողորմելի վիճակի մէջ գտնուողներու թիւը:

Խօսելով գողերու մասին, հայաստանեան կեցութեան մեր օրերուն մէկ միջադէպ կայ, որ պիտի յիշենք խնդալով, քանի որ եթէ չխնդանք՝ պէտք է գայրանանք: «Բարեկամութիւն» համոյթի պարի ելոյթն էր, չորս տոմս գներ էի, բայց երեքով ներկայացանք Սպենդիարեանի անուան օպերայի եւ Բալետի սրահի մուտքին, ուստի այնտեղ կեցող քննիչ տիկինին ետ պիտի տայի աւելորդ տոմսը, ինչպէս նախապէս համաձայներ էի: Ճիշտ այդ պահուն, երբ դրան շեմին կը գտնուէինք, ներս խուժող բազմութեան հետ, միջին տարիքի, միջին հասակի կին մը հարց տուաւ. «Արդեօ՞ք աւելորդ տոմս մը ունիք»: «Այո»,– ըսի, եւ իրեն երկարեցի չորրորդ տոմսը: Ան առաւ ու անհետացաւ: Միամտօրէն մտածեցի, որ ո՞ւր պիտի անհետանայ, պիտի գայ, ու ճիշտ մեր քով նստի, այն ատեն կը վճարէ փոխարժէքը:

– Գողցաւ, փախաւ, պիտի երթայ ծախէ, կամ ինք էտ պիտի տայ այդ տոմսը ու դրամը գրպանէ,– դիտել տուաւ Նազիկը:

– Ի՛նչ համարձակութիւն,– ցնցուած՝ իր զարմանքը յայտնեց Արփի:

Մեր քովի աթոռը պարապ մնաց ելոյթին ընթացքին:

Անհաճոյ տպաւորութիւններու շարանը կրնայ դեռ երկարիլ: Յատկապէս Երեւանէն դուրս, նոյնիսկ կեղոռնէն դուրս, շրջակայ թաղամասերու ընդհանուր պատկերը տխուր է, բնակարանները շատ հին են, չեն խնամուած, չեն նորոգուած, նորերը չեն կառուցուած:

Այս բոլորը տխուր են ոչ թե որովհետեւ մեր վրայ ժխտական տպաւորութիւն կը ձգեն, այլ որովհետեւ կը դժուարացնեն Հայաստանի բնակիչներուն կեանքը:

Խորհրդային Միութիւնը կը յաւակնէր չափուիլ Արեւմուտքի հետ: Մինչեւ փլուզումը կեղծ պատկեր մը կը ներկայացնէր աշխարհին առջեւ. եւ ամեն միջոցի կը դիմէր՝ իր ճիշտ դէմքը պահելու, «անվստահելի» նկատուող այցելուներուն աչքերէն աննկատ մնալու համար:

Փլաւ, եւ իր աւերակներէն ճողոպրած երկիրներն ու ժողովուրդները հիմա մեծ դժուարութեամբ կը ջանան վերագտնել մարդկային քաղաքակրթութեան բնականոն ճանապարհը:

Հայաստանն ալ այդ ճամբուն վրայ է: Անկասկած:

Գաւաթը կիսով չափ պարապ է, բայց կիսով չափ ալ՝ լեցո՛ւն:

Ճշտեմ, որ երկու շաբաթ Հայաստան գտնուելով՝ չեմ յաւակնիր յանկարծ հայաստանեան իրականութեան մասնագէտը ըլլալ ու հեղինակաւոր կարծիքներ յայտնել այս կամ երեւոյթին մասին: Նաեւ վերլուծումներ չէ, որ կը փորձեմ ընել:

Տպաւորութիւններ է, որ կ'արձանագրեմ, եւ այդ տպաւորութիւնները գունաւորուած են պահու իրականութեան գոյներով: Այդ պահը՝ Մեծ եղեռնի 90-ամեակն է ու անոր ոգեկոչման ստեղծած ընդհանուր ոգեւորիչ մթնոլորտը: Այդ մթնոլորտին մէջ՝ խօսիլ ժխտական երեւոյթներու մասին միայն, պարզապէս սխալ կ'ըլլայ:

Միւս կողմէ՝ Հայրենիք այցելութիւն մը, մանաւանդ ուխտագնացութեան մը բնոյթով, այնքան ոգեւորիչ է ու սնուցիչ, որ կրնաս միայն դրական երեւոյթները վեր առնել ու անտեսել բացասականները. այդ պարագային ալ դուն ինքդ սխալ տպաւորութիւն կը թողուս:

Այս ըսելէ ետք, սակայն, կարելի չէ չխօսիլ գաւաթին լեցուն կէսին մասին: Եւ գաւաթը իրապէս լեցուն է ու լեցուելու ալ վրայ... իսկ ասոր կ'անդրադառնաս՝ օղակայան հասնելու վայրկեանէն սկսեալ:

Արդարեւ, որո՞ւ մտքէն կ'անցնէր, այդքան հեզասահ կերպով երկիր պիտի մտնէինք: Նախորդ անգամները՝ 1991-ին ու 1994-ին, որքա՛ն տարբեր էր, մանաւանդ 1991-ին, երբ ժամէ ր կ'առնէր օդանաւէն իջնելն ու օղակայանէն դուրս գալը: Այս անգամ, մուտքի վիզան ալ տեղույն վրայ առնելով, ամեն ինչ ընթացաւ առանց ժամակորուստի, մեզի հետ գործ ունեցող բոլոր պաշտօնեաները սիրալիք, հաճոյակատար կերպով վարուեցան, ու արագ ստացանք մեր ճամպրուկները ու միացանք առտուան այդ կանուխ պահուն մեզի դիմաւորելու եկած մեր ընկերոջ՝ Ատգէնին:

Այս վերաբերմունքը պիտի տեսնենք մեր Հայաստան գտնուած ամբողջ ժամանակաշրջանին: Գիտաժողովին կամ համաժողովին, ինչպէս իրենք գայն որակեր էին, շրջապատուած պիտի ըլլանք երիտասարդներով, միշտ ժպտադէմ, որոնք, Արտգործ նախարարութեան թէ Արմենիա-Մարիոթ պանդոկի ծառայողներ՝ տեւաբար մեզի օգնելու, մեզի օգտակար ըլլալու տրամադրութեան մէջ էին: Կարծես հրահանգ տրուած ըլլար ի վերուստ, որ նման դրական վերաբերմունք ցոյց տան: Եթէ այդպէս է՝ իրապէս յաջողեր էին:

Սակայն, միայն հոն չէ, որ այդպէս էր: Ամենուրեք, բոլոր ճաշարանները, թանգարանները, այլ հաստատութիւնները, նոյն երեւոյթին ականատեսը կ'ըլլայինք: Ժողովրդական արուեստի թանգարանը փակուելու վրայ էր, կրնամ ըսել փակուած էր՝ երբոր հասանք. սիրով բացին շաբաթ յետմիջօրէին ու մեզի ալ ընկերացան՝ բացատրելու եւ այնտեղ հաւաքուած հարուստ ժառանգութիւնը մեզի ներկայացնելու համար:



Իսկ ամենէն աւելի յատկանշականը այն էր, որ ժպի՛տ կար երիտասարդութեան երեսները: Փողոցը թեւանցուկ քալող, նոյնիսկ անհոգ կերպով արեւածաղիկի կուտ չըթող ու գետինը աղտոտող այդ տղաքը լաւ տրամադրութեան մէջ էին:

Համալսարանը, լրագրութեան երրորդ տարուան ուսանող-ուսանողուհիները, որոնց հետ պարապելու առիթ ընծայեց ինծի լսարանի տնօրէնը՝ Գառնիկ Անանեան (ինչպէս ըրեր էր նախորդ անգամ այցելութեանս, 11 տարի առաջ), նոյնպէս ժպտերես ու խանդավառ էին:

Նոյն այդ երիտասարդութիւնն էր, որ ընդառաջեց կուսակցութեանս հրաւերին ու մասնակցեցաւ «պահանջատիրական ուխտագնացութեան» (ինչպէս որակուած էր ուրբաթ երեկոյեան Ծիծեռնակաբերդ հաւաքն ու երթը), մասնակցեցաւ մանաւանդ ջահերով երթին՝ շաբաթ երեկոյ, եւ բո՛ւն քայլարշաւին, կիրակի, 24 ապրիլին: Ժպիտ կրցանք

տեսնել նոյնիսկ... ոստիկանութեան տարագ հագած երիտասարդներու երեսներուն, երիտասարդներ, որոնք ամենայն լրջութեամբ կը հսկէին այդ պատմական օրուան կարգ ու կանոնին:

Դարձեալ շեշտեմ, սխալ չհասկցուիմ: Այս դրական տրամադրութիւնները տեսանք՝ հակառակ երկրի տնտեսական ծանր վիճակին, հակառակ համատարած անգործութեան, հակառակ իր կամքը ամեն կերպ պարտադրող փոքրամասնութեան մը առկայութեան: Հաշտուած վիճա՛կ մը, արդեօք. չեմ կարծեր, չեմ յուսար...

Շատ ակնահաճոյ է նաեւ մեր աղջիկներուն հագուած-շքուածը. Երեւանի մէջ, մանաւանդ Երեւանի կեդրոնին մէջ դժուար թէ հանդիպիս անվայելուչ հագուած երիտասարդուհիի մը: Նոյնը՝ մանուկներուն եւ պատանիներուն պարագային: Տղաքը նուազ բժախնդիք կը թուին ըլլալ, թէեւ՝ ոչ անվայելուչ:

Այս երեւոյթին կը հակադրուի այլ աղաղակող անյարիք երեւոյթ մը. ատիկա՝ չափազանց շքեղ ինքնաշարժներու առկայութիւնն է Երեւանի փողոցներուն մէջ: Մերսետես-Պենզեր, Գատիլագներ, Լեքսիւսներ եւ տակաւին Համերներ խորթ կը թուին ինծի այնտեղ՝ շատ աւելի համեստ Լատաներուն եւ Փէօժններուն կողքին, ինչպէս խորթ պիտի թուին՝ եթէ մեր փողոցը, մեր տուններուն առջեւ երեւին, անհամապատասխան՝ թաղին ընդհանուր տնտեսական մակարդակին:

– Գողեր, արիկաներ,– կը մոմոյ ընկերս, ամեն անգամ որ այդ շքեղագոյն ինքնաշարժները կը տեսնէ: Իսկ վերջին անգամ, երբ սենեկային նուագախումբի համերգասրահէն դուրս կու գայինք, մայթէն վեր, սանդուխներէն ալ վեր մագլցած (եւ անիւներու հետքերը յստակ թողած իր ետին)՝ մեր առջեւ կանգնած էր հսկայ Համեր մը:

– Անպատկա՛ռ,– նետեց Ատգէն,– տե՛ս, օրէնքը իրենց համար չէ, ամեն բան ընելու իրաւունք կու տան իրենք իրենց:

- Ոստիկանը չի՞ տուգաներ:
- Ո՞ր ոստիկանը կը համարձակի նման բան ընել:

Այդ ամենով հանդերձ՝ Երեւանը կը ժպտի:

Այդ ժպիտը կերելի ոչ միայն իր նոր սերունդի երեսին, ինչպէս ըսի, այլև փողոցներուն իսկ վրայ: Իսկ գարունը իր կանաչ սաղարթներով ա՛լ աւելի փայլք մը կու տայ այդ ժպիտին:

Երեւանի կեդրոնը շինարարական մեծ դաշտ մըն է: Ամենուրեք կռունկներ, բարձրաշարկ շէնքերու երկաթ-պեթոնէ կմախքներ (շատ մի՛ հարցնէք պեթոնի աւարտուն երեսին մասին, պիտի ծածկուի, պիտի չտեսնէք...):

Շինութեան մէջ է կեդրոնական պողոտան, որ Հանրապետութեան հրապարակը պիտի միացնէ Ազատութեան (Օպերայի) հրապարակին, եւ կոչուի «Հիւսիսային պողոտայ»: Կարդացէր էի, որ սա չիրագործուած մասն է այն հի՛ն օրերէն մնացած Թամանեանի մեծ նախագիծին: Այս պողոտան ուղիղ գծով Մեծն Տիգրան պողոտան պիտի հասցնէ մինչև Կասկատ, որու վերելը Յաղթանակի այգին է, ցորենի հասկով յուշարձանը եւ անոր առջև դարատափը, որմէ ամբողջ Երեւանը կը բացուի առջեւդ, դիմացդ՝ Արարատը, եւ աջիդ՝ Արագածը:

Հոս եւս նորոգութեան մէջ է, եթէ չեմ սխալիր Գաֆէսճեանի նուիրատուութեամբ, ու Կասկատի այդ գարիվար շէնքը պիտի վերածուի ապակիի թանգարանի: Հասկնալի չէ՛ ի՞նչ է կապը այդ կատուի հսկայ արձանին հետ, որ անոր ստորոտը, փոքր հրապարակի ձախին կը հսկէ անցորդներուն վրայ: Ուրիշներ առիւծներ կը դնէին այդ նպատակով...

Միշտ չէ, որ նոր շինութիւնները գոհունակութիւն կը ստեղծեն, մանաւանդ երբ կ'ապաստեփականաշնորհուին ոմանց կալուածները՝ այդ նոր ճամբաներուն կամ շէնքերուն տեղ բանալու համար:

Սակայն շինարարութեան առկայութիւնը կենսունակութիւն մը կը պարգեւէ քաղաքին, որ լաւ նշան է, եւ յոյս կը ներշնչէ: Չէ՞ որ այստեղ՝ Քեպեգի մէջ, կըսենք՝ «երբ շինարարութիւնը [լաւ] կ'ընթանայ, ամեն ինչ [լաւ] կ'ընթանայ»:

Նոր շէնքերը, ինչպէս Երեւանի նոր քաղաքապետարանը, Հանրապետութեան հրապարակին հարաւ արեւմուտքը, Իտալիայի եւ Բելյուրի փողոցներուն միջև՝ Միասնիկեանի հրապարակին վրայ, նոր շունչ մը կը բերեն: Այս մէկը յաջողած է հայկական նկարագիր մըն ալ ունենալ: Ուրիշներ կը ներածեն հիւսիս-ամերիկեան տարրեր, ինչպէս ապակէ «վարագոյր-պատ»երը, որոնք հոս ու հոն սկսած են երելիլ: Լաւ է, որ այդպէս է, սակայն միշտ չէ, որ յաջողած են լուծումները:

Տակաւին այլ շէնքեր, ինչպէս շքեղ պանդոկներուն մեծ մասը (Արմենիա-Մարիոթը, Երեւան-Կոլտըն Թիւրիփը եւ այլն) հին շէնքեր են՝ ճաշակով վերանորոգուած: Պանդոկներէն գատ քիչ մը ամենուրեք ճաշարաններ եւ գիշերային ակումբներ հաստատուած են, նոյնպէս առկայ շէնքերու մէջ ընդհանրապէս, իւրաքանչիւրը իր ինքնուրոյն ոճով:

Սկսած է ծայր տալ համատիրութեան դրութիւնը: Կը նորոգուին բարձրաշարկ բնակելի շէնքեր, եւ իւրաքանչիւր յարկաբաժին կը դառնայ առանձին սեփականութիւն: Այդ





Արմենեաններուն պատշգամբ

յարկաբաժիններու գիները հետզհետէ կը բարձրանան եւ տեղացիներուն նուազ մատչելի կը դառնան: Կը կառուցուին նաեւ ամբողջովին նոր շէնքեր, որոնք ինամուտած, մաքուր մուտք ու աստիճանավանդակ ունին, վերելակ եւ այլն:

Նման յարկաբաժիններ ունին, ճաշակով ու ինքնատիպ մօտեցումներով յարդարուած, մեր ծանօթներէն շատեր, որոնք Սփիւռքէն եկած ու հոն հաստատուած են, կամ իրենց համար երկրորդ կայք մը ստեղծած են:

Ոմանք, Հրաչին պէս, նորոգած են շէնքի մուտքն ու աստիճանավանդակը, մինչեւ իրենց յարկն ու յարկաբաժինը, իրենց իսկ հաշուոյն, յուսալով որ վերելի յարկերու բնակիչներն ալ կը շարունակեն նորոգութիւնը... Սա հին՝ խորհրդային օրերէն մնացած երեւոյթ մըն է, որ անհրաժեշտ է սրբագրել. մարդիկ սեփական բնակարանները շատ լաւ վիճակի մէջ կը պահէին, կը պահեն, սակայն հասարակաց տարածքներով զբաղող չկար - պետութեա՛ն ն էին ատոնք: Հիմա այս մօտեցումը պիտի փոխուի անխուսափելիօրէն:

Ի հարկէ, շինարարական բոլոր ծրագիրները չէ, որ նոյնքան դրական տպաւորութիւն կը ստեղծեն: Օրինակ, երբ Օպերայի շէնքը եւ իր առջեւ Ազատութեան հրապարակը կը սկսին տեսողութենէ ծածկուիլ՝ այդ հրապարակը եզերող նախ միայարկ, այժմ արդէն երկյարկ ճաշարաններով, ասոնք անհանգստութեան մը, անախորժութեան մը պատճառ կը դառնան: Անդին՝ Վահագնի թաղամասը, թէեւ վայելուչ, տարօրինակ կը թուի հիւսիս-ամերիկեան իր մենատուններով եւ մեծատառ անգլերէն ցուցանակով, իսկ այդ թաղամասին դիմաց կը կառուցուի այլանդակ «պալատ» մը, որ աւելի պանդուկի կամ թանգարանի կը նմանի ու իր եւրոպական պարոք-ռոկոկօ եւ այլ ոճերու խառնուրդով՝ խոտոր կը համեմատի իր շրջապատին հետ: Ուրիշ հարց, թէ ինչո՞ւ անհատ մը նման հսկայ բնակարանի պէտք պիտի ունենայ... Անգամ մը եւս հարց կը ծագի մտքիս մէջ, թէ աղքատութեան եւ բարօրութեան այս հակադրութիւնները, իրարու կից թաղերու մէջ, արդե՞օ՞ք զրկեալներուն մէջ ժխտական տրամադրութիւններ չեն յառաջացներ:

Միւս կողմէ, սակայն, բոլոր շինարարութիւնները, ինչպէս ըսի, նշան են կենսունակութեան մը եւ առիթ են հայ շինարարներուն՝ նոր փորձառութիւն ձեռք ձգելու, հմտանալու իրենց ասպարէզին մէջ:

Երբ կ'այցելէի ճարտարապետութեան թանգարանը, մեծ ուրախութեամբ դիտեցի ինքնատիպ ցուցահանդէս մը, որ շինարարական վերջին իրականացումները կը պատկերացներ եւ այցելուներու քուէարկութեամբ մրցանակաբաշխութիւնը կը բացայայտէր: Արդարեւ, ցուցադրուած իրագործումները Ա., Բ., Գ. եւ այլ մրցանակներու արժանացած էին, ոչ թէ յատուկ իրաւարար մարմինի մը կողմէ, այլ ցուցահանդէսի այցելուներուն, որոնք իրենց նախասիրութիւններուն համաձայն դասեր էին այդ գործերը: Անոնք մեծ մասամբ պանդուկներ, ճաշարաններ եւ հանրային բնոյթի մի քանի շէնքեր էին:

Բայց գաւաթին կիսով լեցուն ըլլալը միայն այս երեւոյթներով չէ, որ աչքի կը զարնէ:

Գաւաթներուն լեցուն ըլլալը կը զգաս ամենէն աւելի... ճաշարաններուն մէջ:



Արմենիա-Մարիոթի առջևի դարատափին



«Մեր գիւղը» ազգագրական ճաշարանը...

Արդարեւ, բարացուցական է այս նոր ճաշարան-սրճարաններուն յայտնութիւնը: Քաղաքի կեդրոնը, բացօթեայ թէ գոցօթեայ սրճարան-ճաշարաններու ամբողջ շարք մը կայ: Որքա՛ն հաճելի է նստիլ Արմենիա-Մարիոթի առջև, մայթին վրայ տարածուած սրճարանը՝ կարմիր հովանոցներուն տակ, ու պարզապէս շուրջդ դիտել: Հանրապետութեան հրապարակը եռուզեռի մէջ է. ապրիլի վերջին շաբաթ օրը, մէկ ժամ դադար առինք այստեղ ու աւելի քան 25 հարսանեկան թափօրներու անցքը տեսանք. շակները զարնելով, ուրախ բացազանչութիւններով եկան ու անցան, եկան ու անցան: Մայիսին հարսանիք չեն ըներ եղեր – հի՛ն նախապաշարում մը, ուստի այդ վերջին օրը այս իմաստով շատ բանուկ կըլլայ: Ի հարկէ պսակներու այդքան մեծ թիւով առկայութիւնը, գոնէ մեր աչքին, չափազանց դրական երեւցաւ:

Այդտեղ նաեւ լաւագոյն անկիւնն է՝ ծանօթներու հանդիպելու համար: Հոն է, որ յանկարծ Աւստրալիայէն Վահէին կը հանդիպիս, Գանատայէն Անիին կամ Ռաֆֆիին, եւ կը զգաս Երեւանի, Հայաստանի իսկական ժամադրավայր ըլլալու հանգամանքը:

Նման բացօթեայ ճաշարաններ կամ սրճարաններ կան նաեւ Ազատութեան հրապարակին շուրջ, ուր կերթաս եւ զովացուցիչ մը կամ գարեջուր մը կ'առնես՝ մինչեւ համերգին սկսիլը: Պարզապէս հոն նստիլը, թէկուզ Երեւանի յաճախ ապականած օդը շնչելու համար՝ երանութիւն մը կը պարզելէ քեզի...

Կէսօրները կրնաս ոտքի վրայ հայկական «շաուրմա» մը ճաշակել ճիշտ այդ անունն ալ կրող ճաշարանին մէջ, կամ փիճֳծա մը առնել, հայկական՝ թէյով՝ Փիճֳծա տի Ռոմա ճաշարանին մէջ, որ արագ սպասարկութեան (fast food) վայր մըն է, սակայն հաճելի ու հիւրընկալ:

Շատ համով հայկական թէյ խմեցինք նաեւ Արթարիճ կաֆէն, որ հակառակ օտար անունին՝ հայութիւն կը բուրէ, եւ այդ՝ ոչ միայն ուրցի, անանուխի կամ ծիրանի անոյշ հոտերով: Պատերուն ի նչ-ինչ գովազդներ կան՝ ամբողջ Սփիւռքի տարածքին կատարուած կամ դեռ կատարուող ձեռնարկներու. մէկն ալ Մոնթրէալի Համազգայինի հայկական բացիկներու ցուցահանդէսինն էր, որուն ներկայ էինք եղած դէպի Հայաստան մեր ճամբորդութիւնը սկսելէ մէկ օր առաջ:

Այս ճաշարանը ինքնատիպ է նաեւ այլապէս. փողոցէն երբ կը մտնես՝ նախ գրատուն մը մտած կըլլաս. գիրքեր, յուշանուէրներ, նաեւ այդ հայկական համեմային թէյերու փոքրիկ տոպրակները՝ նուէր տրուելու չափ սիրուն տեսքով: Անկէ ետք է միայն, որ մուտք կը գործես սեղաններու բաժինը, որոնցմէ ոմանք չծխողներու վերապահուած են...

Այստեղ պատին տեսայ նաև այն խորհրդաւոր նայուածքով աղջկան դիմանկարը կրող գովազդը, որ մեր կուսակցութիւնը հրատարակած էր Մեծ եղեռնի 90-ամեակին առթիւ ու փակցուցած ամենուրեք՝ Երեւանի բոլոր կարեւոր փողոցներուն եւ շէնքերուն վրայ՝ ճանաչման հետ նաև վերականգնման պահանջքով:

Այդ ճաշարաններէն իւրաքանչիւրէն կը բաժնուիս իրե՛ն յատուկ յիշատակներով: Օրինակ՝ չես մոռնար «Ակումբ»ը, որուն խոհարարը նաև երգիչն էր այդ ճաշարանին կամ «Մեր գիւղը»՝ ամբողջովին զարդարուած գիւղական առարկաներով, հայկական նախշերով, ուր սպասարկողներն ալ հայկական տարագ կը կրեն, իսկ տոհմիկ նուագախումբը ազգային, ժողովրդական ու գուսանական երգերով կընկերակցի մեր ընթրիքին: «Կովկաս»ը վրացական համեղ ճաշեր կը հրամցնէ, «Լամոնիտ»ը հարազատ լիբանանեան սեղան կը շտկէ: Եւ այսպէս՝ իւրաքանչիւրը իր բարեմասնութիւններով: «Գետափ»ը Հրազդանի ափին իր դիրքը կը հրամցնէ քեզի՝ ամբողջովին կանաչազարդ ու գովասուն: Իսկ Արմենիա-Մարիոթի իտալական ճաշարանը իր լուրջ մթնոլորտով ու մանաւանդ իտալական երգերու հայ մեկնաբանով վերջին գիշերուան լաւագոյն նուէրը եղաւ մեզի՝ մեր նախկին մոնթրէալաբնակ, հիմա արդէն հարազատ երեւանցի ընկերուհիին՝ Լիզային կողմէ: Այս բոլոր տեղերը հասարակաց պատկեր մը կը պարզեն. ամենուրեք սպասարկողները, աշխատողները ժպիտով կը դիմաւորեն քեզ, համբերութեամբ կը լսեն ապսպրանքդ, կը պատասխանեն հարցումներուդ: Բոլորն ալ երիտասարդ տղաք ու աղջիկներ:

Կը թուի թէ վերջնական բեկում մը կայ հին ապրելակերպին ու սովորոյթներուն եւ նորին միջեւ: Երբ ներկայացանք համերգի տոմս գնելու, վաճառորդ տիկինը տակաւին չէր ժամանած, հակառակ որ կրպակին բացման ժամեն շուրջ 30 վայրկեան անցած էր արդէն:

– Ոմանց համար տակաւին դժուար է թօթափուիլ սովետական աւանդոյթներէն, – դիտել տուաւ երիտասարդ մը հեզնանքով:

Կան նաև այլ ընդհանրական յատկութիւններ – ճաշակով յարդարումը եւ մաքրութիւնը, մանաւանդ լուացարաններուն: Այսօր կարելի է անվարան հաստատել, որ ամբողջ երկիրը, ներառեալ Սփիւռքը, քանի որ յաճախ այս վերջինին օգնութեամբ՝ յանձնառու եղած են այս առնչութեամբ. կարծէք ազգային արժանապատուութեան հարց հանդիսացած է ձեռքազատիլ այն գարշահոտութենէն, որ խորհրդային օրերէն կու գար ու կը պծագցնէր այցելողը, հանրային վայրերէն մինչեւ... հայկական «աւիաուղիներ»-ու օդանաւերը: Հիմա ամենուրեք, մինչեւ Նորավանք ու մինչեւ Մուղնի, լուացարանները մաքուր են, վազող ջուր ունին ու տաք օդով չորացուցիչ: Կարեւորը այդ ամենը այդպէս պահելն է...

Գալով առաջին երեւոյթին՝ յարդարումին, Երեւանի մէջ այսօր կարելի է հանդիպիլ եւրոպական, մանաւանդ իտալական-ֆրանսական մակարդակով շտկուած, լուսավառուած վաճառատուներու (որոնք ոչ միայն տեղացիին, այլեւ յաճախ նաև զբօսաշրջիկին համար անմատչելի գիներ կը ցուցադրեն...), այլեւ ամերիկեան հասկացողութեամբ մթերքի խանութներու, ուրկէ այնքան հաճելի է գնում ընելը...

Նշեմ նաև գրատուները, Նորքը, Նոյան Տապանը եւ դեռ ուրիշներ, որոնք նոյնպէս հրապուրիչ կերպով վաճառման հանած են հայաստանեան հրատարակութիւնները:

Նորքի մօտ էր, որ գտայ Հայաստանի տեղանուններու բառարանի երեք վերջին հատորները՝ Գ., Դ. եւ Ե.: Տարիներէ՛ ի վեր կը սպասէի անոնց. առաջին երկուքը լոյս տեսած էին վերանկախացումէն առաջ, եւ նիւթականի պակասը այսքան ատեն ուշացուցած էր միւսներուն հրատարակութիւնը: Կերելի բարի սամարացի մը գտնուած է...

Այո, գաւաթը լեցուն է կիսով ու կը շարունակէ լեցուիլ...

«Մանրագոյն յանցանք, ծանրագոյն մարտահրաւեր»

Ա՛յս կարգախօսը եւ Մեծ Եղեռնի 90-ամեակի այնքան յաջող խորհրդանշանը (որ հաստ ծայրով մարքըրի մը մի քանի հարուածով գծուած յուշահամալիրը, անկէ բարձրացող հուրը եւ թուականը կը կրէ)՝ ամբողջ երկու օր դիտեցին «Միջազգային համաժողով»ի մասնակիցները, ապրիլ 20–21, երբ Արմենիա-Մարիոթ պանդոկի շատ ներկայանալի սրահին մէջ այդ պատին առջեւ սարքուած ամբիոնը բարձրացան իրարու ետեւէ հայ, ոչ-հայ, ներառեալ թուրք զեկուցաբերներ ու բանախօսներ: Մեզի ալ վիճակուեցաւ ներկայ ըլլալ այդ պատմական հաւաքին (որ գլխաւոր կարգախօսին ներքեւ կը կրէր նաեւ «Մարդու իրաւունքները եւ ցեղասպանութիւնը» մակագրութիւնը)՝ շնորհիւ Կիրոյին, որ յաջողեր էր մեզի եւ մեր հիւրընկալներուն մեկական հրաւեր ապահովել համաժողովի նախաձեռնող Արտգործ նախարարութենէն:

Խոստովանիմ, որ չէինք անդրադարձած անոր կարեւորութեան եւ կը խորհէինք ներկայ ըլլալ միայն մէկ օրը, միւսը երկիրը տեսնելու վերապահելու համար, սակայն բացման պահէն իսկ գամուած մնացինք մեր աթոռներուն եւ ուզեցինք ոչինչ փախցնել:

Համաժողովը իւրայատուկ էր ոչ այնքան այնտեղ ներկայացուած զեկուցներուն գիտական մակարդակին կամ հոն կատարուած վիճարկութիւններուն նոր կամ ինքնատիպ բնոյթին պատճառաւ,– ի վերջոյ այնքան կարճ ժամանակամիջոցներու մէջ ի՞նչ կարելի է ընել,– որքան այդ բոլոր զեկուցաբերներուն, քննարկումներու մասնակիցներուն (discussants) եւ մեզի պէս բախտաւոր «հրաւիրեալ»-ներուն միաժամանակ հոն ըլլալուն պատճառաւ. աշխարհի բոլոր կողմերէն՝ պատմաբան, գրող-լրագրող, քաղաքական գործիչ եւ ուրիշներ, որոնք իրենց ձայները միացուցին՝ ի պաշտպանութիւն հայու իրաւունքներուն, եւ ունկնդիրներ՝ ամեն ասպարէզէ, գաղափարական ոլորտէ, գրեթէ ամեն գաղութէ:

Համաժողովը, որուն կազմակերպումն ալ վստահուած էր Զօրեան հիմնարկին, ընթացաւ կարգ ու կանոնով, առանց ակներեւ թերիներու, եւ բացի երկօրեայ նիստերէն, կէսօրուան ճաշի ինքնասպասարկմամբ մատուցումէն, հիմնարկը մասնակիցներուն ընծայեց նաեւ ցուցահանդէս (արտգործ նախարարութեան շէնքին մէջ) եւ համերգ՝ Մենեկային երաժշտութեան Կոմիտասի անուան սրահին մէջ: Յատուկ ուշադրութիւն կը դարձուէր օտար հիւրերուն, հասկնալի պատճառներով:

Մասնակիցներուն նաեւ շնորհուեցաւ միաժամանակեայ հայերէն եւ անգլերէն թարգմանութեան սպասարկութիւն:

ՀՀ արտգործ նախարարը բացուած յայտարարեց համաժողովը ու հրաւիրեց ՀՀ նախագահը՝ իր խօսքը ընելու:

Ի հարկէ կարելի էր միայն հրճուանք գգալ, որ Մեծ Եղեռնի նուիրուած նման հաւաքի մը բացումը Հայաստանի Հանրապետութեան նախագահը պիտի ըներ. կարեւոր չէր, որ ներկաները իրեն համակի՞ր, թէ՞ ընդդիմադիր կեցուածք ունեցած ըլլային կամ որեւէ կեցուածք չունենային. կարեւորը հայկական պետականութեան առկայութիւնն էր,– է՛,– եւ այն իրողութիւնը, որ Ցեղասպանութեան ճանաչման, եւ ոչ միայն ճանաչման, այլեւ մարդու իրաւունքներն ու յարգումին պահանջները օրակարգի վրայ էին:

Եզրակացութիւնը այժմէն ըսեմ՝ երկար ճամբայ կտրեցինք 1991-էն առդին, եւ ի՞նչ ջուրեր անցան կամուրջին տակէն՝ հո՛ւս հասնելու համար: Բայց քիչ մըն ալ հաղորդեմ, թէ ի՞նչ ըսուեցաւ կամ թէ՛ ո՛վ ինչ ըսաւ, որպէսզի ընթերցողն ալ կարենայ նոյն եզրակացութեան հասնիլ:



Երուանդ Քոչարի Սասունցի Դաւիթը

Նախագահ Ռոպերտ Քոչարեանի խօսքը ամբողջութեամբ հրատարակուեցաւ մամուլով, ուստի այստեղ կարելի է բառացի նշել մի քանի կարեւոր հատուածներ:

«Այսօր ակնյայտ է, – ըսաւ ան, – որ Հայկական հարցը քայլ առ քայլ ազատում է աշխարհաքաղաքական շահերի պատանդը լինելուց, եւ Հայաստանի Հանրապետութեան գոյութիւնը լաւագոյն երաշխիքն է մեր արդար շահերի պաշտպանութեան ճանապարհին յաջողութեան հասնելու գործում»:

Ինչո՞ւ այդքան կը պնդենք այսօր Ցեղասպանութեան ճանաչման վրայ. որովհետեւ, ըստ նախագահին, «ճանաչումն իր մէջ պարունակում է հակազդեցութեան մեծ ներուժ: Յատկապէս կարեւոր է յանցագործութեան կանխարգելումը»: Իսկ ատիկա կը պատահի, երբ կը դատապարտուին նախապէս տեղի ունեցած ցեղասպանութիւնները, – շարունակեց պրն Քոչարեան. – «Առաջին հերթին դա ի ցոյց է բերում, որ այս յանցագործութիւնը չունի վաղեմութեան ժամկէտ, եւ մեղաւորները, միեւնոյն է, պատժուելու են»:

Միջազգային դատապարտումն ու պատժումը ոչ միայն տեղի չունեցան, այլեւ «մեծ քաղաքականութեանը զոհաբերուեց Հայոց եղեռնը միջազգայնօրէն դատապարտելու եւ պատմական արդարութիւնը վերականգնելու անհրաժեշտութիւնը»: Այս առնչութեամբ Քոչարեան նշեց թուրքերուն թալէաթ փաշայի աճիւնը Պերլինէն փոխադրելու եւ պատուով թողած ըլլալու իրողութիւնը՝ որպէս «անպատժելիութեան էստաֆետի փոխանցման տխուր վկայութիւն»:

Վերջապէս, ՀՀ նախագահը, – իր շնորհակալութիւնները յայտնելէ ետք Հայոց ցեղասպանութեան անդրադարձած ու զայն ճանաչման արժանացուցած երկիրներուն, «ինչպէս նաեւ այն բոլոր կազմակերպութիւններին եւ անհատներին, որոնք իրենց լուրջն են բերել ճանաչման գործընթացին», – շեշտեց այդ ուղղութեամբ Սփիւռքի խաղացած անգնահատելի դերը:

Ան եզրակացուց հետեւեալ բառերով. «Մենք վստահ ենք, որ Ցեղասպանութեան միջազգային ճանաչումը կօգնի թուրքիային՝ հաշտուել իր իսկ անցեալի հետ, յաղթահարել

մի բարդոյթ, որ սերնդէ-սերունդ փոխանցուելով՝ նորանոր կնճիռներ է ստեղծում հարեւան մեր ժողովուրդների յարաբերութիւններում»:

Համաժողովը այս կէտէն մեկնեցաւ, եւ նախագահին ստեղծած մթնոլորտը զարգացաւ ու իր զագաթնակէտին հասաւ արագորձ նախարարի ելոյթով:

Երկու ամբողջ օր աշխարհի չորս կողմէն մասնագէտներ կարծես հաւաքուած էին իրենց զօրակցութիւնը յայտնելու հայութեան, Հայոց դէմ ցեղասպանութեան ճանաչման իրենց ներդրումը կատարելու, հայեթուիք յարաբերութիւններու բարելաման լուծումներ առաջարկելու:

Անոնց ելոյթները կարելի է բաժնել երեք գլխաւոր մասերու. հաստատումներ, ճանապարհներ եւ առաջադրանքներ:

Առաջին հաստատումը, որ յստակ եւ մեկին է՝ այն է, որ ցեղասպանութիւնը ոճիր է մարդկութեան դէմ, ինչպէս առաջին պահերէն յայտարարեց փրոֆեսոր William Schabas՝ Իրլանտայի ազգ. համալսարանէն (Վալուէյի մէջ):

Ի հարկէ, անցած են այն ժամանակները, երբ հայկական ջարդերը ցեղասպանութիւն են թէ ոչ, հարց կը տրուէր, ու նման հաւաքներու խօսողները փաստեր կը բերէին իրարու ետեւ՝ հաստատելու համար իրողութիւնը:

Փրոֆ. Alfred de Zayas, Ջուիցերիայէն, իրաւամբ նշեց, որ Հայոց եղեռնը չսկսաւ 1915-ին, այլ անկէ շատ առաջ, նոյնը կրկնեց նաեւ Լեհաստանի նախկին նախագահ, առասպելական (բայց այնքան պարզ) Լեխ Վալեսան, որ յատուկ հրաւիրեալ բանախօսներէն մեկն էր: ՀՀ Գիտութիւններու ազգային ակադեմիայի պատմաբան՝ ներկայ երիտասարդ մտաւորականներէն Ռուբէն Սաֆրաստեան դիտել տուաւ, որ ճշմարտութիւնը սակարկելի ապրանք չէ:

Մնալով բարոյական հասկացութիւններու մակարդակին վրայ, փրոֆ. Ջայաս յստակացուց, որ եթէ հաշտութիւն պիտի ըլլայ, այդ հիմնուած պիտի ըլլայ ճշմարտութեան վրայ, իսկ Ժընեւէն Մարդկային ապահովութեան, խաղաղութեան եւ հաշտութեան (Reconciliation) խորհրդատու Սիլվա Իսքիճեան շեշտեց, որ հաշտութիւնը ներել չի նշանակեր, բայց կրնայ դարմանին սկիզբը ըլլալ, սակայն մեղաւորը նախ կը խոստովանի, եւ ատկէ կը սկսի հաշտութեան գործընթացը:



Ցեղասպանութեան ճանաչումը մարդու իրաւունքներու խնդիր է, յայտարարեց Սաֆրաստեան, իսկ հետապնդելով Հայկական ցեղասպանութեան ճանաչումը միջազգային հասարակութեան կողմէ, հայ ժողովուրդը իր յատուկ աւանդն է, որ կը բերէ մարդկային իրաւանց յարգումի գործընթացին, անելցուց Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան:

Փրոֆ. Սաֆրաստեան ազդարարեց, որ

Առասպելական Լեխ Վալեսան է խօսողը



Րաֆֆիի Խենթին գերեզմանը՝ Ս. Գայիանէ

Յեղասպանությունը չէ աւարտած, այդ գործօնը կը մնայ տակաւին Մփիւռքի մէջ, որուն արձագանգեց տողերս գրողը, թէ՛ անոր հետեւանքներուն տակաւին ենթակայ է մեզմէ ամեն մէկը. լրագրող, Le Monde-ի աշխատակից Վիզէն Չրթրեան աւելցուց, որ աշխարհով մէկ ցրուած հայութիւնը, ցեղասպանութեան հետեւանքով, անհետանալու վտանգին առջեւ է, իսկ ԼՂՀ նախագահ Արկայի Ղուկասեան դիտել տուաւ, որ մեր ցաւը մեզի հետ պիտի ապրի ամբողջ պատմութեան ընթացքին, կարելորը՝ զայն աշխարհի՛ ցաւը դարձնելն է:

Վերջապէս, շարունակուող ցեղասպանութեան անհերքելի երեւոյթներէն մէկն ալ հայկական պատմական ճարտարապետական կոթողներու հետեւողական քանդումն է, աւելցուց ձեր յօդուածագիրը:

Սաֆրաստեան իր գոհունակութիւնը յայտնեց, որ 2000 թուականէն ասդին ՀՀ արտաքին քաղաքականութեան մէջ ցեղասպանութիւնը ընկալուած է որպէս միջազգային գործընթացի խնդիր:

Թուրքիոյ առնչութեամբ եւ Հայոց ցեղասպանութեան նկատմամբ անոր կեցուածքին կապակցութեամբ համաժողովին մասնակցողները հետեւեալ կարծիքները յայտնեցին.

Հրանդ Տինք՝ Իսթանպուլի Ակօս թերթի խմբագիրը, ըսաւ, որ հայոց դէմ ցեղասպանութեան իրականութեան իրագել չէ թուրք ժողովուրդը, որմէ կը վախնայ վարչակազմը:

Ըստ Donald Miller-ի՝ Հարաւային Գալիֆորնիոյ համալսարանի փրոֆեսորին, Թուրքիա ցեղասպանութեան արարքը արդարացուցած է գաղափարախօսութեան ճամբով, ինչ որ պատճառ եղած է, որ ոչ մէկ դրական փոփոխութիւն կատարուի այդ առնչութեամբ:

Թուրքիա խեղաթիւրած է իր արխիւները, ուստի անոնք որեւէ օգուտ չունին պատմաբաններուն, դիտել տուաւ Միշիկըն համալսարանէն պատմաբան Գեորգ Պարտազճեան:

Գերմանիայէն՝ Պերլինի Ազատ համալսարանէն, փրոֆ. Թեսա Հոֆման դիպուկ կերպով յայտարարեց, որ Թուրքիա կորսնցուցած է իր պատմութեան վրայ հակակշիռը:

Թուրք մտաւորական, Պիլկի համալսարանի փրոֆեսոր, հրատարակիչ Մուրատ Պելլէ նախ յայտնեց, թէ ինք իբր քաղաքացին երկրի մը, որ կուրանայ հայոց դէմ իր գործադրած ցեղասպանութիւնը՝ պատասխանատու կը զգայ, ապա բնութագրեց Թուրքիան որպէս մոռացման մէջ մասնագիտացած երկիր մը եւ յայտարարեց, որ «Զինը շիշէն դուրս է եկած» (The genie is out of the bottle), այսինքն այլեւս հակակշռելի չէ կացութիւնը, եւ բացի եթէ արկած մը պատահի,– եւ արկածներ շատ կը պատահին Թուրքիոյ մէջ...– ժողովրդավարութեան ճամբով միայն ան Եւրոմիութիւն կրնայ հասնիլ եւ այդ ընթացքին ստիպուած է ճանչնալ Հայոց ցեղասպանութիւնը:

Այդ առնչութեամբ ամօթի զգացում ցուցաբերեց Իսրայէլի Ողջակէզի եւ ցեղասպանութեան հիմնարկի գործադիր տնօրէն Իսրայէլ Չարնի, ամօթ՝ իր կառավարութեան ժխտական դիրքին համար: Այդ դիրքը դատապարտեց նաեւ Եոսի Մարիտ՝ Քնեսեթի անդամ, լրագրող եւ նախկին կրթական նախարար:

Նման զգացումի մը թարգմանը հանդիսացաւ նաեւ փրոֆ. Թեսա Հոֆման, Գերմանիոյ առնչութեամբ. Գերմանիան ոչ միայն մեղսակից էր Հայոց ցեղասպանութեան պարագային, այլեւ անկէ ալ առաջ Նամիպիոյ մէջ ի՛նքն էր եղած 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւն գործադրողը եւ ցարդ իր պատասխանատուութիւնը չէ ընդունած երկու պարագաներուն ալ: ՀՀ Արեւելեան գիտութեանց հիմնարկի տնօրէն փրոֆ. Նիկոլայ Յովհաննիսեան երախտագիտութեամբ նշեց, որ միւս կողմէն ինչպէս արարները օգնութեան ձեռք երկարեցին տեղահանուած հայերուն, իսկ վարչապետ որոնք հիւրընկալեցին հայ գաղթականները:

ՀՅԴ Բիւրոյի Երեւանի քաղաքական գրասենեակի տնօրէն Կիրոյ Մանոյեան դիտել տուաւ, թէ կը գիտակցինք, որ հայ եւ թուրք իրարու հետ պիտի ապրինք, սակայն ըսաւ, թերահաւատ ենք՝ անցեալի փորձառութենէն մեկնելով:

Չարնի յուսադրեց ներկաները այն իմաստով, որ այսուամենայնիւ ճանաչման հարցին մէջ կա՛յ յառաջդիմութիւն:

Իսկ Վենետիկի Ca' Foscari-ի համալսարանի փրոֆ. Ն. Լեւոն Զեքիեան հարց տուաւ, թէ թուրքերը ինչպէ՛ս դուրս պիտի գան մեղքի զգացումէն, եւ թէ ի վերջոյ ի՛նչ կը սպասենք ճանաչումէն:

Հայոց դէմ ցեղասպանութիւնը 90-ամեայ վաղեմութեան հարց է, որ իր լուծումին կը սպասէ տակաւին: Հայութիւնը ենթարկուած է Ադէտի մը, որուն հետեւանքները դեռեւս կը կրէ ան, եւ միջազգային հասարակութիւնը չէ յաջողած Արդարութիւնը վերականգնել:

Քրիստափոր Միքայէլեանի «յարատեւ պայքար»ի պատգամին է կարծես, որ արձագանգեց Եհուտա Պաուեր՝ Իսրայէլի Եատ Վաշեմ համալսարանի փրոֆեսորը՝ Երեւանի համաժողովին – ամուր մնալ եւ ճանաչում պահանջել. պահանջատէ՛ր ըլլալ:

Արդարութեան համար յարատեւ պայքարի ջահակիր է Michele Wegner, որդին հռչակաւոր Armin Wegner-ի, որ անձնական առաքելութեան է վերածած շարունակել Հայոց ցեղասպանութեան վկայ իր հօր գործը ու անոր սահմուկեցուցիչ լուսանկարներով աշխարհը իրագել դարձնել Մեծ եղեռնին: Ի դէպ, այդ լուսանկարներէն մաս մը ցուցադրուած էր Արմենիա-Մարիոթ պանդոկի կից շէնքին՝ Արտգործ նախարարութեան սրահներուն մէջ այդ համաժողովի օրերուն: «Պէտք է պայքարիմ՝ զաւակներու սիրոյն», – յայտարարեց Վեկներ, եւ իր գոհունակութիւնը յայտնեց, որ իր դուստրերէն մէկն ալ արդէն սկսած է հետեւիլ իրեն այս ուղղութեամբ:

Հայոց ցեղասպանութեան ճանաչման ի ինդիք արտայայտուեցան համաժողովին մասնակիցներէն շատեր: Վալեսա յստակ յայտարարեց, որ առանց ճշմարտութեան ընդունման համաշխարհային առումով, նոր մարտահրաւերներ չենք կրնար վերցնել աշխարհի վիճակը բարելաւելու համար:

Վեկներ, որ ունի նաեւ հրէական արմատներ, պահանջեց, որ Գերմանիան ու Իսրայէլը կատարեն այդ ճանաչումը (այդ օրերէն ասդին, առաջինը արդէն կատարեց, ընդունելով նաեւ իր մեղսակցութիւնը – Վ.Ա.):

Ռուբէն Ատալեան՝ տնօրէնը Հայկական ազգային հիմնարկին (Armenian national institute), Ուաշինկթըն, դիտել տուաւ, որ Ամերիկայի Միացեալ Նահանգները պէտք է փոխէ ներկայ քաղաքականութիւնը ճանաչման դէմ (որ կը միտի չվշտացնել իր դաշնակից Թուրքիան):

ԼՂՀ նախագահ Արկաղի Ղուկասեան յայտարարեց որ Թուրքիա պէտք է ապաշխարէ, մինչ՝ ըլլայ Լեիս Վալեսան, ըլլայ Միշել Վեկները Թուրքիոյ Երոմիութիւն մուտքը պայմանաւորեցին Ցեղասպանութեան ճանաչումով:



Տեսայիներ...

Հարց ներկայացուեցաւ, որ արդարութեան վերականգնման համար ճանչցուին նաեւ այլոց գուգահեռ ցեղասպանութիւնները, որոնք Թուրքիոյ կողմէ գործադրուել էին. Վիզէն Չըրքեան նշեց ասորիներու պարագան, իսկ Հայաստանի եզիտիներու միութեան ներկայացուցիչը յիշեցուց եզիտիներու պարագան:

Տակաւին, Արկադի Ղուկասեան դիտել տուաւ, թէ ինչպէս ցեղասպանութիւն կատարուեցաւ նաեւ Նախիջեւանի մէջ, որուն հայ բնակչութիւնը, տարիներու ընթացքին, հետզհետէ ի սպառ պարպուեցաւ:

Հրանդ Տինք եւ փրոֆ. Վահագն Տատրեան՝ Զօրեան հիմնարկի տնօրէնը, անհրաժեշտ նկատեցին ժողովրդավար կարգերու հաստատումը Թուրքիոյ մէջ՝ որպէսզի ցեղասպանութեան ճանաչումը իրագործուի:

Ալֆրետ տը Զայաս մատնանշեց կրթութեան կարելորդութիւնը այս առնչութեամբ. թէ՛ թուրքերը եւ թէ՛ աշխարհը նոյնքան ծանօթ չեն պատմութեան, ուստի Հայոց ցեղասպանութեան իրողութիւնը պէտք է դասաւանդուի Թուրքիոյ դպրոցներուն մէջ եւ այլուր, ըսաւ ան: Նոյնը կրկնեցին Եաիր Աւրոն, Իսրայէլի Բաց համալսարանէն, օգն. փրոֆ. John Torpey՝ Բրիտ. Գոլոմպիոյ համալսարանէն եւ փրոֆ. Elazar Barkan, Գլերմոնթի Բարձրագոյն համալսարանէն (ԱՄՆ): Յատկապէս Նորվեկիոյ մէջ դասաւանդելու հարցը դրաւ Jussi Flemming Biorn, հայ-նորվեկիական մշակութային կազմակերպութենէն (հօր կողմէ հայկական արմատներով...):

Փրոֆ. Թաներ Աքչամ՝ ծանօթ թուրք պատմաբանը, Մինեսոթայի համալսարանէն, կողմնակից է, որ հայ եւ թուրք երկխօսութեան նստին, ոչ որպէս զոհ եւ դահիճ, այլ որպէս վերապրող ու մարդ էակ, խօսին, պատմեն՝ ցաւէն (trauma) ձերբազատուելու եւ զոհերը յարգելու համար:

Ռուբէն Ատալեան բարոյական հաշտութեան ակնարկեց, Ռուբէն Սաֆրաստեան՝ ցեղասպանութեան դատապարտումին, որուն հետեւանքները պէտք է կրէ ոճրագործը, եւ ճնշումը շարունակելու քաղաքականութեան, արդարութեան վերականգնման ի խնդիր: Ի միջի այլոց ան պահանջք դրաւ, որ ՀՀ արտաքին քաղաքականութեան մէջ ընդգրկուի բռնագրաւեալ հայկական հողերու վրայ գտնուող պատմական յուշարձաններու պահպանութեան հարցը: Գալով փրոֆ. Տիգրան Գոյումձեանի, Գալիֆոնիոյ Նահանգային համալսարանէն, ի ֆրեզնօ, ան առաջարկեց որ Հայց. եկեղեցին ետ պահանջէ այդ յուշարձանները, բազմահարիւր եկեղեցիները:

Պատմութեան ընթացքը կրնանք փոխել միայն եթէ դատապարտենք ցեղասպանութիւնը, յայտարարեց փրոֆ. Gregory Stanton, Վիրձինիայի Մարի Ուաշինկթըն գոլէճէն, ԱՄՆ:

Ճանաչումն ու դատապարտումը կարելորդ են, դիտել տուաւ Զօրեան հիմնարկի նախագահ Գուրգէն Սարգիսեան՝ Թորոնթոյէն, կարելորդ՝ ապագայ ցեղասպանութեանց կանխարգիլման տեսակէտէն, իսկ Micheline Aharonian Marcom, գրող, Օքլանտի Մելզ գոլէճէն, Ճանաչումը պայման նկատեց վերականգնման կամ հատուցման (reparation):

Ճանաչումը ինքնանպատակ չէ, այլ նախաքայլն է վերատիրանալու մեր իրաւունքներուն, դիտել տուաւ Կիրոյ Մանոյեան, իսկ Ռուբէն Սաֆրաստեան աւելցուց, որ հարցը քաղաքական դաշտէն պէտք է փոխադրել Միջազգային իրաւունքի դաշտ: Գալով փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեանի, UCLA-էն, ան ալ հաստատեց, որ հայու ազգային փորձառութիւնը պէտք է վերածուի միջազգային փորձառութեան, այս առնչութեամբ, սակայն, մենք, ամենէն առաջ մեր պետութիւնը, հեռանկար պէտք է ունենանք, որպէսզի կարենանք աշխարհը անոր ուղղութեամբ շահագրգռել:

Տակաւին փրոֆ. Պասքին Օրան, Անգարայի համալսարանէն, թելադրեց, որ Յեղասպանութեան ճանաչման գործընթացին մէջ հայերը չդժուարացնեն թուրք մտաւորականութեան արդէն իսկ դժուար գործը, շատ չգործածեն «G» (genocide) բառը: Այս ըսածին վրայ ներկաներս «պու» պոռացինք, մինչ ինք գովեց մեզ՝ մեր այդ գուսպ կեցուածքին համար.– Թուրքիոյ մէջ շատ աւելի մեծ անարգանքի կենթարկուիմ, երբ այս մասին կը խօսիմ,– ըսաւ ան:

ՀՀ ԳԱԱ-ի Պատմութեան հիմնարկի տնօրէն Աշոտ Մելքոնեան ուզեց Յեղասպանութիւն բառը եւ անոր դատապարտումը իմացած ըլլալ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի ցեղասպանութեան կանխարգիլման խորհրդատու Juan E. Mendez-ի բերնէն, երբ համաժողովի բացման ուղերձներէն մէկն էր արտասանած:

Հայր Լեւոն Զեքիեան արծարծեց մեր 1.5 միլիոն նահատակները սրբացնելու հարցը:

Ազգային ժողովի պատգամաւոր, ՀՅԴ պատգամաւորական խումբի ղեկավար Լեւոն Մկրտչեան, ինչպէս նաեւ Ալֆրետ տը Զայաս խօսեցան հայոց իրենց հայրենական հողերը վերադառնալու իրաւունքին մասին:

Մ. Ահարոնեան-Մարգոմ ցանկութիւն յայտնեց, որ եթէ 20-րդ դարը եղաւ ցեղասպանութեան դարը՝ 21-րդը դառնայ խաղաղեցման (apaisement) դարը: Սակայն, անարդարութեան ենթարկուած ժողովուրդները ո՞ր պէտք է դիմեն, հարց տուաւ փրոֆ. Eric Markusen, Դանիոյ միջազգային ուսմանց դանիական հիմնարկէն:

Այժմ տեսնենք, թէ ի՞նչ լուծումներ առաջարկուեցան:


Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեանի համար կարելոր է, որ հայկական պետութիւնը ոչ միայն պահանջատէր ըլլայ, այլեւ հեռանկար ունենայ, ազգի՝ հեռանկար ունենայ Յեղասպանութեան ճանաչումէն անդին:

Մեծ եղեռնի 90-ամեակին նուիրուած ապրիլեան համաժողովին, Երեւանի մէջ, աշխարհի տարբեր երկիրներէն եկած զեկուցաբերները, այդպէս, ըրին իրենց վերլուծումներն ու թելադրութիւնները:

Փրոֆ. Պատուեր եւ փրոֆ. Մթանթըն շեշտեցին կարելորութիւնը աշխարհի համար՝ ունենալու քաղաքական կամքը՝ կանխարգիլելու համար բոլոր ցեղասպանութիւնները եւ վերականգնելու անիրաւուածներու իրաւունքները:

Փրոֆ. Զայեասի համաձայն՝ անհրաժեշտ է միջազգային դատաստանի մը ստեղծումը, ուր կրնան դիմել ցեղասպանութեան ենթարկուող ժողովուրդները, ինչպէս Տարֆուրի սուտանցիները ներկայիս, որոնք չեն գիտեր ո՞ր դուռը զարնեն...

Փրոֆ. Նիկոլայ Յովհաննիսեան առաջարկեց, որ ՄԱԿ-ի պատասխանատւութեան տակ կազմուի միջազգային բանակ, եւ ի հարկին փոխուի ՄԱԿ-ի ուխտագիրը՝ արտօնելու համար, որ այդ բանակը միջամտէ առ որ անկ է, կանխելու համար նոր ցեղասպանութիւնները:



Գեղարդ



Մարդարապատ՝ նոր հերոսներու յուշարձանը

Ներկաներէն մին՝ պրն. Սիմոն Կամսարական, կարեւորեց ՄԱԿ-ի կողմէ արգիլումը զանգուածային ոչնչացման զէնքերու, որոնք ցեղասպանութիւն յառաջացնող զլխաւոր միջոցներն են:

Լէյս Վալեսա, իր պարզ ոճով, ուզեց տեսնել աշխարհ մը, ուր անհաւասարութիւնները կը վերցուին, ուր արդար ու ազատ կարգեր կը տիրեն բոլոր երկիրներուն մէջ: Այդ ձեւով միայն առաջքը կ'առնուի գալիք ցեղասպանութիւններուն:

Փրոֆ. Գէորգ Պարտազճեան, Միջկլընի համալսարանէն, Հայաստանի ապագան ալ տեսաւ նոյն հեռանկարին մէջ՝ ժողովրդական կարգեր թէ՛ մեր երկրին եւ թէ՛ շրջակայ երկիրներու մէջ:

Փակման խօսքը ընելու պարտականութիւնը, արժանաբար, վիճակուած էր ՀՀ Արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանին:

Ան, որ ուշի ուշով հետեւած էր բոլորին ելոյթներուն, լեցուած էր, տաքցած եւ նախքան բուն խօսքին անցնիլը, մեզի հետ բաժնեց իր տազնապը, որ կը յառաջանար պահու պարտադրանքէն. հայերէ՞ն խօսիլ, թէ անգլերէն: Իբր հայկական պետութեան ներկայացուցիչը, պարտաւոր կը զգար հայերէն խօսելու (իբր նախկին սփիւռքահայ՝ պետական ներկայ մարդոց մէջ ան հայերէնով լաւագոյն արտայայտուողներէն մէկն է), սակայն կը գիտակցիմ, ըսաւ, որ մարդիկ այս պահուս աչք ու ականջ բացած մեզի կը հետեւին, եւ որոշեցի անգլերէն խօսիլ, որպէսզի որեւէ բառ սխալ մեկնաբանութիւն չստանայ:

Եւ սկսաւ խօսիլ առանց նութերու, մտքերու հոյակապ շղթայ մը պարզելով մեր առջեւ:

Փաստերը առատ են, յստակ ու անխուսափելի, ըսաւ ան. Օսմանեան կայսրութեան հայ բնակչութեան երկու-երրորդը 1915–1918 ջարդուեցաւ կամ տեղահանուեցաւ: Ո՞ւր գացին այդ բոլորը. ո՞ւր են սերունդները անոնց, որոնք հարիւրաւոր եկեղեցիներ ու վանքեր էին կառուցեր, որոնց աւերակները տակաւին կանգնած են այսօր Թուրքիոյ մէջ: Ինչո՞ւ հայերու բնակարանները կողոպտուեցան եւ հրկիզուեցան:

Ճիշտ է, աւելցուց Օսկանեան, այսօրուան թուրքերը ցեղասպանութիւնը գործադրողներուն յանցանքը չեն կրեր, բացի եթէ զանոնք պաշտպանեն եւ իրենք զիրենք նոյնացնեն անոնց հետ: Իսկ ըստ Էլի Ուիլզելի, հերքումը ցեղասպանութեան վերջին փուլն է:

Ինչո՞ւ կը զարմանան, հարց տուաւ ան, որ Արարատը մեր պետական կնիքին վրայ է. հայերը այս հողերուն վրայ ապրած են հազարաւոր տարիներ, եւ Հայաստանի սահմանները շատ փոխուած են հազարամեակներու ընթացքին: Ատիկա պատմական իրողութիւն մըն է:

Պատմական իրողություն է նաև Մերի դաշնագիրը, որ Հայաստանի համար կը նախատեսեր 10 անգամ ավելի մեծ տարածություն քան ներկայ Հայաստանը (անշուշտ 10 անգամը պատմական Հայաստանն է. մինչ Մերը մեզի կը յատկացնէ 5-6 անգամը ներկայ տարածքին – Վ.-Ա.): Պատմական իրողություն է նաև այն, որ Թուրքիա արհամարհեց այդ դաշնագիրը եւ բռնի ուժով ստեղծեց նոր կացութիւն...

Այսօր,– դիտել տուաւ պրն Օսկանեան,– քաղաքական իրողութիւն է, որ Հայաստան սպառնալիք չէ Թուրքիոյ համար, եւ իրողութիւն է նաև այն, որ այսօրուան Հայաստանն է, որ այսօրուան Թուրքիոյ հետ դիւանագիտական յարաբերութիւններ կուզէ հաստատել: Մենք,– ըսաւ ան,– կուզենք որ Թուրքիա անդամակցի Եւրոմիութեան, որպէսզի մեր սահմանները բաց ըլլան, որպէսզի մեր հայրենակիցներն ու թուրք մտաւորականները ավելի ազատօրէն խօսին Յեղասպանութեան մասին: Պիտի ուզէինք Թուրքիան տեսնել որպէս անդամ, որպէսզի մեր եկեղեցիները եւ սեփականութիւնները պաշտպանուին եւ վերականգնին:

Եւ վերջապէս փափագ յայտնեց, որ միջազգային հասարակութիւնը իր չափանիշերը չիջեցնէ, այլ օգնէ, որ հայերը, թուրքերը, բոլոր եւրոպացիները յառաջ ընթանան՝ նոր պատմութիւն կերտելու:

Օսկանեան յոտնկայս ծափահարուեցաւ: Բոլոր ներկաները հպարտ էին իրենց արտգործ նախարարով...

Կիրոյ կը ժպտէր.– երկա՛ր ճամբայ կտրեր ենք, ինչպէս կերելի,– ըսի իրեն...

Ուխտի թափօրը

Այս անգամ Հայաստան երթալուս գլխաւոր դրդապատճառը Ապրիլ 24-ի օրը Ծիծեռնակաբերդ հանդիսաւոր երթին մաս կազմելու բուն փափագս էր: Մեծ եղեռնի 90-ամեակի՛ն:

Ասկէ առաջ երկու անգամ գացեր էի Հայաստան, այցելէր էի նաև Յուշարձանը, լուս օր մը, ու ապրեր էի խոկումի պահը, սակայն երբեք մասնակից չէի եղած այդ երթին, որ յատուկ իմաստ ունի, յատուկ երեւոյթ է հայութեան կեանքին մէջ: Կուզէի անպայման այս կարեւոր տարեթիւին հո՛ն ըլլալ, ժողովուրդիս հետ. իբրեւ պարզ անդամը անոր, հարիւր-հազարաւորներէն մին...

Եւ այնպէս պատահեցաւ, որ ոչ թէ մէկ, այլ երկու անգամ բախտը ունեցանք բարձրանալու Ծիծեռնակաբերդի յուշարձանը, երկու տարբեր օրեր:

Առաջինը ուրբաթ կէսօրէ ետք էր, Ապրիլ 24-էն երկու օր առաջ: Այր եւ կին ընդառաջեցինք մեր կուսակցութեան հրաւերին՝ ներկայ ըլլալու քաղաքական հաւաքին, ապա քալելու մինչեւ յուշարձանը:

Հաւաքը՝ Ծիծեռնակաբերդի մարզահամերգային (ներկայիս՝ Կարէն Դեմիրճեանի անուան) համալիրին ստորտը: Յատուկ բեմահարթակ դրուած էր, եւ մեր ընկերները, Ազգային ժողովի փոխնախագահ ընկ. Վահանը, ուրիշ պատգամաւորներ, այլեւ Սփիւռքէն ժամանած պաշտօնավար ընկերներ հերթով խօսք առին, շեշտեցին պահանջատէր մնալու կարեւորութիւնը. արդէն միջոցառումը պահանջատիրական երթ կամ նման ձեռով բնութագրուած էր:



տիկին Կիրալ եւ պրն Սեթլաքուի (ձախէն երկրորդն ու երրորդը)

Բեմ բարձրացան նաեւ մեր գանատացի հիւրերը՝ տիկին Կիրալ եւ հայազգի պրն Սեթլաքուի, նախկին երեսփոխան եւ նախկին ծերակուտական, որոնք որոշիչ դեր խաղացած էին Գանատայի խորհրդարանի ու ծերակոյտի կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման աշխատանքին մէջ: Երկուքն ալ չափազանց պատուած կը զգային, որ նման առիթ կընծայուէր իրենց:

Մեծ բազմութիւն ներկայ էր, թերեւս մի քանի հազար հոգի, որոնք հաւաքուած էին այնտեղ՝

կուսակցութեան պատգամը ունկնդրելու, ապա, ծաղիկները ձեռքին, քալելու մինչեւ անմար կրակը:

Հաւաքը բացառիկ առիթ մըն էր նաեւ մեզի համար, դէմ յանդիման գալու հայաստանցի մեր ընկերներուն, մանաւանդ պատասխանատու պաշտօն վարողներուն հետ, ինչպէս նաեւ աշխարհի տարբեր երկիրներէն եկած մեր միւս ընկերներուն հետ, որոնցմէ ոմանց արդէն ծանօթ էինք, ոմանց ալ առաջին անգամ այստեղ պիտի հանդիպէինք:

Նախորդ օրերուն կայացած համաժողովին էր, որ զգացի, որ Երեւանը մեր ժամադրավայրը, անխուսափելի՝ ժամադրավայրն է: Այստեղ այդ զգացումը ալ աւելի զօրացաւ: Եւ շատերու դաշնակցական, գաղափարակի՛ց ըլլալու հանգամանքը չէր, որ կը ստեղծէր այդ տպաւորութիւնը, թէւ անպայման կը նպաստէր անոր յառաջացման, այլ տարբեր գաղութներէ եկած ըլլալն էր անոնց, ի՛նչ գաղափարականի ծառայէին, եկած ու այստեղ, մայր հողին վրայ միացած որպէս հայեր, լո՛կ հայեր:

Այստեղ էր, որ յանկարծ առջեւս պիտի ելլէր ալեխառն մագերով ու մեծ, զօրավար Անդրանիկի պէխերով հին ծանօթ մը.

– Դուն Սարգիսը չե՛ս, Բաղդասարեանը:

Աչքերը աչքերուս՝ յայտնի է, որ հրճուանքով ճանչցած էր զիս, առանց անունս մտաբերելու – ծանօթ դեմք էր դիմացինը, բայց ո՞վ էր...

Տուի անունս, ու ողջագուրուեցանք: «Ակունք»-ի Սարգիսն էր, ոգի՛ն խումբին, մեր տոհմիկ երգերու անգուգական մեկնաբանը, որուն Մոնթրէալ հանդիպած էինք թերեւս 20 կամ աւելի տարիներ առաջ, գաղտնօրէն մեր տունը բերած:

Շարքային ընկեր էր դարձած ետքը եւ հիմա կը գանգատէր, որ շատ անարժան մարդիկ մտան շարքերը:

– Մտան եւ ելան ալ,– դիտել տուի:

– Դեռ շատեր ալ պէտք է դուրս գան...

Որքան ուզեց, որ այցելէնք իրենց տունը, միասին ըլլանք, բայց մեր բոլոր փորձերը ձախողեցան, եւ դարձեալ Հայաստան երթալու պատճառ մը եւս աւելցաւ ցանկիս

Սարգիս Բաղդասարեանի հետ



վրայ...

Նազիկն ալ խումբ մը երիտասարդ, գրեթէ պատանի աղջիկներ պիտի տեսնէր ու պահ մը նստէր անոնց կողքին, մարգագետինի կրաղիւսէ եզերքին, ու մտերմիկ գրոյց ունենար անոնց հետ, ունկնդրէր հայաստանցի երիտասարդներու մտահոգութիւններն ու երազները:

Հաւաքէն ետք ընկերակա՛ն կապերն էին, որ պիտի վերանորոգուէին. առաջին հերթին՝ սահմանափակ խումբով մը մեր պարսկաբնակ ընկերուհիին՝ Այդայի տունը: Տուն ըսածս յարկաբաժին մըն էր, ամբողջովին վերանորոգուած, վերայարդարուած՝ մեր գիտցած «սթիւտիո»ներուն նման, բոլոր յարմարութիւններով: Պտուղի հիւթ, սուրճ, անուշեղէն եւ ծանօթացում Թեհրանէն եւ արաբական աշխարհէն եկած ընկերուհիներու, ընկերներու:

Ապա բոլորս միասին պիտի միանանք մեր ընկերներուն եւ հիւրերուն՝ «Երկիր» ճաշարանը (ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի ու «Երկիր» թերթի շէնքին ներքեւ), նկուղանման՝ թաղակապ ցեղունով մը, թեթեւ ու որոշակի խորհրդաւոր լուսաւորումով, պատերուն՝ ցածրաքանդակ եւ գունազեղ տեսարաններ մեր երկրէն, պատմական յուշարձաններով հանդերձ: Այսինքն՝ յատուկ, տաքուկ մթնոլորտ մը, որ հետզհետէ պիտի տաքնայ գոյգ երգիչներուն՝ Սամուէլ Երանեանի ու մանաւանդ Համլետ Շահբազեանի իրերայաջորդ ելոյթներով. – այդ վերջինը Ռուբիկ Մաթեոսեանի յաջորդը կը նկատուի, –



Հանրապետութեան փողոց, ՀՅԴ Գերագոյն մարմնի կեդրոնն ու «Երկիր»-ի խմբագրատունը

ըսին: Յետոյ նաեւ հայկական շուրջպարը ծայր պիտի տայ սեղաններուն միջեւ՝ երկար անցքին մէջ: Մեր գանատացի հիւրերն ալ հոն են, եւ Ռէյմոն Սեթլաքուի (բուն մականունը Սարաֆեան է եղած) պիտի զգայ, որ հայկական արինը կը խայտայ երակներուն մէջ:

– Այս ապրումները ձեր գաւակներուն եւ թոռներուն պիտի փոխանցէ՞ք, – հարց կու տամ իրեն:

– Անպայմա՛ն, անպայմա՛ն: Յաջորդ օրը շաբաթ է, եւ երեկոյեան ծրագրուած է ջահերով երթ, դարձեալ Ծիծեռնակաբերդ, այս անգամ ալ մեր երիտասարդներուն

նախաձեռնութեամբ: Մեր ժամանակացոյցը տարբեր ձեւով կարգաւորուած է, որով պիտի չկարենանք մասնակցիլ այդ մէկուն, սակայն հեռատեսիլէն պիտի տեսնենք որքա՛ն տպաւորիչ պիտի ըլլայ ան՝ հազարաւոր ջահերով... Ափսո՛ս, որ այդ պահը եւս անձամբ չենք կրնար ըմբռնել:

Հեռատեսիլը, կամ հեռուստացոյցը, հայաստանցիներու լեզուով... կարելոր դերակատարութիւն ունեցաւ մեր այնտեղ կեցութեան ամբողջ երկու շաբաթներուն ընթացքին, իր բոլոր կայաններով: Նախ պետական Հ1 կայանը առանց ընդմիջումի հեռասփռեց համաժողովը, ինչպէս նաեւ Ծիծեռնակաբերդ երթերը: Ապա թէ այդ, թէ միւս կայանները տեւական խօսեցան Մեծ եղեռնէն, հարցազրոյցներ ունեցան այցելող մասնագէտներուն հետ, ներկայացուցին կլոր սեղաններ, այլեւ բազմաթիւ մշակութային ելոյթներ՝ Օրուան պատշաճ բովանդակութեամբ: Կարելի էր ամբողջ օրը փոքր պաստառին քամուած մնալ...

Ամեն Ապրիլ 24-ի ոտքով երթալ տունէն մինչեւ Ծիծեռնակաբերդ՝ մեր հիւրընկալներուն աւանդութիւնն է: Ամեն տարուան պէս իրենց պիտի միանան նաեւ Յակոբն ու Գայիանէն, իսկ մենք երկուքս պիտի կազմենք երրորդ զոյգը այդ առուակին: Նման առուակներ ճամբայ կ'ելլեն քաղաքի տարբեր կողմերէն, ոտքով թէ այլ միջոցներով կու գան կը միանան յուշի թափօրին, կը դառնան գետակ, ապա գետ, վարարո՛ւն գետ:

Յակոբը Եգիպտոսէն ներգաղթողի զաւակ է, Գայիանէն՝ աւելի հին՝ Կարինէն տեղահանուածներու սերունդ, երկուքն ալ Հայաստան ծնած: Մեր Հայաստան հասնելու երկրորդ օրը, որպէս Արմենեաններու հիւրերը, մանաւանդ որպէս նախապէս ալ աղջկանս ծանօթացած ընտանիք՝ իրենց տունը ֆուլի ընթրիքի մը հրաւիրուեցանք: Հիմա ամբողջ օր մը միասին ենք անցընելու:

Ճամբայ պիտի ելլենք առաւօտեան ժամը 10-ի շուրջ, Այգեձոր թաղամասի Այգեձոր փողոցէն, ուր ընդհանրապէս միայարկ են տունները եւ մետաղէ ճաղաւոր սարփինաներ կամար կը կապեն ճամբուն վրայ: Որթերը տակաւին չեն բարձրացած շատ տեղեր:

Ատգէնն է մեզ առաջնորդողը. թաղեցին ինքն է, ու Յասմիկը: Ընդհանրապէս միւս ուղղութեամբ կը քալենք այս ճամբուն վրայ. դէպի Պոռշեան, ուրկէ կ'անցնինք Բաղրամեան, եւ կուղղուինք քաղաքամէջ: Այս անգամ, հակառակ կողմէն, կու գանք Օրբելեան եղբայրներու փողոցը, ուր հին բազմալարկ բնակարանային շէնքեր են, երեսի վրայ ձգուած: Անկէ՛ կ'ելլենք Կիւեան մեծ պողոտան, ուր արդէն ծաղիկ վաճառողները, հետզհետէ աւելի խիտ, մայթին վրայ շարած են իրենց ապրանքը: Յետոյ հարց պիտի տամ ինքզինքիս, որ ինչպէ՛ս այդքան ծաղիկ, որ անմար կրակին շուրջ պիտի դրուի, մէկ օրուան մէջ կարելի է հասցնել շուկայ:

Կը շարունակենք քալել: Կը կտրենք Հրազդանը՝ մեծ կամուրջէն անցնելով, ուր պահ մըն ալ պիտի կենանք ու դիտենք վարը՝ գետը, որ այնքա՛ն նեղ է, եւ ուր փոքր նաւ մը կայ խարսխուած. ճաշարան է, կըսեն, եւ շուրջը՝ փոքրերու խաղավայր:

Կը հասնինք Ծիծեռնակաբերդի համալիրի ստորոտը, ուր մեզի պէս հարիւրաւորներ, հազարաւորներ կը հաւաքուին, եւ կարգապահութեամբ կը սպասենք, որ խումբ առ խումբ թոյլատրուի մեզի շարունակել քալել ու բարձրանալ վերեւ:

Արեւ է, ու տաք. ոմանք՝ փորձառուները հովանոց բերած են իրենց հետ: Այդ արեւն ու տաքը, սակայն, պէտք է խորհրդանշական իմաստ մը ունենան: Անապատնէ՛րը...

Ամեն տարիքի քալող կայ. ծերունիներէն մինչեւ մատղաշ մանուկներ. աւելի պզտիկները կառքերով, հայրերուն կամ մայրերուն կոնակը, կուրծքէն կախուած, գրկուած: Ընդհանուր լրջութիւն մը կը տիրէ, թէեւ մարդիկ ցած ձայնով իրարու հետ խօսելով կը յառաջանան:

Զանազան ցուցանակներ կան. պաշտօնականները՝ Մեծ եղեռնի 90-ամեակի տարբերանշանով, եւ զանազան անպաշտօն ցուցանակներ, որոնցմէ մէկը յատկանշականօրէն կըսէ. «Մենք չենք կարող մոռնալ մեր երկիրը, որը... հող չէ միայն»...

Կը քալենք ու կանգ կ'առնենք պարբերաբար, որովհետեւ յուշարձանի բոլորակին մէջ, անմար կրակին շուրջ որոշ թիւ մը միայն կրնայ գտնուիլ միաժամանակ:

Ոստիկանները երթուղիին երկու կողմերը կանգ առած են՝ իրարմէ աչքի հեռաւորութեան վրայ. ռազմակա՛ն ոստիկաններ են, սաղաւարտներուն՝ լատինատառ MP (military police): Բարեկիրթ են, մարդասօտ: Կը խօսինք մէկուն հետ, կինս կը խնդրէ նկարուիլ հետը, սիրով կընդառաջէ: Ինչո՞ւ լատինատառ, կը մտածեմ...



Ճամբան, բարեբախտաբար, ծառաշատ է, եւ արեւէն որոշ պաշտպանութիւն մը կու տան մեզի սաղարթօները, որոնք ամբողջովին բացուած են ու գեղեցիկ կանաչ մը կը պարզեն մեր վերեւ:

Ահա եւ Յակոբին ու Գայիանէին գոյգ աղջիկները, որոնք իրենց համալսարանական ընկերներուն հետ եկած են: Մքանչելի երիտասարդութիւն մը կայ, որ առանց մեծխօսիկութեան, առանց սնապարծութեան հայ է ու մեր երկրի վաղուան տէրը պիտի հանդիսանայ: Այդ գիտակցութիւնը մեզ կը գօտեպնդէ:

Քիչ մը եւս կը յառաջանանք եւ կու գանք վերի հարթավայրը, որուն սկիզբը՝ մեր աջին՝ շատ իւրայատուկ, շատ խօսուն երեւոյթ մը կը պարզուի. ցած թուփեր են, թերեւս մատղաշ ծառեր, որոնք մեր մէկուկէս միլիոն նահատակներուն ի յիշատակ տնկուած են Հայաստան այցելած ականաւոր մարդոց կողմէ: Իւրաքանչիւրը խօսք մը ունի արձանագրած փոքր ցուցատախտակի մը վրայ. ահա անոնցմէ մէկը որ անմիջական կերպով կը գրաւէ մեր ուշադրութիւնը. «Յիշիր, Տէ՛ր, այս ազգի որդիների տառապանքները եւ օրհնիր Հայաստանը – 28 սեպտեմբեր 2001»: Ո՞վ է գայն թողած. ոչ այլ ոք քան Յովհաննէս-Պօղոս Բ. քահանայապետը...



Եթե ձախ դառնանք՝ յուշարձան տանող երթուղին է, որ պիտի բռնենք. մենք, սակայն անկէ առաջ կուզենք պահ մը անցնիլ նաեւ Յեղասպանութեան թանգարանէն. ուստի ուղիդ կը շարունակենք մեր ճամբան, դուրս գալով թափօրէն: Հիմա այստեղէն՝ քովէն կրնանք տեսնել այդ թափօրը, բազմամարդ ու լուռ՝ ուխտի շարանը:

Կը մտնենք թանգարան:

Յեղասպանութեան թանգարանը:

Յուշարձան չհասած, վերջին քայլքէն առաջ, աջիդ կը գտնուի այդ թանգարանը, որ դիպուկ կերպով շատ ուշադրութիւն չի գրաւեր, եւ մեծ մասամբ կը գտնուի բարձունքի լանջին: Մեծ եւ լուսաւոր սրահներ են, լի՝ նկարներով, հրատարակութիւններով, վկայութիւններով ու տեղահանութենէն վերապրած իրերով: Սահմնկեցուցիչ, միաժամանակ անհրաժեշտ ահագանգ մարդկութեան: Ուշագրաւ է ներքին բակը, գետնատարած յուշարձանով մը, խաչի ձեւով, ու կիսաբոլորակ պատին փորագրուած խօսքերով՝ երոպացի եւ այլ պատմաբաններէ, մտաւորականներէ, ականաւոր դէմքերէ:

Երկար, շատ երկար կարելի է յամենալ այստեղ, կարդալ, տեղեկանալ, լուսաբանուիլ ու ընդվզիլ մարդու անմարդկայնութեան դէմ: Սակայն շատ չենք կրնար դանդաղիլ: Կուզեմ բարեւ մըն ալ տալ տնօրէնին՝ Լաւրենտի Բարսեղեանին, որուն գրասենեակը հասնելու համար դուրս պիտի գանք թանգարանի գլխաւոր մուտքէն, իջնենք ներքեւ եւ ուրիշ դռնէ մը մուտք գործենք վարչական բաժինը – քիչ մը տարօրինակ կարգադրութիւն: Հոն է ինք, կը ձեռնուինք ալ, ու կը փոխանցեմ աղջկանս՝ Արագին բարեւները. չէ՞ որ ան իր կայքէջը (20 ձայներ) այստեղ յատուկ պաստառի մը վրայ դնելու ծրագիրն ալ ունի: Բարսեղեան հագիւ բարեւ ըսելու ժամանակ կը գտնէ. զբաղած է. թուրք աշխատատեղական կուսակցութեան ներկայացուցիչներն են զինք շրջապատած, եթէ չեմ սխալիր, անոնք որոնք համաժողովի սրահի մուտքին ալ թռուցիկներ կը բաժնէին՝ ի նպաստ Յեղասպանութեան ճանաչման... Հետաքրքրական երեւոյթ է. սակայն միշտ միտքս կու գայ Քնար մօրաքին նախագգուշացումը «մի հաւատաք անոնց...»:

Թանգարանէն դուրս կու գանք ու կը վերամիանանք թափօրին:

Ճանապարհի, ուխտի՝ ճանապարհի այս բաժինը աւելի հանդիսաւոր է. յանկարծ մարդիկ նուազ խօսուն կը դառնան, ու լռութեան մէջ կը յառաջանան դէպի Յուշարձանը, որ տպաւորիչ է իր վեր սլացող, երկճիւղ ու սրածայր աշտարակով եւ անշէջ կրակին վրայ հակած իր 12 պատերով: Իր ճարտարապետներէն մէկը՝ Ս. Քալաշեան կը բացատրէր հեռատեսիլէն յուշարձանին յղացքը. այդ 12 թիւը պարզապէս գեղագիտական հիմք ունեցած է: Միւս ճարտարապետը՝ Արթիւր Թարխանեան, փետրուար 18-ի ապստամբութեան հերոսներէն Կուռոյի շառաւիղներէն մին, դժբախտաբար տարիներէ ի վեր հիւանդ է. ազնուական հայրորդի մը, որուն Մոնթրէալի մէջ հանդիպելու պատիւն եմ ունեցած ու զինք տանս մէջ հիւրասիրելու հաճոյքը: Ափսոս, չենք կրնար հանդիպիլ այլեւս:

Կընթանանք յամրաքայլ ու չենք կրնար չիշէլ մեր բոլոր հարազատները, անոնք որոնք նահատակուեցան ֆիզիքապէս, եւ անոնք որոնք տեղահանուեցան ու վերապրեցան, հոգեպէս նահատակուելով, դառնալով հայրենագուրկ, եւ արդէն ահա հայրենիքէն դուրս մինչեւ 5 սերունդ տալով աշխարհին:

Մեր ծնողքն ու մեծ ծնողները առիթը չունեցան այստեղ գալու եւ իրենց գերդաստանի զոհերու յիշատակին ծաղիկ մը դնելու, վերյիշելու կորսուած երկիրը, մանաւանդ վերանորոգելու ուխտը, ուխտը՝ վերադարձի, ուխտը վերականգնման, իրաւունքներու վերատիրացման:



Ահա, ուրեմն, այդ բոլորին անունով, անոնց կողմէ եւս մենք ալ կը մտնենք Յուշարձանի տարածքը, կիջնենք մի քանի աստիճանները, կը մօտենանք ծաղիկներու հսկայ դեզին, որուն վրայ պէտք է հակիս՝ անշէջ հուրը տեսնելու համար: Մի քանի վայրկեան միայն կրնաս հոն մնալ, պէտք է շարժիս, ետեւէդ եկող կայ: Ճիշտ ծաղիկը գետեղած պահուս, քովս կը յայտնուին Ռաֆֆին եւ ընկերը՝ Մոնթրեալէն: Այսքա՛ն հազարներու մէջ, ահա եւ ծանօթ մը եւս կը տեսնես: Ժամադրավա յը...

Մակայն բարեւ մը ըսելէն աւելի խօսք փոխանակելու առիթ չկայ: Դուրս կու գանք Յուշարձանի հանդիպակաց կողմէն, ու տակաւին կը լսուին հոգեւոր երգերը, որ մուտքի կողմէն երգչախումբ մը, ալեհեր (եւ ըսին՝ սփիւռքահայ) ղեկավարի ճիպոտին տակ կ'երգէր՝ մթնոլորտ ստեղծելով:

Այսպէս արագ կը կատարուի ամեն ինչ, եւ մենք արդէն կը հեռանանք Ծիծեռնակաբերդէն: Կը վերադառնանք առօրեային, կը վերագտնենք մեր ընկերակիցները:

Օրը, սակայն, այդքանով պիտի չաւարտի: Հեռու չենք Եռաբլուրէն, ուստի կ'որոշենք նաեւ երթալ խոնարհիլ մեր նորագոյն հերոսներու շիրիմներուն առջեւ:



Հազարաւոր կենդանի շիրիմներ



Զորավար Անդրանիկի շիրիմին առջև

Այստեղ՝ տարբեր զգացումներով կը մտնես: Փամփուշտի տեսքով մատուռ մը կը դիմաւորէ քեզ. նոր է, նախորդ գալուստ՝ 11 տարի առաջ, չկար ան. չկար նաեւ անոր կողքին բարձրացած քանդակ-յուշարձանը՝ Բերդ-պարը, կազմուած ուս-ուսի եւ իրարու վրայ բարձրացած խաչքարերէ, որոնք կը յիշեցնեն ծանօթ պարը, եւ կը խորհրդանշեն ազգային-ազատագրական պայքարը...

Հարիւրաւոր, գուցէ հազարի հասնող շիրմաքարերը, երիտասարդ նահատակ-մարտիկներու լուսանկարներով՝ անտառ մը կը կազմեն: Անոնցմէ մէկուն կողքին՝ լուռ նստած պատանի մը. կինս հարց կու տայ, որո՞ւն գերեզմանն է. «հայրիկիս», կըսէ տղան...

Այստեղ փոխադրուած են զորավար Անդրանիկի աճիւնները, որոնց վրայ ցայտուն կերպով գետեղուած է քանդակակալու շիրմաքար մը: Գլխաւոր անցքի մէկ կողմին վրայ է միւս կողմը գրուած է «հայոց սպարապետ»՝ Վազգէն Սարգսեան: Ի՞նչ պիտի ըսէ պատմութիւնը յետ-մահու այս զուգակցութեան համար...

Անդին՝ աւելի համեստ, թերեւս աւելի տպաւորիչ խաչքար մը՝ Սօսէ մայրիկին գերեզմանին վրայ: Աճիւնները՝ Եգիպտոսէն փոխադրուեցան մի քանի տարի առաջ: Ծնողքս ըսած է, որ հերոսուհին իր օրհնեալ գիրկը առած է զիս, ա՛յն օրերուն...

Հեռատեսիլէն ցոյց կու տան՝ մինչեւ կէս գիշեր ու մինչեւ առաւօտ կը շարունակուի ուխտի թափօրը:

Ապրիլ 24, 2005: Անմոռանալի օր մը, իրապէս:

Մշակութային աւիշը

Կարելի է Հայաստան այցելել եւ ուրիշ բան չընել բացի ամեն երեկոյ համերգի մը կամ թատերական ներկայացումի մը երթալէ, իսկ ցերեկը մէկ թանգարանէն միւսը վազելէ, մէկ պատմական ճարտարապետական կոթողէն՝ միւսը:

Իրապէս, մշակութային այնպիսի սնունդ կը ստանաս հայրենիք այցելելով, որ վերադարձիդ երկար, երկա՛ր ժամանակ տակաւին տպաւորութիւններուդ ազդեցութեան տակ կ'ապրիս, կը զգաս որ լիցքաւորուած ես, հարստացած: Երբ այս տողերը կը գրեմ, արդէն երեք ամբողջ ամիսներ անցած են, բայց ես տակաւին հոն եմ, եւ հարց կու տամ ինքզինքիս, թէ վա՛ղը որ թատրոնը պիտի երթանք...

Արդարեւ, Երեւան հասած մեր առաջին օրէն սկսաւ մեր այդ վայելքը: Մոնթրէալէն մեկնելէ մի քանի օր առաջ էր, երբ Մարի-Ռոզ Աբուսէֆեանէն ստացուած ել-նամակէ մը կը տեղեկանայի, որ նախկին հայաստանցի, այժմ սան-ֆրանսիսագոյարբնակ (ու «Հորիզոն»-ի աշխատակից) արուեստագիտուհին ճիշտ նոյն օրերուն հոն պիտի գտնուէր: Երկուշաբթի, 18 ապրիլին, Ա. Սպենդիարեանի անուան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի հսկայ դահլիճի բեմին վրայ առանձինն, Մարի-Ռոզ ներկայացուց Ֆրանց Վերֆելի «Մուսա տաղի 40 օրերը» վէպը, ձայնային տարբերութիւններով մարմնաւորելով զանազան անձնաւորութիւնները, ու մագնիսացնելով լեփ-լեցուն սրահը: Եւ սա՛ արուեստագիտուհիին ճիտին պարտքն էր Եղեռնի 90-ամեակին: Մուտքը ազա՛ւտ էր:

Յաջորդ էլոյթը, 21 ապրիլին՝ Կոմիտասի անուան Կամերային երաժշտութեան տան մէջ էր: Երեւանի կեդրոնը մասամբ եզերող շրջանակաձեւ այգիին մէջ զետեղուած, իւրայատուկ գմբեթաւոր բեմով սենեկային երաժշտութեան այս սրահին մէջ, յատուկ էլոյթ էր կազմակերպուած Մեծ Եղեռնի 90-ամեակի համաժողովին մասնակիցներուն համար, – մեզ մասնաւոր փոխադրակառքով տարին հոն: Հայաստանի սենեկային նուագախումբն ու երգչախումբը, ղեկավարութեամբ իրենց գեղարուեստական տնօրէն ու զլխաւոր ղեկավար Արամ Ղարաբեկեանի ու Ռոբերտ Սլքէյեանի, ներկայացուցին Կոմիտասէն քանի մը երգ եւ Արմէն Տիգրանեանի «Անուշ»-էն վեց պար ու վերջին տեսարանը:

22 ապրիլին հերթը Համազգային թատրոնինն էր, Փաւստոս Բուզանդ փողոցին վրայ՝ թատերական հիմնարկի սրահին մէջ, որ, ի՛նչ հաճոյք՝ պատանիներով ու երիտասարդներով էր լեցուն: Հրաշեայ Գասպարեան բեմադրեց Մկրտիչ Խերանեանի «Շխոնց Միհրանը», որ Վանէն տեղահանուած էր, Խ. Հայաստան կ'ապրէր, բայց հոգիով հոն էր միշտ՝ Երկիրը:

23 ապրիլին դարձեալ հրաւիրեալն էինք համաժողովի կազմակերպիչ յանձնախումբին: Այս անգամ Սպենդիարեան թատերասրահին մէջ Հայաստանի պետական



ակադեմիական երգչախումբը եւ պետական ֆիլիհարմոնիկ նուագախումբը Յովհաննէս Զեքիճեանի ղեկավարութեամբ, մեզի հրամցուցին հոգեւոր երաժշտութիւն հայ եւ եւրոպացի յօրինողներէ՝ Կոմիտաս, Պարթեւեան, Այտընեան, Հենդել, Գունօ, Ֆօրէ, Վերդի, Բեռլիոզ:

Ապա, 25 ապրիլին, Արամ

Սարեանի արձանին շուրջ...

Խաչատուրեան համերգասրահին մէջ, ուր տնօրէնին օթեակը տրամադրուեցաւ մեզի, շնորհիւ երաժշտասէր ընկերոջ՝ Ատգէնի լաւ ծանօթութիւններուն... Սուգաննա Սաֆարեանի համերգն էր, ազգային, հայրենասիրական եւ յեղափոխական երգերով, որ սակայն երբ անցաւ անոնց այսպէս կոչուած «արդիական» մեկնաբանութեան, տեսաբեկորներու (video-clips) ընկերակցութեամբ, մեզի համար դարձաւ անմարսելի, ու մենք դադարին կամացուկ մը խոյս տուինք դահլիճէն: Ներկաները, սակայն, մեծ խանդավառութեամբ կը ծափահարէին... Յետոյ իմացանք, որ յայտագրին երկրորդ մասը շատ աւելի լաւ է եղեր, եւ ինչո՞ւ չըլլար - երգչուհին վաստակ ու անուն ունի:


Յաջորդ օրը, 26 ապրիլին, որոշեալ ժամուն (սովորաբար. երեկոյեան 7-ին կը սկսին նման միջոցառումները) ներկայացանք Սպենդիարեան սրահի մուտքին, ներկայ ըլլալու «Համերգ Մեծ եղեռնի» ներկայացումին:

Դռները փակ էին. պահ մը կարծեցինք, որ սխալ ժամու հասած ենք, բայց ոչ: Ատգէն, որ երաժշտական միջավայրի ծակն ու ծուկը գիտէ, իջաւ վար՝ գրասենեակները, ստուգելու համար, եւ քիչ ետք լսեցինք իր բարձր ձայնը, յանդիմանութիւնները, եւ պատասխանատուին չքմեղանքները: Համերգը յետաձգուած էր մի քանի օրով – հակասական պատճառաբանութիւններ տրուեցան, թէ միայն 6 տոմս ծախուած է, թէ ղեկավարը անհանգստացած է, եւ այլն: Մեր ներդրութիւնը այն էր, որ մուտքին ոչ ոք կար բացատրութիւն տալու. ոչ իսկ փոքր ազդ մը...

Նոյն օրը, սակայն, կէսօրէ ետք մենք արդէն վայելած էինք ելոյթ մը, Աննօ Բարաջանեան սրահին մէջ, Աշուղ Զիւանու անուան դպրոցի սաներուն կողմէ տրուած. Մայաթ Նովայի, Զիւանիի եւ այլ աշուղներու գործերով, երգուած 8-16 տարեկան պատանիներու կողմէ, հոգիով, հասկացողութեամբ: Իսկապէս ազգային գործ մը, որուն գլուխը կեցած է իմ հին ծանօթս, սիրելի ընկերս՝ Թովմաս Պօղոսեանը:

28 ապրիլին Ռոլանտ Շառոյեանի «Մեր բաժին ուրախութիւնը» գործը ներկայացուեցաւ Վահէ Շահվերդեանի բեմադրութեամբ: Շատ ճոխ բեմայարարութեամբ, ձայնի եւ լոյսի խաղերով ու զգեստաւորումով. թատերակ մը, միշտ Մեծ եղեռնի խորքին վրայ – Յովհաննէս Թումանեան (բանաստեղծը)՝ Տիգրան Ներսիսեանի եւ Անդրանիկ (գօրավարը)՝ Սուրադ Զանիբեկեանի խաղարկութեամբ: Ներկայացումը տեղի կունենար Գաբրիէլ Սունդուկեանի անուան Ազգային ակադեմիական թատրոնին մէջ: Հրաւիրուած էինք հեղինակին իսկ կողմէ, որուն ականջին յետոյ փսփսացի. «Ափսո՛ս, որ ատեն մը քաղաքական ասպարէզ մտար. հայ գրականութիւնը կորսնցուց այդ շրջանին...»:

Յաջորդ օրը Սպենդիարեան սրահին մէջ դարձեալ, Հայաստանի պարարուեստի պետական Բարեկամութիւն համոյթի ելոյթն էր, գեղարուեստական ղեկավարութեամբ հիմնադիր եւ գլխաւոր պարուսոյց Նորայր Մեհրապեանի: Ներկայացուեցան տոհմիկ ու ժամանակակից պարեր, նոր մշակումներով, ոչ շատ տարբեր Մոնթթեալի «Համազգային»-ի Սանահին մասնաճիւղի Անի պարախումբի ելոյթներէն, ի հարկէ աւելի մասնագիտական մակարդակով: Յատուկ ուշադրութեան արժանի են Ռուբինէ Յովհաննիսեանի յօրինած



Երեւանը՝ մատենադարանի մէկ պատուհանէն դիտուած

զգեստները: Ինքն էր որ պատրաստեց Անիի աղջկանց զգեստներու շարք մը, որ տեղ հասաւ Գանատա վերադարձողներու ճամպուկներուն մէջ...

Երեւանեան մեր վերջին երեկոն յատկացուցինք Մենեկային նուագախումբի եւ Չիլինգիրեան քառեակի (Անգլիայէն, Լեւոն Չիլինգիրեանի ղեկավարած) միացեալ համերգին՝ Արամ Ղարաբեկեանի ղեկավարութեամբ, դարձեալ Մենեկային երաժշտութեան տան մէջ: Լսեցինք Էդուարդ Գրիգ, Հիւս Բուրս, Էդուարդ Էլզար: Արդէն այստեղ ակներեւ է Մփիւռքի ներդրումը:

Գրեթէ բոլոր պարագաներուն այս ներկայացումները կը վայելէն զանազան անհատներու, կազմակերպութիւններու կամ պետութեան հովանաւորութիւնը: Այլապէս ամբողջովին անմատչելի կըլլան ժողովուրդին համար:

Բայց անցնինք նաեւ Երեւանի թանգարաններէն:

Այն քիչ օրերը որ Երեւան պիտի մնայինք ու ազատ շրջելու հնարաւորութիւն պիտի ունենայինք, – ազատ, այն իմաստով որ այլ զբաղմունքներ պիտի չգրաւէին մեր ժամանակը, – մասամբ յատկացուցինք այցելելու բազմաթիւ թանգարաններէն ոմանք, մի քանին միայն: Դեռ շա՛տ ուրիշներ կան, որոնք այլ առիթներու պիտի սպասեն:



Արեւշատեանին հետ՝ Մաշտոցի հայեացքին տակ

Մեր հասնելուն յաջորդ օրն իսկ առաջին հերթին Մատենադարան գացինք, քալելով վ, Մաշտոց պողոտան ի վեր: Հոն էին եւ մեր գանատացի հիւրերը (նախկին երեսփոխան, նախկին ծերակուտական), եւ լաւ մտածեր էին մեր ընկերները՝ Հայաստանի անոնց ծանօթացումը սկսելու մեր ազգային ժառանգութեան այդ գանձարանէն: Սա իմ առաջին այցելութիւնս չէր, սակայն կնոջս համար ի հարկէ է՛ր, քանի որ իր առաջին Հայաստան գալն էր:

Տեսանք ցուցափեղկերուն մէջ կամ սեղաններուն վրայ, ապակիի ետեւ ցուցադրուած մագաղաթները, ձեռագիրները, դարեւ ր դիմացած սքանչելի մանրանկարները եւ ծաղկուած աւետարանները: Ապա, մէկ կողմէն հպարտ, միւս կողմէն՝ խոնարհած մեր նախնեաց տաղանդին առջեւ, իջանք ներքեւ բարեւ մը ըսելու տնօրէնին՝ Մէն Արեւշատեանին, ու պահ մը գրուցելու ազնուական այդ հայ մարդուն հետ: Իրեն դիտել տուի, որ որոշ նորոգութիւններ կը նկատեմ շէնքէն ներս: Այո՛, ըսաւ, շէնքը նորոգուեցաւ, շնորհիւ նուիրատուներու առատաձեռնութեան (եւ յիշեց յատկապէս տիկ. Լուիզ Միմոնի անունը, եթէ չեմ սխալիր), սակայն ինչպէ՞ս պիտի բարելաւուի շէնքին մէջիններուն՝ գիտաշխատողներու վիճակը, – անոնց մասին խորհող չկայ...

Անկէ իջանք մինչեւ Ազատութեան հրապարակը ու Թումանեանով քալեցինք մինչեւ Նալպանտեան, որոնց խաչմերուկին ալ Ալեքսանդր Սպենդիարեանի տուն-թանգարանն է: Տնօրէնուհին՝ Մարինէ Օթարեանը մէկն է այն երկու երիտասարդներէն, որոնք 1988-ի երկրաշարժին Գանատա եկան բուժուելու (եւ արուեստական սրունքներ ստանալու): Աղջիկս իր առաջին վաւերագրական ժապաւէնին մէջ անդրադարձած էր անոնց կեանքին: Մարինէ իր կեղծ ոտքերով բոլորէս աւելի մեծ կորովով ու լաւատեսութեամբ կը կատարէ իր գործը: Թանգարանը փակ էր, վերանորոգման մէջ, բայց ինք մեզի ցոյց տուաւ այն համեստ

սենեակը ուր ապրած ու ստեղծագործած է մեծ արուեստագետը: Կը մտածես՝ ի՞նչ պայմաններու տակ ապրած են մեր մեծերը եւ այսուամենայնիւ ստեղծագործած ու հարստացուցած մեր մշակութային ժառանգութիւնը:

Յաջողոյր, մի քանի օր ետք՝ ճարտարապետութեան նորաստեղծ թանգարանն էր, որ պիտի այցելէինք, ուր մեզի կը սպասէր հին ծանօթ եւ պաշտօնակիցս՝ Աշոտ Գրիգորեանը՝ տնօրէնը: Մեր խօսակցութիւնը ընթացաւ տարբեր ուղիներով, թէ՛ իր ծրագրին՝ Սփիւռքի հայ ճարտարապետներու արխիւի ստեղծման վերաբերեալ, թէ՛ Հայաստանի ճարտարապետութեան ներկայ վիճակին, եւ թէ մանաւանդ երկրի չլուծուող հարցերուն, տնտեսական դժուարութեանց ու այլ մտահոգիչ երեւոյթներու մասին: Ապա Աշոտ մեզի ընկերացաւ եւ հպարտութեամբ ցոյց տուաւ նորագոյն ցուցահանդէսը՝ Անիի ցարդ չտեսնուած, մեր կողմէ չայցելուած մասերը, որոնք բացուէ ը են վերջերս, ու թանգարանը անմիջապէս հոն է գործուղեր անցեալ փետրուարին՝ անուանի լուսանկարիչ, Փարաջանովի թանգարանի տնօրէն Զաւէն Սարգսեանը, որ մեզի համար ամբողջովին նորութիւն հանդիսացող անկիւններ, քանդակներ ու որմնանկարներ լուսանկարելով սոյն ցուցահանդէսի հում նիւթն է ստեղծեր:

Տեսանք նաեւ Երեւանի նոր կառուցուած կամ վերանորոգուած շէնքերու, ճաշարաններու, վաճառատուններու լուսանկարները, իրենց բացատրութիւններով, շատ ճաշակաւոր ցուցադրութեամբ, ինչպէս նաեւ ճարտարապետութեան ասպարէզին մէջ երախտաւոր հայորդիներու մեծադիր դիմանկարները:

Երեւանի գլխաւոր թանգարանը ի հարկէ Հանրապետութեան հրապարակի վրայ նայող Պատմութեան թանգարանն է ու նոյն շէնքին մէջ՝ Պետական պատկերասրահը: Զանոնք տեսնելու պարտականութիւնը այս անգամ վստահուեցաւ կողակցիս, քանի որ մեր համրուած ժամերը պարտաւոր էինք ամենէն արդիւնաւետ կերպով օգտագործել: Այն պահերուն, որ ես կարգ մը հանդիպումներով պիտի զբաղած ըլլայի, ինք, Արփիին հետ, որ Մոնթրէալէն ժամանած էր նոյն օրերուն, եւ ծանօթ-ընկեր կը փնտրէր իրեն ընկերանալու, պիտի կարենար օգտուիլ առիթէն ու քիչ մը աւելի յամենալ մեր ազգային ժառանգութիւնը պատասպարող այդ սրահներուն մէջ: Մտահոգութիւնը, որ պիտի ունենային անոնք՝ որքա՞ն ապահով պայմաններու մէջ կը պահուին այդ գերթանկարժէք իրերն ու ստեղծագործութիւնները:

Նոյն ձեւով Նազիկն ու Արփին պիտի այցելէն նաեւ Փարաջանովի թանգարանը, որ իրայատուկ վայր մըն է, եւ որ անպայման պէտք է գտնուի Հայաստան այցելող ամեն հայու, ամեն ն մարդու ուղեծիրին վրայ, ճանչնալու եւ հասկնալու համար ոչ միայն մեծ արուեստագետը, այլեւ հայու ոգին. աննահանջ, անընկճելի հայու ոգին: Տնօրէնին կիներ՝ տիկ. Սարգսեանը, ազնութիւնը պիտի ունենայ անձամբ ընկերանալու մերոնց ու բացատրելու Փարաջանովի ժառանգութիւնը, այլեւ ցոյց տալու Զաւէնին նոր հաւաքածոն՝ Անիի լուսանկարներուն: Գըրգ (Գուրգէն) Գրիգորեանի փրկարար ներդրումը հոս եւս շատ զգալի է շէնքի բարեգարդման տեսակէտէն...

Տարբեր փորձառութիւններ են – միշտ անմոռանալի, միշտ դաստիարակիչ ու մանաւանդ գօտեպնդիչ – Յովհաննէս Թումանեանի ու Մարտիրոս Սարեանի տուն-թանգարանները, ինչպէս նաեւ ժողովրդական արուեստներու թանգարանը այցելութիւնները: Անոնց մասին ալ կարժէ խօսիլ:

Արդարեւ, իրարմէ ոչ շատ հեռու՝ Թումանեան փողոցի վերջաւորութեան, անոր հեռանկարը ամբողջացնող, եւ քանի մը քայլ անդին, Սարեան փողոցի վրայ գտնուող գոյգ



Մարեանի տուն-թանգարանին առջև՝ Կատիայի հետ – Թումանեանի տուն թանգարանի տուն-թանգարանը այդ օր այցելողները...

տուն-թանգարանները անխուսափելի կայաններ են, որոնցմէ անցնելու է Հայաստան այցելողը:

Թումանեանինը տպաւորիչ շէնք մըն է, բանաստեղծի բարձրաքանդակ կիսանդրիով՝ կոթողային աստիճաններուն կողքին: Թամար Արամեան, հմտութեամբ ու բարեհաճոյ կերպով մեզի ներկայացուց թանգարանի բովանդակութիւնը՝ Ամենայն հայոց բանաստեղծի կեանքը, գործը, նահապետական ընտանեկան պայմանները: Անոր այս բնակարանը շատ հեռու է եղած այն աղքատիկ պայմաններէն, որոնց մէջ ապրած են շատ ուրիշներ: Սակայն Թումանեանն ալ իր կարճ կեանքի հազիւ աւարտին ունեցած է նման հանգիստ բնակարան մը՝ մեծ սենեակներով, գեղեցիկ կահաւորումով: Հաճոյքով կը լուսանկարեմ աշակերտներու մեծ խումբ մը՝ դուրսի սանդուխներուն վրայ: Կրնա՞յ Թումանեանը մոռցուիլ հայրենաբնակ պատանիներուն կողմէ:

Մարեանի թանգարանը տարբեր է, ամենէն առաջ պատկերասրահ է, ապա՝ աւելին: Մեծ նկարիչի թոռնուհիին՝ Կատիային հանդիպեր էինք Մոնթրէալի մէջ: Հետաքրքրուեցանք, թէ հո՞ն էր: Է՛ր. եւ շատ չանցած եկաւ Ղազարոս Աղայեանի ծոռ, Մարտիրոս Մարեանի թոռ եւ երգահան Ղազարոս Աղայեանի դուստր Կատարինէն, ու մեծ ուրախութեամբ ընկերացաւ մեզի, եւ անընդհատ գրուցեցինք արուեստի, ճշմարիտ արուեստի, Մարեանի գործերուն, կեղծուած գործերուն, գողցուած ու գտնուած եւ չգտնուած կտաւներուն մասին... Նազիկին մտահոգութիւնը միշտ նոյնն էր,– որքա՞ն ապահով են այս գանձերը այստեղ: Եւ չունեցանք ամբողջական հաւաստումը որ իրապէ՛ս են: Մեզի միացաւ նաեւ Կատիայի քոյրը թանգարանին տնօրէնուհի Ռուզանը, եւ առաջնորդեց ներս՝ վարպետին աշխատանոցը, որ այնպիսի վիճակի մէջ է, որ կարծես հիմա պիտի գայ ան, վրձինը ձեռք առնէ ու շարունակէ ստեղծագործել:

Այդ օր պիտի այցելէնք նաեւ Ժողովրդական արուեստներու թանգարանը, Ատգէն ընկերոջս յատուկ թելադրութեամբ: Եւ իրապէս, Հայաստան գալ ու չտեսնել այստե՛ղ հաւաքուած գանձերը՝ մեծ զրկանք պիտի ըլլար: Ժողովրդական արուեստները կընդգրկեն ձեռային աշխատանքները՝ գորգեր, փայտի, ապակիի գործեր, պղինձ, խեցեղէն, հիւսուածք, ձեռագործքեր, զգեստներ, կարասիներ եւ այլն, եւ այլն: Յուցօններէն շատեր Արեւմտեան Հայաստանէն փրկուած, վերապրած իրեր են, մանաւանդ ասեղնագործութիւն: Այստեղ

հիացմունքն ու յարգանքը զիրար կ'ամբողջացնեն: Եւ ըսել, որ ժամը 5-ին հասանք, թանգարանը փակ էր, ներսէն մեզ նկատեցին, բացին, ու տնօրէնուհին կամ իր անմիջական օգնականը (որուն անունը դժբախտաբար չեմ արձանագրեր քովս) այնքան ազնուօրէն ընկերացաւ մեզի ու տուաւ հարկ եղած բացատրութիւնները: Նազիկին հերթական հարցումին, թէ ինչպէ՞ս կ'ապահովուի այս բոլորին անվտանգութիւնը այստեղ, պատասխանը շատ տարբեր չէր այլ թանգարաններ լսուածէն.– կ'ապահինինք Աստուծոյ ու մեր ժողովուրդին...



Ս. Զօրաւոր

Երեւանը հարուստ է ոչ միայն թանգարաններով, այլ ինչպէս ամբողջ երկիրը, ինքն ալ թանգարան է բաց երկնքի տակ: Որոշ թիւով պատմական եկեղեցիներ, այլ շէնքեր ու բազմաթիւ արձաններ կան այցելելիք, տեսնելիք: Ի հարկէ անհնար է կանգ առնել իւրաքանչիւրին առջեւ եւ դիտել, գննել ու գրել անոր մասին: Մակայն կուզեմ երթանք Երեւանի երկաթուղիի կայարանը, որուն առջեւ Սասունցի Դաւիթի հանրաձանօթ արձանն է, Թուր կէճակին ձեռքին, հեծած Քուռկիկ Ջալալին. գործ՝ Երուանդ Քոչարի: Արձանին ամենէն յատկանշական մասը այն բաժակն է, համբերութեա՛ն մեր բաժակը, որ յորդած է, ու ա՛յդ պատճառաւ սուրը վերցուցած է Դաւիթ: Դժբախտաբար ջուր չկար հոսող այդ շրջուած բաժակէն. իսկ առանց ջուրին, հարց պէտք է տալ, թէ Դաւիթ, ի՞նչ կընէս այդպէս սառած՝ ձիուդ վրայ. քշէ, գնա տուն, դուն ալ հանգստացիր...

Թանգարաններուն կարգին թէ արձաններուն-յուշարձաններուն՝ հաշուելու ենք պանթէոնը, ուր թաղուած են մեր մեծերէն ոմանք. անոնց մէջ՝ Կոմիտաս, Սարոյեան, Իսահակեան, Սարեան, Խաչատրեան եւ ուրիշներ: Մէկը կը դիմաւորէ մեզ, կընկերանայ, ու անգիր կարտասանէ Իսահակեանէն, Թումանեանէն կամ Տէրեանէն: Յայտնի է, որ ուսեալ, մտաւորական մարդ է, կամ արուեստագէտ, բայց ինչպէս այդ տարօրինակ դերին մէջ: Հին օրերէն մնացած համակրելի տիպար մը, որ սակայն կարծես այլեւս չի պատկանիր մեր ժամանակներուն: Այստեղ չես կրնար խառն զգացումներ չապրիլ, չափսոսալ այն գրեթէ անտէր վիճակին համար, որուն մատնուած է գերեզմանատունը ընդհանրապէս, եւ մեծերէն շատեր, որոնք հազիւ աննշմար շիրմաքարի մը միայն արժանացած են, մինչ ուրիշներ՝ անհամեմատօրէն աւելի խոշոր տապանաքարերու...: Ինչպէ՞ս բացատրել այս երեւոյթը. այդ հսկայ չափէ՞րն են, որ մեր յարգանքին արտայայտութիւնը պիտի հանդիսանան:

Եւ տակաւին որքա՛ն այլ արժանաւոր գաւակները մեր ժողովուրդին, որոնց աճիւնները Երեւանի այլ գերեզմանատուներէն ու Սփիւռքի տարբեր տարբեր երկիրներէն փոխադրուելու են այստեղ, որ իսկական պանթէոնի վերածուի այս ծառաշատ բայց աղքատիկ գերեզմանատունը:

Եկեք, սակայն այժմ մտնենք նաեւ մի քանի եկեղեցի:



Ս. Գ. Լուսաւորիչի մէջ պահպանուող սքանչելիքը



Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարը

Երեւանի մէջ կան պատմական եկեղեցիներ, որոնք մաս կը կազմեն մեր ճարտարապետական ժառանգութեան եւ իրապէս արուեստի գանձեր են, դժբախտաբար սակայն խորհրդային տարիներու հետքերը կը յամենան տակաւին, եւ անոնցմէ շատեր կը մնան անձանօթ, աչքէ հեռու, երբեմն լքուած վիճակի մէջ, յաճախ այնպէս շրջապատուած այլ

շենքերով, որ յատուկ ճիգ պետք է զանոնք գտնելու, տեսնելու ու մանաւանդ անոնցմէ ներս մտնելու համար: Չեմ գիտեր, Էջմիածին ինչի՞ կը սպասէ զանոնք նորոգել տալու եւ աւելի մատչելի դարձնելու համար հանրութեան: Եւ կըսեն, թէ հսկայ հարստութիւն կայ դիզուած Ամենայն հայոց կաթողիկոսի տրամադրութեան տակ...

Անոնց մասին խօսելէ առաջ, սակայն, կ'ուզեմ անդրադառնալ Տիգրան Մեծ պողոտային վրայ, Երեւանի կեդրոնէն (Հանրապետութեան հրապարակէն) քիչ մը հարաւ կառուցուած նոր մայր տաճարին՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչի մասին, տաճար, որ հրապարակէն ալ կ'երեւի, երբ կը կենաք Արտգործ նախարարութեան շէնքին առջեւ:

Լսած էի, որ կոթողային սխալ մըն էր եղած անոր կառուցումը, եւ անձամբ տեսնելով՝ համոզուեցայ, որ այո, այդպէս է: Առաջին տպաւորութիւնը որ կ'ունենաս, երբ կը հասնիս Մայր տաճարին առջեւի հսկայ տարածքը՝ միջավայրի անպատշաճութիւնն է: Տիգրան Մեծի հանդիպակաց մայրին վրայ հսկայ վաճառատուն մըն է, իր բնական եռուզերով. փողոցը՝ աղմկոտ, խճողուած: Դէպի եկեղեցի երբ քալել կը սկսիս, ձախին աջքիդ կը զարնէ տարօրինակ արձան մը. երկու ձիերու վրայ հեծած կերպար մը. ըսին, որ Անդրանիկի նոր արձանն է. ինչո՞ւ երկու ձի: Իսկ արձանէն անդին՝ զբօսավայր մը՝ «Լունա փարք» մը, իր դարձող անիւներով ու կարուսէլներով: Ճամբուն երկայնքին, որ աստիճան առ աստիճան կը բարձրանայ մինչեւ տաճարը՝ վաճառողներ ու մուրացկաններ. սրբանկար, ներսէն աւելի աժան մով ծախող, եւ այլն, եւ այլն: Կը մօտենաս եկեղեցիին, ու հետզհետէ աւելի ու աւելի կը ճնշեն վրադ հսկայ չափերը: Կը մտնես ներս՝ անսահման տարածութիւն, պէթոնէ հսկայ սիւներ ու պատեր, ոչինչ՝ սրբատեղիի մը խորհրդաւորութիւնն ու նուիրականութիւնը ներշնչող: Մինչդէռ, ի՞նչ անկրկնելի առիթ էր, Հայաստանի մէջ պետականօրէն քրիստոնէութեան որդեգրման 1700-ամեակը՝ ժամանակակից լեզուով նոր տաճար մը կառուցելու եւ հայկական ճարտարապետութիւնը քսանմէկերորդ դարը փոխանցելու համար: Դասական ձեւեր ու ծաւալներ իրարու փակցնելով կարելի չէ նոր շէնք մէջտեղ բերել, ալ ո՞ւր մնաց հոգեւոր ամրոց: Ափսոս ս:



Այդտեղ միակ բանը որ իրապէս սքանչացում կը պատճառէ, այն չորս բարակ սիւներու վրայ բարձրացած ամպհովանին է, ծածկը, որ վկայարան մըն է Լուսաւորչի նշխարներուն վրայ հսկող, բերուած հոն՝ գաւիթին մէջտեղ՝ Էջմիածնէն կամ այլ հին եկեղեցիէ մը:

Միւս համեմատաբար նոր եկեղեցին Ս. Սարգիսն է, Հրազդանի եզերքը, նոյնանուն մարգաղաշտին դիմաց, որ իր մեծ չափերով հանդերձ՝ կրցած է որոշ նկարագիր մը զգենուլ ներսով ու դուրսով, եւ հակառակ երկու կողմէն շրջապատուած ըլլալուն իր բազմալարկ շէնքերով, որոշ չափով կը պարտադրէ ինքզինք՝ իր նախանձելի տեղադրման պատճառաւ:

Միւս երկու եկեղեցիները, ուր ձեզ պիտի առաջնորդեմ Երեւանի մէջ Ս. Զօրաւորն է, եւ Ս. Յովհաննէս:

Առաջինը, որ պետք չէ շփոթել նոյնքան

Ս. Յովհաննէս

հետաքրքրական բայց աւելի փոքր Ս. Զօրավարին հետ, որուն առջեւն անցանք, առանց սակայն ներս մտնելու, հասարակ անցորդի աչքէն կը վրիպի: Պէտք է փնտռել լճայն, – քանդակագործ Արա Սարգսեանի ու գեղանկարիչ Յակոբ Կոչոյեանի տուն-թանգարաններուն ետեւն է, – եւ այս առթիւ անպայման կը տեսնես նաեւ առաջինին քանդակներէն ոմանք, որ կը զարդարեն բակը: Ս. Զօրաւորը (Ս. Աստուածածին) 1693-ին բացուած է, բայց իրեն կպած ունի շատ աւելի հին, թերեւ Ե. դարու մատուռ-դամբան մը: Գեղեցիկ եկեղեցի մըն է, հայկական ճարտարապետութեան լաւագոյն նմոյշներուն նման: Իր անպատեհութիւնը (կորսուած է բնակելի թաղամասի մէջ) նաեւ իրեն կու տայ առաւելութիւնը հանդարտ շրջապատի մը:



Ս. Կաթողիկէ

Երկրորդը՝ Ս. Յովհաննէսը աւելի աչքառու է: Երբ քաղաքի կեդրոնէն կու գաս Պարոնեան փողոցէն, եւ կուղղուիս դէպի Պոսշեան, աջիդ՝ բարձունքի մը վրայ կը գտնուի այս նարնջագոյն ու բազմագոյն տուֆով կառուցուած եկեղեցին (1710-ի), որուն շրջակայքը սակայն վերանորոգման ու վերայարդարման կը կարօտի: Ան ալ ունի մեր դասական եկեղեցիներու ընդհանուր պատկերը, պարզ, մաքուր գիծերով:

Երկուքն ալ գործող եկեղեցիներ են, թաղի՝ եկեղեցիներ, որոնց ներկայութիւնը թե՛ մեր քրիստոնէական արմատներուն եւ թե՛ մեր մշակութային ժառանգութեան հետ անմիջական առնչութիւն մը կը ստեղծեն:

Ասոնցմէ գատ Երեւանի մէջ կայ նաեւ Ս. Կաթողիկէն, որ մեր ուղեծիրէն դուրս մնաց այս անգամ:

Հայաստանի Հանրապետութեան այժմու նեղ սահմաններուն մէջ սակայն կան հարիւրաւոր այլ պատմական յուշարձաններ, որոնք կը սպասեն իւրաքանչիւր հայու այցելութեան, ուխտագնացութեան: Հինգ պտոյտներով պիտի ջանանք ուխտի երթալ անոնցմէ ոմանց՝ նախ քան փակելը այս երկա ը ուղեգրութիւնը:

Անշուշտ քանի մը միօրեայ շրջապտոյտով կարելի չէ ծածկել ամբողջ Հայաստանի տարածքը ու ձեւացնել թէ տեսանք ու ճանչցանք մեր երկիրը: Բազմաթիւ պտոյտներ են պէտք, իսկ մենք ահա արդէն երեք այցելութիւններէ ստիպուեցանք հրաժարիլ, քանի որ մէկ օրուան մէջ երթալ-գալը եւ միաժամանակ տուեալ վայրերը կարգին այցելել ու վայելելը պարզապէս անհնար պիտի ըլլար. անոնցմէ մէկը Գիւմրին ու հիւսիս-արեւմտեան ծայրամասն էր, ճամբան անցնելով Բաշ-Ապարանէն, Թալիսէն, Անիէն եւայլն, միւսը Սանահին-Հաղբատն էր, որուն ճամբուն վրայ ալ կարելի պիտի ըլլար Վանաձորն ու Թումանեանի աշխարհը տեսնել, իսկ երրորդը Տաթեւն էր, ուր հասնելու համար պիտի

անցնելիք տակալին Միսիանէն, տեսնելիք Շաքի ջրվեժը, Ջորաց քարերը եւ այլն: Այս բոլորը ասուպային այցելութենէ մը աւելիին արժանի են, ու, հակառակ անոր որ մեծ մասը ինձի արդէն ծանօթ էր, պիտի ուզէի որ ժամանակը ունենայինք, ու Նազիկն ու Արփին կարենային ըմբռնել մեր բնութեան հրաշալիքներն ու մեր մշակոյթի բազմաթիւ գլուխգործոցները:

Դեռ չեմ ակնարկեր Արցախի, որ ահա արդէն երրորդ անգամ ըլլալով չկրցայ այցելել: Հոն մի քանի օր պետք է մնայ:

Այդ բոլորը թողելով յառաջիկայ ուխտագնացութիւններու՝ հիմա երթանք-տեսնենք մի քանի կարեւոր վայրեր, որոնք երբեք դուրս պետք չէ իյնան ձեր ուղեծիրէն: Չմոռնաք նաեւ ձեր ձգել քարտէսներու այն լաւ տեսարակը, նոր հրատարակուած, որ իր յստակութեամբ, մաքուր ու ներկայանալի տեսքով եւ տեղեկութիւններու ճշտութեամբ կրնայ մրցիլ որեւէ ամերիկեան, գանատական կամ եւրոպական նման հրատարակութեան հետ:

Մագոն է մեր հմուտ առաջնորդն ու հնագանդ վարորդը, որ ո՛ր որ ուզենք պիտի կանգնեցնէ ինքնաշարժը՝ որպէսզի Արփին ու ես լուսանկարենք հայրենի տեսարանները, կոթողները: Արփին ընդհանրապէս մեզի պիտի ընկերանայ. երկու պտոյտի պիտի վայելենք՝ նաեւ ընկերակցութիւնը մեր տանտիրուհիին՝ ընկերուհիին՝ Յասմիկին, իսկ մէկ պտոյտի՝ Լարիսային, գրող ու լրագրող, որուն հետ գրուցելու լուսագոյն պատեհութիւնը իրարու հետ ճամբայ կտրելն էր:

Անխուսափելիօրէն, առաջին այցելութիւնը Գառնի-Գեղարդ գոյգ տաճարներուն պիտի տանք, Երեւանէն ամենէն աւելի մօտիկ հեռաւորութեան վրայ. կարելի է կէս օրուան մէջ երկուքն ալ տեսնել, ու ատենին վերադառնալ Երեւան՝ երեկոյեան այլ միջոցառման մասնակցելու համար:

Գառնիի տաճարը կը գտնուի Կոտայքի մարզին մէջ: Երեւանի արեւելեան կողմէն դուրս կու գանք (Ալեքս. Միասնիկեանի անուան պողոտայով), կ'անցնինք Նոր Եորք քաղաքամասէն՝ կենդանաբանական պարտէզի ու Ջրաշխարհի կողքով, Գայի պողոտայէն եւ Ա. Յովհաննիսեանի փողոցէն կը թողունք Երեւանի սահմանները, կը հանդիպինք Ջրվեժ եւ այլ բնակավայրերը, ու կ'ուղղուինք դէպի արեւելք: Ճամբուն վրայ կանգ պետք է առնել Չարենցի կամարին առջեւ, բարձրանալ աստիճանները, ափսոսալ, որ շրջակայքը մնացած է անխնամ, բայց այդ կամարին տակէն դիտել Մասիսը, սքանչանալ մինչեւ Մասիս փռուած Արարատեան դաշտով, վերանորոգել ուխտդ՝ լեռը ետ, Հայաստանի սահմաններէն ներս



բերելու ի խնդիր, ու շարունակել ճանապարհը՝ մտնելու համար Գեղամայ լեռներու գեղատեսիլ շրջանը, Ողջաբերդի լեռնաշղթային եւ Խոսրովի արգելոցին հարաւը, ուր իր ամբողջ պարզութեամբ ու վեհութեամբ կանգնած է հելլենիստական շրջանէն (Ա. դար, Ք.ե.) մեր հողին վրայ կանգուն միակ քարէ վկայարանը՝ Գառնիի տաճարը:


Տեսարանը Գառնիէն

Իրականութեան մէջ, անոր ներկայ կանգուն վիճակը կը պարտինք ճարտարապետ Ալեքսանտր Մահինեանին, որուն ամբողջ կեանքին գործը հանդիսացաւ զայն քար առ քար վերակերտելը: Պէտք չէ մոռնալ տեսնել նաեւ բաղնիքներու ակերակները՝ իրենց գունաւոր խճանկարներով:

Այստեղ, սակայն, կառոյցներէն ակելի քեզ տպաւորողը բնութիւնը ինքն է, կանաչը, գետակին արծաթ ու ոլորապտոյտ երիզը, ծալքաւոր



Գառնիի տաճարը



Գեղարդ

լեռնալանջերը, ու հարթ մակերեսով ժայռը, ուր անառիկ ամրոց մը կարելի էր շինել, կամ մեզի պէս վերէն դիտողներուն համար պարի հսկայ բեմ մը սարքել եւ ճոխ ու աննախընթաց ներկայացում մը կատարել...

Շարունակելով միեւնոյն ճանապարհը, պիտի հասնինք Գեղարդ, կամ Այրիվանք, 13-րդ դարու այդ ժայռափոր եկեղեցիներու համալիրը: Այստեղ ժայռերը կը խօսին, կը հիացնեն քեզ իրենց քանդակներով: Միշտ հարց կու տաս դուն քեզի, որ ինչպէ՞ս մեր նախահայրերը յաջողած են իրենց հպատակեցնել այդ ժայռերը, փորել, իջնել անոնց խորքը ու տաճա՛ր սարքել: Ճաշակով, տաղանդով: Ոչինչ ձգուած է պատահականութեան:

Այստեղէն պիտի մեկնինք լիացած, եւ գալիք շրջապտոյտներուն ակնդէտ սպասումով:

Յաջորդը՝ Սեւան-Դիլիջան շրջանը պիտի ըլլայ, եւ առաջին անգամ ըլլալով պիտի տեսնեմ Հաղարծինն ու Գոշավանքը:

Չեմ կարծեր, որ կայ Հայաստան այցելող մը, որ Սեւան գացած չըլլայ: Նոյնիսկ խորհրդային օրերուն ան զբօսաշրջիկներու ուղեծիրին վրայ է եղած միշտ:

Մենք, անցնելով Նոր Արաբկիր եւ Նոր Զեյթուն քաղաքամասերէն, Երեւանի հիւսիս-արեւելեան կողմէն պիտի առնենք միջպետական Մ-4 (Մ-4՝ քարտէսին վրայ) ճանապարհը, որ կը կոչուի նաեւ Թբիլիսեան խճուղի, պիտի ուղղուինք միշտ հիւսիս-արեւելք, մեր ետին պիտի ձգենք Արովեան, Բիւրեղական, Չարենցաւան, Հրազդան (Կոտայքի մարզային կեդրոն) բնակավայրերը, պիտի մտնենք Գեղարքունեաց մարզը ու Սեւանի հիւսիս-արեւմտեան եզերքով պիտի հասնինք այդ եզերքին կեդրոնը գտնուող թերակղզին: Ճամբուն ընթացքին, ամենէն աչքի զարնող երեւոյթը ամպերու լոգանքն է Սեւանայ լճին մէջ (մեզի համար՝ Սեւանայ ծո՛վուն մէջ...): Անոնք, այդ սպիտակ բամպակի նման ամպերը, շրջակայ

լանջերէն սահելով վար, կու
գան կը հասնին ջուրին
մակերեսին, ստեղծելով
չնաշխարհիկ պատկեր մը:

Մենք, սակայն
լողազգեստ չենք բերած,
տակաւին այնքան ալ տաք չէ.
Եկած ենք տեսնելու Ս.
Առաքելոցն ու Ս.
Աստուածածինը, որ 9-րդ
դարէն ի վեր հոն են այդպէս եւ
լուռ կը գրուցեն իրարու հետ:
Պարզ, հայկական

Ճարտարապետութեան ներկայանալի նմոյշներ են, սքանչելի կերպով ընդլուզուած
կապուտակ ջուրերուն, այսօր՝ մոխրագոյն երկնքին, ու հողին հետ, որուն գոյնով ալ իրենց
քարերն են, քիչ մը սեւցած՝ դարերու փոշիէն... Մեր եկած ժամուն փակ են եկեղեցիները,



Հաղարծինի պատմական ծառն ու խաչքարը

դարձուածքներէն մէկուն՝ յանկարծ կերելի վանքը, աշխարհէն քաշուած՝ այսպէս բնութեան
մէջ ամփոփուած: Ամբողջ համալիր մըն է, որուն շինութիւնը Ժ.-ԺԳ. դարերուն կատարուած
է մաս առ մաս: Ֆրանսայէն խումբ մը կայ. երեխաները ամբողջովին հայախօս են, շատ
կուրախանանք. Փարիզի դպրոցասերի աշակերտներ են. կը խօսինք իրենց հետ, իրենց (մեզի
ծանօթ) ուսուցչուհիներէն ոմանց անունները կու տանք, կը զարմանան: Կը նկատենք, որ
իրենց կընկերանայ շատ ներկայանալի երիտասարդ առաջնորդ մը, որ ֆրանսերէն
խօսողներուն ֆրանսերէն բացատրութիւններ կու տայ, հայախօսներուն՝ հայերէն: Եւ լաւ
հմուտ կերելի: Կը հրճուինք մեր նոր երիտասարդութեան
ներկայութեան համար:

Այստեղ, բացի շէնքերէն՝ իրենց հնաբոյր, սեւցած ու
միշտ թանկագին պատերով, ծանօթ հայկական գմբէթներով

Հաղարծին



Մեւան – ամպերու լոգանքը...

մենք ալ շատ ժամանակ չունինք,
ուստի կը շարունակենք մեր ճամբան,
ափսոսալով, որ աւելի խնամքով չեն
պահուիր այս պատմական վայրերը:

Անցնելով լեռներուն տակէն
նոր բացուած փապուղիէն, որ մեզ կը
խնայէ ոլորապտոյտ լեռնային
ճանապարհը (այլապէս գեղեցիկ՝ իր
մշտափոփոխ տեսարաններով), կը
մտնենք Տաւուշի մարզ, կուղղուինք
դէպի Դիլիջան, եւ անկէ ալ անդին՝
դէպի Հաղարծին, որ Դիլիջանի
արգելոցի կանաչապատ դրախտին
մէջն է: Պտղատու շատ ծառեր ծաղկած
են՝ սպիտակ հարսերու նման: Եւ ահա

ու մեծ ու փոքր խաչքարերով, պետք չէ փախցնել այն եօթհարիւրամեայ ծառը, որուն բունին բացուած խոռոչին մէջ երկուքով, թերեւս ալ երեքով կարելի է սեղմիլ: Անշուշտ պիտի նկարենք:

Հաղարծինէն Գոշավանք՝ շատ հաճելի, լեռնային նեղ ճանապարհ մըն է, նոյնքան նեղ գետակի մը եզերքին, բարձրաբերձ ժայռերու քունելով ընթացող:

Գոշավանքը, նոյնպէս համալիր մը՝ ԺԲ.-ԺԳ. դարերէն մեզի հասնող, ու կոչուած ի յիշատակ այնտեղ գործած Մխիթար Գոշ վանահօր, տարբեր նկարագիր մը ունի: Որոշ բարձունքէ մը ան կը տիրապետէ շրջապատին, գիւղին եւ տակաւին անկէ անդին փռուած ձորերուն ու լանջերուն: Այստեղ մեծ չափերու խաչքարեր կան կանգուն, ամենէն հարուստ փորագրութիւններով:

Երբ կը հասնինք, ուրիշ խումբեր չկան տակաւին, սակայն գիւղացիները մեզ տեսնելով լուր կը դրկեն, ու ահա, վարերէն մեր առջեւ կելլէ Զարիկը, տեղւոյն ֆուլբորին մաս կազմող կին մը, որ ի յայտ կու գայ թէ հին օրերէն գոց ստրված է Գոշավանքի պատմութիւնը,



Գոշավանքը կիշխե...





Եւ մեզի «գոց» (անգիր) կ'արտասանէ
 զայն, ապա ցոյց տալու համար
 եկեղեցոյ բացառիկ
 ձայնականութիւնը, կըսէ ձեզի երգ մը
 երգեմ ու կ'երգէ... Սայաթ Նովայէն
 սիրերգ մը:

Գլխաւոր համալիրին
 հանդիպակաց բլուրին վրայ ալ կայ
 մատուռ մը ու Մխիթար Գոշի
 դամբարանը: Մեծ հոգեւորական-
 մտաւորականը կը յարգուի դարերէ ի
 վեր...

Նոյն ճանապարհով պիտի
 վերադառնանք գլխաւոր մայրուղին,
 Մ-4-ը, ու ճամբու կէսին, Աղստեւ

Աղստեւի եզերքը

գետի եզերքը,– ուր կովեր կ'արածին,– կանաչապատ լեռներուն մէջ, մեր հետ բերած
 սանտուիչները պիտի ուտենք:

«Մինչեւ հոն եթէ պիտի երթաս՝ Ջուխտակ վանքը չփախցնէ՛ս»,– հրահանգելու պէս
 թելադրեր էր Գրիգոր Ջանիկեան՝ հին ծանօթս, գրող, խմբագիր ու թարգմանիչ ընկերս:
 Դիլիջան երբ կը մտնենք, մեզի ցոյց կու տան ճանապարհը, որ քաղաքի կեդրոնի փոքր
 հրապարակի մէկ կողմէն զարիվեր բարձրացող ճամբայ մըն է, որ կու գայ կանգ կառնէ
 ընպելի ջուրի գործարանին առջեւ: Ինքնաշարժը պիտի թողունք այդտեղ ու ոտքով պիտի
 բարձրանանք մնացեալը: Անձրեւ եկած է, գետինը թաց է, եւ Արփին ու Յասմիկը կը
 ստիպուին հրաժարիլ. կը մնան Սագոյին հետ: Մենք երկուքս կը սկսինք քալել դէպի վերեւ,
 անտառի եզերքէն: Տեղ մը, սակայն մենք ալ կը յուսահատինք, քանի որ վանք-մանք չենք
 տեսներ, իսկ գետինը հետզհետէ աւելի ցեխոտ կը դառնայ: Կորոշենք վերադառնալ:

Մեզ կը կանգնեցնէ մեր ետեւէն եկող մէկը. «ինչո՞ւ ետ դարձաք, շատ չմնաց: Եկէք ես
 ձեզ առաջնորդեմ»,– կըսէ, ու մենք կը հետեւինք իրեն: Ինք՝ Նաիկ Խաչատրեան, տեղւոյն
 բնակիչներէն է, ազարակ ունի: Հարց կու տայ, ուրկէ՞ կու գանք, կը պատասխանենք: «Վա՛յ»,–
 կըսէ,– «Գանատայից եկել էք Ջուխտակ վա՞նք տեսնելու»,– եւ չի գիտեր ինչպէ՞ս յայտնէ իր
 յուզումը՝ մեր ձեռքերը կը համբուրէ:

Երկու փոքր եկեղեցիներ են, նոյնպէս միջնադարէն մնացած. պատերը՝ սեւցած:

Անոնցմէ աւելի մեծին գմբէթը
 չկայ, իսկ դուրսէն երկաթէ
 գօտիներ ու անկիւնակալներ
 դրուած են, որպէսզի,
 երկրաշարժէ վնասուած՝ չփլի՛ն
 այդ պատեր: Կը մտնենք ներս.
 աղօթել լո՛ կու գայ. իսկ ծափ կը
 զարնես, եւ այնպէ՛ս արձագանգ
 կը ստանաս...

Դուրսը ծաղկած
 ծառերու հարսանիք է:

Ջուխտակ վանք



Երրորդ շրջապտոյտը՝ ամենէն երկարը, պիտի կատարենք դէպի Խոր Վիրապ, Ամաղու Նորավանք, Ջերմուկ ու Գլաձոր:

Երեւանէն դուրս կու գանք հարաւ-արեւմտեան ծայրամասէն՝ անցնելով Շէնգաւիթ, Նորագաւիթ քաղաքամասերէն ու Արշակունեաց պողոտայէն կ'անենք Արտաշատի խճուղին՝ Մ-2ը (M-2): Կ'անցնինք Արարատի Արտաշատ մարզային կեդրոնին քովէն ու կը բռնենք Խոր վիրապի ճամբան:


Այդ ճամբուն վերջին մասը, դաշտերուն միջեւ, շարժանկարային իւրայատուկ բնոյթ մը ունի. խորքին՝ Մասիսները, հորիզոնին վրայ՝ ժայռի բլուր մը, որուն վրայ կ'երեւի ծանօթ գմբէթը: Հետզհետէ քեզի կը մօտենայ բլուրը, մինչեւ որ յստակ կը գծագրուին պարիսպները, եկեղեցին: Կանգ կ'առնենք ստորոտը: Մեզ կը շրջապատեն ու յամառօրէն մեզի կընկերանան գիւղին տղաքը, խնդրելով որ աղանի թոցնէն մեզի համար, փոխան փոքր ձեռաղիբի մը... Տխուր է երեւոյթը, կը փորձենք շրջանցել:

Խոր վիրապը, ուր նետուած է Անակի որդի Գրիգորը, ապագայ Լուսաւորիչը, Գ. դարէն կը մնայ. անոր վրայ կ'առուցուած գեղեցիկ եկեղեցին՝ ԺԷ. դարէն: Կարմրաւուն տուֆով: Մահմանապահ եկեղեցի մըն է: Անոր դարատափէն, բայց մանաւանդ քովի բարձունքին վերեւէն առջեւ կը փռուի Արարատեան դաշտը, մինչեւ Արարատ լեռը՝ իր ամբողջ շքեղութեա մը ու... ողբերգութեա մը: Կը տեսնես երեք շարք փշալարերը, ապա՝ Արաքսը, մա յը Արաքսը, որ լուռ վկան կը հանդիսանայ մեր պատմութեան, մեր փառքի՝ եւ վշտի օրերուն:



Խոր վիրապ, խոր վիշտ

Ժամեր կրնանք չշարժիլ այդ բլուրին վրայէն, սակայն օրուան յայտագիրը երկար է: Կը մեկնինք, հեռուէն միայն դիտելով ուրիշ փոքր մօտակայ բլուրի մը վրայ կանգնեցուած ֆետայիի արձանը՝ Գեորգ Չաւուշի կերպարով: Պիտի իջնենք մինչեւ Երասխա աւանը, Նախիջեւանի սահմանը, անկէ՝ շարունակենք մինչեւ Արենի, ու թողունք մայրուղին, մտնենք Ամաղու տանող կիրճը, անցնելով երկու կողմէն զինք ստեղծած բարձրաբերձ ժայռերուն մէջէն, բարձրանանք վերեւ ու կանգ առնենք Նորավանքի ցանկապատին առջեւ: Ծառերու շուքին, կարմրաւուն ժայռերով շրջապատուած, հոն դրուած սեղաններէն մէկուն շուրջ մեր հացը ճաշակելէ ետք, պիտի մտնենք վանքի շրջափակէն ներս եւ շնորհակալ ըլլանք կրկին ու կրկին մոնթրէլաբնակ մեր ազնիւ բարերարներուն՝ Տիգրան եւ Տիանա Հաճէթեաններուն, որ հոգացին այս անգուզական համալիրին վերանորոգման, վերականգնման ծախսերը:



Նորավանք

Ապա ծունկի պիտի գամ Մումիկ ճարտարապետի շիրմաքարին առջև ու շնորհակալ ըլլամ նաև իրե՛ն, որ ԺԳ.-ԺԴ. դարերուն հոյակերտեր է այս գողտրիկ եկեղեցիները՝ հարստացնելով մեր ազգային ժառանգութիւնը. ի՛նչ վարպետութեամբ ան յաջողեր է մարդակերտ տաճարները ու աստուածակերտ բնութիւնը ընդելուզել իրարու:

Այստեղ պիտի հանդիպինք նոր սերունդի մէկ այլ ներկայացուցիչին՝ Հրայրին, որ գերմանական զբոսաշրջիկներու խումբի մը առաջնորդութիւն կընէր: Պահ մը երբ կը բաժնուի խումբէն, հետը խօսելու առիթ մը կը ստեղծուի մեզի համար: Կափսոսայ, որ չենք գիտեր արժանաւորապէս պահել-պահպանել մեր հարստութիւնները եւ դաս չենք առներ ուրիշներէն (հրեաներէ՛ն)... իբր ժողովուրդ տակաւին երկար ճամբայ ունինք կտրելիք:

Նոյնը նաև... մենք հինգս, ուստի այստեղէն ալ կը բաժնուինք, ետ՝ Մ-2 կէլլենք: Վայոց ձորի մարզն ենք, կանցնինք Եղեգնաձոր մարզային կեդրոնէն, Վայքէն, ապա Կեչուտի ջրամբարի կողքէն կոտորուինք դէպի Ջերմուկ: Բառին բուն առումով լեռներուն ծոցն ենք: Ընդհանրապէս կանաչ են լեռները: Բարձր մասերուն վրայ տակաւին կը նշմարուին սպիտակ բիծեր – ձիւնի սառած, չհալած կտորներ են, իսկ գագաթները տակաւին ձիւնապատ են:

Անդնդախոր ձորերուն ի տես՝ շունչդ կը բռնուի...

Կը հասնինք Ջերմուկ, որ անուանի ամառանոց է: Յուսախաբ կըլլանք ի տես անբարեկարգութեան: Նման վայրեր զբոսաշրջութեան սքանչելի կէտերու կրնան վերածուիլ՝ եթէ քիչ մը խնամք ցուցաբերուի: Ջերմուկը հեռու է Երեւանէն, եւ կերելի ամրան օդային սպասարկութիւն ալ կայ, հիմա սակայն այս երկար ճամբան կտրելով է միայն, որ կրնաք հոս գալ:

Կը մտնենք ու կը պտտինք նորոգուած Արմէնիա պանդոկ-բուժարանը, կը տեսնենք տաք ջուրի բաղնիքները, դարմանատունները: «Ի՛նչ լաւ կըլլար գայինք շաբաթ մը այստեղ հանգստանայինք», բարձրաձայն կը մտածէ Նազիկ: Գոնէ հիմա քիչ մը մնանք, կ'առաջարկեմ, սակայն ելեկտրականութիւն չկայ, ուստի հոս ճաշելու հնարաւորութիւն ալ



չկայ: Օշարակ մը, մի քանի լուսանկար, ու կը բռնենք վերադարձի ճամբան: Նոյն սքանչացումը կ'ապրինք մեր լեռներուն, ձորերուն ծառ ու ծաղիկին (գետինը հագուագիւտ են այս եղանակին, սակայն ճերմակով վառուած են ծառերը), հեռուն հոսող գետակներուն, ջրամբարին ու ընդհանուր իրերայաջորդ համայնապատկերներուն ի տես: Ի տարբերութիւն նախորդ երկու շրջապտոյտներուն, այս մէկուն աստէն կը վայելենք արեւոտ երկինք՝ ճամբու մեծ մասի ընթացքին:

Գացած աստէն կանգ չէինք առած Եղեգնաձոր քարձրանալու համար Գլաձոր: Նախորդ այցելութենէս ես չափազանց լաւ էի տպաւորուած, կուզէի որ մեր այս խմբակն ալ անպայման այցելէր Գլաձորի (Թանահատ) վանքը, ԺԳ. դարէն: Ուրեմն, քանի որ քիչ մը կանուխ կը վերադառնանք, կրնանք այդ մէկն ալ տեսնել: Ուստի, կը շեղինք գլխաւոր ճամբէն, կը մտնենք Գլաձոր գիւղը ու լեռնային նեղ ճանապարհով, որ կարծես չի վերջանար, կը

քարձրանանք վեր, վե՛ր, ուր գրեթէ ծառ չի մնար, եւ դարձուածք մը եւս՝ ահա պացիկ գմբէթով, մութ քարով կերտուած, նախանձելի համեմատութիւններով օժտուած այս եկեղեցին կը պարզուի մեր աչքին առջեւ: Մարդ-մարդասանք չկայ, դուռն ալ փակ է: Կը շրջինք շուրջը, կ'այցելենք գերեզմանները. մնացեալը՝ ակերակ է, բայց կարելի է նշմարել հետքերը վանականներու սենեակներուն, կամ դասարաններուն, որոնք միջնադարեան մեր այդ անուանի ուսումնարանին կը պատկանէին: Հոս էր, որ տարիներ առաջ նշուեցաւ Դաւիթ Անյաղթ մեծ իմաստասէրին 800-ամեայ յոբելեանը...

Ափսոս, առաջին գալուս, 1991-ին, շատ ակելի բարեգարդ էր չորս դին, աղբիւրէն ալ ջուր կը վազէր: Անմահական համով պա ղ ջուր մը: Հիմա պիտի գոհանանք չքնաղ տեսարանը վայելելով ու պիտի իջնենք ցած:

Նաեւ ափսոս, ժամանակ չունինք այցելելու Անթուանին, Օթթաուայի մեր Անթուանին, որ այստեղ տուն եւ իջեւան մը ունի: Մեր մեկնելէն առաջ հրահանգած էր, որ անպայման հանդիպինք իրեն: Յաջո՛րդ անգամ:

Մեր յաջորդ շրջապտոյտը պիտի կատարենք դէպի Արագածոտնի մարզը, այցելելու Աշտարակ եւ շրջակայքը:

Երեւանի հիւսիս-արեւմտեա՛ն ծայրամասէն դուրս պիտի գանք, այսինքն պիտի կտրենք 15-րդ թաղամասը, Նորաշէն-Նազարբեկեան քաղաքամասերը, Վահագնի նորակառոյց համայնքը ու առնենք Աշտարակի խճուղին կամ Մ-1 (Մ-1) մայրուղին, ապա մարզային կեդրոն Աշտարակէն դառնալով՝ Քասախի երկայնքով



Գլաձոր



Օշական



Անդրանիկ

պիտի իջնենք Օշական, ուխտի երթանք Մեսրոպ Մաշտոցի գերեզմանին:

Օշականի սուրբը կը ննջէ համանուն եկեղեցիին մէջ, որ պատմական դամբարանին վրայ շինուած է 1875-ին եւ իր պարզութեամբ ու իւրայատուկ ոճով (զանգակատունը, օրինակ, ետեւն է) կը տարբերի մեր այլ տաճարներէն: Յղացուած է հայաստանաբնակ յոյն ճարտարապետի մը կողմէ: Ներսն ալ գեղեցիկ որմնանկարներ կը զարդարեն պատերը ու դրուագներ կը ներկայացնեն մեր պատմութենէն:

Հաճելի էր տեսնել կիրակնօրեայ վարժարանի աշակերտներուն գործերը, ծաղիկներով ու թուփերով կազմուած այբուբենը ու հանդիպիլ երիտասարդ, նորընծայ Տէր Մանուէլ քահանային (որ Շուշիէն էր, զուակը՝ զոհուած ազատամարտիկի), մանաւանդ ունկնդրել եկեղեցիին մէջ մեզի բացատրութիւններ տուողին (որ անգիր կը վերյիշէր մեր մատենագրութենէն հատուածներ, գրաբար):

Անկէ պիտի քշենք քիչ մը եւս դէպի արեւելք, երթալու Ուջան, խոնարհելու Անդրանիկի, հին ֆետայիներու եւ նորօրեայ ազատամարտիկներու արձաններուն առջեւ: Անդրանիկի եւ ֆետայիներու արձանները, եթէ չեմ սխալիր, տեղույն հայերը սովետական օրերուն համարձակած են կանգնեցնել:

Ուջանէն վերադարձին Հ-20 (Կ-20) հանրապետական ճանապարհով պիտի բարձրանանք Բիւրական, գոհանալով հեռուէն տեսնել աստղադիտարանը, – հապճեպ այցելութիւն մը իմաստ պիտի չունենար, – ապա պիտի բռնենք Ամբերդի ճամբան, աւելի ու աւելի վեր ելլելով: Կարկուտը, սակայն, պիտի կանգնեցնէ մեզ, ու մեր խոհեմ վարորդին աչքը պիտի չկտրէ շարունակել, մտահոգ, որ եթէ զետիւնը սառի՝ ինքնաշարժը կը սահի, քանի որ ձմրան անիւներ չկան վրան:

Պիտի վերադառնանք Աշտարակ, ուր Կարմրաւոր գողտրիկ եւ ամբողջովին ինքնուրոյն եկեղեցին պէտք է տեսնել. հիմա որոշ չափով նորոգուած, Է. դարու մեր ճարտարապետական այս գլուխ գործոցը՝ իր կարմիր կղմինտրաւոր ու կոր գմբեթով, հակառակ իր փոքր չափին՝ ունի բացառիկ գեղեցիկ համաչափութիւններ: Շրջապատն ալ բարեյարդարուած է: Իր առջեւի տարածքէն կարելի է տեսնել այլ եկեղեցիներ, որոնցմէ Ս. Մարինէն (1281) ալ պիտի կարենանք այցելել:



Կարմրաւոր



Ս. Մարինէ



Մուղնի

Առանց Աշտարակի պատմական կամուրջը տեսնելու, սակայն, պիտի մեկնինք եւ Քասախի երկայնքն ի վեր՝ դեպի հիւսիս պիտի ուղղուինք, առաջին հերթին Մուղնի երթալու համար:

Երկրորդ անգամ Հայաստան այցելութեանս, 1994-ին, այցելէր էի Մուղնի, ու իրապէս տխուր էր տեսնել Ս. Գեորգ եկեղեցին ամբողջովին կորսուած իր շրջապատին մէջ ու լքեալ վիճակի մէջ: Հոն բնակող պահակը զայն աչքի լոյսին պէս պահած, մաքրած էր, սակայն անհրաժեշտ միջոցները պակասած էին,– խորհրդային տարիներուն՝ պարզապէս զլացուած էին,– մեր կոթողներէն այդ մեկուն ալ պէտք եղած հոգածութիւնը ցուցաբերելու համար:


ԺԴ. դարու այս շարք առ շարք երկգոյն տուֆով կառուցուած վանքը յետոյ դարձաւ ողբ. Մեսրոպ Աճեան սրբազանին գուրգուրանքին առարկան: Շէնքը որոշ չափով մաքրուեցաւ, նորոգուեցաւ, շրջակայքը պարտէզներու եւ այգիներու վերածուեցաւ,– ուր եւ սարփինայի մը ներքեւ նստանք մեր հետ բերած սանտուիչները ուտելու,– եւ կոթողը արժէք ստացաւ: Սրբազանը հոս էր ընտրած իր նստավայրը եւ հոս էր, որ հաստատած էր Մուղնի հրատարակչականը: Մեզի ցոյց տուին իր աշխատասենեակը: Մուղնեցիները կափսոսան, որ վաղամեռիկ արքեպիսկոպոսը այստեղ չթաղուեցաւ: Իրեն ի յիշատակ, հիմա փողոց ու եթէ չեմ սխալիր՝ դպրոց ալ կայ իր անունով: Աստուած հոգին լուսաւորէ:

Յաջորդ կայանը, Մուղնիէն ոչ շատ հեռու՝ Օհաննավանքն է, Է. դարու կոթող մը, որ նորոգուած է ԺԳ. դարուն: Երկրաշարժէն վնասուելով, ան վերստին նորոգութեան տակ է ... տարիներէ ի վեր: Շինարարական բարձր կոունկները իր մնայուն համայնապատկերին մաս կը կազմեն այլեւս: Նկարէն զանոնք դուրս պահելու համար յատուկ ճիգ պիտի կատարես, ճիշտ անկիւնը գտնես...

Այստեղ հսկողը տարեց կին մըն է, որ միեւնոյն ժամանակ կը նայի իր թոռնիկը եւ անոր երկու ընկերները: Եկեղեցին իրենց խաղավայրն է, ու կարժէ այս փոքրիկ հրեշտակները լուսանկարել պատմական խաչքարերուն կողքին:



Յովհաննավանք կամ Օհաննավանք



Իւրայատուկ ծաղկոց մը...

Օհաննավանքը Քասախի կիրճին եզերքն է: Համայնապատկերը, որ այստեղէն կը բացուի առջեւ՝ պարզապէս զգլխիչ է: Սակայն ա՛լ աւելի հետաքրքրական տեսարանը Մաղմոսավանքի կոնակէն պիտի տեսնենք. արդէն հոսկէ կերելի ան՝ հորիզոնին վրայ: Հոն է մեր յաջորդ կանգառը:

Մաղմոսավանք կը հասնինք անցնելով Մաղմոսաւանէն: Հոս եւս սպիտակ հագած են ծառերը: Գարնան յատուկ այս պատկերը պիտի միշտ վառ մնայ մեր յիշողութեան մէջ:

Վանքը, որ այսօր փակ է, ԺԳ. դարու կոթող մըն է, համալիր մը՝ մի քանի եկեղեցիներէ բաղկացած: Մուօ տուֆով: Հետաքրքրական, փոքր գմբեթներով: Հոն է մեծագոյն խաչքարերէն մէկը, դուրսը, եկեղեցոյ պատին ուղղահայեաց, թերեւս 4-5 մէթր բարձրութեամբ:



Սաղմոսավանք

Սակայն ամենէն աւելի մեզ տպաւորողը,– ինչպէս ինծի պատահած էր Հայաստան առաջին այցելութեանս,– Քասախի կիրճն է, որ կը տեսնես վանքին ետեւէն: Հայաստանցի մեր ընկերակիցները մինչեւ այդ պահը իրենք անձամբ չէին կանգնած այստեղ, չէին հիացած կիրճի խորութեան, պատկառանք ազդող վեհութեան վրայ: 1991-ին աշուն էր, եւ տիրապետող գոյնը՝ ոսկի: Այս անգամ գարնան պայթած կանաչն էր, ամենուրեք, նոյնիսկ ձիգ ժայռերուն վրայ արմատ նետած թուփերով ու ծառերով:

Երեւան պիտի վերադառնանք լիացած, հոգեւին յագեցած:

Վերջին օրը՝ վերջին շրջապտոյտը: Կիրակի է, իսկ մեր յայտագիրը՝ ճոխ:

Պիտի մեկնինք Երեւանի արեւմտեան կողմէն, Օովակալ Իսակովի պողոտայէն, անցնինք նորակառոյց (այն ստեն տակաւին շինութեան վերջին փուլին մէջ), մեզի համար անբացատրելիօրէն տարածուն ԱՄՆ-ի դեսպանատան եւ անոր կից՝ (այդ օրերուն չորացուած) Երեւանեան լիճի կողքով ու Մ-5 (M-5) միջպետական ճանապարհով ուղղուինք դէպի Արմաւիր (մարզային կեդրոնը): Ճամբու ընթացքին կանգ պիտի առնենք Մուսա լեռան հերոսամարտին նուիրուած յուշարձանին առջեւ, բարձրանանք փոքր բարձունքը, ուր կը գտնուի ան: Պատ մըն է, երկու կողքերէն՝ թեք, տակը կամարով մը, վերեւն ալ արծիւի գլուխով ու թելերով. սակայն տպաւորիչ չէ:

Ապա հեռուէն պիտի նկարենք Մեծամորի հիւլէակայանը՝ իր հսկայ ծխնելոյզներով. պիտի խօսինք անոր ներկայացուցած սպառնալիքին ու միաժամանակ Հայաստանի համար ունեցած կենսականութեան մասին: Արփին, որ ազգականներ ալ ունի այս կողմերը, տակաւին պիտի մատնանշէ, որ ինչպէս կոյուղիները կը թափուին մօտակայ լիճին մէջ, վնասելով թէ՛ բնութեան, թէ՛ բնակչութեան, որուն բոլոր բողոքները ցարդ անհետեւանք մնացած են:

Արմաւիրէն ոչ շատ հեռու պիտի առնենք Հոկտեմբեր տանող ճամբան եւ արդէն հեռուէն նկատենք Սարդարապատի զանգակներու աշտարակը:

Այնքա՛ն անուններ փոխուեցան՝ համայնավարութեան եւ խորհրդային օրերու հետքերը ջնջելու համար, Հոկտեմբերը մնացեր է. արդեօք նպատակաւոր թ, վերյիշելու համար ահաւոր 70 տարիները...

Ահա եւ Սարդարապատի յուշարձանը: Գրեթէ մարդ չկայ: Պահակ մը (նախկին հայրենադարձ՝ Մուրիայէն), մաքրութեան պատասխանատու երկու կիներ. կը զրուցենք, կը մտերմանանք: Պահակը – թէ՛ տեղւոյն պատասխանատուն – մեզի համար զանգերու դողանջումը կը բանայ: Հիմա որ կը մտածեմ այդ մասին՝ կը փշաքաղուիմ. այս հողատարածքին վրայ է, որ մահու-կենաց մեր վերջին դիւցազնամարտը մղուեցաւ. իսկ զանգերը արձագանգն են 1918 մայիսին Հայաստանի տարբեր անկիւններէն դողանջող ու ժողովուրդը ինքնապաշտպանութեան մղող եկեղեցիներու հարիւրաւոր զանգակներուն...

Աշտարակին ու իր երկու կողմերը՝ յարձակման պատրաստ զոյգ ցուլերուն աջին նոր յուշարձան մըն ալ կայ հիմա, շատ աւելի համեստ բայց յաջող կերպով ընդլուզուած ընդհանուր շրջապատին. Արցախեան հերոսամարին զոհուած ազատամարտիկներու յիշատակին է նուիրուած ան:

Կը յառաջանանք դէպի ձախ, դէպի Սարդարապատի նախշուած պատը, ուր ճակատամարտի պատմութիւնն է քանդակուած. հոն տեղ ձգուած է (խորհրդային օրերուն, 1968-ին կերտուած էր այս յուշարձանը) աւելցնելու Արամի, Դրոյի, Սիլիկեանի, Նազարբեկեանի դէմքերը, սակայն տակաւին չէ կատարուած այդ մէկը. ահա 2008-ի համար հետապնդելի ծրագիր մը...

Մինչեւ պատը տանող ճանապարհը եզերուած է արծիւներու շարքով մը. հինգ կամ վեց սլացիկ արծիւներ են, որոնց հայեացքը ուղղուած պիտի ըլլար դէպի արեւմուտք, դէպի մեր հողէ ըր, մեր հողէ ըր: Թուրք կառավարութեան ճնշումին տեղի տալով՝ օրուան իշխանութիւնները հակառակ ուղղութեամբ զետեղած են այդ արծիւները: Նոյնիսկ քարէ արձանները որքա՞ն վախ պատճառած ըլլալու են...

Պիտի այցելենք նաեւ Սարդարապատի ազգագրական թանգարանը, որ, բացի



Սարդարապատի թանգարանին մէջ

դիւցազնամարտի նուիրուած փոքր բաժինէն, շատ հարուստ է հին հայկական ձեռարուեստի իրերով՝ պատմական հնադարեան արձաններ, գործիքներ, կուժեր, արօր, այլեւ տարազներ, գորգեր, կարասիներ եւ այլն, եւ այլն: Հարց կը ծագի մտքիս մէջ, թէ ինչո՞ւ Պատմութեան պետական թանգարանը, ժողովրդային արուեստներու թանգարանը եւ այս մէկը այնպէս չեն բաժնած իրարու միջեւ իրենց ցուցօնները, որ կրկնութիւններ չըլլան, եւ իրաքանչիւրը մասնագիտանայ ճիւղի մը կամ քանի մը յարակից ճիւղերու մէջ: Կարծեք

պետականօրէն լաւ չէ ծրագրուած այս ամենը:

Վերջին հանգրուանը Վաղարշապատն է, ուր պիտի վերադառնանք նոյն ճանապարհով: Վաղարշապատը Էջմիածնայ նոր եւ հինէ՛ն եկած, պատմական անունն է: Հոս է, ի հարկէ Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը:

Ինքնաշարժը կը կանգնեցնենք ընդարձակ ու արդէն լեցուն կառաղաշտին մէջ, ու ոտքով կուղղուինք դէպի Մայր տաճար: Բազմութիւնն ու իրարանցումը աւելի շատ շուկայի տպաւորութիւն կը ձգեն վրաս, քան թէ սրբավայրի: Տաճարին հիմքերը 1900 տարուան հնութիւն ունին, իսկ Լուսաւորչի կանգնեցուցած եկեղեցին վերաշինուած է 484-ին, ապա 1658-ին, ու վերանորոգուած վերջերս. յատկապէս մաքրուած ու մէջտեղ ելած են որմնանկարները:

Ներսը թեև լեցուն է, սակայն նուազ խճողուած է: Դպրաց դասը շատ լաւ կ'երգէ, կը կանգնինք անոր առջեւ. Գարեգին Բ.-ն է պատարագողը: Նագիկն ու Արփին նայնիսկ կը յաջողին Կաթողիկոսի աջի օրհնութի՛ւնը ստանալ՝ անոր դուրս գալու պահուն:

Մենք ժամադրուած ենք Տաթև սրբազանին հետ, որուն հանդիպել էինք Մեծ Եղեռնի նուիրուած համաժողովին, եւ ան խոստացել էր մեզ անձամբ պտտցնել ուր որ կ'ուզենք: Կիլիկեան միաբան, Արեւմտեան Միացեալ Նահանգներու նախկին առաջնորդ՝ հին ծանօթ է սրբազանը, որ դուրսը մեզի կը սպասէ. կը միանանք իրեն, ու չես գիտեր ուրկէ յանկարծ կ'երեւին նաեւ՝ Ֆրանսայէն՝ Կարպիս Ափրիկեանն ու տիկինը եւ Լեւոն Մումճեանը, եւ բոլորս ինքնաբերաբար կը շրջապատենք Գարեգին Ա. Սարգիսեան վեհափառի շիրիմը, ու Տաթև սրբազան աղօթք մը կընէ այնտեղ: Հին յիշատակներ կ'արթննան բոլորիս մտքերուն մէջ:

Խնդրանքիս ընդառաջելով, Սրբազանը մեզ կը պտտցնէ վեհարանը, որ ատենին շինուած էր հռչակաւոր Մանթաշեանի (Մանթաշեֆի) նիւթական յատկացումով, իսկ նոր ժամանակներուն՝ վերանորոգուած Ալէք Մանուկեանի նուիրատուութեամբ: Իսկապէս կաթողիկոսի վայել շէնք մը, որ ինքնին արուեստի թանգարան մըն է, յատուկ այցելութեան արժանի:

Պահ մը կը նստինք մուտքի կամարներուն տակ ու կը զրուցենք Տաթև սրբազանին հետ, ապա կը շարունակենք մեր ճամբան՝ այցելելու նաեւ մօտակայ միւս կոթողները:

Գայիանէն, որ պագիլիկ տեսակի է, Է. դարէն մեզի հասած սակաւաթիւ եկեղեցիներէն մէկն է, բաւականին տարածուն, ժուժկալ՝ նախշերու տեսակէտէն, սակայն իր համաչափութիւններով՝ միշտ վեհ: Գայիանէի կողքին՝ գերեզմաններ, գերեզմաններ՝ Րաֆֆիի Խենթը, Լուսինէ Զաքարեանը, զօրավար Սմբատը եւ դեռ ուրիշ երախտաւորներ...



Գարեգին Ա.-ի շիրիմին առջեւ...

Շողակաթը՝ 1694-ին կ'երտուած, փոքր գոհար մը: Ներսը արարողութիւն մը կայ. մկրտութիւն. բայց երեխայ չկայ. կը մօտենանք, ձեռով մը մասնակից կըլլանք: Երիտասարդ մըն է մկրտուողը, մայրը եւ ընտանիքի միւս անդամները կու լան: Հարց կու տանք ինչո՞ւ. զինուոր պիտի երթայ տղան, եւ բերած են զայն մկրտելու...

Վերջապէս Հռիփսիմէն, Է. դարէն, որպէս ներկայացուցիչ տիպարը հայկական ճարտարապետութեան: Այստեղ սարկաւազ Գարիկը կընկերանայ մեզի, ապա կը նստի երգեհոնին առջեւ ու նուագելով՝ կ'երգէ «Խորհուրդ խորին»-ը: Ճիշտ երգեհոնին առջեւ շիրիմն է Փիլիպոս սքանչելագործ կաթողիկոսին: Պատկերացուցէք պահը:

Այդ խորհրդաւոր եւ տպաւորիչ մթնոլորտէն դուրս կու գանք ու կը բռնենք վերադարձի ճամբան:

Երեւան երթալէ առաջ, սակայն, այս շրջապատոյտի վերջին փուլը կը



Ս. Գայիանէ Շողակաթ



Ս. Հռիփսիմէ Զուարթնոց



հանդիսանայ Ձուարթնոցը, ոչ օղակայանը, այլ Է. դարու եզակի եռայարկ տաճարը, որուն ակերակները, հիմա արդէն որոշ չափով «վերականգնած», յարգանք ու հիացում կը պարտադրեն քեզի:

Երեկոյ չեղած կը հասնինք Երեւան՝ վերջին համերգի մը վազելու եւ վերջին ընթրիք մը ունենալու՝ որպէս հիւրը մեր Լիզային:

Այստեղ Հայաստան է, չէք կորսուիք (որպէս վերջաբան)

Երկու շաբթուան ուղեւորութիւնը վերածուեցաւ գրեթէ վեց ամսուան ուղեգրութեան մը, որուն ի վերջոյ տեղ մը պէտք էր վերջակէտ դնել:

Այո, իսկական ժամադրավայր է Հայաստանը մեզի համար եւ դժբախտաբար առայժմ ժամադրավայր է միայն, եւ ոչ տակաւին մեր տեւական բնակավայրը:

Երէկ, մեր գրասենեակի պատերէն մեկուն վրայ փակցուած աշխարհի քարտէսին վրայ իւրաքանչիւրը իր սկզբնատառերով մանր դրօշակ մը կը զետեղէր մեծ գուլիտով գնդաստեղով մը: Ինծի ալ հարցուցին ո՞ւր ծնած ես, ըսի իմ ծնած տեղս չէ կարելորը, այլ՝ նախահայրերո՞ւ ծնած տեղը. եւ ի հարկէ գիտէք թէ ո՞ւր դրի դրօշակս...

Այո՛, անգամ մը եւս հոն էի ես, երկու շաբթով միայն, սակայն ինչպէս կը գրէի նախորդ ուղեգրութեանս աւարտին՝ մենք հոն ենք միշտ՝ մտքով ու հոգիով, մարմնով ո՞ւր ալ գտնուինք:

Եւ փորձեցի այս պատումովս ձեզ ալ մասնակից դարձնել ապրումներուս, Մեծ եղեռնի 90-ամեակին նուիրուած համաժողովին ու դէպի Օիժեռնակաբերդ ուխտագնացութեան: Միասին ներկայ եղանք ներկայացումներու, այցելեցինք թանգարաններ, պատեցանք տեսարժան վայրերը, հանդիպեցանք ծանօթներու եւ անծանօթներու:

Բայց կային տակաւին ուրիշներ, որոնց մասին նախորդող էջերուն մէջ առիթ չունեցայ գրելու:

Օրինակ՝ Կիրոն, երկարամեայ գործակիցս, որ հիմա երջանիկ է՝ Հայաստան ապրելով ու նուիրուելով քաղաքական աշխատանքի, ինչ որ իր երազն էր դեռ ա՛յն օրերէն, երբ «Հորիզոն»-ի օգնական խմբագիրն էր, ապա՝ խմբագիրը: ՀՅԴ Բիւրոյի գրասենեակը, իր գրասեղանին շուրջ զրուցելու, հինէն, նորէն շաղակրատելու առիթ ունեցայ, ինչպէս առիթ եղաւ տեսնուելու նոյն մարմինի ներկայացուցիչ, նոյնպէս հինէն ծանօթ ընկերոջս՝ Հրանտ Մարգարեանի հետ եւ խօսելու մեր կուսակցական մեքենան երիտասարդացնելու մասին:

Պիտի ափսոսայի եթէ չյաջողէի հանդիպիլ Երկիր շաբթաթերթի խմբագիր, երիտասարդ, յարաշարժ ընկեր Սպարտակ Սէյրանեանին, չունկնդրէի իր տենչերը՝ թերթն ու կայքէջը միշտ աւելի հետաքրքրական, կենդանի, հրապուրիչ հաղորդակցական միջոցի մը վերածելու ի խնդիր:

Լարիսա Գեորգեանի հետ տարիներէ ի վեր կապի մէջ էի. այնպէս զուգադիպեցաւ, որ «Հորիզոն»-ի նախաձեռնութեամբ կարելի ըլլայ հրատարակել իր առաջին գիրքը՝ «Ես տեսայ իմ Երկիրը», որ Արեւմտեան Հայաստան իր կատարած ուխտագնացութեան ներշնչուած ուղեգրութիւնն է: Կարելի եղաւ Գրողներու միութեան տան մէջ, շաբթոյ կէսօրէ ետք մը, շնորհահանդէս կազմակերպել իր այդ եւ գրեթէ նոյն ատեն լոյս տեսած «Արեւ լերան մէջ» հատորներուն նուիրուած: Ինք շատ երջանիկ էր, եւ սակայն Գրողներու տան մէջ աւելի լաւ



Գրողներու տան բոլորակաձեւ դահլիճին մէջ...

պատրաստութիւն ու
աւելի մեծ
ներկայութիւն
կ'ակնկալէի: Նշեմ որ,
հաւատարիմ իր
լրագրողի ասպարէզին,
այդ ասպարէզի մէջ
ցուցաբերած
բժախնդրութեան՝ Հայ
Դատն ու Սփիւռքը
ծանօթացնելու
Հայաստանի իր
ունկնդիրներուն,
Լարիսա զիս
տեսակցութեան մը
հրաւիրեց պետական
ռադիոկայանի իր

յայտագրին վրայ:

Շնորհահանդէսին, գիրքերէն
առաջինը ներկայացնողը Մարգո
Ղուկասեանն էր, ծանօթ գրող-լրագրողը,
միւսը՝ Գառնիկ Անանեանը, Երեւանի
Պետական համալսարանի Լրագրութեան
բաժնի տեսուչը, որուն նոյնպէս ծանօթ էի
նախորդ ուղեւորութեանս օրերէն: Հոն ալ
անմիջապէս ժամադրուեցանք, եւ մի քանի օր
ետք զացի համալսարան, զինք տեսնելու
ապա վերի կարգերէն մէկուն հետ ժամ մը
«պարապելու», ինչպէս եղած էր 11 տարի առաջ:

Մեծ հաճոյք էր ինձի համար այդ փայլուն
աչքերով աղջիկներուն եւ տղոց հետ խօսիլ,
խօսիլ քիչ մը ամեն բանի մասին – Հորիզոն, Մոնթրէալի ու Գանատայի հայութիւն, Սփիւռք,
Համազգային, եւ տակաւին... հայերէնի ուղղագրութիւն: Ծանօթացայ իրենց դասաւանդ
ուսուցիչին՝ Գրիգոր Գույումճեանի, որու անունը վերջերս հրճուանքով տեսայ Մեսրոպեան
ուղղագրութեան վերականգնման պաշտպան նորաստեղծ կազմակերպութեան ցանկին
վրայ:

Ուրիշ ժամադրութիւն մըն ալ ունէի համալսարանը: Այդ՝ փրոֆ. Լեմուէլ Վալեսեանին
հետն էր, որ տեղի ունեցաւ փրոֆ. Մարատ Գրիգորեանի գրասենեակին մէջ եւ
«Համազգային»-ի Լիլիթին ներկայութեան, – ինքն էր, որ կարգադրութիւնները ըրած էր:
Ներկայացուցի «Յաւերժական Հայաստան» քարտէսի ծրագիրը, պատի համար ու
մանաւանդ կայքէջի վրայ: Խնդրեցի որ քննեն թէ կ'արժէ՞ զայն հետապնդել, եւ թէ ի՞նչ
նիւթականի պիտի կարօտի նման ծրագրի մը իրագործումը՝ գիտական հիմքերու վրայ:

Համալսարանի շրջանակը իրապէս յարգանք կը պարտադրէ քեզի, սակայն
ֆիզիքական շրջապատը, գէթ այս բաժանմունքներուն, չափազանց բացասական



Լ. Գեորգեանի ու Գ. Չանիկեանի հետ
Գրողներու տան առջեւ



«Համազգային»-ի համով-հոտով տան մեջ...
(աջին՝ Ռուբեն Յովսեփեանն է)

տպաւորութիւն կը ձգէ վրայ: Ո՞ւր են մեր մեծատունները՝ վերանորոգելու եւ ուսանողութեան համար հրապուրիչ միջավայր մը ստեղծելու համար...

Լիլիթ Գալստեանի հետ, – որ ի դէպ, գրականութեան վարդապետի (դոկտոր) կոչումը ստացած է արդէն, եթէ չեմ սխալիր, – անշուշտ պիտի հանդիպէինք մէկէ աւելի անգամներ, իրեն ու իր գործակից Թամարին, որոնք այնքան ձեռնհասօրէն կը վարեն «Համազգային»-ի գրասենեակը ու երկու հոգիով ստեղծած են «Համազգային»-ի պատկառելի ներկայութիւն մը Հայաստանի մէջ: Իսկ իրենց պատրաստած համով-հոտով սեղանը Արտերկրէն եկած համազգայնականներու համար՝ մեր ընկերական հաճելի պահերէն մէկը պիտի մնայ:

Նոյնպէս հաճելի էր, ուշ երեկոյ մը, համերգէ մը ու անոր յաջորդող ընթրիքէ մը ետք՝ Հրաչի ու Սեդային երեւանեան յարկաբաժինը սուրճ մը առնել ու խօսիլ կրթական հարցերու ու իրենց փայփայած նոր երկրորդական վարժարանի մը ծրագրին մասին, որ կուզեն բանալ Լոս Անճելըսի մէջ:

Ամենէն անակնկալ հանդիպումը սակայն Նազիկին հեռաւոր զարմուհիին՝ Միւզիին եւ անոր ամուսնոյն՝ Ֆրանսուային հետ եղաւ. մեր հիւրընկալներու տան շատ մօտ է իրենց ալ յարկաբաժինը, եւ պատահականօրէն գիտցանք, որ հոն են, – Նազիկն ու Միւզին զիրար տեսեր էին որպէս պարմանուհիներ միայն: Հիմա Հայաստանին տարբեր ձեւերով օգնելու համար յաճախ հայրենիք եկող մասնագէտներ են այր ու կին, ու մեր խօսակցութիւնը ի հարկէ ընթացաւ հայ կեանքի մեր հրատապ խնդիրներու ճամբով:

Ի՞նչ զգացում է մայրին վրայ հանդիպիլ Արտգործ փոխ-նախարար, պատմաբան Արմանտ Կիրակոսեանին, որ կարճ տափատով իջեր էր իր յարկաբաժինէն՝ թերթ մը կամ չեմ գիտեր ինչ գնելու, ու զրուցել իր հետ այդպէս մտերմօրէն, որպէս հի՛ն ծանօթ կարծես – մի քանի տարի առաջ Ֆորթ-Լոտրըրտէյի մէջ հանդիպեր էինք, Հայ Դատի ու գաղութի մէկ ձեռնարկին առթիւ, երբ ինք ՀՀ դեսպանն էր ԱՄՆ-ի մօտ, եւ Ֆլորիտայի այդ քաղաքը Երեւանի հետ քոյր քաղաքներ պիտի հռչակուէին:

Տարբեր ու անսպասելի առիթ մըն էր հրաւիրուիլ ՀՀ հեռատեսիլի կայանէն՝ առաւօտ կանուխ ելոյթ ունենալու «Բարի լոյս» յայտագրին վրայ, եւ ժամանակակից ու այդպէս

խանդավա՛ռ երգերու միջեւ... պատասխանել հաղորդավարի հարցումներուն՝ դարձեալ քիչ մը ամեն բանի մասին՝ Սփիւռք, Ապրիլ 24, «Հորիզոն», Հայաստան, «Համազգային» եւ այլն: Կարծեմ առիթը չփախցուցի խօսելու համար նաեւ Արագին “twentyvoices.com” կայքէջին ու «Ցեղասպանութիւնը իմ մէջ» վաւերագրական ժապաւէնին մասին:

Ափսոս, չկրցայ ընդառաջել մի քանի հրաւերներու՝ այցելելու սիրելիներու, ընթերելու իրենց հետ: Չկայացաւ նաեւ ամերիկացի (իրլանտացի) լրագրող, Հայաստանին սիրահարուած ու հոն կայք հաստատած ծանօթիս՝ Ճոն Հիուզի հետ մեր հանդիպումը:

Ամենէն աւելի սակայն կը ցաւիմ որ չկրցայ այցելել Կարլէն Դալլաքեանին, անձամբ ճանչնալ զինք: Հիւանդ էր, այսուամենայնիւ առիթ ունեցայ գէթ հեռաձայնէն շնորհակալ ըլլալու իրեն, որ գրեց իր «Յուշապատում»-ը, ու պատմեց 40 տարուան իր փորձառութեան մասին, իբր անմիջական մասնակիցը խորհրդային վարչակարգի իշխանութեան՝ իր ակնկալութիւններով ու մանաւանդ յուսախաբութիւններով:

Այժմ կուգեմ իր աւարտին հասցնել սոյն պատմումը՝ վերլիշելով Երեւան ժամանման մեր առաջին օրուան երեկոյեան մէկ պահը:

Մարի Ռոզ Աբուսեֆեան մեզի ներկայացուցած էր «Մուսա տաղի 40 օրերը» մենակատարութիւնը, խլած էր երկարատեւ ծափահարութիւններ, ու շատերու հետ մենք ալ բարձրացած էինք բեմ զինք շնորհաւորելու եւ տարուած խօսակցութեամբ՝ չէինք անդրադարձած, որ արդէն մարած էին սրահին լոյսերը, ու ծառայողները անհամբեր սկսած էին դառնալ: Պէտք է դուրս գայինք. եւ քանի որ կիսամութ էր արդէն, Նազիկ վախ յայտնեց, որ «ամա՛ն, չկորսուինք»:

– Մի վախենար, քոյրիկ ջան,– ըսաւ հոն գտնուողներէն մէկը,– ո՛ր կողմից էլ որ դուրս գաք, չէք կորսուելու, այստեղ Հայաստան է:

Պատգամի պէս հիմա կը հնչէ այդ խօսքը ականջներուս մէջ՝ ահա արդէն ամիսներ ետք: Եւ հնչելու է, կարծեմ ընդմիշտ...

(Հորիզոն, 2005-05-09 – 2005-10-24)

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Մոնթրեալի օդակայանը՝ Ակսել Բակունցին հետ

Դարձեալ Հայաստան կերթամ եւ ինչպէս միշտ՝ անձկալից եմ. որեւէ ճամբորդութիւն որոշ յուզում կը պատճառէ. Հայաստան երթալը՝ ա՛լ աւելի: Թէեւ այս չորրորդ անգամն է, եւ կարելի չէ առաջին «ուխտագնացութեան» հետ բաղդատել:

Արդէն օրը բաւականին պրկուած,- «սթրեստ»,- սկսած էի. քիչ մը կանուխ գացած էի գրասենեակ, որպէսզի հասցնելիքներս հասցնեմ, եւ որեւէ գործ չտուժեր բացակայութեանս պատճառաւ:

Երեկոյեան հինգուկէսին արդէն օդակայանն եմ, եւ քանի որ համակարգիչով չկատարեցի օդանաւի նստաքարտս ունենալու ձեւակերպութիւնները, հիմա ոլորուն, երկար շարքին մէջն եմ՝ նորոգուած կամ նոր շինուած այս սրահին մէջ: Գիտէք ինչպէս կը կազմուին այդ անցքերը, ուր կարգի կը սպասենք. նայած ճամբորդներու թիւին՝ յատուկ ձողերու միջեւ քաշուող երիզներով կը ճշտուի երկայնքը, որով 5, 6, թերեւս մինչեւ 8 բուզահեռ անցքեր կը ստեղծուին, ու մենք մեր ճամպրուկները քաշելով կամ սայլակին վրայ բարձած՝ հրելով կը յառաջանանք:

Այդ յառաջխաղացքը, սակայն, շատ դանդաղ կը թուի այսօր, ու եւ ձեռքի պայուսակէս կը հանեմ հետս վերցուցած գրքերէս մէկը: Թէեւ մարդիկ զիս ճանչցած են որպէս ամեն ինչ կանխաւ ծրագրող ու ծրագրին համաձայն գործող մէկը, սակայն մինչեւ գրադարանս բանալս չէի որոշած ինչ գիրք վերցնեմ հետս այս անգամ: Մի քանի արձակուրդներու Գրիգորը ընկերացաւ ինձի, Պըլտեանը, որուն «Բլուրին շարքը», իր արդէն 6 հատորներով, քեզ այլ աշխարհ մը փոխադրող սքանչելի գործ մըն է: Եւ ահա յանկարծ ներշնչում մը,- մէջեւ ձայն մը կը յուշէ՝ Ակսել Բակունց, Ակսել Բակունցը առ. երկար ատեն է չեմ կարդացած. իրականութեան մէջ՝ աշակերտական օրերէս ի վեր ... եւ առանց պահ մը վարանելու կ'առնեմ «Մեան»-ի հրատարակած Ա. հատորը. թուղթը արդէն դեղնած (1955-ին տպուած է, Պէյրութ, եւ դասական ուղղագրութեամբ, բարեբախտաբար): Շատ հաստ գիրք մը չէ, 216 էջ, ուստի կը մտածեմ երկրորդ գիրք մըն ալ վերցնել, եւ աչքիս կը զարնեն Շահնուրի հատորները: Կ'առնեմ «Բաց տոմար»-ը:

Հիմա, սպասած ատենս, կը բանամ Բակունցը ու անխուսափելիօրէն կը վերյիշեմ Գալուստեան ազգային վարժարանի Է.- Ը. կարգերու հայերէնի ուսուցիչս՝ պրն Սարգիս Սահակեանը, որուն շնորհիւ ծանօթացայ Բակունցին, եւ իբր պարտականութիւն ընտրեցի իր «Մե ցելերի սերմնացանը» պատմութեան շարքը՝ անոնց մասին վերլուծական ակնարկ մը գրելու համար: Չեմ մոռնար ինչ յափշտակութեամբ կարդացած եմ զանոնք եւ ինչ ուրախութեամբ գրած անոնց մասին (արժանանալով ուսուցչիս յատուկ գնահատանքին, որ հոս կը յիշատակեմ անհամեստաբար, պարզապէս որովհետեւ այնքան մեծ եւ խոր եղած է Բակունցի ազդեցութիւնը վրաս...): Անոր շնորհիւ ալ հայրենի աշխարհը բացուած է աչքերուս առջեւ, հայրենիքին, հայրենի հողին, ջուրին ու երկնքին, մանաւանդ հայ գիւղացիին, իսկական հայրենասէր հայուն պատկերացումով:

Ճիշտ է, տարբեր գրողներու գործերը, մանաւանդ յեղափոխական գրականութիւնը մինչեւ երիտասարդութեան սեմին հասնիլս իրենց ուժեղ դրոշմը դրած են ստացած

դաստիարակութեանս վրայ, սակայն Բակունցը ուրիշ պիտի ըլլար: Անոր գեղագիտական մօտեցումը տարբեր հրապոյր մը ունի:

Եւ ահա հիմա, շարքի կեցած պահուս, կարդալ կը սկսիմ «Սերմնացան»-ի շարքին առաջին պատմուածքը՝ «Ծիրանի փողը»:

«Ես թերթում եմ ուղեգրութիւնների իմ տետրը եւ նրա էջերի արանքում գտնում եմ սուսամբարի երկու տերեւ՝ չոր ու գորշ, ինչպէս հանգած մոխիր: Կռանում եմ թղթի վրայ, ռունգերս լայնանում են սուսամբարի հոտից ու դողալով թերթում եմ տետրը...»:

Վա՛յ, մինչեւ ի՛մ ռունգերս հասաւ այդ հոտը...: Կարծէք անհեթեթի թատրոն է: Տորվալ, Գանատայի ինքնատիպ վարչապետ Փիեռ-Էլիոթ Թրիտոյի անուան օդակայանի սպասման այս սրահին մէջ. շուրջս՝ հարիւրաւոր մարդիկ, 21-րդ դարու այս առաջին տասնամեակի պարզ մարդիկ, ընտանիքներ, առանձին ճամբորդող երիտասարդներ, ծերունիներ, կիրթ, ցած ձայնով խօսող, համբերութեամբ մասնակից այդ դանդաղ յառաջխաղացքին՝ հասնելու սպասարկման սեղաններուն, ստանձնելու թոյլքի քարտերը, յանձնելու ճամպրուկները եւ հուսկ, ինձի հետ օդանաւ բարձրանալու համար:

Իսկ ես՝ վերստին կը գերուիմ Բակունցով ու մէկ պարբերութենէն միւսը երկու մեթր եւս յառաջ կը քշեմ սայլս:

«Յետոյ ես եւ Յոլակը [հեղինակին ձին] շրջեցինք "դար"ը, իջանք ձորակը, նորից բարձրացանք եւ սարահարթի վրայ երեւաց լեռնային գիւղը՝ առանց ծառերի, առանց այգիների, օդակուած կանաչ մարգագետիններով եւ բաց առուններով, որոնց ջրերը արեւամուտին վարարում են, կէս գիշերին աղմկում խոր ձորերում, իսկ արեւը զարթնում է, լռում են՝ լեռան սառուցներից իջնող այդ առունները»:

Այս մաքրամաքուր օդակայանի լինուէումով ծածկուած «տախտակամած»ին վրայ, բարձրախօսներէն հնչող յայտարարութիւններու աղմուկին մէջ՝ ես մեր առունները պիտի տեսնեմ եւ անոնց աղմուկը լսեմ եւ պիտի առնեմ մեր գիւղերու – ա՛յն օրերու գիւղերու – հոտն ու բոյրը...

Խայտաբղէտ բազմութիւն է շուրջս, տեսակաւոր տիպարներ, շնորհալի, սիրուն կիներ, նաեւ ուռած մարմիններով այրեր ու կիներ, խարտեաշ մանուկներ, նաեւ միջինարեւելքցի, ասիացի, թխաղէմ, մօրուսաւոր եւ անմօրուս մարդիկ, կրօնաւորի զգեստներով ու սլացիկ հասակով վարդապետներ, մայրապետներ եւ դէռ ուրիշներ, որոնք Փարիզ գացող սա թռիչքին վրայ պիտի ըլլան եւ ...

Եւ սա սասունցիները, որոնց գիւղը կը մտնեմ Բակունցին հետ:

Իրապէս ճիշտը այդ պիտի չըլլա՞ր, Հայաստան երթալու համար՝ հաղորդուի՛լ Սասունով:

Ձեանբերդը սասունցիներուն գիւղն է, արդի Հայաստանի սահմաններուն մէջ՝ Մոսկանէն, Տալուրիկէն ճողոպրած, վերապրած գիւղացիներով բնակուած: Գիւղատնտես Բակունց, կերելի պաշտօնին բերմամբ, կ'այցելէ այդ գիւղը, ուր եւ պիտի հանդիպի Հազրոյին: Գիւղատնտես-գրողը, սակայն, միայն գիւղին վիճակով հետաքրքրուելու չէ եկած, այլ ... ուղեգրութիւններու իր տետրը սուսամբարի տերեւներով եւ ինչ ինչ այլ մանրամասնութիւններով լեցնելու, վերապրո՛ւմը պատմելու:

«Թուում էր, թե [Հազրոն] մինչև մահ կ'ապրի [Մասնոյ] այդ ժայռին վրայ, ինչպէս իր պապերը, կը ցանի կորեկ, աշնանը կ'իջնի ձորերը, կը հաւաքի միրգ ու ցախ, ձմեռը կը լսի հին գրոյցներ՝ Ձէնով Օհանի, Մսրայ Մելիքի եւ Թլոր Մանուկի մասին:

Պատերազմ, Եղեռն, գաղթ, եւ Հազրոն հեռացաւ Մարութայ սարէն, միշտ պահելով իր հաւատքը՝

«Էսօր դուման է մեր լեռների վրայ, վաղը նորից արեւ կը ծագի:

«Բռնեցին մի ճանապարհ, մուրրուեցին հազար ճանապարհներում, յետոյ, երբ արդէն սպիտակ մագեր կային նրա գլխին, Հազրոյի քոչը ելաւ այս բարձր լեռը»:

Ու հիմա Բակունց եկեր է այդ Հազրոն տեսնելու, առանց գիտնալու զիս ալ ետեւէն քաշել տանելով՝ Մոնթրէալի օդակայանի սպասման այդ սրահին մէջէն:

«Ես երբեք, երբեք չեմ մոռանայ այդ լուսնեակ գիշերը բարձր լեռան մի գիւղում, Հազրոյի տան կտուրը, նրա նուագը եւ հսկաների պարը:

«Տղան տնից բերեց սրինգը, այն ծիրանի փողը, որ քիչ աւելի երկար էր մեր հովիւների սովորական սրինգից: Նա կանգնեց կտուրի ծայրին, փողի բերանը դարձրեց դէպի գիւղի կողմը, եւ հետզհետէ ինչպէս լուսաբացը լեռներում, զարթնեց "Եար խուշտա"-ն: Նա սկսեց դանդաղ եւ մեղմ, յետոյ ձայները զօրացան, արագացաւ չափը: Յետոյ վայրենի կանչով վեր թռաւ ջրբաժանը [այն գիւղացին որ Բակունցը առաջնորդած էր մինչև այստեղ], կանգնեց կտուրի մէջտեղ, նրան հետեւեց երկրորդը, երրորդը եւ շուտով նրանց երկու շարքը, ինչպէս երկու վիթխարի ապառաժ, զարնուեցին իրար ձեռքերով, ծնկներով եւ կրծքով: Նուագն աւելի թնդաց. դողում էին կտուրի գերանները, կարծես իրար վրայ արշաւում էին բանակներ»:

Հիմա արդէն երբ Փարիզի Շարլ ՏրԿոլի անուան օդակայանի սրճարաններէն մէկուն մէջ նստած վերստին կը կարդամ Բակունցի տողերը, – գրելու համար այս յօդուածս, – եւ կը սպասեմ էր-Ֆրանսի Երեւան տանող թռիչքին, կոկորդս կը բռնուի:

Հազրոն, այս անգամ իր ծիրանի փողով հովուական պարզ երգ մը կը նուագէ, վերյիշելով իր հին գիւղը.

«Կայ եւ թախիժ այդ երգի մէջ, կարծես մէկը մուրրուել է խոր ձորերում եւ տխուր հեկեկում է, կայ եւ ջինջ ուրախութիւն, երբ լեռների վրայ ծագում է արեւը, ելնում է ծուխը, մշակը գնում է աշխատանքի, վերջապէս կան եւ կարօտի հնչիւններ՝ վերադարձի եւ վերջին յոյսի:

«– Հաղ մի երթամ տեսութեան մըր քարերին, մըր ձորերին, մըր Մարութայ բարձր սարին: Առնիմ զիմ ծիրանի փող, ժողվիմ մարդերու, նստիմ անուշ խոտերու վրէն, հանց զառներ մարդիկ նստեն զիմ չորս բոլոր, երգեմ էնոնց խաղաղութեան զիմ երգեր, մարդիկ հալալ գուլալ ախպրտոց պէս գրկեն զիրար, չեղնի ոչ տէր, ոչ մշակ, ոչ թուր, ոչ բռնութիւն: Փչեմ զիմ ծիրանի փող, ելման ծուխ բարձրանայ երկինքներէն, խմեմ մըր լուս աղբըրներէն, զիմ քրտինք կաթա մըր քարերու վրէն, մըր Մարութայ բանձր սարի ամպ թող լիզա զիմ սիվտակ ոսկորներ ...

«– Հազրոյ, իսկ ո՞ւմ կը տաս քո ծիրանի փողը:

«– Զիմ փող կիտամ իմ քաջարժիւ թոռնիկին»:

Հոն, Մոնթրէալի օդակայանին մէջ, կամբողջացնեմ պատմուածքին ընթերցանութիւնը եւ ետ՝ պայուսակիս մէջ կը դնեմ գիրքը: Շարքը դեռ չէ աւարտած տակաւին, սակայն չեմ

կրնար ուրիշ պատմուածք մը սկսիլ, ինչպէս շատ անուշ քաղցրաւենիք մը ուտելէ ետք չես կրնար ուրիշ մը առնել. առաջինը պէտք է նստի, պէտք է զայն մարսես:

Կարծես պատանեկութիւնս վերագտած եմ Բակունցի ճամբով:

Իսկ հիմա այստեղ՝ Փարիզի օդակայանին մէջ, երբ իր աւարտին կը բերեմ այս գրութիւնս, չեմ կրնար չափստսալ, որ մեր զաւակներն ու թոռները մեր գրական այս գլուխ գործոցներէն անմասն կը մնան: Իսկ ինչո՞ւ նորերուն մասին խօսիլ միայն. իմ սերնդակիցներէն քանի՞ն Բակունց կարդացին, կամ ... Բակունցին անունը լսած եղան պարզապէս:

Հագրոն իր ծիրանի փողը իր "քաջարժիւ թոռնիկին" պիտի տար: Մենք այդ մեծ հարստութիւնը գիտցա՞նք մեր հանրութեան, հին թէ նոր սերունդին սեփականութիւնը դարձնել:

Որքա՞ն գործ կայ կատարելիք:

Անխուսափելի ժամադրավայրը

Իրօք, եւ հակառակ բոլոր տխուր երեւոյթներուն, Հայաստանը ու մանաւանդ Երեւանն են ու կը մնան երջանկութեան ժամադրավայրը,– ինծի համար, շատերու համար, եւ վստահ եմ՝ համայն հայութեան համար:

Եր – Ֆրանսի թիւ 2998 թոնիչքը երբ էջք կատարեց Երեւանի Զուարթնոց օդակայանը՝ ճամբորդները ծափահարեցին: Ի սրտէ: Նոյնը չէր վերադարձի ատեն, երբ այս անգամ թիւ 344 թոնիչքն էր որ կը դպնար Փարիզի Շարլ-ՏըԿոլ օդակայանի ասֆալթին: Այդ ծափերը ոչ այնքան ապահով ժամանմա՛ն համար կըլլան, որքան մեր ժամադրավայրը հասնումին: Մէջ մըն ալ Պէրոյի հասած պահուստ նման ծափեր լսած եմ. կարօտի, հայրենաբաղձութեան ծափեր:

Հայաստան երթալը, ամեն անգամ, Հայաստանը ընկալելու նախորդէն աւելի հասունացած հոգեբանական տրամադրութեամբ կը կատարուի: Հետզհետէ՝ աւելի բնականոն, աւելի բնական: Առաջին անգամներու այնքան զգացական հոգեվիճակը կարծես կը փոխարինուի աւելի բնական վիճակով մը: Ի՞նչ կայ որ, ուրիշ որեւէ տեղ երթալու նման Հայաստան կ'երթամ,– կըսես: Միշտ ալ կը յամենայ սակայն խորհուրդ մը, միսթիք մը, որ չկայ օրինակ, Ֆլորիտա երթալու պարագային:

Իսկ օդանաւին վրայ անխուսափելիօրէն պիտի գտնուին ուղեկիցներ, որոնք առաջին անգամն է, որ կ'երթան, ու իրենց դէմքերուն վրայ հայելիի պէս՝ իմ դէմքս կը տեսնեմ՝ երբ ես էի այդպէս՝ իմ անդրանիկ ուխտագնացութեանս ատեն: Ահա սա քովս նստողները, երիտասարդ հայուհի մը ու իր պատանի որդին, որոնք միայն ֆրանսերէն կը խօսին: Ի՞նչ ակնկալութիւններ կը տեսնեմ իրենց դէմքերուն վրայ. մանաւանդ մօրը դէմքին, ուր փայլփլոզ աչքերը կարծես գալիք երանութեան մը սպասումով կը թրջուին...

Ինը անց է արդէն, բայց կատարելապէս լոյս է տակաւին ամբան այդ երեկոյեան, երբ կը հասնինք Զուարթնոց օդակայանը (կամ՝ օդանաւակայանը, ըստ հայաստանցիներուն): Ինծի համար մեծ եւ հաճելի անակնկալ մըն է Հայաստան մտնել այդ նոր կայանէն:

Արդարեւ, որեւէ արդիական օդակայանի հետ մրցող, լուսաւոր ու հիւրընկալ շէնք է դարձած Զուարթնոցը, ուր մտնելը, վիզան ձեռք ձգելը, անձնագիրը ստուգել տալը եւ

ճամպրուկները առած դուրս գալը այնքան հեշտ է ու որքան անելի՝ քան, օրինակ Փարիզի պարագային...

Այստեղ, մուտքի վիզան ստանալու սպասման պահուս կը խօսիմ ուրիշ ճամբորդի մը հետ, որ ինձի կը նայի այնպիսի նայուածքով մը, որ կարծես հին ծանօթներ ըլլանք: Ես ալ այդ տպաւորութիւնը ունիմ, բայց կը սխալիմ. մէջտեղ կ'ելլէ, որ Հայաստանի ու Ամերիկայի միջեւ իր օրերը բաժնած հայրենակիցս աղջկանս՝ Արագին ֆիլմը տեսած է, ու այդ պատճառաւ է, որ դէմքս իրեն ծանօթ կը թուի: Այս ամբողջ ուղեւորութեանս ընթացքին այս կացութիւնը պիտի կրկնուի, ու պիտի սկսիմ հաճոյք առնել այս նոր համբաւէս ..., ու այլեւս պիտի ներկայանամ որպէս գաւկիս հայրը:

Չեմ գտներ զիս դիմաւորելու գալիք շարժաւարը, սակայն Ֆրանսայէն ինձի հետ ժամանած ընկեր մը, որուն ալ ծանօթը եկած է զինք Երեւան տանելու, կ'առաջարկէ որ ընկերանամ իրենց, այդ յարմար ձեւով լուծելով փոխադրութեան հարցս:

Ընկերս այն սփիւռքահայերէն է, որ յաճախ կու գայ հայրենիք, այս կամ այն ձեւով օգտակար ըլլալու: Սա երեւոյթ մըն է, որ պիտի քաջալերենք, մղենք շատեր որ նոյնը ընեն, եւ ատկէ բաւարարութիւն զգան, թէ իրենք եւ թէ այն անձերը կամ հաստատութիւնները, որոնց կեանքը չափով մը կը բարելաւուի այս ձեւով:

Ճամբուն ընթացքին խօսակցութիւնը կենթանայ այն համատարած կաշառակերութեան եւ այդ միջոցով անբաւ հարստութեան կուտակման մասին:

– Թող հարստանան, թող վայելեն, ատոր շատ ըսելիք չունիմ, որքան ալ դատապարտելի ըլլան հոն հասնելու միջոցները, բայց գոնէ երկիրը չվտանգեն, ժողովուրդը չխաբեն, նոյնիսկ իրենք չխաբուին, – դիտել կու տայ ընկերոջս ընկերը, որ կը թուի ներսէն ծանօթ է վերնախաւին մէջ անցած-դարձածին:

Նոյն ճամբուն վրայ, երբ Երեւանէն օդակայան կերթամ Գանատա վերադառնալու համար, այս անգամ թաքսիի վարորդս է, գիւմրեցի մը, որ յուսահատութեան դուռն է հասած եւ շատերու նման կուզէ ձգել-հեռանալ, քանի որ ամբողջ օրը չարաչար աշխատելով հանդերձ՝ չի կրնար ապահովել ընտանիքին ապրուստը, գաւակներուն բարձրագոյն ուսման ծախսերը եւ այլն: Հաւատք չունի, որ բան մը պիտի փոխուի...

Նոյն յանկերգը կը լսես ընդհանրապէս, երբ որեւէ վարորդի հետ խօսիլ սկսիս, ինչպէ՞ս ըլլալը հարցնես: Կուզես յուսադրել, կուզես հաւաստիացնել, որ անելի լաւ օրեր պիտի գան, սակայն քեզի չեն հաւատար: Այս վիճակը նաեւ կը ստեղծէ հին օրերու կարօտաբաղձութիւն մը, երբ գէթ անօթի չէին մնար, նոյնիսկ եթէ ազատ չէին ... Այդ արդէն ուրիշ մակարդակ մը կը տանի խօսակցութիւնը, եւ դժուար է վիճիլ կամ հակաճառել:

Կարելորը, սակայն, այն է, որ հիմա դարձեալ Հայաստան կը գտնուիմ, ու պիտի ջանամ «լիցքաւորուիլ», ինչպէս կըսեն: Մտադրած եմ մարդ տեսնել, հին ու նոր ծանօթներ, կամ ծանօթ դէմքեր, հարցազրոյցներ ալ ունենալ, եթէ կարելի ըլլայ, անելի քան հոս-հոն վազել-վազվզել:

Տեսնենք որքան պիտի յաջողիմ:

Վաղեմի դասընկերոջս հետ

Սովորական, բայց եւ այնպէս միշտ հաճելի երեւոյթ է ծանօթներուդ հանդիպիլ Երեւանի մէջ. փողոցը՝ Թումանեանի կամ Աբովեանի վրայ, Հանրապետութեան հրապարակը՝ «Արմէնիա-Մարիոթ»-ի բացօթեայ սրճարանին կամ Ազատութեան

հրապարակը եզերող կամ ողողած բազմաթիւ սրճարաններուն մէջ, այդ կողմերը դեզերած ատենդ, կամ այս կամ այն համերգին, թատերական կամ այլ ներկայացման պահուն: Ծանօթներ՝ աշխարհի որեւէ կողմէն: Մարդիկ, որոնց գոյութիւնն անգամ մոռցած էիր, եւ ահա կը վերահաստատուի կապը իրենց հետ՝ հայրենի՝ հողին վրայ: Ուրիշներ, որոնց յաճախ կը հանդիպիս այստեղ, քու բնական վայրիդ մէջ, բայց միտքէդ չանցնիր, որ յանկարծ հոն ալ առջեւդ պիտի ելլեն:

Այո՛, երջանկութեան ժամադրավայրն է մեր մայրաքաղաքը, մեր երկի՛րը:

Ես սակայն երկար ցանկ մը բերած եմ հետս եւ կուզեմ գտնել կամ վերագտնել այդ ցանկին վրայ եղողները. ոմանք հին ծանօթներ են, ընկերներ, դասընկերներ. ուրիշներ՝ հայրենաբնակ մտաւորականներ, որոնց երբեք չեմ հանդիպած, սակայն կը փափագիմ անձամբ ծանօթանալ, թէկուզ բարեւ մը ըսելու համար, կամ շնորհակալ ըլլալու՝ մեր մշակոյթին, մեր կեանքին բերած իրենց թանկագին մասնակցութեան, ի՛մ վրաս իրենց թողած ազդեցութեան կամ տպաւորութեան համար:

Ու պիտի փնտռեմ. մէկ առ մէկ, փորձելով գտնել իրենց հեռաձայնի թիւերը, խօսիլ, ժամադրուիլ իրենց հետ: Պիտի սկսիմ Սեդրակ դասընկերօջմէս, որ Հայաստան ներգաղթեց Եգիպտոսէն՝ 1962-ին, մինչ մենք բաւական վարանումներէ ետք, չկարենալով այդ յանդուգն որոշումը առնել, Գանատա հասանք: Ահա ուրեմն, այդ թուականէն ի վեր կապերս խզուած են իրեն հետ, բացի զինք տեսած այլ դասընկերներէ քաղած լուրերէս: Ասկէ առաջ ամեն անգամ Հայաստան գալուս, տարբեր պատճառներով չեմ կրցած հետը կապ հաստատել: Յանցաւոր կը զգամ. այս անգամ առիթը պէտք չէ փախցնել:



Սեդրակին հետ

Բայց ուրկե՞՞ սկսիլ. գիտեմ, որ իր զարմիկը, որուն հետ թղթակցած ալ եմ, Ազգ օրաթերթի աշխատակից է: Նախ կերթամ զինք տեսնելու, ծանօթանալու նաեւ «Ազգ»-ի խմբագրատան, որ մեր «Երկիր»-ի դիմացն է: Աշխարհը որքան փոքր է: Յակոբ, – այդպէս է զարմիկին անունը, – ոչ, պէտք չէ շփոթել խմբագրին՝ Աւետիքեան Յակոբին հետ. Այս Օուլիկեան Յակոբը անգլերէնէ թարգմանութիւններ կընէ թերթին համար, նաեւ դասախօս է:

Ուրեմն, իբրև ալ կունենամ Սեդրակին հեռաձայնի թիւը, սակայն հիւրանոց վերադարձիս ան ինձմէ՛ առաջ կը կապուի հետս, ու կը ժամադրուինք:

Յաջորդ առաւօտ, երբ ակնդէտ կը սպասեմ մեր հանդիպումին, ժամադրութենէն տասը վայրկեան առաջ «ոխսեփշըն»-էն Լուսինէն կը զանգէ սենեակս. «Ձեր ընկերը հոս է»: Միշտ անհանգիստ կը զգամ՝ երբ Հայաստանի մէջ այդ օտար, օտարամուտ բառը կը գործածուի, փոխան «ընդունարան» կամ այլ աղուոր հայերէն հարազատ բառի մը, այս անգամ սակայն այդ մասին մտածելու ժամանակ չունիմ: Կը սուրամ վար:

Այդ պահիւր. պիտի չմոռնամ այդ պահը. երկու սեւահեր երիտասարդներ էինք բաժնուած ատեն. այժմ՝ երկու սպիտակահեր այրեր (կը խուսափիմ տակաւին ծերունիներ բառը գործածելէ): Ի՞նքն է իրապէս. ե՞ս եմ իրապէս ...

Կողջագուրուինք, երկար կը յամենանք մէկս միւսին թելերուն մէջ: Լուսինէն վկան է մեր ապրումներուն ...

Կը կտրենք հրապարակը եւ Ամիրեանի վրայ առաջին սրճարանը տեղ կը գրաւենք:

Մէկ, երկու ժամուան մէջ ինչպէ՛ս պիտի կարենանք ամբողջ կեանք մը պատմել իրարու: Անշուշտ բաւարար չէ, անգամ մը եւս պիտի հանդիպինք յաջորդ շաբաթ ու միասին պիտի շրջինք Երեւանը, շատը՝ քալելով, քիչը՝ հանրային փոխադրամիջոցով (մինիպլիւսով), ու շարունակենք մեր պատմութիւնները, ողիսականները... Սեդրակ, որ ամբողջ կեանք մը ուսուցչութեամբ զբաղած է, սերունդներ դաստիարակած, յատկապէս հետաքրքրուած է մեր հայապահպանման աշխատանքներով եւ այնպէս կը հրճուի, երբ կը տեղեկանայ, որ հայկական վարժարաններ ունինք այստեղ, եւ իր դասընկերն ալ գէթ անոնցմէ մէկուն գոյառումին մէջ իր բաժինը բերած է:

Չուզեր շատ խօսիլ իր անցած դժուար ուղիին մասին, բայց մի քանի անգամ կը խնդրէ, որ մեր կազմակերպութիւնները ու մեծատունները գործարաններ բանան Հայաստանի մէջ, գո՛րծ ստեղծեն, որ մարդիկ չստիպուին այլուր երթալ իրենց ու իրենց ընտանիքներուն ապրուստը հոգալու համար:

Վերստին հանդիպելու յոյսով կը բաժնուիմ Սեդրակէն, որ ոչ միայն իր վտարանդիութեան գիտցաւ վերջ դնել, այլեւ թրքատու իր Պալըզճեան մականունն ալ հայացուց՝ որդեգրելով Նայիրեանը, որպէսզի ոչ մէկ տարակոյս մնայ իր հայութեան առնչութեամբ ...

Եթէ փորձեմ թուղթին յանձնել հայաստանեան այս երկշաբաթեայ կեցութեանս ընթացքին ունեցած իւրաքանչիւր հանդիպումս, այս շաբթը կրնայ ... հատորի մը վերածուիլ: Կը մտածեմ, որ եթէ Երեւան ապրէի, ո՞ր թերթը այնքան տեղ պիտի ունենար լոյս ընծայելու օրատետրս՝ ամենօրեայ հանդիպումներուս պատումներով կամ այլ իրադարձութիւններու արձագանգներով: Սակայն չեմ կրնար թէկուզ հպանցիկ չանդրադառնալ այդ հանդիպումներէս ոմանց, որոնք յատուկ նշանակութիւն ունեցան ու պէտք է ունենային՝ ինձի համար, եւ կարժէ ընթերցողներն ալ մասնակից դարձնել անոնց առթած ապրումներուն կամ մտորումներուն:

Այո՛ . կարելի չէ Հայաստան երթալ ու ձեռնունայն վերադառնալ ...

Անգուգական Վարպետին հետ

Վարազդատ Յարութիւնեանի հանդիպիլ՝ կը նշանակէ դեմ-յանդիման գալ հայոց պատմութեան հետ. վերջին մէկ դարու պատմութեան թէ դարերու պատմութեան հետ:

Սակայն ինչպե՞ս գտնել զինք: Վստահ էի, որ «Հայ արուեստ»-ի խմբագրատունը ունենալու էին իր հեռաձայնի թիւը: Չէ՞ որ թերթի խմբագրական խորհուրդին մեջ ի՞ր անունն ալ կը գտնուի: Շիտակ ուղղուեցայ այնտեղ, որ «Երկիր»-ի շէնքի քովի դուռն է ու պանդոկէս (ներողութիւն՝ «հիւրանոց»-էս...) ոչ շատ հեռու: Կարէն Մաթեոսեան՝ խմբագիրը, որ այլեւս հին ծանօթս է, անմիջապէս մեջտեղ հանեց համարը ու գանգեց ալ:

- Հրամեցէ՛ք, - ըսին, միւս կողմէն:
- Կարելի՞ է անմիջապէս գալ, այսինքն՝ 30-40 վայրկեանէն (ըսել կուզէի բոպէէն...):
- Կարելի է:

Եւ ահա Հրապարակէն կ'առնեմ Ամիրեանը, կողողուիմ Մարեան փողոց: Երեւանի մեջ, ի հարկէ, փոխադրական նախընտրած միջոցս կօշիկներս են սանտալներս, որոնցմով ուզած տեղս կրնամ երթալ: Ուրիշներ տաքին (շոգին) չեն սիրեր քալել, թաքսի կ'առնեն: Ինձի համար Երեւանի մեջ քալելը ինքնին երջանկութիւն մըն է, որմէ առաւելագոյնը կուզեմ օգտուիլ: Գանատայէն եկողիս համար՝ ջերմութիւնն ալ ուրիշ առաւելութիւն...

Ամիրեան փողոցը կաւարտի Մարեանի վրայ, ուր աջ կը դառնամ, կ'անցնիմ Բուզանդի, Արամի փողոցները եւ Պուշկինն ալ կտրելէ ետք, ահա կը տեսնեմ փայտէ համեստ, բայց ներկայանալի դուռ մը, վրան, փոքր մետաղէ տախտակի մը վրայ՝ վարպետին անունը: Ճիշտ կից՝ Մարտիրոս Մարեանի տուն-թանգարանին:

Դուռը կը բանայ ու զիս ներս կ'ընդունի Արմինէ Հայրապետեան, որուն կը ծանօթանամ. Վարազդատ Յարութիւնեանի հարսն է: Թանգարան մըն է, որ կը մտնեմ կարծես, ի լինելութեան, վստահաբար ապագայ տուն-թանգարան մը: Հին, - բայց ոչ հինգած, - բնակարան մըն է՝ ամենուր թուղթեր, գրքեր, պատերուն՝ նկարներ, գծագրութիւններ:

Ճարտարապետ-արուեստագետի տունն է, որ եկած եմ, անշուշտ: Կ'առաջնորդուիմ պատշգամ, ուր Վարպետը թախտի մը վրայ ընկողմանած է, տան «շորերով», կապոյտ գդակ մըն ալ գլխին:

- Ելիր, հայրիկ, նստէ, հիւր ունիս, - կը թելադրէ տիկին Հայրապետեան:
- Կօզնէնք իրեն, որ նստի, կ'առնեմ ձեռքը, կը համբուրեմ: Ի՛նչ պատիւ է սա ինձի համար:
- Վարազդատ Յարութիւնեան 98 տարեկան է: Ան այն երախտաւորներէն է, որուն անունը իբր փայլուն աստղ պիտի մնայ մեր պատմութեան երկնակամարին վրայ:
- Պրն Յարութիւնեան, շատ ուրախ եմ, որ ծանօթացայ ձեզի. մեծ գործ կատարած էք դուք մեր ազգին համար. ձեր վարձքը կատար:
- Եւ կը խնդրեմ, որ երկու խօսք ըսէ, որ իր ձայնը ունենամ արձանագրիչիս վրայ:
- Ամբողջ կեանքովս ապրել եմ իմ ազգին օգտակար լինելու նշանաբանով: Եւ կարծես դա ինչ որ չափով ինձ յաջողուել է. ես հանդիսանում եմ Հայաստանի ճարտարապետների



Վարազդատ Յարութիւնեան

վեց սերնդի դաստիարակը, բազմաթիւ աշխատութիւնների հեղինակը՝ նուիրուած մեր ազգային ճարտարապետութեան պատմութեանը: Հասարակական գործունէութիւն եւ ծաւալել Հայաստանի ճարտարապետների միութիւնում եւ այլ հասարակական ազգանուէր գործունէութիւն ծաւալած կազմակերպութիւններում:

Իրօք, «Հայկական սովետական հանրագիտարան»-ը կը նշէ, որ բացի ճարտարապետ, ճարտարապետութեան պատմաբան, արուեստի վաստակաւոր գործիչ ըլլալէ, ան եղած է ճարտարապետութեան դասախօս, ամբիոնի վարիչ, Գիտութիւններու ակադեմիայի արուեստի բաժնի վարիչ, Հայաստանի ճարտարապետութեան միութեան վարչութեան նախագահ, պատմական յուշարձաններու պահպանութեան ընկերութեան նախագահ: Եւ հեղինակն է բազմաթիւ աշխատութիւններու:

– Յամենայն դէպս, եթէ հարցնեն՝ զո՞ւ հ եմ իմ ապրած կեանքով, իր արդիւնքներով, պիտի հպարտանամ ասելով այո՛, – կըսէ ան, այդ «այո»ն այնպէս շեշտելով, որ կը դառնայ «այո » ...

Յետոյ նշան կ'ընէ հարսին, որ բերէ ինչ որ մտադիր է ինծի նուիրելու, եւ մինչ տիկ. Հայրապետեան նաեւ զովացուցիչ ու քաղցրաւենիք կը մատուցէ, ինք երեք գիրք կը մակագրէ ինծի՝ «կանադահայ Վրէժ-Արմէնին, նոյնպէս Յարութիւնեանին, Հայաստանից հեռու հայ մնալու պահանջով» ... Գրքերէն մէկը իր դասական դարձած «Հայկական ճարտարապետութեան պատմութիւն»-ն է, միւսը՝ «Ճարտարապետական յուշարձանների վերականգնումը», երկուքն ալ գրուած որպէս համալսարանի ուսումնական ձեռնարկ, եւ նորագոյն հատորը՝ «Կեանքիս քառուղիներում», Գիրք երկրորդ, նոր, նո՛ր լոյս տեսած:

Կը խնդրեմ, որ անդրադառնայ նաեւ իր ծագումին, քանի որ խօսակցութեան ընթացքին յատկապէս շեշտած էր ասիկա:

– Ես ծնունդով վանեցի եմ. ծնուել եմ 1909 թուականին, Վան քաղաքի այգեստաններում: Հայրս դերձակ էր, մեծ ընտանիքի տէր: 1915 թուականին թողեցինք մեր տունն ու տեղը, մեր այգին՝ այգեստաններում, գաղթեցինք Եկանք... Անցել եմ գաղթի մահաբեր ճանապարհներով, որբանոցներում եմ անցկացրել կեանքս, մանկութեանս տարիները, երբոր հայրս վախճանուեց: Մի խօսքով, ես պատկանում եմ Եղեռնի ճանապարհով անցած մտաւորականների թուին... մնացածը, ինչի որ ես կարողացել եմ հասնել, որով հիմա գոհ եմ ու հպարտ՝ դա շնորհիւ սովետական կարգերին է եղել:

Այս մեծ հայուն ու մեծ մտաւորականին հանդիպելու սոյն առիթը կարելիութիւն ընծայեց ինծի տեսնելու նաեւ Արմինէ Հայրապետեանը՝ «բանաստեղծուհի, երգչուհի, երգահան, ասեղնագործուհի», որ իբր ուսողագէտ երկար տարիներ դասաւանդելէ ետք, այժմ ամբողջութեամբ նուիրուած է արուեստի իր սիրած ճիւղերուն: Կարինէ Միքայելեան «Հայ արուեստ»-ի վերջին՝ 1/2007 համարին մէջ դիտել կու տայ, որ «Իւրովի տիրապետելով Վանի, Այնթապի, Մարաշի, Ուրֆայի, Սվազի եւ այլ վայրերի ասեղնագործական դպրոցների նուաճումներին, հայկական գոյների ու նախշերի պատմութեանը, Արմինէն իր կտաւներում "երգում է" իր ձայնով, այսինքն՝ իր գոյներով, իր նախշերով, իր ըմբռնումներով ու ճաշակով՝ դրանով իսկ պահպանելով բուն հայկական ասեղնարուեստի հոգին եւ էութիւնը՝ անհատականութեան իր ակնահաճոյ դրոշմ դաջուածքով»:

Արմինէն ալ կը ստանամ իր վերջին խտասալիկը՝ «Վան», 11 երգերով, որոնցմէ երեքը՝ իր բառերով ու երաժշտութեամբ:

Հարստացա՛ծ՝ կը վերադառնամ պանդոկ:

Գիտնական ընկերոջ մը հետ

Նախքան առանձին հարցազրույցներով կամ ակնարկներով այլ յատկանշական հանդիպումներու անդրադարձնալս, կուզեմ պատմել եւս մէկ հանդիպումի մասին:

Յովիկ Բաղդասարեանին ծանօթացած եմ այստեղ՝ Գանատա: Մի քանի տարի առաջ էր, Քեպէզ գացեր էինք «Համագգային»-ի ընկեր-ընկերուհիներով՝ հանդիպելու համար տեղւոյն հայերուն, որոնք ջախջախիչ մեծամասնութեամբ հայաստանցիներ էին՝ եկած աշխատելու Լաւալի համալսարանի զանազան բաժիններուն մէջ: Անոնցմէ մէկն ալ Յովիկն էր՝ գիտնական, բնագէտ (ֆիզիկոս): Յանկութիւն կար շարաթօրեայ վարժարան ստեղծելու, նոյնիսկ «Համագգային»-ի կորիզ մը, զոր «Հաղբատ» մկրտեցինք, որպէս անմիջական դրացին Մոնթրէալի Սանահին մասնաճիւղին:

Բաղդասարեան առանձին եկած էր, ընտանիքը Երեւան թողած, քանի որ չէր ուզեր արտագաղթել: Միւսները իրենց ընտանիքներով եկեր ու տուն-տեղ էին դարձեր: Այդպէս ալ, իր պաշտօնավարութեան շրջանի աւարտին, ան վերադարձաւ Հայաստան:

Ժամադրուեցանք Արամ Խաչատուրեանի արձանին առջեւ ու նախ նստանք սուրճ մը առինք Օպերայի շրջակայքի բացօթեայ սրճարաններէն մէկուն մէջ: Կինը՝ Թամարան ու կրտսեր զաւակը՝ Տիգրանն ալ մեզի միացան: Այս վերջինի գրութիւններէն մէկուն տեղ տուած էի «Հորիզոն»-ի գրական յաւելումին մէջ: Մտածող, մեր առօրեայով տագնապող երիտասարդի մը հանդիպիլը ինծի համար հաճոյք էր: Մտաւորական գիծը ընտանեկան յատկանիշ մըն էր, յայտնի էր: Կարելոր չէ, որ այդ մէկ ժամուան զրոյցը առտնին հարցերու կը վերաբերէր: Կարելորը՝ այդ մտերմութեան ստեղծումն էր:

Անկէ գացինք իրենց աշխատատեղին՝ Ճարտարագիտական պետական համալսարանը, ուր Վարդգէս Պարսամի անուան Թելըր-օպտիկական կապի (Fiber Optics Communication) աշխատանցի վարիչն էր Յովիկ, Թամարան ալ իր օգնականներէն մէկը: Համեստ աշխատանց մըն էր հին-հին կահաւորումով, ուր սակայն զետեղուած էին արդիական սարքեր, համակարգիչներ, մե՛ծ դժուարութեամբ ձեռք ձգուած լազերային ճառագայթով փորձարկութեան կազմածներ եւ այլն, որոնցմով այնքան հպարտ ու երջանիկ է գիտնականը: Նոյնիսկ ինծի համար Յովիկ բանեցուց սարքերէն մէկը, ցոյց տալով կարմիր ճառագայթին անցքը բարակ թելերուն ընդմէջէն...

Հայր ու զաւակ շաբաթ մը ետք պիտի մեկնէին Իտալիա՝ մասնակցելու գիտաժողովներու՝ Հայաստանի ու հայութեան... վարկը պաշտպանելու:

Յովիկ որոշ վարանումով (ճամպրուկներս չծանրացնելու մտահոգութեամբ) ինծի նուիրեց Ճարտարագիտութեան համալսարանի Ճարտարագէտ հրատարակչականի նորագոյն մէկ հրատարակութիւնը՝ Յակովոս Զ. Ակցողլուի յունարէնի թարգմանուած «Անիծուած առիծի բնաջնջումը», որ Անատոլիայի յոյներուն (եւ հայերուն) դէմ թրքական ցեղասպանական քաղաքականութեան կը վերաբերի, քաջ գիտնալով, որ ինչ որ մօտէն կամ հեռուէն Հայ դատին առնչուած է՝ պիտի հետաքրքրէ զիս:

Բաժանման պահուն Յովիկ փափագ մը յայտնեց. կուզէր որ այցելեմ իրենց տունը, տեսնեմ թէ Հայաստանի (իրեն նման) համեստ գիտնականները, մտաւորականները ինչպէ՛ս եղա կերթան: Ո՛չ, ցուցամոլութեան ոչ մէկ նշոյլ, ոչ ալ ժխտական որեւէ տպաւորութիւն կուզէր թողուլ, պարզապէս ի սրտէ ցանկութիւն մը՝ որ տեսնեմ բնակարանը, ընտանիքի անդամները – մնացեալ անդամները –, թաղը, վերջապէս սովորական առօրեան: Միտով ընդունեցի հրաւերը եւ խոստացայ կապուիլ հետը յաջորդ շաբաթ՝ Ծաղկաձորէն



Յովիկին ու Թամարային ասպնջական տան մեջ՝ չորս սերունդի հետ

վերադարձիս (ուր եռօրեայ ժողովի մը մասնակցիլս էր պատրուակը այս անգամ Հայաստան գալուս):

Եւ ահա, Ժամադրութեան օրը Յովիկ եկաւ պանդոկ, միասին քալեցինք շրջակայքը, գացինք մինչեւ Սունդուկեանի անուան թատերասրահը եւ անոր առջեւ տարածուող «Անգլիական այգին» (այդպէս կոչուած՝ Անգլիոյ դրօշակին նմանող իր ճառագայթաձէլ յատակագծին պատճառաւ, կ'երեւի), ապա դուրս եկանք անկէ, քալեցինք մինչեւ Միասնիկեանի արձանն ու հրապարակը, ուրկէ թաքսի մը առնելով ուղղուեցանք դէպի իր թաղը՝ Մովսէս Խորենացի, Արշակունեաց եւ Գարեգին Նժդեհ փողոցները կտրելով:

Կանգ առինք թաղամասի մը առջեւ, ուր հի ն, «ստալինեան» ոճի 5-6 կամ աւելի յարկանի անդէմ, անդիմագիծ բաց վարդագոյն տուֆով երեսապատուած այդ շէնքերը կենդանութիւն կը ստանան մայթերուն վրայ տարածուող (ու թաղի ոստիկանին հոգատարութիւնը վայելող) պտուղի-բանջարեղէնի բաց կրպակներով, իսկ յետսակողմը՝ բակերուն նայող երեսները, պատշգամբ պատշգամ կախուած գոյնզգոյն լուացքներով... Կատարեալ պատկերը սովորական կեանքին:

Պարզ, կոկիկ կահաւորուած յարկաբաժին մըն է, վերջին տարիներուն քովի յարկաբաժինէն իրեն կցուած յաւելեալ սենեակով մը ընդարձակուած, ուր չորս սերունդ կ'ապրի՝ Յովիկին հայրը, ֆիզիքապէս բաւական տկարացած, բայց պայծառ մտքով ու աշխարհէն տեղեակ ծերունի մը, որ հետաքրքրութեամբ կը հետեւի պտղասեղանին շուրջ մեր խօսակցութեան, իրենք՝ այր ու կին եւ երկու





տղաքը, այլևս մեծին մատողաշ կինը ու մի քանի ամսական երեխան: Կրցած են կազմակերպուիլ այս տան նեղ սահմաններուն մէջ՝ յարմարագոյն ձեռով բաշխելով տարածքները: Բայց տեղի նեղութիւնը փոխարինուած է սրտերու լայնութեամբ եւ փոխհատուցուած՝ ընտանեկան երջանկութեամբ:

Երբ դուրս կու գամ, տեսնելով մայթերուն շարուած սայլակները, հովանոցներու ներքեւ, կուգեմ ծիրան գնել. առաջին անգամ է, որ Հայաստան կը գտնուիմ ու ծիրանի ժամանակն է. թէեւ, կըսեն, այս տարի բերքը լաւ չէ եղած, եղանակին պատճառաւ, սակայն այստեղ առա՛տ է: Կը մօտենամ, տոպրակ մը կ'առնեմ ու կը սկսիմ լեցնել: Վաճառորդը վրայ կը հասնի, տոպրակը կը խլէ ձեռքէս.– Դուք իրաւունք չունէք ընտրելու,– կը սաստէ: Կը հեռանամ իրմէ, քիչ անդին աւելի ընտիր ծիրաններ կան. հոնկէ կ'առնեմք առանց որեւէ «անհարկի» միջամտութեան: Այստեղ գինը

աւելի բարձր է, բայց աւելի բարձր է նաեւ յաճախորդի հետ հաղորդակցութեան մակարդակը...

Հանրային մինիպիւս մը կը նստիմք, ու Յովիկ մինչեւ պանդոկ հետս կու գայ՝ հայաստանեան անմոռանալի օր մը պարգեւած ինծի:

Մաշտոցի մարտիկներուն հետ

«Մեսրոպ Մաշտոցի անուան խօսքի մշակոյթի կենտրոն»:

Ուրկէ՞ սկսիմ: «Հայ արուեստ»-ի մէջ առաջին անգամ նման հետաքրքրաշարժ անունով կազմակերպութեան մը մասին քանի մը տող կարդալէս ու անոր հրատարակած խտասալիկը ձեռք ձգելու ցանկութենէ ս, որ հետս տարի Հայաստան: Անդրադառնալէ ս, որ իջած պանդոկէս մի քանի վայրկեան հեռաւորութեան վրայ է քովս արձանագրած հասցէս՝ Տիգրան Մեծի 9: Թէ՞ գուր փորձէս գտնելու այդ «կենտրոն»-ը տուեալ հասցէով:

Մի քանի անգամ գացի-եկայ Տիգրան Մեծի վրայ. գտայ թիւ 9, սակայն ոչ մէկ նշում նման կեդրոնի: Ճարահատ, դարձեալ ափ առի «Հայ արուեստ»-ի խմբագրատունը: Կարէնը մինակը չէր, բայց համարձակեցայ խանգարել:

– Ո՛ր է այդ «Խօսքի մշակոյթի կենտրոն»-ը, որուն մասին գրեր էիք ձեր թերթին մէջ:

Կարէն ներողութիւն խնդրեց իր հիւրերէն, հեռաձայնը առաւ.

– Սպասէ,– ըսաւ,– գանգեմ Նադիային:

Շատ չանցած ահա կը ծանօթանամ սոյն կեդրոնի հիմնադիր-նախագահ՝ կորովի ու ժպտադեմ տիկ. Նադեժդա Մարտիրոսեան-Անտոնեանին, որ մեծապէս կուրախանայ, որ հեռաւոր Գանատայէն մէկը եկեր ու հետաքրքրութիւն ցոյց կու տայ իր գործին նկատմամբ:

– Եկէ՛ք, ձեզ տանիմ մեր կենտրոնը,– կըսէ Տիկ. Նադիան, որ աւելի շատ այդ անունով է ճանչցուած:

Ու միասին կերթանք նոյն այդ Տիգրան Մեծի թիւ 9 շէնքը, որուն ճաղատք դարպասին վրայ ցուցատախտակը կը նշէ «Հօր հայրենիք»: Ուրեմն, սա այդ անունը կրող կուսակցութեան շէնքն է:

– Մենք որեւէ կապ չունինք կուսակցութեան հետ, սակայն այստեղ մեզի սենեակ մը տրամադրած են:

Կը մտնենք ներս դարպասէն, ապա շէնքէն, որ թողլքուած երեւոյթ մը ունի, կը բարձրանանք վեր՝ առաջին յարկ, ուր Մեսրոպ Մաշտոցի այս երկրպագուներուն «կենտրոն»-ն է՝ փոքր, երկար սենեակ մը, որուն խորքին գրասեղան մըն է, իսկ պատերուն երկայնքին զոյգ մը բազմոց, պահարաններ եւ այլն: Պատերէն՝ նկարներ զանազան ելոյթներէ կամ ստացուած մրցանակներ ու պատուոյ վկայագրեր, նոյնիսկ հայկական գորգեր ու այլ մշակութային իրեր, եթէ յիշողութիւնս չի դաւաճաներ:

Նեղ տեղը, համեստ միջավայրը խոտոր կը համեմատին այն մեծ գործին հետ, որուն նուիրուած է հասարակական այս կազմակերպութիւնը, որ կը գործէ ամբողջովին կամաւոր հիմունքներով, ճիշտ ու ճիշտ նման Սփիւռքի մեր կազմակերպութիւններուն, ուժ առած հայերէնի նկատմամբ իր անդամներուն ունեցած մեծ սէրէն եւ ազգային-մշակութային մեր արժէքները պահպանելու իրենց անդրդուելի կամքէն:

2001 թուականէն ի վեր գոյութիւն ունի այս կեդրոնը, որուն անդամները հարիւր երիտասարդներ են, համալսարանականներ ու համալսարանաւարտներ, տարբեր մասնագիտութիւններէ, որոնք քով քովի եկած են մաքուր ու գեղեցիկ հայերէն տարածելու՝ ասմունքելով մեր արեւելահայ թէ արեւմտահայ բանաստեղծներու գործերը:

Ինծի հայթայթած իր նիւթերը շատ խօսուն են: Կեդրոնը խնդիր է դրած ոչ միայն մեր լեզուն իր ներկայ խաթարման ընթացքէն փրկել,– եւ այդ խաթարումը կը տեսնենք բանաւոր ու գրաւոր մամուլին մէջ, գովազդային աշխարհին մէջ թէ ժողովուրդի առօրեայ խօսակցական լեզուին մէջ,– այլեւ հետապնդել ազգային հոգեբանութեան ու գաղափարախօսութեան տարածում, ազգային թէ համամարդկային մտաւորական թէ բարոյական արժէքներու հանդէպ նոր սերունդի մէջ դաստիարակչական աշխատանք, համազգային, համահայկական մտածողութեան եւ հոգեբանութեան ձեւաւորում, ընդհուպ մինչեւ Հայ դատի պահանջատիրութեան ամրապնդում:

Նաղիա Անտոնեան կուզէ, որ անպայման ծանօթանամ նաեւ այդ երիտասարդներուն, ուստի շաբաթ մը կը ժամադրուինք:

Որոշուած ժամուն կը հանդիպինք ու կը բարձրանանք յարկ մը վեր՝ այն սրահը, որ նոյնպէս, ազատ օրերուն, դրուած է Խօսքի մշակոյթի կեդրոնին տրամադրութեան տակ: Այստեղ, սրահի յառաջամասին մէջ վեց երիտասարդներ՝ չորս աղջիկ ու երկու մանչ, հայկական գեղեցիկ տարազներով, կասմունքէն,– ի պատիւ իրենց հիւրին՝ արեւմտահայ բանաստեղծներու գործեր, Թէքէեան, Ծառուկեան, Վարուժան, Սիամանթօ եւ այլն: Պատուած բայց նաեւ անհանգիստ կը զգամ,– ինծի՝ համար տեղափոխուեր, եկեր, հագուեր-շքուեր են ու ելոյթ կուներան...

Յետոյ մի փոքր հիւրասիրութիւն վարը՝ գրասենեակին մէջ. գովազուցիչ, հիւթեր ու քաղցրաւենիք: Աւելին՝ ժպիտ, խանդավառութիւն, իրենց ըրածին նկատմամբ ամբողջական յանձնառութիւն:

Նաղիա Անտոնեան, հայերէնի եւ հայ գրականութեան վաստակաւոր ուսուցչուհի, Բանասիրական գիտութիւններու թեկնածու, կրթութեան ու գիտութեան նախարարութեան բարձրագոյն կրթութեան վարչութեան գլխաւոր մասնագէտ՝ կեանքը այս գործին նուիրած է: Մեծ հաւատքով, սիրով, սիրայօժար կերպով:

- Որեւէ օգնութիւն կը ստանա՞ք,- հարց կու տամ:
- Ոչ, որեւէ կուսակցութեան չենք կապուած, ռեւէ մէկը մեզի չ'օգնէր, սակայն վերջերս վարչապետը տեսայ միջոցառման մը եւ մօտեցայ, եւ խոստացաւ օգնել:
- Հիմա մեծ թիւով մեծահարուստներ կան այստեղ, որոնք չեն գիտեր ի՛նչ ընեն իրենց հարստութեամբ. երբեմն նոյնիսկ չեն քաշուիր ծիծաղելի դառնալէ՝ անիմաստ ճոխութեամբ ու ոճերով դղեակներ կառուցելով իրենց համար,- նկատել կու տամ,- մօտեցէք անոնց, վստահ եմ, որ կրնաք համոզել ու տնտեսական աջակցութիւն ստանալ:
- Ապա կը հարցնեմ.
- Իսկ կը մտածէ՞ք Երեւանէն դուրս ալ ելոյթներ ունենալ, մասնաճիւղեր հաստատել:



Նաղիա Անտոնեանի ու իր մարտիկներուն հետ

Հարցումիս պատասխանելու փոխարէն՝ Նաղիա կը ժպտի ու ինծի կ'երկարէ թղթածրար մը, որ յատկապէս կազմած է այս առթիւ՝ կանխատեսելով նման հարցումներ:

- Կարդացէ՞ք, ամեն ինչ պիտի տեսնէք հոն:

Իրապէս, երբ կը թղթատեմ հիմա ինծի յանձնուած ծրարը, կը տեսնեմ, որ «Մեսրոպ Մաշտոց» անցնող այս եօթը տարիներուն ոչ միայն Երեւանի մէջ աշխոյժ եղած է, այլև մարզերուն մէջ ալ, հասնելով մինչև Արցախ, ամենուր խլելով ծափեր ու գնահատանք: Այդ բոլոր վայրերուն մէջ աշխատանք կը տարուի կորիզներ ստեղծելու՝ մայրաքաղաքին մէջ սկսած գործը տարածելու համար ամբողջ հանրապետութեան տարածքին:

- Իսկ հաղորդակցութեան միջոցները, հեռատեսիլը կ'օգտագործէ՞ք ձեր պատգամը տարածելու համար:

- Այո՛,- կ'ըսէ տիկ. Անտոնեան,- շուտով պիտի սկսինք յատուկ հաղորդաշար ...
- Ինչպէ՞ս ընդունուեցաւ ձեր այս շարժումը, - հարց կու տամ:

Նաղիա խանդավառութեամբ կը պատմէ, թէ ինչպէս Սիլվա Կապուտիկեան կը քաջալերէր զիրենք ու ցոյց կու տայ ռոբացեալ բանաստեղծուհիին արձանագրութիւնը կեդրոնի յիշատակի ալբոմին մէջ.

«Լսելով Մեսրոպ Մաշտոցի անուան խօսքի մշակոյթի կենտրոնի հրաշալի սաների ասմունքը, տեսնելով նրանց հետաքրքրութիւնը մեր գրականութեան ու պոէզիայի հանդէպ՝ հաւատով եւ լցում մեր երիտասարդութեան եւ երկրի ապագայի հանդէպ»:

Շատ ուրիշներ նման տպաւորութիւններ արձանագրած են. յիշենք հատ մը եւս, այս մէկը՝ Հենրիկ Իգիթեանի կողմէ. «Ես համոզուած եմ, որ Մեսրոպ Մաշտոցի անուան խօսքի մշակոյթի կենտրոնի այս շնորհալի երիտասարդները չեն լքի իրենց հայրենիքը, քանի որ նրանք իրենց հոգիներում կրում են մշակոյթի կենսաւիշը ...»:

Արդարեւ, ճիշտ կը բնութագրէ այս հարցը կեդրոնի չորսէջեայ թռուցիկը, արձագանգելով հետեւեալ պատգամին. «Հայրենիքը միայն նախնեաց հողն ու սրբացած անունները չեն, քարակոփ հնութիւններն ու մագաղաթները չեն ... Հայրենիքը բաղադրուում է նաեւ ապրող մարդկանցից, այլեւ անհասներից, որ կրում են իրենց մէջ այդ հողն ու սրբութիւնների խորհուրդը, որ իրենցմով մեծացնում ու շնչաւորում են դրանք ...»

Իսկ ի՞նչ կը մտածեն իրենք՝ երիտասարդները:

Մեր հանդիպումին ներկաները բոլորն ալ խանդավառ էին իրենց յանձնառութեամբ: Ահա թէ ինչպէս կարտայայտուին անոնցմէ ոմանք վերոնշեալ թռուցիկին մէջ.

«Ես այստեղ մեծ հաճոյքով եմ գալիս, որովհետեւ հաղորդակցում եմ բարձր ոգեղէն նիւթի հետ,»- կը գրէ Մարգարիտ. «Ես ապագայ բժշկուհի եմ: Իմ կարծիքով իւրաքանչիւր մարդու համար մասնագիտական պատրաստուածութեան չափ կարեւոր է ոգեղէն սնունդը, չէ՞ որ այն լիարժէք է դարձնում մարդուն, իսկ յոյզերից առաջացած հոգեխարոյկի վրայ այրում, ոչնչանում են ախտածին մանրէները ... Ես նախընտրում եմ երջանկանալ այս տեսակի երջանկացումով»:

Իսկ Բիւզանդ, որ ճարտարապետութեան ուսանող է, կ'աւելցնէ. «Մ. Մաշտոցի անուան խօսքի մշակոյթի կենտրոնում թագաւորում է Մ. Մաշտոցի արարած Լոյսը՝ գրի, գրականութեան մոզական Լոյսը ... Կենտրոնն օգնում է ինձ առաւելագոյնս սիրել իմ լեզուն, իմ արմատները, իմ հողը... Կարօտով եմ սպասում իւրաքանչիւր հանդիպման»:

– Կրնա՞ք յաւելեալ տեղեկութիւններ տալ այն խտասալիկին վերաբերեալ, որուն մասին կարդացեր էի «Հայ արուեստ»-ին մէջ,– կը խնդրեմ տիկ. Անտոնեանէն:

– Նախ,– կը ճշտէ Նադիա,– ոչ թէ մէկ, այլ երկու սալիկներ են, մէկ տուփի մէջ..., ու կը կոչուին «Յեղաճանաչ եղիր... կրի՛ր քո մէջ ցեղը»՝ Գարեգին Նժդեհի բառերով, ու նուիրուած են, որպէս ոգեկոչական տուրք՝ Հայոց մեծ եղեռնի զոհերու յիշատակին: Խտասալիկները կը պարունակեն գործեր մեր մեծերէն, արեւմտահայ թէ արեւելահայ՝ Նարեկացիէն մինչեւ Համաստեղ, Սարոյեան, Կապուտիկեան, մեր կենտրոնի երիտասարդներու ասմունքով եւ երաժշտութեան ընկերակցութեամբ, այլեւ պատգամներ Յովհ. Չեքիչեանի, Սօս Սարգսեանի, Միլվա Կապուտիկեանի, Վահագն Դարթեանի, Պարոյր Սեւակի, Յովհ. Շիրազի եւ Համօ Մահեանի ձայներով:

– Իսկ ի՞նչ անկատար իդէեր...

– Մեր ցանկութիւնն է, որ համայն հայութեան հասնի մեր ձայնը, ճանչնան մեզ, հաղորդուին մեր խօսքով. գանք ձեր քով, Սփիւռք, ներկայացնենք մայրենի լեզուի հմայքը...

– Կը յուսամ օր մը այդ ալ կ'իրականայ,– կը մտախոյզ:

Իրապէս ազգակերտման գործ է, որ կը կատարուի այստեղ, եւ Կեդրոնը արժանի է ամեն գնահատանքի ու քաջալերանքի:



Չարենց Ծաղկաձորի բարձունքէն կը դիտէ Երկիր Նայիրին

Վաստակաւոր երեց ընկերոջս հետ

Անի պանդոկին առջեւն է ժամադրութիւնը: Օթոպիւսները հոնկէ պիտի առնենք՝ մեկնելու Ծաղկաձոր, մեր եռօրեայ ժողովին: Սփիւռքէն ժամանած ընկեր-ընկերուհիներուն մեծ մասը «Անի» իջեւանած են, ոմանք ալ այլուր: Ես ստոնցմէ եմ:

Երբ կը հասնիմ ժամադրավայրը, կը տեսնեմ ուրիշներ ալ ճամպրուկները պատրաստ, մայթին վրայ կը սպասեն: Ծանօթները շատ են: Յանկարծ դէմ յանդիման կու գամ երեց ընկերոջ մը, – կը փորձեմ վերյիշել զինք, իսկ երբ աչքերուն կը նայիմ, անմիջապէս կողջագուրուիմք:

– Ընկէ՛ր Հրաչ ...

Բժիշկ Հրաչ Աբրահամեանն է, է՛ր երբեմն Գանատայի շրջանին մօտ Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչը, այսինքն կապը (այդ «ներկայացուցիչ» բառը այսօր արդէն տարբեր իմաստով կը գործածուի մեր կուսակցական բարբառին մէջ): Որքա՛ն ատեն է չեմ տեսած զինք,

գուցէ քառորդ դար կամ աւելի: Ուրախ եմ, որ զինք ալ հրաւիրեր են այս խորհրդաժողովին:

Տարիքը առեր է, հասակն ալ կարծես քիչ մը նուագեր է, կամ այդպէս կ'երեւի, թերեւս թեթեւ գիրութեան մը պատճառաւ, լսողութիւնն ալ տկարացեր է, բայց միշտ նոյն պայծառ, տրամաբանող միտքն է, ուշադիր ունկնդիրը, սրամիտ բայց շատ կենցաղավար ու շրջահայեաց ընկերը:

Երեւանէն Ծաղկաձոր ու Ծաղկաձորէն ետ՝ Երեւան, իրեն կ'ընկերանամ ճամբու ամբողջ ընթացքին, եւ երկա՛ր կը գրուցենք: Կը վերյիշէ Գանատայի իր ծանօթ ընկերները, բարեւ կը դրկէ, կը հետաքրքրուի գաղութի վիճակով: Մայրուղիին վրայ իրարու կը յաջորդեն մեծաքանակ ու մեծաչափ ցուցանակներ, որոնք անգլերէն են կամ աւելի շատ անգլերէն քան հայերէն, ու ասիկա կանհանգստացնէ զինք, ինչպէս կանհանգստացնէ զիս ալ՝ մեր օտարամոլութեան նորօրեայ այսպէս ճշացող այդ դրսեւորումը:

Ծաղկաձոր, ժողովի օրերուն դարձեալ կօգտուիմ իր ներկայութենէն, յաճախ կ'ըլլանք սեղանակից, միասին կը քալենք ալ, մինչեւ Չարենցի արձանը...

Միբով կ'ընդառաջէ հարցազրոյցի հրաւերիս, ու վերադարձին ուղղակի իր պանդոկը կ'երթանք միասին եւ յարմար սեղան մը գտնելով՝ կը կատարենք մեր զրոյցը:

Կը խնդրեմ, որ առաջին հերթին ներկայացնէ ինքզինք, իր կեանքի ընթացքը:

– Ծնուել եմ 1921 թուին, հոկտեմբեր 25-ին, Պարսկաստանի Թեհրան քաղաքում:

Շատ չանցած ընտանիքը կը փոխադրուի Ռաշտ քաղաքը: Հայրը՝ Արմենակ Աբրահամեան, ատամնաբոյժ, մայրը՝ Շուշանիկ, «երկուսն էլ շատ խիստ դաշնակցական կուսակցականներ. հայրս դպրոցի հոգաբարձութեան անդամ էր, մայրս՝ կոմիտէի»:

Հրաչ 18 տարի կապրի այնտեղ, կը յաճախէ տեղւոյն հայկական նախակրթարանն ու պետական միջնակարգ դպրոցը: Ապա կը փոխադրուի Թեհրան եւ միջնակարգ ուսումը

աւարտելէ ետք կը մտնէ պետական
ատամնաբուժական համալսարանը, որուն
քառամեայ շրջանն ալ բոլորելէ ետք կը
կանչուի զինուորական ծառայութեան, իբր
սպայ՝ բժշկական բաժնին մէջ: 24 տարեկան է:

1945-ին ուսումը կը շարունակէ Փարիզի
Բժշկական պետական համալսարանին մէջ,
ապա կանցնի Շիգակո, Նորթ-Ուեսթըրն
համալսարանի բժշկական ճիւղը, գոր
կաւարտէ 1951-ին: Յետոյ՝ Նիւ Եորք է,
«հետեւելու խոր մասնագիտութեան
(դիմաձեւաբանական ատամնաբուժութեան մէջ)՝

Մեմորիըլ խիբրդի շատ յայտնի հիւանդանոցում:
Այնտեղ եղել էմ մօտաւորապէս երկու տարի»:

Բժ. Հրաչ Աբրահամեան



1954-ին կը հրաւիրուի Ուաշինկթընի Ճորճթաուն համալսարանը՝ ուսուցանելու:
«Գացի, հաստատուեցայ այնտեղ, եւ մինչեւ այսօր իմ տունը Ուաշինկթըն է: Ես
դասաւանդեցի Ճորճթաուն համալսարանում աւելի քան 40 տարի: Ասպարէզս
ուսուցչութիւնն է եղած»:

– Իսկ ի՞նչ ճանապարհ ես անցած՝ կուսակցական գծով, ընկ. Հրաչ:

– Այդ ամբողջ ժամանակաշրջանում, Թեհրանից սկսած մինչեւ Փարիզ, Փարիզից
մինչեւ Ամերիկա՝ ես անդամակցել եմ տեղական կառոյցներին, առհասարակ որպէս սոսկ
անդամ: Փարիզի ուսանողական տան մէջ [ուր կը մնար ընկ. Աբրահամեան ուսանած
ատեն], մենք ունէինք մեր առանձին խմբակը եւ մասնակցում էինք Փարիզի կուսակցական
կեանքին:

1972-ին, Ամերիկայի (Միացեալ Նահանգներու եւ Գանատայի) Շրջանային ժողովին
կընտրուի Կեդրոնական կոմիտէի անդամ, իսկ վեց-եօթը ամիս ետք, ԿԿ-ի կողմէ իբր
պատգամաւոր կը մասնակցի Ընդհ. Ժողովի: Այնտեղ, Վիեննայի մէջ, «երկու նախագահ
ունէր այդ ժողովը, մէկը ընկ. Վաչիկ Ղարաբէկեանն էր, իմ շատ սիրելի հանգուցեալ ընկերը,
մէկն ալ ես: Երկա ր, երկար ժողով էր: Շատ լաւ յիշատակներ ունիմ այդ ժողովէն:
Վերջաւորութեան, չեմ իմանում ինչո՞ւ զիս ընտրեցին Բիւրոյի անդամ»:

Երկու ընտրաշրջան, մինչեւ 1981, ընկ. Աբրահամեան կը մնայ Բիւրոյի անդամ ու
կապը՝ Հիւսիսային ու Հարաւային Ամերիկաներու ԿԿ-երուն հետ:

– Կուզեմ մի փոքրիկ բան աւելացնել. կեանքիս մէջ, առնուազն Ուաշինկթընում, ուր 60
տարի է ապրում եմ, նախքան Բիւրօ ընտրուելս, եւ Բիւրօ ընտրուելուցս յետոյ, ամեն ամիս
երկրորդ չորեքշաբթին մեր կոմիտէութեան ժողովն է. եւ ես միշտ, միշտ ներկայ եմ եղել,
անկախ թէ Բիւրոյի անդամ եմ եղել, չեմ եղել. եթէ քաղաքում եմ գտնուել՝ ներկայ եմ եղել,
իսկ եթէ քաղաքում չեմ գտնուել՝ տարբեր խնդիր է:

Ընկ. Աբրահամեան կը վերլիշէ, որ իբր Բիւրոյի անդամ՝ ինք մասնակցեր է
ամերիկեան ամբողջ ցամաքամասի ՀՅԴ Կեդրոնական կոմիտէութիւններու 40 շրջանային
ժողովներու:

Իր յիշողութեան մէջ յատկապէս դրոշմուած է Հայ դատի աշխատանքը, մանաւանդ
Ամերիկայի Հայ դատի գրասենեակի ստեղծումը, որուն գործընթացը իր օրով է սկսած եւ
իրականացած է յաջորդ մարմինին օրով:

– Հայ Դատը առանց Դաշնակցության՝ իմաստ չունի, Դաշնակցութիւնն ալ առանց Հայ Դատի իմաստ չունի:

– Ընկ. Հրաչ,– դիտել կու տամ,– եթէ չեմ սխալիք դուն դերակատար եղար նաեւ կուսակցութեան Գանատայի Շրջանի կազմութեան գործին մէջ:

– Գանատան, այո՛, իմ Շրջաններից մէկն էր, շատ լաւ յիշում եմ այն ժամանակ, սկզբնական օրերուն, հայկական մեր գաղութը այնտեղ փոքր էր՝ համեմատութեամբ Ամերիկայի գաղութին: Ես յիշում եմ ընկերներ, որոնք շատ գործունեայ էին, ստեղծեցին մեր ազգային, կուսակցական կառոյցները: Իսկ սրտիս ամենէն մօտիկը թերթի ստեղծումն էր, «Հորիզոն»-ի ստեղծումը:

– Կը յիշեմ, ինչպէս Շրջանային ժողովին բուն կերպով յորդորեցիր, որ Շրջանը ունենայ իր օրգանը:

– «Հորիզոն»-ը ստեղծուեցաւ անշուշտ Շրջանային ժողովի որոշումով: Ընկերներ կային, որոնք չէին ուզում, ընկերներ ալ կային, որոնք ուզում էին, բարեբախտաբար կարողացանք ունենալ: Ես այսօր ալ շատ հպարտութեամբ կարդում եմ այդ թերթը:

– Ընկ. Հրաչ, ես կը յիշեմ նաեւ, որ «Համազգային»-ի Շրջանի կազմութեան մէջ մեծ դեր ունեցար:

– Ես չեմ կարողանում յիշել, թէ ինչին դերակատար եղայ, ինչին չեղայ, բայց ընդհանուր գործիս մէջ, խնդիր չկար, որուն մէջ ես մի տեսակ մասնակցութիւն ունեցած չըլլայի:

Անձա՛ մը կը հետեւէի մեր բոլոր գաղափարակից-ուղեկից միութիւններու գործունէութեան:

– Երկար տարիներու հասարակական կեանքիդ մէջ ո՞ր աշխատանքը աւելի բարարարութիւն տուած է քեզի:

– Շատ դժուար է հարցին պատասխանելը, որովհետեւ ես այդ աշխատանքներին մէջ տարբերութիւն չեմ տեսնում: Իմ կարծիքով Դաշնակցութիւն կոչեցեալը իր մէջ ներառում է հայ ազգի քաղաքական, ազգային, մշակութային բոլոր ոլորտները, որոնք բոլորն ալ շատ կարեւոր են:

– Իսկ ի՞նչ ծրագիր կայ, որ իրագործուեցաւ քու ճիգերով, որուն համար դուն ուրախ ես:

– Իբր կուսակցական, իբր դաշնակցական, վերջին քանի մը տարուան մէջ ես մասնակից եղայ զօրավար Դրոյի աճիւնի փոխադրութեան Հայաստան, որ նախկին պաշտպանութեան նախարար Վազգէն Սարգսեանի նախաձեռնութիւնն էր: Աճիւնը փոխադրուեցաւ, դրանից յետոյ մենք՝ այսինքն Դրոյի զաւակները, ժառանգները, ես էլ իբրեւ նրանց բարեկամը, որոշեցինք Դրոյի անունը յաւերժացնելու համար ստեղծել հետազօտական մի հիմնարկ:

Կը խնդրեմ, որ ընկ. Աբրահամեան խօսի նաեւ իր ընտանեկան կեանքին մասին:

– 1954-ին, երբ պաշտօնի առաջարկ ստացայ Ճորճթաուն համալսարանից, ամուսնացայ մի երիտասարդ իտալացի-ամերիկացու հետ: Դժբախտաբար կինս մահացել է սրանից մի քանի տարի առաջ: Իտալացի էր, ամերիկացի էր, բայց շատ գործունեայ էր Ուաշինկթընի մեր եկեղեցական կեանքում: Ունիմ մէկ աղջիկ, երկու թոռ եւ չորս ծոռ:

– Հայերէն սորվա՞ծ էր կինդ:

– Այո, բարարար չափով, որովհետեւ այդ ժամանակամիջոցում, որ ես Ճորճթաուն էի, պարագաներու բերումով պարտաւորուեցայ գնալ Պարսկաստան մէկուկէս տարի, համալսարանում պաշտօնս պահելով հանդերձ: Ուրեմն գնացի կնոջս ու զակիս հետ, շատ լաւ ծանօթներ ունեմ, հին ընկերներ. գէշ աղէկ հոն մնացինք, այնտեղ սորվեցաւ:

Կը հետաքրքրուիմ ընկ. Աբրահամեանի հրատարակութիւններով: Կը տեղեկանամ, որ Ճորճթաուն համալսարանը դասաւանդած ատեն իր պատրաստած դասագրքերն էին, որ կը գործածուէին իր դասին: Հիմա արդէն 17 տարի է որ ան Հայաստան կու գայ եւ կը դասաւանդէ Հայաստանի Բժշկական համալսարանին մէջ:

– Հայերէնի թարգմանեցի Ուաշինկթընում ունեցած իմ դասագրքերը, տպեցի Երեւանում, հիմա արդէն անոնք ունեցան իրենց երրորդ տպագրութիւնը: Անոնք իբրեւ դասագիրք պարտադիր են ուսանողների համար: Ես նաեւ դասաւանդեցի համալսարանի ուսուցիչներին, որոնք իրենց ուսանողներին դասաւանդում են ինչ որ այդ դասագրքերի մէջ կայ: Շատ ուրախ եմ, որ այնտեղ ես ոչ մի օտար բառ չգործածեցի: Ուսանողները հիմա հայերէն բառերով են սովորում, փոխանակ ռուսերէնի կամ անգլերէնի: Աւելցնեմ, որ ես այդ գրքերը հրատարակեցի իմ հարազատ մեսրոպեան ուղղագրութեամբ, եւ հակառակ սկզբնական ընդդիմութեան համալսարանի իմ բարեկամների կողմէ՝ ոչ մի նեղութիւն չկայ, ուսանողները կարդում են, հասկանում են, իրենց քննութիւններն են տալիս:

Դասագրքերուն հետ բժ. Աբրահամեան կը հրատարակէ նաեւ նոյն մասնագիտութեան վերաբերեալ բառարան մը՝ հինգ լեզուներով (անգլերէն, լատիներէն, ֆրանսերէն, ռուսերէն եւ հայերէն), 60 էջ, որ մաս կը կազմէ շուտով լոյս տեսնելիք 500 էջնոց իր ատամնաբուժական ընդարձակ բառարանին:

Ընկ. Հրաչ Աբրահամեան ոչ միայն երկարամեայ վաստակ ունի թէ՛ մեր հաւաքական կեանքին մէջ եւ թէ՛ իր ասպարեզին, այլեւ խոր մտածող ու վերլուծող մարդ է: Կը փորձեմ գրգռել մտքերը՝ մեզ յուզող հարցերու առնչութեամբ:

– Ընկ. Հրաչ, արդեօք մենք կրնայի՞նք ատենին նախատեսել Խորհրդ. միութեան փլուզումը:

– «Մենք»-ը, հաւաքական իմաստով՝ ո՛չ: Բայց անհատական իմաստով՝ այո՛: Մարդոց մտքերուն մէջ միշտ կար այն խնդիրը, որ խորհրդային կարգերը չէին կարող երկար տեսել: Ես փորձեցի խորհրդային կարգերի վերջին օրերին գալ Հայաստան, ինծի վիզա չտուին:

Յետոյ, միջանկեալ կաւելցնէ, որ իր նախնիքը Շահ Աբբասի օրով տարուած են Պարսկաստան, եւ 410 տարի ետք միայն ինք առաջինն է եղեր, որ ոտք է դրեր հայրենի հողի վրայ:

– Սա ասեմ, որ առաջին անգամ, որ եկայ այստեղ, շատ բան տարբեր էր՝ նիւթական իմաստով: Օրինակ, մէկ հատ պենզին ծախելու սթէշըն [կայան] չկար, մէկ հատ շնորհքով հիւրանոց չկար, ռեստորան [ճաշարան] չկար, շատ տարբեր էր: Հիմա ռեստորանները լեցուն են, պենզինը լեցուն է, ամեն ինչ լեցուն է, սակայն ես շատ լաւ գիտեմ, որ մեր ժողովրդի կարելոր մասը շատ դժուար կեանքի մէջ է:

– Ի՞նչ բան քեզ ամենէն աւելի կը մտահոգէ, ընկ. Աբրահամեան:

– Այսօրուան երեւոյթների մէկ մասը ինծի շատ խորթ են, ուրիշ ձեւով ասեմ՝ իմ ճաշակով չեն: Բայց ես տեսնում եմ տարբերութիւնները 17 տարուան մէջ: Փոփոխութիւնները՝ ես ցանկութիւն ունեի, որ մէկ օրէն լինէին, մէկ օրէն, սակայն այդ բանը հնարաւոր չէ, փոփոխութիւնները կը գնան կամաց-կամաց եւ ես վկայ եմ այդ փոփոխութիւններին, կատարում են, ով ուզում է անի՝ կատարում են:

– Ի՞նչ փոփոխութիւն պիտի ուզէիր որ ամենէն առաջ կատարուէր:

– Այդ փոփոխութիւնների մէջ ամենից կարելորդ մարդկային մտածելակերպն է, մտածելակերպի՝ փոփոխութիւնները: Դժբախտաբար մեր ժողովուրդը օտարամուլ է, շատ շատ օտարամուլ: Ժամանակին ռուսն էր, ռուսերէնն էր, հիմա փողոցներում որ անցնում ես,

մեծ յայտարարութիւնները, ցուցանակները բոլորը անգլերէն են, անիմաստ, անիմաստ կերպով:

Եւ օրինակ կը բերէ զինուորական հիւանդանոցը, որ «հոսպիտալ» կը կոչուի, հակառակ որ միւս բոլոր հիւանդանոցները «հիւանդանոց» կը կոչուին: Սա ընդօրինակումն է ռուսական աւանդութեան, ըստ որուն Մեծն Պետրոս Անգլիա այցելէր ու անկէ բերէր է զինուորականը «Կոսպիտալ» կոչելու սովորութիւնը, փոխանակ ռուսերէն «Բալնիցա»-ին:

– Ի դէպ, ասեմ, որ Երեւանի զինուորական այդ «հոսպիտալ»-ին մէջ, Ուաշինկոյընի Հայ բժշկական միութիւնը, որի անդամ են բժիշկներ, ատամնաբուժներ, գրթութեան քոյրեր եւ այլն, նախաձեռներ է որոշ գործեր, որոնցմէ մէկը շատ կարեւոր է՝ ստեղծել ենք արեան բանկ, առաջինը՝ Հայաստանի մէջ: Մենք շատ հպարտ ենք, որ դա ծառայում է Հայաստանի բանակին, որոշ չափով նաեւ բնակչութեան: Մէկ ուրիշ բաժինը, որուն ստեղծման նպաստէր ենք՝ դիմաձնօտային պրոթեզային բաժինն է, պատերազմի կամ արկածների հետեւանքով դէմքի վնասուածք ունեցողներուն համար, որ առաջ Մոսկուա էին ուղարկուում:

– Հայ կեանքի ուրիշ ո՞ր երեւոյթը քեզ կանհանգստացնէ:

– Ասացի օտարամոլութեան մասին. մենք այդ օտարամոլութիւնից ձեռք պէտք է քաշենք. դա մեզի դժբախտութիւն է բերում: Այդ օտարամոլութեան հետեւանքով է, որ շատ հայաստանցիներ Ամերիկա են գնացել: Սա դժուար է ինձ համար ասելը. այդ գնացողներից մի փոքր մասը, շատ փոքր մասը յաջողել է. մի կարեւոր մասը, եթէ Հայաստան մնար, աւելի լաւ վիճակի մէջ կը լինէր: Սա ինձ ցաւ է պատճառում, շատ, շատ ցաւ:

– Գալով Սփիւռքի ...

– Մեր ամենէն լաւ գաղութները՝ Լիբանանը, Պարսկաստանը այսօրուան համաշխարհային պայմաններին պատճառաւ շատ տկարացան. ազգային կեանքը, հասարակական կեանքը... շատ տկարացան եւ շատ հայրենակիցներ թողնում, հեռանում են որտեղ կարողանում են գնալ. Ամերիկա գացող շատ կայ:

– Ինչպէ՞ս պիտի դիմագրաւենք...

– Հետեւանքները ինչպէ՞ս պիտի դիմագրաւենք. հիմա ես ուրիշ ձեռով պատասխանեմ: Լաւ կը լինէր, որ այդ ժողովուրդը փոխանակ Փարիզ երթայ, Գերմանիա երթայ, գնայ Երեւան, շատ լաւ կը լինէր: Գիտեմ այստեղ պայմանները դժուար են, սակայն ես հաւատացած եմ, որ պիտի կարենանք պայմաններ ստեղծել: Հիմա գիտեք, մարդ անպայման կերակուր ուտելու համար չի ապրում, մէքենայ նստելու համար չի ապրում: Մենք երջանկութիւն ենք ուզում, երջանկութիւն՝ բարեկամական, ընտանեկան յարաբերութիւններու ճամբով: Սա շատ դժուար է մեծ երկրներում ստեղծել. Ամերիկայում շատ դժուար է: Մարդկային երջանկութիւնը պահանջում է, որ ընտանիքը միասին ըլլայ, տղադ, զաւակներդ, թոռներդ: Սա չեմ ասում, որ մէկ շէնքի մէջ ապրեն, այլ մօտիկ լինեն: Երոպական յառաջադէմ երկիրների, Ամերիկայի մէջ չասեմ անկարելի է, շատ դժուար է, շատ, շատ դժուար: Ես կարծում եմ, որ եթէ Լիբանանը կամ Պարսկաստանը պարտաւոր են թողնել, ամենից լաւ ընտանեկան երջանկութիւնը Հայաստանում կարող էմ ունենալ, ոչ թէ ուրիշ տեղ:

– Այսօր ո՞րն է ըստ ձեզի մեր կուսակցութեան գլխաւոր մարտահրաւերը:

– Առաջին մարտահրաւերը՝ ներկայ Հայաստանին թիկունք կանգնել զանազան ձեւերով: Երկրորդը՝ մեր, Սփիւռքի հայութիւնը հայ պահել, հայ պահել ըսելով՝ դէպի Հայաստան մօտեցում. չեմ ասում անպայման գաղթել այնտեղ, բայց կապուած ըլլալ Հայաստանի: Գլխաւորը այս է:

Հայ արուեստի անխոնջ սպասարկուին հետ

«Հայ արուեստ»-ի խմբագրատունն էմ. խմբագրատուն ըսելով հասկնալ քիչ մը երկար, քառանկյուն սենեակ մը, պատուհանին մօտ գրասեղան մը ու գոյգ մը աթոռ, աւելի ներս քազմոց ու քազկաթոռ՝ այցելուներու համար: Գրադարաններ, գիրքերու, թերթերու դեզեր: Կողքին ալ երկրորդ, աւելի փոքր սենեակ մը, որ վստահաբար կօզտագործուի օգնականի մը կամ թերեւս քարտուղարուհիի մը կողմէ: Յարկին վրայ այլ սենեակ մը կամ յարկաբաժին մը նստավայրն է Մումիկ մշակութային միութեան (որ հիմնադիր-հրատարակիչն էր սոյն պարբերաթերթին), իսկ նոյն շէնքին մէջ կայք ունի նաեւ ճարտարապետական յուշարձաններու պաշտպան կազմակերպութիւնը. Երկիր շաբաթաթերթի ու ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի շէնքին կողքին, Ազգ օրաթերթի շէնքին դիմաց: Հանրապետութիւն փողոցն է, Հրապարակէն դիւրաւ հասանելի, իր հին, պատմական արժէք ունեցող շէնքերով: Ի դէպ, «Երկիր»-ի դիմաց ալ Հայաստանի Ա. հանրապետութեան կառավարութեան շէնքն է, որ երկար ատեն ծառայեց որպէս Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի կեդրոնատեղի, իսկ հիմա կ'իսով քանդուած է, որովհետեւ... պիտի նորոգուի ու շահարկուի: Յաճախ պիտի գամ այստեղ, Կարէն Մաթեոսեանին այցի, եւ ամեն անգամ պիտի զայրանամ՝ տեսնելով այդ պոստմական շէնքին այդպիսի բռնաբարումը:



Կարէն Մաթեոսեանի հետ

Կարէն խմբագիրն է Հայ արուեստ պարբերաթերթին, որուն վերջին՝ 1-2007 համարէն օրինակ մը ան անմիջապէս կը հանէ նոր հասած ծրարներէն ու նորաթուխ հացի նման կը հրամցնէ ինձի, չկարենալով ծածկել ուրախութիւնը: Ես անգամ մը, Մոնթրէալի մէջ՝ 2004-ին, առիթ ունեցած եմ հետը առաջին հարցազրոյց մը ունենալու: Սա՛ արդէն երկրորդն է:

– Կարէն, ինչպէս, ըսէ ի՞նչ հոլովոյթ ապրեցաւ պարբերաթերթը այս վերջին քանի մը տարիներուն:

– Շատ ուրախ եմ, որ դարձեալ կը հանդիպինք: Ըսեմ, 2005 թուականից «Հայ արուեստ»-ը տպագրուում է նաեւ անգլերէն թարգմանութեամբ, անցեալ տարուանից ունինք նաեւ մեր կայքէջը, այնպէս որ մեր թերթը բոլորին մատչելի է ու հասանելի: Դժգոհ չենք ընդհանուր տարածումից. յատկապէս Սփիւռք էլ ենք ուղարկում, ճիշտ է՝ փոքր

քանակներով, բայց հասցնում ենք Սփիւոքի տարբեր համայնքներին: Սակայն, ցաւօք սրտի, ընդհանուր մի միտում կայ Հայաստանում վերջին շրջանին աւելի քիչ են սպառում եւ թերթ եւ ամսագիր եւ գիրք:

Կարեն տարբեր պատճառներ կը տեսնէ այդ երեւոյթին ետին, առաջին հերթին հանրութեան գնողունակութեան ցած մակարդակը:

– Միւս կողմից էլ լրատուութեան համար առաջնային տեղը գրաւում է հեռուստատեսութիւնը, իսկ երիտասարդները շատ աւելի օգտւում են ինտերնետից [համացանցից], մի խօսքով, տարբեր պատճառների բերումով տպագիր մամուլի դերը նուազել է այսօր մեր մօտ, երեւի նաեւ ուրիշ տեղերում, բայց յոյս ունենք, որ ժամանակի ընթացքին սա կարող է կարգաւորուել:

Ապա կ'աւելցնէ.– Այսօր մեր մօտ մամուլի համար որեւէ առաւելութիւն չկայ, հարկային, եւ այլն, որը նոյնպէս շատ ցաւալի է, որովհետեւ մենք մշակութային երկիր ենք, եւ փաստօրէն հրատարակութիւնները, գոնէ մամուլը, պիտի որոշ արտօնութիւններ ունենային, որպէսզի կարողանային գոյատեւել:

– Ի՞նչ է ձեր տպաքանակը:

– Մեր տպաքանակը 1000 օրինակ է, 500 օրինակը՝ անգլերէն:

– Որքա՞նք Սփիւոք կ'ուղարկուի:

– Մօտաւորապէս 250-ը:

– Ի՞նչ հակազդեցութիւններ ունեցաք մինչեւ հիմա, Սփիւոքէն կամ Հայաստանէն, կարծիքներ, տպաւորութիւններ:

– Կարծիքները, ճիշտն ասած, Սփիւոքից՝ հիմնականում դրական են, Հայաստանից՝ եթէ դրական չեն,– որեւէ կոնկրետ [մասնայատուկ] յօդուածի, որեւէ յօդուածում եղած մտքի մասին ասենք քննադատութիւնները շատ բնական են,– ընդհանուր ամսագրից դժգոհութիւն չկայ:

Կարեն կը շարունակէ.– Ամսագրի ուղղուածութիւնը աւելի դասական է. օրինակ մենք անդրադառնում ենք այն մշակութային արժէքներին, որոնք որ համարում ենք աւելի կայուն, մշտական. գուցէ դրա մէջ ինչ որ մի թերութիւն էլ կայ այն իմաստով, որ օրինակի համար այսօրուայ, ենթադրենք, հեռուստատեսութիւնը ողողած երգարուեստի, «աստղային» թեմային մենք չենք անդրադառնում, որովհետեւ դա համարում ենք ժամանակաւոր եւ «մոդա»-ի [նորաձեւութեան] նման մի բան: Բացի այդ, միւս կողմից էլ ճիշտն ասած, լուրջ վերլուծաբան չկայ, որ կարողանայ այդ ամենի մասին գրել, որովհետեւ մենք չենք ուզում միայն տեղեկատուական կամ ինչ որ թեթեւ նիւթեր լինեն, այլ ուղղակի երեւոյթներ, միտումներ՝ ընդհանրապէս վերլուծուին:

– Ինչ վերաբերում է մեր կերպարուեստին, յատկապէս, մեր ամսագրի ամենէն ուժեղ կողմը կարելի է ասել կերպարուեստն է, որ լաւ է ներկայացւում: Ի հարկէ ատկէ զատ ճարտարապետութեան, երաժշտութեան, հայ դասական երաժշտութեան, թատրոնին, կինոյին [շարժարուեստին], այսինքն ամեն ինչի մասին կա՛յ «Հայ արուեստ»-ում, բայց կերպարուեստը առաջնային տեղ է գրաւում, որովհետեւ մեր համագործակցութիւնը բաւական սերտ է Հայաստանի ազգային պատկերասրահի հետ [որ ներկայ հրատարակիչն է], դա էլ իր դերը խաղում է ի հարկէ այս հարցում:

«Հայ արուեստ»-ը լոյս կը տեսնէ 2002 թուականէն ի վեր: Կը հետաքրքրուիմ, թէ ի՞նչ նիւթական աղբիւրներ ունի ան:

– Նիւթական աղբիւրներ՝ վաճառքն է, բաժանորդագրութիւնը, գովազդներն են, որոնք սակաւ են, նուիրատուութիւններն են:

– Հովանաւորնե՞ր ...

– Անգլերէնը Շուէցարահայ միութեան աջակցութեամբ է տպագրուում, հայերէնին համար աջակցում է Ազգային պատկերասրահը, մեր ինտերնետային կայքը պատրաստեցինք աջակցութեամբ Հայ առաքելական եկեղեցւոյ Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդարանին: Յառաջիկայ համարին համար յատկացում ստացանք Արեւմտեան թեմից: Ի հարկէ շատ-շատ երախտապարտ ենք մեր բոլոր հովանաւորներին, անկախ նրանից որ ինչ չափով է այդ հովանաւորութիւնը: Եթէ սա չլինի, միայն վաճառքով ու բաժանորդագրութեամբ հնարաւոր չի լինի պահել ամսագիրը: Մա էլ արուում է, պէտք է խոստովանեմ՝ անձնական կապերի, անձնական ծանօթութիւնների շնորհիւ մարդիկ, որոնք վաղուց ճանաչում են ինձ, կամ տնօրէնին [Յասմիկ Գիւնյեանին]՝ մեր դիմումներին չեն մերժում, որովհետեւ նրանք հասկանում են, որ նման մամուլ ունենալը օգտակար է:

– Աշխատակիցները սիրայօժա՞ր կը մասնակցին:

– Այն գործերը որոնք [մասնագիտական] աշխատանք են պահանջում, օրինակ ձեւաւորումը, վճարում են: Յօդուածների համար երկու մօտեցում կայ. երբ մենք ենք պատուիրում յօդուածը՝ հոնորար [պատուագին] ենք տալիս, երբ իրենք են բերում, կարող ենք եւ չտալ:

– Լաւ, փոխելով նիւթը, կ'ուզեմ որ աւելի ընդհանրական հարցի մը մասին խօսինք. ներկայիս Հայաստանի մէջ որո՞նք են գլխաւոր խնդիրները, որ մեր առջեւ դրուած են, պարզ է՝ մշակոյթի մարզին մէջ:

– Հայաստանի մէջ մշակոյթը անբաժան է ընդհանուր կեանքից, որովհետեւ այն պրոբլեմները [խնդիրները] որ ունենք Հայաստանի կեանքում, խոշոր ձեւով ազդում են նաեւ մշակոյթին վրայ, բնականաբար: Ամենէն կարելոր հարցը Հայաստանի համար՝ իր փակ վիճակից դուրս գալն է: Առաջին հայեացքից կարող է անսովոր թուալ այս խօսքը, քանի որ մարդիկ գնում են, գալիս են, բայց «փակ» ըսելով այնուամենայնիւ ես նկատի ունեմ այն հոգեվիճակը, որ զարգացման հեռանկարներ չեն երեւում, այսինքն այսօր ամեն ինչ խաղաղ է, հանգիստ է, թոււմ է թէ կեանքը նորմալ [բնական] կերպով յառաջ է ընթանում, սակայն եթէ մենք փորձենք պատկերացնել, թէ ի՞նչ կը լինի 10 տարի յետոյ՝ պարզապէս չենք կարող, որովհետեւ մենք գտնուում ենք այնքան բարդ աշխարհաքաղաքական միջավայրում, որը շատ արագ է փոփոխութիւնների ենթարկուում, եւ մենք շատ ակներեւ տեսնում ենք մեր հարեւան երկրների վիճակը ու աւելի հեշտ կերպով կարող ենք երեւակայել, թէ ինչ կը լինի Ադրբեջանը կամ Վրաստանը 10 տարի յետոյ, քան թէ Հայաստանը, որովհետեւ այնպէս է ստացուել, որ այդ երկրները նախ, գազի հաշուին կարող են շատ արագ զարգացում ունենալ, մինչդեռ մեր պարագայում, առայժմ ճանապարհները դեռ շարունակում են շրջանցել Հայաստանը, եւ սա ինչ որ տեղ ի հարկէ լաւատեսութիւն չի ներշնչում:

Ճիշտ է, մենք ունենք մեծ մշակութային ժառանգութիւն, մենք ունենք օժտուած ժողովուրդ, արուեստագէտներ, եւ այլն, եւ այլն, սակայն եթէ միտումները շարունակուեն այս ձեւով եւ հայաստանցի արուեստագէտները շարունակեն իրենց ապագան փնտռել միայն դրսում, չեմ կարծում, թէ սա լաւ վերջ կարող է ունենալ: Օրինակ, երաժշտութեան ասպարէզում՝ երգիչների, պրոֆեսիոնալ երաժիշտների, ջութակահարների, դաշնակահարների պարագաները. անոնք աշխատանքը պիտի վերցնեն դրսում, Հայաստանը փոքր է. սա ի հարկէ օպյեկտիւ [առարկայական] պատճառներ ունի, բայց այնուամենայնիւ... Նկարիչներից շատ շատեր հեռանում են Հայաստանից, որովհետեւ այստեղ չեն կարող իրենց աշխատանքով իրենց հացը վաստկել: Խնդիրներ շատ կան...

– Լաւագոյն պարագային, եթէ այսօրուան այս նեղ պայմանները չըլլային, դարձեալ այս կացութիւնը չէ՞ր տիրեր, այսինքն, մեր տաղանդաւոր գաւակները այնքան շատ են, որ այդ բոլորին տեղ կրնա՞ր ըլլալ ...

– Ճիշտ է, եւ համաձայն եմ ձեզ հետ, որ շատ են, իրօք շատ են: Բայց ուրիշ բան էլ կայ: Շատը յարաբերական է, օրինակի համար, դրսում շատ դժուար է գտնել նկարչութեամբ ապրող մարդ, բայց այստեղ շատ շատերը այդպէս են ապրում. ինչո՞ւ՝ որովհետեւ ուրիշ գործ չկայ: Եթէ մարդը մի մասնագիտութիւն ունենար, աշխատէր, ապրէր ... Բայց քանի որ գործ չկայ, ինքն էլ ասենք մի քիչ նկարել գիտի, սկսում է խորացնել այդ նկարչութիւնը, նկարը վաճառում է, դրանով ապրում. այսինքն ինչ-որ տեղ այս բազմաքանակութիւնը այդքան լաւ բան չէ:

Բարեբախտաբար, մեր մօտ տաղանդաւոր մարդիկ անընդհատ երեւան են գալիս, եւ այս իմաստով վախնալու բան չունենք, բայց վախեցնողը նաեւ հասարակութեան անտարբերութիւնն է: Եթէ մենք ունենք երաժիշտ, նկարիչ, եւ այլն, բայց այդ մարդիկը պիտի այցելու ունենան, լսող ունենան, այսինքն ընդհանուր հասարակութեան մակարդակի բարձրացման հարցն էլ կայ:

– Ճիշտ այդ հարցին կառնչուի, կենթադրեմ, այսպէս փառատօներու մէկ շարք, որ նուիրուած ըլլայ մեր մշակութային կեդրոններուն, եւ ամեն տարի անոնցմէ մէկուն առնչուած, մեծ չափի միջոցառումներ տեղի ունենան: Այս մասին ի՞նչ կը մտածես, Կարէն:

– Մշակութային փառատօներ լինում են, օրինակ Ոսկէ ծիրան կինոփառատօնը շատ լաւ է: Լինում է սիրողական խմբերի Մէկ ազգ - մէկ մշակոյթ փառատօնը, որին շատ մասնակցողներ են լինում. թատերական փառատօներ էլ կան, սրանք ի հարկէ շատ լաւ են, շատ կարելու են, ինչ որ տեղ՝ յատկապէս Հայաստան-Սփիւռք կապերի խորացման առումով: Փառատօնը ասենք տեսում է մի քանի օր, կամ մէկ շաբաթ, անցնում է, բայց միւս կողմէ տարուայ ընթացքում ամենօրեայ աշխատանք է պէտք մշակութային կեանքը վառ պահելու համար. այսօր Հայաստանի [պետական] բիւջէում մշակոյթը ամենէն փոքր տեղը կը գրաւէ, բայց այդ մշակոյթի մէջ մտնում է, ասենք, թէկուզ յուշարձանների նորոգման խնդիրը. մենք հսկայական ժառանգութիւն ունենք, որ ցաւօք սրտի ժամանակի ընթացքում մատնուեր է անմխիթօր վիճակի. դրանց նորոգման համար միջոցներ են պէտք, ինչպէս թանգարանների պահպանման, գումարած՝ թատրոնները, կինոները, եւ այլն: Այս ամբողջը մեր բիւջէի ամենափոքր կէտն է: Ես կարծում եմ, որ այս վիճակը, մշակութային երկրի մը համար, այդքան էլ նորմալ [բնական] չէ, որովհետեւ մենք մի քիչ աւելի տեղ պէտք է յատկացնենք ատոր: Օրինակի համար, մենք չենք կարող լաւ մասնագէտ, թանգարանային մասնագէտ ունենալ, եթէ պատշաճ կերպով չվարձատրենք: Եթէ դատաւորը պէտք է ստանալ կէս միլիոն դրամ, որպէսզի անաչառ ըլլայ, կաշառք չվերցնի, իսկ մէկը, որ ասենք թանգարանում առնչում է միլիոններ արժող նկարների հետ, նրան տալիս ենք 30 000 դրամ. չի կարելի, այս աստիճանի տարբերութիւն չպիտի լինի:

– Սիրելի Մաթեոսեան Կարէն, կը խնդրեմ խօսիս մեր ժառանգութիւնը արժեցնելու հարցին մասին, որուն անդրադառնալու առիթ ունեցեր ենք ասկէ առաջ, մեր տեսակցութիւններուն ընթացքին:

– Ժառանգութիւնը արժեցնել ի հարկէ պէտք է, որովհետեւ դա առաջին հերթին ունի դաստիարակչական իմաստ մեր նոր սերունդին համար, որպէսզի նրանք գիտակցեն, թէ ի՞նչ ժառանգութեան տէր են: Երկրորդ՝ սա կարելու է տարբեր առումներով, թէկուզ քաղաքական տեսակետով, որպէսզի աշխարհն էլ ինչ որ տեղ իմանայ, ճանաչի: Հիմա մենք խնդիրներ ունենք մեր հարեւան երկրների հետ, եւ այս առումով մենք նոյնպէս գործ ունենք

անելիք, որպեսզի ճանաչուի Հայաստանը: Օրինակ, ասենք Հայաստանի տարին Ֆրանսիայում, որ եղաւ անցեալ տարուրնէ սկսեալ, շատ մեծ դրական մի գործընթաց էր: Եթէ Հայաստանի թանգարանը 40 000 այցելու է ունենում մի տարուայ մէջ, Լուվրում մէկ օրուան մէջ այդքան մարդ, մեր ցուցահանդէսն էր գալիս, այնպէս որ մենք կարողացանք բաւական բան ցոյց տալ: Բայց նաեւ շատ բան ունենք անելիք. մենք ունենք մեր պատմութիւնը, մեր մշակութային ժառանգութիւնը ուսումնասիրելու, ներկայացնելու պահանջ, եւ դա պիտի արուի տարբեր գիտաժողովների, տարբեր միջոցառումների ճամբով: Օրինակ, ի՞նչ վատ կը լինէր, եթէ մենք Աղթամարի վերաբերեալ ունենայինք եւ գրականութիւն հրատարակուած, եւ տարբեր տեսակի նիւթեր: Մատենադարանում այսօր 86 ձեռագիր կայ, որ Աղթամարում են գրուած. մենք կարող ենք շատ հանգիստ ներկայացնել Աղթամարի ձեռագրական մշակոյթի մի ցուցահանդէս, դա պրոպագանդել լրատուական միջոցներում, եւ այլն, որպէսզի հասկանան, որ Աղթամարի եկեղեցին, որը բարեբախտաբար նորոգուեց, ինք մի առանձին շինութիւն չէ, նրա կից եղել են ուրիշ մատուռներ, այնտեղ 700 տարի գործել է Աղթամարի կաթողիկոսական աթոռը, հարիւրաւոր գրիչներ, մանրանկարիչներ են ստեղծագործել, բանաստեղծներ են եղել, քաղաք է եղել փոքրիկ, եւ այլն, եւ այլն: Այսինքն, այս ժառանգութիւնը եթէ մենք կարողանանք պատշաճ կերպով ներկայացնել, այլեւս որեւէ մէկի մօտ հարց չի ծագի, թէ Աղթամարը ի՞նչ է եւ այլն: Մինչդեռ մենք ինչ որ տեղ միշտ ուշանում ենք. մենք ուշանում ենք Ջուղայի խաչքարերի հարցում, եւ յետոյ երբոր արդէն փաստի առաջ ենք կանգնում, նոր այդ ժամանակ բարձրացնում ենք աղմուկ, որ ինչ որ տեղ լսելի էլ չի դառնում: Մինչդեռ այդ ամենը կարելի է անել նախապէս, չէ՞ որ մենք գիտենք: Կրնանք հրատարակութիւններ ունենալ, օրինակ՝ Արեւմտեան Հայաստանի մասին: Միայն Մոկքի՝ Հայաստանի այդ ամենէն փոքր նահանգի մէջ չորս տասնեակից աւելի կրթութեան կեդրոններ, վանքեր ունեցած ենք. եւ այնտեղից մի քանի հարիւր ձեռագիր է մնացել, վաղը միւս օր եթէ հարց լինի, ցոյց տանք որ վանքեր կան, մարդիկ տեսնեն, որ այս տարածքում, հազարամեակով քաղաքակրթութիւն է եղել, ոչ միայն եկեղեցիներ, որ քանդեցին, քարը քարի վրայ չձգեցին, այլ մարդիկ այնտեղ դարերով մշակութային արժէքներ են ստեղծել:

– Այդ միջոցաւ հակագոյած կըլլանք նաեւ այն հակահայ քարոզչութեան, որ Թուրքիա կը տանի ներկայիս:

– Ի հարկէ, եւ մեր հակազդեցութիւնը կը լինի փաստացի, նիւթական: Օրինակ Մատենադարանում, սրահների մուտքի մէջ դրուած են գրչութեան կեդրոնի քարտէզներ: Այս քարտէզները մեզի համար ուղղակի զէնքեր են, որովհետեւ եթէ մարդ տեսնի որ Վանում, Մուշում, Տարսուսում, Վարազում եւ այլն, եւ այլն, մի հազար հինգ հարիւր տարի ձեռագրեր են գրուել. եւ այնտեղ գրիչ է ապրել, մանրանկարիչ է ապրել, պատուիրատու է եղել, վանահայր է եղել. էս ձեռագիրը իր հետ բերում է նաեւ իր հետ ապրած մարդիկ, արուեստագէտներ, եւ այլն, եւ մարդ տեսնում է մի հսկայական ժողովուրդ, ձեռագիր ստեղծող, մշակոյթ ստեղծող ժողովուրդ, որ վաղուց է եղել՝ հիմա չկայ: Սա մեծ իրողութիւն է, որուն մենք ուշադրութիւն չենք դարձնում, մեզ համար սովորական է, մենք գիտենք եւ թուում է բոլորն էլ գիտեն...

– Ուրիշ որեւէ հարց կա ՞, որ կուզէիք մեր ընթերցողներուն փոխանցել:

– Ես կուզէի ձեր թերթի միջոցով գանատահայութեանը շնորհակալութիւն յայտնել մէկ բանի համար, որ այդքան հեռու լինելով հանդերձ՝ շատ կապուած է Հայաստանի: Առաջին երկիրը որ Մփիւռքում ես այցելել եմ՝ Գանատան է եղել, 92 թուականին. առաջին անգամ, որ Մփիւռքի հայկական դպրոց եմ մտել՝ դա եղել է Մոնրէալում եւ առաջին անգամ շատ խորը յուզում եմ ապրել՝ տեսնելով այդ փոքրիկներին, որ հայերէն խօսում են այդքան հեռու ապրելով Հայաստանից: Ես Հայր Աբրահամի հետ էի, որ այն ժամանակ վարդապետ էր,

հիմա Միւնեաց թեմի Առաջնորդ է, անկեղծ ասեմ, երբոր այդ մանուկները արտասանեցին՝ երկուքս էլ յուզուեցինք: Իսկապէս շատ մեծ գործ է գանատահայութիւնը անում, եւ ամեն տեսակի օգնութիւն էլ է ցոյց տալիս Հայաստանին, սկսած երկրաշարժի ժամանակից, մինչեւ այսօր, եւ դրա մէջ իրենց դերը ունեն է՝ ւ հայ եկեղեցին է՝ ւ բարեգործական կազմակերպութիւնները է՝ ւ կուսակցութիւնները, այսինքն հասարակութեան բոլոր շերտերը իրենց կարելին անում են Հայաստան-Սփիւռք կապը պահպանելու համար: Ինչի՞ եմ յատկապէս ասիկա շեշտում, որովհետեւ, ցաւօք սրտի ամեն տեղ չէ, որ այդպէս է: Մենք ունենք աւելի մեծաթիւ գաղութներ, որոնք անկազմակերպ են եւ Հայաստանի հետ որեւէ կապ չունեն: Շատ աւելի ցաւալի եւ ուղղակի ողբերգական է Ռուսաստանի հայ գաղութի վիճակը, որ հայաստանցիներ լինելով, եւ այդքան մեծ թիւ կազմելով՝ անկազմակերպ վիճակի մէջ են, եւ ուժացման վտանգը աւելի շատ նրանց է սպառնում, քան թէ գանատահայութեան: Այնպէս որ, ձեր միջոցաւ ձեր ընթերցողներին ուզում եմ ասել, որ ի հարկէ հերոսութիւն է Սփիւռքում հայ մնալը, բայց ամեն դէպքում այդ գիտակցութիւնն էլ քիչ բան չի, որ մարդը գնում է կամաւոր այդ հերոսութեանը, հասկանալով որ իր հայութիւնը պահպանելով՝ պահպանում է նաեւ հոգեւոր արժէքը մի ազգի, որը մարդկութեան արմատներում է կանգնած, եւ հնագոյն քաղաքակրթութեան սիւներից մէկն է:

– Շնորհակալութիւն, Կարէն:

Հրաժեշտ առնելէս առաջ, հայ արուեստի, մշակոյթի երկրպագու, պահապան բարեկամս ինձի կը նուիրէ իր «Անի» աւելի քան 400 էջ հատորը, հրատարակուած 1997-ին, S.S. Գարեգին Ա. կաթողիկոսի հովանաւորութեամբ, որ նուիրուած է միջնադարեան մեր մայրաքաղաքի պատմութեան, մասնաւորաբար Անիի հոգեւոր եկեղեցական կեանքին եւ ձեռագրական ժառանգութեան: Երանի, երանի Կարէն կարենայ ուսումնասիրել ու հրատարակել մեր մշակոյթի բազմաթիւ այլ կեդրոններուն նուիրուած նման արժէքաւոր հատորներ:

Նաեւ, ցանկութիւնս եւ թելադրութիւնս է, որ շատեր բաժանորդագրուին այս կարեւոր ու հանրամատչելի պարբերաթերթին, որ «Հայ արուեստ»-ն է:

(Այստեղ նշեմ, որ պարբերաթերթը, ցաւօք սրտի, դադրեցաւ 2008-ին, սակայն Համացանցի վրայ կարելի է տեսնել իր համարներէն ոմանք՝ այցելելով «Հայ արվեստ» կայքը)

Հայաստանի ազգային գրապահներուն հետ

Դաւիթ Սարգսեան եւ Ռաֆիկ Ղազարեան Հայաստանի Ազգային գրադարանի տնօրէնն ու փոխտնօրէնն են:

Շաբաթ կէսօրէ ետքն էր. յաջորդ օրը կը մեկնէի Հայաստանէն:

Չէի ակնկալէր, որ իրենք հոն ըլլային, սակայն չի ուզեր առանց Ազգային գրադարանն ալ տեսնելու հեռանալ:

Հասայ Տէրեան փողոց: Շիտակը ըսելու համար, զարմացայ, որ այդքան նեղ ու անշուք փողոցի մը վրայ կը գտնուի այս պատկառելի հաստատութեան մուտքը: Մտնելէ ետք ալ, տակաւին վստահ չէի, որ ճիշտ վայրը եկած եմ: Շուկայ ըլլար կարծես, ու առաջին տեղը ուր կը դիմէի՝ տեղեկութիւն ուզելու համար՝ ճամբորդական գրասենեակ մըն էր, եթէ չեմ սխալիր: Բարեբախտաբար համազգեստաւոր պահակ մըն ալ կար, այս մէկը՝ գրադարանին պատկանող, որ հետաքրքրուեցաւ ինձմով, անուն-մականունս առաւ, եւ պահ մը վեր էլաւ:

ստուգելու համար, թե կրնայի՞ն զիս ընդունիլ պատասխանատուները: Ուրեմն, հոս են, մտածեցի գոհունակությամբ:

Եւ ահա վերադարձաւ երիտասարդ պահակը ու միասին բարձրացանք լայն ու հի՛ն սանդուխներէն (որոնցմէ ով գիտէ ի՛նչ ականաւոր մտաւորականներ բարձրացած են), ապա անցանք փոշոտ միջանցքներէ (վերանորոգութիւն կար), ու հասանք տնօրէններուն գրասենեակի ընդունարանը:

Քարտուղարուհին զիս ներս պիտի առաջնորդէր, սակայն իրենք արդէն ընդառաջ եկան ու զիս դիմաւորեցին այնպէս, կարծես հի՛ն ծանօթներ ըլլայինք: Այս վերաբերմունքը ցրուեց ամեն ժխտական տպաւորութիւն եւ ստեղծեց ջերմ մթնոլորտ մը մեր հանդիպման համար:

Մեր գրոյցը տեղի ունեցաւ մտերմիկ ձեւով, անպաշտօն, առանց գրառումի, ընկերական ոճով,– լսած էի, որ անոնք համակիրներ են, կամ ընկերներ:

Այցելութեանս նպատակներէն մէկը ստուգել էր, որ հրատարակած էրէք հատորներս, որ ատենին զանազաններու հետ ուղարկած էի Գրադարանին՝ տեղ հասա՞ծ են եւ մուծուա՞ծ են հաւաքածոներուն մէջ: Երեւան ելաւ, որ առաջին երկուքը, այո, կային, բայց երրորդը, որ անկախութեան այս շրջանին առաքած էի՝ հոն չէր: Խոստացայ առաքել: Նաեւ խոստացայ կարգաւորել, որ «Հորիզոն»-ն ալ ուղարկուի, քանի որ ըստ երեւոյթին չէին ստանար – դադրեցուցեր ենք առաքումը նիւթական շատ նեղ վիճակի մը պահուն հաւանաբար:

Անկէ ետք մեր խօսակցութիւնը ընթացաւ Ազգային գրադարանի առնչութեամբ, եւ Դաւիթ Սարգսեան ու Ռաֆիկ Ղազարեան փոխն ի փոխ պատմեցին ազգային այս կարեւոր հաստատութեան պատմութիւնը, ինծի փոխանցելով նաեւ իրենց մտահոգութիւնները:

Տեղեալ էիք, որ այս տարի կը լրանայ Ազգային գրադարանի 175-ամեակը: Բազմադարեան պատմութիւն ունեցող Հայաստանի մէջ հազուագիւտ են նման երկար կեանք ունեցող հաստատութիւնները, եւ ահա այդ հազուագիւտներէն մէկն է ասիկա, հիմնադրուած 1832-ին: Այն ատեն ան մաս է կազմէր Երեւանի արական գիմնազիային [բարձրագոյն ուսումնարան], գիմնազիա, որուն տեսուչը 1843-1848 թուականներուն հանդիսացեր է Խաչատուր Աբովեանը:

1919-1920 թուականներուն, այսինքն Ա. հանրապետութեան տարիներուն, եւ ի հարկէ անկէ ետք ալ, գրադարանի ֆոնդերը [հաւաքածոները] հարստացեր են, համալրուեր են Մոսկուայի Լազարեան ճեմարանի, Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի գրադարաններու, ինչպէս նաեւ բազմաթիւ հայ մտաւորականներու եւ գործիչներու անձնական հաւաքածոներով՝ հայերէն, ռուսերէն եւ օտարալեզու գրականութեամբ, հասնելով 7 միլիոն միաւորի, գրադարանը (1925-ին կոչուած՝ Ալ. Միասնիկեանի անունով) դարձնելով նախկին Խորհրդային միութեան երրորդ ամենէն հարուստը իր ֆոնդերու քանակով:

Ազգային գրադարանի պահպանած զանձերը կընդգրկեն, ի միջի այլոց, առաջին հայ տպագիր գրքերը, սկսած 1512-ին տպուած «Պարզատումար»-էն, «Ուրբաթագիրք»-էն եւ «Տաղարան»-էն:

Այս տարի կը լրանայ նաեւ Գրադարանի հրատարակչական գործունէութեան 70-ամեակը: Արդարեւ, 1937 թուականէն ի վեր 1000 եւ աւելի հրատարակութիւններ իրականացուցած է Ազգային գրադարանը՝ յատկապէս մատենագիտական, աղբիւրագիտական եւ նման նիւթերու նուիրուած: Վերջերս լոյս տեսած գործերէն մէկն է «Հայկական հարց եւ հայոց ցեղասպանութիւն» մատենագիտութիւնը՝ երկու հատորով: Շատ ուրիշ հրատարակութիւններ ալ կան, որոնք կարգի կը սպասեն, աւելի ճիշտ՝ հովանաւորի:

Գրադարանը ունի նաև իր ամսաթերթը՝ «Հոգևոր հայրենիք», որ լոյս կը տեսնէ 2004 թուականի մարտէն ի վեր:

Հայաստանի Ազգային գրադարանի 175-ամեակը 2007-ի հոկտեմբերին կը նշուի պետականօրէն, մե՛ծ շուքով: Իսկ մշակոյթի նախարարութեան աջակցութեամբ տնօրէնութիւնը նախաձեռներ է բանալ հայ գրքի թանգարան, հաւանաբար 2012 թուականին՝ առաջին հայերէն տպագիր գրքի՝ «Ուրբաթագիրք»-ի 500-ամեակին առթիւ:

Իսկ որո՞նք են Ազգային գրադարանի հիմնախնդիրները:

Առաջին հերթին, ամենէն մտահոգիչը շէնքերու վիճակն է: Գրադարանը 600 ընթերցող կրնայ ընկալել միեւնոյն պահուն, սակայն հիմնադրման օրուրէն, մասնաշէնքերէն որեւէ մէկը հիմնական նորոգութեան չէ ենթարկուած: Առաջին մասնաշէնքը, որ Ալ. Թումանեանի նախագիծով իրականացած է, կառուցուած է 1939-ին, երկրորդը՝ 1972-ին, երրորդը՝ 1976-ին, իսկ չորրորդը, որ շինուած է 1990-ին, տակաւին չի գործածուիր, քանի որ նիւթական միջոցներու բացակայութեան պատճառաւ կը մնայ կիսաւարտ:

Կան այլ հարցեր ալ. «ունենք նաև տեխնիկական զինուածութեան բարելաւման խիստ կարիք. համակարգիչները չեն բաւականացնում, չենք կարողանում ապահովել գրականութեան պահպանութեան համապատասխան ռեժիմները, չունենք գրականութեան խնամքի եւ վերականգնման ժամանակակից պայմաններ»:

Այլեւ, «խիստ կարեւորում ենք կադրերի պատրաստման եւ վերապատրաստման խնդիրը, առանց որի դժուար է լուրջ յաջողութիւնների ապահովումը»:

Այս բոլորը գիտնալով, կարելի՞ է ձեռնաձալ մնալ. այս մասին լրջօրէն մտածելու են Սփիւռքի եւ Հայաստանի պատկան մարմինները թէ բարեխիղճ ունեւորները...

(Հորիզոն, 2007-07-16 – 2007-10-22)

Խղճի պարտք մը

Հիմա, երբ վերստին կը կարդամ 2007-ի ուղեգրութիւնս, կ'անդրադառնամ, որ բազմաթիւ վայրեր այցելած եմ այն ատեն, մանաւանդ Արագին ընկերակցութեամբ, ներկայ եղած համերգներու եւ թատերական ներկայացումներու, որոնց մասին բան չեմ գրած: Չեմ կրնար սակայն չվերյիշել ու չաւելցնել մէկ հանդիպում եւս, որ ինձի համար յատուկ կարեւորութիւն ունէր, որուն ընթացքին կատարած հարցազրոյցս, ամիս ս, չկրցայ հրատարակութեան պատրաստել, քանի որ արձանագրիչս դաւաճանեց ինձի, ու միայն յետոյ գիտցայ ատիկա, երբ արդէն շատ ուշ էր: Այդ հանդիպումը Կարլէն Դալլաքեանին հետ եղաւ:

Իրեն հանդիպեցայ նախ Սենեկային երաժշտական թատերասրահին մէջ՝ Լոռուայ ձոր հասարակական կազմակերպութեան հիմնադրութեան շնորհանդէսին: Հետաքրքրական է, – շնորհանդէս՝ ազգագրական աշխատանք առաջադրող կազմակերպութեան մը հիմնադրութեան առթիւ: Թովմաս Պօղոսեանն էր զիս հրաւիրողը. Իր Սայաթ Նովա համոյթն ալ կը մասնակցէր յայտագրին: Եւ ինքն էր նաև որ զիս ներկայացուց երբեմնի անուանի կուսակցական գործիչին, որ ինձմէ երկու արժող անդին էր նստած: Նոր կարդացած էի իր յուշերը ու շատ լաւ տպաւորուած իր հայ մարդու կերպարէն: Հոն էր, որ խնդրեցի իրմէ հարցազրոյց մը ունենալ իր հետ:



Թովմաս Պողոսեան եւ
Կարլէն Դալլաքեան

– Ամեն բան ըսած եմ գրքիս մէջ, աւելի ի՞նչ կ'ուզես
գիտնալ,– ըսելով դժկամութեամբ ընդունեց ժամադրուիլ:

Չորս օր ետք կէրթամ Հրաչեայ Աճառեանի անուան
համալսարանը, ուր ինք տակաւին կը պաշտօնավարէ
որպէս դասախօս՝ հակառակ յառաջացած տարիքին:

Համայնավար վարչակարգի ժամանակ երկար
տարիներ որպէս երկրին երկրորդ դէմքը, յետոյ նաեւ
Սփիւռաքայութեան հետ մշակութային կոմիտէի
նախագահ, Դալլաքեան սիրով կը պատասխանէ
հարցումներու, կը խօսի, կը պատմէ առանց յոգնութեան
նշաններ ցոյց տալու:

Ես վստահած իմ արձանագրիչ գործիքիս՝ նոթեր
չեմ առներ: Բայց, ինչպէս ըսի, «տեքնիկ» պատճառներով,
արձանագրութիւնը անունկնդրելի կըլլայ: Մոնթրէալի
մէջ կը ջանամ տարբեր միջոցներով այլուր փոխադրել ու
փորձել լսել մեր խօսակցութիւնը, սակայն ի գուր: Չեմ
յաջողիր: Եւ հիմա, երբ կը փորձեմ վերյիշել ի՞նչ եւ
խօսուեցաւ, կանդրադառնամ, որ Դալլաքեանի
ըսածներէն երկու բան մնացեր է յիշողութեանս մէջ:

Առաջին՝ որ իրմէ կը խնդրուի Ռամկավար ազատական կուսակցութեան կողմէ, որ գրէ
կուսակցութեան պատմութիւնը: Կընդառաջէ, կէրթայ Պէյրութ, կը մտնէ արխիւներուն մէջ,
կը պատրաստէ գիրքը ու կը յանձնէ իրենց, որպէսզի տպեն: Իր գրածը սակայն ընդունելի չի
գտնուիր կուսակցութեան կողմէ, ու պատասխանատուները զայն տպագրութեան չեն
յանձնէր: Ինք, ամեն պարագայի, կը հրատարակէ իր ուսումնասիրութիւնը անկախաբար:

Երկրորդ՝ կ'ափսոսայ, որ Ռամկավարները իրենց երիտասարդութիւնը չեն յաջողիր
ներգրաւել, որովհետեւ հերոսներ չեն ներկայացներ անոնց: Ոչ թէ չեն ունեցած կամ չունին,
այլ իրենց ունեցած հերոսները չեն արժեւորեր, անոնցմով չեն ներշնչեր երիտասարդները:

– Դաշնակցութենէն օրինակ առէք կըսէ,– ինք, որ Դաշնակցութեան համակիր չէ՝
եղած, նոյնիսկ ի պաշտօնէ պայքարած ալ է անոր դէմ.– տեսէք ինչպէս կը պանծացնեն
իրենց հերոսները ու կը քաշեն, կը ներշնչեն նորերը, որոնցմէ ալ նո՛ր հերոսներ կը ծնին:

Ճիշտ այս բառերով կրնայ եղած չըլլալ իր ըսածը, բայց այդ միտքն էր, որ կը փոխանցեր
ինծի, առանց դոյզն հաճոյախօսութեան:

Գործս բարձր մտաւորականի մը հետ էր: Ափսո՞ս, որ մեր հանդիպումը այդպէս ալ
մնաց անմատչելի...

2017-01-22

ԴԱՐՁԵԱԼ ԵՒ ՄԻՇՏ՝ ՀԱՅԱՍՏԱՆ

Կերթանք մեր ուխտը նորոգելու



Մայիս 28՝ 2008

90-ամեակ է դարձեալ:

Երեք տարի առաջ՝ Մեծ եղեռնի՝ 90-ամեակն էր, ու մենք գացինք մասնակից ըլլալու մեր ժողովուրդի երթին, Ծիծեռնակաբերդի բարձունքին, ծաղիկ մըն ալ մեզմէ իւրաքանչիւրը դնելու անշէջ հուրին շուրջ բարձրացող դէզին վրայ՝ մեր վիշտը, մեր բողոքը, մեր պահանջքը, մեր յոյսն ու կամքը արտայայտելու համար:

Հիմա՝ 90-ամեակն է Հայաստանի Հանրապետութեան, այդ հանրապետութիւնը հրաշակերտող՝ Սարդարապատի, Ղարաքիլիսէի ու Բաշ-Ապարանի դիւցազնամարտերուն, ու մենք կերթանք հաղորդուելու անոնց խորհուրդին, խոնարհելու կերտիչներուն յիշատակին առջեւ եւ վերանորոգուելու ու վերանորոգելու մեր ուխտը՝ շարունակելու քալել այդ խորհուրդին ճամբով:

Մենք կըսեմ, որովհետեւ մինակս չէ, որ կընեմ այս ուխտագնացութիւնը, այլ կողակցիս հետ, որ նոյն ճամբուն ուխտաւորն է:

Երկա՛ր էր այդ ճամբան, ու երկար է տակաւին, ի՞նչ փոյթ:

Մեր մանկութենէն սորվեր էինք քալել, քալել՝ առանց յոգնելու, առանց վիատելու:

Մայիս 28-ը յատուկ իմաստ ունէր մեր տան մէջ. Եռագոյն դրօշը պաշտամունքի առարկայ էր. Մայիս 28-ի հերոսներու նկարները սրբանկարներու նման կը զարդարէին մեր տան պատերը: Մեր գրադարանը կը յորդէր «յեղափոխական գրականութեամբ». Կոմսի՝ «Խոնարհ հերոսներ»-ը, Ռուբէնի՝ «Հայ յեղափոխականի մը յիշատակները», Վրացեանի՝ «Կեանքի ուղիներով»-ը, Մալխասի՝ «Զարթօնք»-ը, Համաստեղի՝ «Մայիտակ ձիաւորը» եւ դեռ ինչէ՛ր կը սնուցէին մեր պատանի հոգիները, կը գրգռէին մեր երեւակայութիւնը, հպարտութեամբ կը լեցնէին մեր ետիւնը:

Անհամբեր կը սպասէինք, որ շաբաթ երեկոյ ըլլար, ու մենք երթայինք մեր Պատանեկանի ժողովին, լսէինք ֆեդայական սխրագործութիւններու պատմութիւնները, ոգեւորուէինք յեղափոխական երգերով:

Գիտէինք, որ տարին անգամ մը Մայիս 28-ը պիտի տօնուէր, եւ մենք ներկայ պիտի ըլլայինք պաշտօնական հանդիսութեան՝ «Յուսարեր»-ի թատերասրահին մէջ: Չէինք կրնար բացակայիլ՝ մեր ծնողները հանդիսութեան կազմակերպիչներէն ըլլային կամ ոչ: Շատ փոքր՝ հայրիկին ու մայրիկին կողքին պիտի նստէինք եղբայրս ու ես: Աւելի մեծ, վերը վերնատո՛ւնը տեղ պիտի գրաւէինք մեր տարեկից ընկերներուն հետ: Անպայման ներկայ պիտի ըլլայինք, ունկնդրէինք երգչախումբը, իր անվերջանալի՝ յայտագրով, քանի որ անոր ղեկավարը իւրաքանչիւր Մայիս 28-ը կը նկատէր երգահանդէսի լաւ առիթ մը... Պիտի ունկնդրէինք ոգեշունչ ասմունքները: Ու ես պիտի ունկնդրէի մանաւանդ բանախօսութիւնները, թէկուզ երկա ը, եւ բացման ու փակման խօսքերը, որոնք կարծես մէկական այլ բանախօսութիւններ ըլլային: Խօսողները մեզի ծանօթ երէց ընկերներ պիտի ըլլային, որոնց ներկայութիւնը մեր շուրջ՝ որոշ մթնոլորտ, որոշ պատկառանք կը ստեղծէր, կամ պիտի ըլլային դուրսէն հրաւիրուած անուանի գործիչներ ու մտաւորականներ, որոնց գաղութը այցը յատուկ խանդավառութիւն, եռուզեռ կը յառաջացնէր ամեն անգամ, եւ ամեն անգամ անոնք պիտի գային, տեսնուէին մեր Պատանեկանի ու Երիտասարդացի խումբերուն հետ: Տիտաններ էին անոնք մեզի համար, ու այդ հանդիպումները ընդմիշտ դրոշմուած կը մնային ու տակաւին կը մնան մեր ուղեղներուն մէջ:

Հանդիսութիւնները անպայման պիտի բացուէին «Մեր հայրենիք»- ով ու փակուէին «Յառա՛ջ, նահատա՛կ»-ով՝ երգուած ոչ թէ օրուան երգիչին կամ երգչախումբին կողմէ, կամ ոչ միայն, այլ բոլոր՝ հանդիսականներուն՝ օրուան խանդավառութիւնը գագաթնակէտին հասցնելով:

Ապա «դալար տանիք» պիտի բարձրանայինք, – ամբողջ բազմութեամբ, – ու շարունակէինք տօնախմբութիւնը՝ ճաշի սեղաններու շուրջ, ընկերական, ժողովրդական իրախճանութեամբ: Եռագոյն դրօշներ, ինչպէս վարը բեմին վրայ, հոս եւս կը զարդարէին չորս դին, յաւելեալ՝ նոյն գոյներով լոյսեր կը ստեղծէին իրապէս տօնական մթնոլորտ մը:

Գեղարուեստական յայտագիրը պիտի շարունակուէր տանիքին վրայ, եւ նուագախումբի դադարներուն մենք պիտի վայելէինք տարեց թէ երիտասարդ մեր արուեստագէտ ընկերներու երգն ու ասմունքը:

Ազգային մթնոլորտը պիտի յագեանար մշակութային բավանդակութեամբ, ու մենք տուն պիտի դառնայինք լիովի ամրապնդուած՝ տարի մը եւս քալելու համար մեր ուղիէն:

Եւ հիմա կերթանք Հայրենիք, կերթանք ազատ եւ անկախ Հայաստան, վերածնա՛ծ Հայաստան:

Կերթանք շնորհաւորելու Հայաստանի Հանրապետութեան տարեդարձը եւ հողին ոյժը զգալու մեր ոտքերուն տակ, ինչպէս Արշակ արքան զգացեր էր Շապուհին առջեւ, գորգին տակ գաղտնօրէն դրուած հայրենի հողին վրայ կոխելով:

Փառք Աստուծոյ, Շապուհը եւ շապուհները իրենց որջերն են քաշուած, եթէ նոյնիսկ չեն հրաժարած սրելէ իրենց ախորժակները մեր տարածքներուն նկատմամբ:

Կերթանք՝ քաջ գիտնալով, որ այսօրուան «Ազատ-Անկախ»-ը եւ մեր երազածը նոյնը չեն տակաւին, ու կը պակսի «Միացեալ»-ը, ուստի գիտակցելով նաեւ որ դեռ տեղ կայ երազելու, դեռ պիտի շարունակենք երազել լ:

Ու մեր երազներուն փարած՝ կերթա՛նք Հայաստան:

Ճամբու վրայ՝ անակնկալ հանդիպումներ

23 մայիս, ուրբաթ

Թաքսիով կոլոդուինք դեպի Մոնթրեալի Փիեռ-Էլիոթ-Թրիսո օդակայանը: Հեյ ի հեյ: Գործեն կանուխ վերադարձած եմ, պատառ մը բան նետած բերանս, ճամպրուկները փակած, ու մեր որոշած ժամուն մեկնած ենք տունէն:

Վարձակառքի վարորդը միջինարեւելքցի կը թուի: Արաբերէնով խօսք կ'ուղղեմ իրեն, կը գրուցենք, կը տեղեկանամ, որ պաղեստինցի է:

– Լաւ ինքնաշարժ ունիս (Թոյոթա «Գամրի» մըն է),– կըսեմ իրեն,– քո՞ւկդ է:

– Այո, իմն է, սակայն այս ընկերութեան ցանցին կապուած եմ, աւելի կանոնաւոր յաճախորդութիւն ունենալու համար:

Խօսակցութիւնը կը զարգանայ, իր կեանքի մանրամասնութիւնները կը պատմէ: 15 տարի է, որ եկած է Գանատա: Վկայեալ ճարտարագէտ՝ հոս եւս շարունակած է ուսումը, մագիստրոսի վկայական ձեռք ձգած Գոնգորտիա համալսարանէն: Սակայն ... իր ասպարէզին մէջ գործ չէ գտած եւ ընտանիքը պահելու համար ստիպուած է ... թաքսի վարել:

Այս տեսակ զարգացած վարորդներու պիտի հանդիպինք նաեւ ... Երեւանի մէջ գալիք օրերուն:

Արդէն օդին մէջ ենք, ու կը ճախրենք դեպի Փարիզ, ուր օդանաւ պէտք է փոխենք:

Հետս երկու գիրք առած եմ, թէեւ անոնցմէ առաջ կօգտուինք ֆրանսական հանդէսներէն եւ օրաթերթերէն, որոնք լրագրական իրենց տարբեր ոճով միշտ ալ մեզի համար հետաքրքրական են: Գիրքերէն մէկը Սարոյեանի հետ հանդիպումներու հաւաքածոյ մըն է, Պօղոս Մնասպեանի խմբագրութեամբ: Ատենին կարդացած եմ, մէջը նշումներ ալ ըրած՝ դասախօսութեան մը պատրաստութեան համար: Հիմա նորէն աչքէ պիտի անցընեմ՝ «Հորիզոն»-ի գրական յաւելումի օգոստոսի թիւին համար, որ ծրագրած ենք նուիրել Սարոյեանի ծննդեան 100-ամեակին:

Երեւան՝ պիտի նկատենք, որ ամենուրեք անոր նկարներն են՝ որպէս նախապատրաստութիւն մեծ գրողին նուիրուելիք նախաձեռնութիւններուն: Կը կարդամ Գուրգէն Մահարիի յուշերը, ուր կը պատմէ Սարոյեանի հետ իր հանդիպումներու մասին՝ այսօրուրնէ ի՛նչ տարբեր Հայաստանի մը մէջ...

Երկրորդ հատորը, գրասեղանիս վրայէն պատահաբար վերցուած, այս օրերուն այստեղ շատ արծարծուած նիւթի մը՝ քեպէզցիին ինքնութեան քննութեան նուիրուած է: Ֆրանսայէն Մոնթրեալ ներգաղթած Hervé Fischer-ի գիրքն է՝ «Québec imaginaire et Canada réel / L'avenir en suspens» («Երեւակայական Քեպէզը եւ իրական Գանատան / առկախ ապագան»), նոր լոյս տեսած, որ շատ մտածել կու տայ թէ՛ երեւակայական եւ թէ՛ իսկական մեր հայրենիքին ալ մասին եւ գուգահեռներ կը գծէ մեր մտքին մէջ: Կը յուսամ այս գրքին առանձնաբար անդրադառնալու առիթը կունենամ:

24 մայիս, շաբաթ

Փարիզ-Երևան թռիչքին վրայ ենք, մեկնելով Շարլ Ծը-Կոլ օդակայանի թիւ 2 կայանի Է բաժինէն, որ նորագոյն յաւելումն է այս տեւաբար ընդարձակուող «նաւահանգիստ» ին: Մի քանի լուսանկար կը քաշեմ՝ ապակի պատերու նորահնար ագուցումներէն:



Պատանի երաժիշտները իրենց ընկերակցող ղեկավարին հետ

Հիմա մեր քովի աթոռը գրաւած է սեւուլիկ, պճլտուն աչուկներով մանչուկ մը, պատանի մը, որ անկասկած հայ է, ինչպէս հայ է ճամբորդներու մեծ մասը: Կը ծանօթանանք. 13 տարեկան Ժորա Մարգիսեանն է, 17-22 մայիսին միջազգային «Flame» (Բոց) երաժշտական մրցոյթին մասնակցած է ու արժանացած գլխաւոր մրցանակին: Սպենդիարեանի անուան երաժշտական դպրոցի ուսանող է: Վերադարձին համացանցէն կը տեղեկանամ որ ան դաշնակի բոլոր դասակարգերուն մէջ լաւագոյն արդիւնքներն է խլած: Հայաստան հինգ պատանի ու մէկ երիտասարդուհի ուղարկած է, բոլորն ալ դափնեպսակի արժանացած են: Ժորայէն զատ մասնակցած են Գրիշա Խաչատրեան, 15 տարեկան, Ա. մրցանակ (դաշնակ), Աննա Մարգարեան, Ա. մրցանակ (ջութակ), Անոյշ Սարգսեան, 11 տարեկան, Բ. մրցանակ (դաշնակ), Աննա Վարդանեան, 11 տարեկան, Ա. մրցանակ (դաշնակ), Էլ Անի Սարգսեան, 20 տարեկան, Ա. մրցանակ (երգ): Կը ծանօթանանք նաեւ իրենց ընկերակցող Վաղարշակ Յարութիւնեանին:

Նման հանդիպում բնականաբար կը խանդավառէ մեզ, եւ մենք հպարտութեամբ ոտք կը դնենք հայրենի հողին վրայ:

Ուրախալի, նոյնպէս հպարտութիւն առթող երեւոյթ է մուտքի, վիզայի, քննութեան, ճամպուկներու ստանձման հեզասահ ընթացքը, նոյնիսկ շատ յառաջացած երկիրներէ աւելի քաղաքակիրթ, մարդկային ձեւով՝ Զուարթնոց օդակայանի նոր բաժինէն ներս:

Ամեն տեղ՝ Արագին ծանօթները

25 մայիս, կիրակի

Առաջին առաւօտն է. կը նախաճաշենք մեր պանդոկին մէջ, ինչպէս պիտի ընենք ամեն օր: «Աւիատրանց», օտարահունչ անունով բայց հիւրընկալ, մաքուր բազմաթիւ պանդոկ մը, Արովեանի վրայ, Հիւսիսային պողոտային ու Հրապարակին մօտ, փողոցէն քիչ մը ներս քաշուած: Մեր գաւկին ալ վարձած բնակարանէն ոչ շատ հեռու:

Ես միշտ խորշած եմ փարթամ, շքեղ պանդոկներէ. այս մէկը մեր ճաշակին է: Բոլոր սենեակները առնուած են, ես բարեբախտաբար ամիսներ առաջ ապահոված էի: Հոս իրարանցում չկայ, սակայն, քանի որ համագումարներու կեդրոն չէ: Մեր սենեակը ամեն յարմարութիւն ունի, լայն է, իր նստելու անկիւնով եւ այլն: Սպասարկութիւնէն ալ չենք կրնար դժգոհիլ. ամեն մարդ կը ջանայ առաւելագոյն չափով հաճոյակատար ըլլալ:

Արագը կը միանայ մեզի ու առաջին հերթին կը տանի-ցոյց կու տայ իր յարկաբաժինը, որ պարսկահայ ընկերուհիի մը հետ կը բաժնէ: Վերանորոգուած, կոկիկ ու գործնական: Իբր ծնողք, անշուշտ կուգէինք վստահ ըլլալ, որ յարմար տեղ մը ունի աշխատելու եւ գլուխը բարձի մը վրայ դնելու համար:

Ապա երկու քայլ անդին՝ Վերնիսաժ, ուր ամեն շաբաթ-կիրակի ամէն ինչ ծախու կը հանուի – գորգեր, ասեղնագործութիւններ, գոհարեղէն, ձեռարուեստ, հին գրքեր, տան առարկաներ, իւղանկարներ եւ այլն, եւ այլն: Արագը արուեստագէտներէն ու վաճառողներէն շատերու ծանօթ է, բարեկամացած:

Նալբանդեանի վրայ կայ տեղեկատու կեդրոն, Մոնթրէալի մէջ Քեպէգի զբօսաշրջութեան նախարարութեան կեդրոնին նման. ատկէ ձեռք կը ձգենք շաբթուան գեղարուեստական ներկայացումներու ցուցակը: Այս երեկոյ Հայաստանի պետական պարի համոյթը ելոյթ ունի. կրնանք անով սկսիլ...

Կը դառնանք Հրապարակը (Հանրապետութեան), Ամիրեանով կը քալենք դէպի Մաշտոց: Ճամբան մի քանի անգամ կանգ կ'առնենք. Արագը մեզ կը ծանօթացնէ Գոհարին, Գէորգին, Վահանին, Նաթաշային, Տիգրանին եւ այլոց: Կը թուի ամեն մարդ ծանօթ է իրեն, կամ ինք՝ անոնց: Բոլորին հետ ալ աշխատանք մը ունի ընթացքի մէջ: Յետոյ պիտի նկատենք, որ վարձակառքի վարորդներէն ալ շատեր կը ճանչնան զինք, փողոցէն անցած ատեն ձեռք կ'ընեն իրարու, կը բարեւեն: Նոյնը ճաշարաններու աշխատողները: Եւ շատ ուրիշներ, արուեստագէտներ, մտաւորականներ, պարզ մարդիկ: Բոլորին հետ կ'ապ մը ունի մեր աղջիկը, ամբողջ Երեւանը իր ընտանիքն է, իր տունը...

Ահա «Ակումբ»-ը, ուր սուրճ մը պիտի առնենք եւ միշտ շաղակրատենք սպասարկողներուն հետ: Այստեղէն ձեռք կը ձգեմ National Geographic-ի առաջին հայերէն հրատարակութիւնը (Նէշնլ Ջեոգրաֆիկ Թրավելեր, «հատուկ» համար, Ձմեռ 2008), որուն գլխաւոր նիւթն է «Չտեսնված Հայաստան», ապա՝ «Կարիքյաններ»,...

Փարիզի օդակայանը անդրադարձեր էի, որ Մոնթրէալէն մեկնելու ատեն ելեկտրական ատկիս մոռցեր էի հետս վերցնել: Արագը մեզ կը տանի Զիկ-Զակ, ուր ամեն տեսակի սարքեր կը գտնես, սառնարաններէն մինչեւ գրպանի հաշուիչները եւ այլն, եւ այլն:

Երեկոյեան վայելք մըն էր դիտել, Սպենդիարեանի անուան օպերայի սրահին մէջ՝ Հայաստանի պետական պարի «անսամբլ»ի (տակաւին «համոյթ») չէ եղած սա բառը՝ ներկայացումը՝ նուիրուած Սարգսրապատի յաղթանակի 90-ամեակին, ինչպէս յայտարարուեցաւ: Ղեկավար-բեմադրիչ՝ Ասատուր Կարապետեան, երաժշտ. ղեկավար՝

Հայկ Գրիգորեան, տնօրէն՝ Էրիկ Չոչուրեան: Դժբախտաբար տպուած յայտագիր չբաժնուեցաւ: Կը նշուէր նաեւ այս խումբին 50-ամեակը: Վերլիշեցի անոր ներկայացումները Գահիրէի մէջ 60-ականներուն, ապա մի քանի առիթներով՝ Մոնթրէալի մէջ: Կարելի չէ չվերլիշել նաեւ անոր երկարամեայ ղեկավարը՝ Վանուշ Խանամիրեանը՝ ժպիտը միշտ երեսին: «Ղափաման» բեմադրուեցաւ տարբեր մեկնաբանութեամբ, աւելի առոյգ ու արագ: Առաջին անգամ այդ պարերգը տեսեր էինք 1959-ին, Գահիրէի օպերայի (յետոյ հրոյ ճարակ դարձած) պատմական սրահին մէջ, միւս՝ Երգի-պարի՝ «անսամբլ»ին կողմէ, Թաթուլ Ալթունեանի ղեկավարութեամբ: Առաջին խումբն էր, որ արտասահման կու գար, գէթ՝ Եգիպտոս: ՀՅԴ Ընդհանուր ժողովի օրեր էին, եւ ներկայացման բոլոր պատգամաւոր ընկերները ներկայ եղան, առաջին կարգերու վրայ. հոն էր նաեւ Սիմոն Վրացեանը:

Այս բոլորը կը պատմէի կողքիս նստած Նունէ Գրիգորեանին, ինքն ալ պարուհի եղած պետական համոյթին մէջ ու այժմ ամուսնոյն հետ՝ «Կռունկ» համոյթի ղեկավար: Արագը իրաւունք ունի, որքա՛ն տաղանդաւոր մարդիկ կան Հայաստանի մէջ:

Երեկոն պիտի աւարտենք «Արուեստի կամուրջ» (Art Bridge) փոքրիկ ճաշարանը, որ նախ գրատուն մըն է՝ արուեստի գործերու, գիրքերու, խտասալիկներու, նկարներու, ապա մտերմիկ երկու սրահներ, մի քանի սեղաններով, որ մեր նախասիրած վայրը պիտի դառնայ, նոյնպէս Արովեանի վրայ:

Ելքի պահուն Արագը մեզի պիտի ներկայացնէ Արծուի Բախչինեանը, որուն մի քանի գրութիւնները արտատպեր էի «Հորիզոն»-ի մէջ: Արծուի դարակներէն պիտի վերցնէ ու մեզի պիտի ուզէ նուիրել 688 էջանի «Հայերը համաշխարհային կիներում» իր կոթողական երկը, 2004-ին տպուած, ուր, կռահեցիք, գրուած է նաեւ Արթինեանի մը մասին...

Ես կը պնդեմ, որ զնեմ այդ հատորը. ապա կը ժամադրուինք Գրականութեան ու արուեստի թանգարանը՝ շարունակելու մեր զրոյցը:

Երկար եւ լեցուն օր մը

26 մայիս, երկուշաբթի

Այսօր առաջին հերթին պէտք է կատարեմ ստանձնած պարտականութիւնս, այսինքն՝ հետս բերած պատմական լուսանկարը յանձնեմ առ որ անկ է:

Ուրեմն, պէտք է երթամ ՀՅԴ Քրիստափոր Միքայէլեան կեդրոն ու ՀՅԴ թանգարանին յանձնեմ Համազգայինի հիմնադիրներու այն խմբանկարը, որ անոնցմէ մէկուն՝ Ստեփան Եսայեանի զաւակներուն կնունքին օրը (եւ Ընկերակցութեան հիմնադրութեան օրը)՝ 1928 մայիս 28-ին քաշուած է Գահիրէի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մուտքին: Պանդոկէս կեդրոն՝ կրնամ նաեւ անցնիլ «Երկիր»ի խմբագրատունէն, տեսնել խմբագիր ընկերս՝ Սպարտակ Սեյրանեանը, որ քանի մը օր ետք պիտի նշանակուի կրթութեան նախարար:

Թանգարանի պատասխանատուն Անոյշն է, Ամսէեան Անոյշը, որ ուրախութեամբ կը ստանձնէ լուսանկարը:

Անկէ՛ կը քալեմ մինչեւ Մաշտոց պողոտայ թիւ 37՝ «Համազգային»-ի գրասենեակը, ուր ուրիշ գործ մը պէտք է տեսնեմ: Մոնթրէալ, վերջին օրը, ժամանակ չեղաւ «Հորիզոն»-ի համար գրած հերթական վերջին յօդուածիս շարուած փորձը սրբագրելու: Ուղարկել էի «Համազգային»-ի ել-հասցէին ու այստեղ համակարգիչին վրայ, Թամարին օգնութեամբ, կը

կատարեմ սրբագրությունը, ապա մեկ ստեղ «սեղմել»ով՝ կը վերադարձնեմ խմբագրատուն: Ինչ դիրություն...

Անկէ՛ պիտի գամ ետ, Հրապարակի կողմը, ու քիչ անդին, Նալբանդեանէն անցնիմ թիւ 3 կառավարական շէնքին մէկ անկիւնը ծուարած՝ ճարտարապետական թանգարանը, Աշոտ Գրիգորեանին հանդիպելու: Հի՛ն ծանօթ է, պաշտօնակից, այժմ արդէն դոկտորական աստիճանով, ու տնօրէնն է թանգարանին:

Ան երկու կարեւոր նպատակ կը հետապնդէ. նախ կուզէ այստեղ հաւաքել աշխարհի բոլոր հայ ճարտարապետներուն արխիւները: Ինձմէ խնդրած էր, որ Գանատայի մեր հայ ճարտարապետներուն հետ ե՛ս կապ հաստատեմ, բան մը որ շատ ջաջողեցայ ընել: Դարձեալ կը խոստանամ, ինքն ալ իր մնայուն ժպիտով՝ լայն համբերութիւն ցոյց կու տայ: Երկրորդ նպատակն է ստեղծել հիմնադրամ մը՝ «ճարտարապետական ժառանգութեան պահպանութեան բարեգործական հիմնադրամ» («Ճարտֆոնդ»), որուն հասոյթով կարենայ նորոգել թանգարանը, զարգացնել հրատարակչական աշխատանքը եւ այլն: Այս առնչութեամբ ալ կուզեմ աջակցիլ իրեն, քանի որ իրապէս կարեւոր նախաձեռնութիւն մըն է այս ալ. կարելի չէ ակնկալել, որ ամեն ինչի համար պետութիւնը իր չունեցած գանձէն գումար տրամադրէ:

Ինձի կը նուիրէ երկու հրատարակութիւններ, երկուքն ալ՝ ուշագրաւ:

Մէկը՝ «Ճարտարապետութիւն / Շինարարութիւն» հանդէսն է, անոր 2008-ի ապրիլի համարը, գեղատիպ, գրեթէ ամբողջութեամբ հայերէն (մէկ յօդուածը միայն ռուսերէն), որ իր ձեւաւորմամբ, բովանդակութեամբ եւ տպագրութեամբ կրնայ մրցիլ որեւէ միջազգային հրատարակութեան հետ: Միացեալ հրատարակութիւն՝ Հայաստանի շինարարներու միութեան եւ Հայաստանի ճարտարապետներու միութեան:

Երկրորդը իր իսկ հեղինակած մէկ հատորն է՝ «Խորհրդանշային մտածողութիւնը հայ ճարտարապետութիւնում», (Աշոտ Հայկազեան ստորագրութեամբ), կարեւոր ներդրում մը՝ հայ մշակոյթի հասկացողութեան, պատմութեան եւ արմատներուն ծանօթացման եւ բազում այլ մակարդակներու վրայ: Հարուստ՝ բացատրական լուսանկարներով ու գծագրութիւններով: 178 էջ եւ 106 աղիւսակ, լոյս տեսած Երեւան, 2005-ին:

Պէտք է անպայման՝ կարդամ այս հետաքրքրական գիրքն ալ ու անդրադառնամ անոր:

Անկէ յետոյ, ժամադրութիւնը Square One է, Արովեանի վրայ՝ մեր, պանդոկէն ոչ շատ հեռու: Արագ անակնկալ մը վերապահած է մեզի համար, բայց բան չէ ըսած, պարզապէս ընթրիքի հրաւիրած է մեզ: Կը նստինք դուրսը՝ բացօթեայ, լայն մայթին վրայ յարդարուած բաժինը: Անակնկալը՝ «պատմական» հանդիպում մըն է, որ կազմակերպած է մօրը եւ իր դասընկերուհիին՝ Անահիտին միջեւ: Զիրար չեն տեսած 47 տարիէ ի վեր՝ մէկը Լիբանան, միւսն ալ Գանատա գաղթած ըլլալով: Եւ ահա, Անահիտ Հայաստան կը գտնուի, բայց հասած է աւելի կանուխ քան մեր իմացածը՝ թէ ինք մեր մեկնելէն ետք միայն հոս պիտի ըլլար:



Արագ, որ մեզմէ անկախ արդէն իսկ ծանօթ էր Անահիտին գակին՝ Տիրանին, որ Պէրութը ձգած՝ եկած Աշտարակ հաստատուած է, կարգադրեր է, որ երկու ընկերուհիները այս ճաշարանը գան ու

Անահիտ ու Նազիկ վերագտած զիրար

հանդիպին իրարու: Մենք սակայն այդ անակնկալ հանդիպումին ականատես չկրցանք ըլլալ, քանի որ իրենք երկուքն ալ լուսցարանը կը տեսնեն ու կը ճանչնան զիրար...

Այո, Հայաստանը մեր բոլորիս ժամադրավայրն է, աւելի ճիշտ պիտի ըլլայ բանաձեւել՝ Հայաստանն է մեր բոլորիս ժամադրավայրը...

Օրը պիտի աւարտի Գեղագիտութեան ազգային կեդրոնի,– որուն կայքէջն է, որ պատրաստելու վրայ է Արագ,– տարեկան համերգով: Մանկական-պատանեկան խումբեր, սոյն Կեդրոնի թէ գործակից այլ կեդրոններու սաներով, Յակոբ Պարոնեանի անուան թատերասրահին մէջ մեզի կը ներկայացնեն իրենց երգն ու պարը, ասմունքն ու թատրոնը՝ հիացմունքի խելայեղ ծափեր խլելով մեզմէ: Ու կը մտածեմ, արդեօք Սփիւռքի մեր բոլոր մանկապատանեկան, աշակերտական պարախումբերն ու երգչախումբերն ալ, նոյն այս ազգային ճիգին շարունակութիւնը չե՞ն հանդիսանար...

Մեծ գանձարանին մէջ

27 մայիս, երեքշաբթի

Այսօր ցերեկին բացառիկ պատեհութիւն մը ընծայուեցաւ մեզի:


Այցելեցինք Եղիշէ Զարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարանը, կարճ՝ ԳԱԹ, ինչպէս կը յղուին այս հաստատութեան այն բոլոր փաստաթուղթերը, որոնց կը հանդիպինք տարբէր տարբէր գրքերու եւ յօդուածներու մէջ, եւ որոնք կը վերաբերին մեր գրականութեան եւ արուեստի գանձաւան ճիւղերու մեր երախտաւորներու արխիւներուն:

Ափսոսալին այն էր ինծի համար, որ նախկին չորս առիթներով, երբ Հայաստան էի եկած, չէի այցելած, չէի մտած մեր այս տաճարէն ներս:

Մեր իջեւանած պանդոկէն քանի մը քայլ անդին, պետական պատկերասրահի համալիրին մէջ՝ սակայն կոնակի կողմէն, Արամի փողոցի վրայ, թիւ 1, աննշան, աննշան մուտքով մը՝ ահա գանձատուն մը, որ մեր աչքի լոյսին պէս պարտաւոր ենք պահելու:

Ժամադրուած ենք Արծուիին հետ, որուն հանդիպեր էինք անցեալ երեկոյ՝ Արուեստի կամուրջ ճաշարանէն դուրս գալու պահուն: Արծուի կը ծանօթացնէ մեզ իր հօր՝ Հենրիկ Բախչինեանին, որ թանգարանին տնօրէնն է, ապա նախ քան անոր հետ գրոյցի նստիլս, մեզ կ'առաջնորդէ գլխաւոր ցուցասրահը, ուր դեմ-յանդիման պիտի գանք մեր գրողներուն եւ արուեստի բազմաթիւ գործիչներուն հետ: Աբովեան, Կոմիտաս, Նալբանդեան, Վարուժան, եւ դեռ ի՛նչ ու ի՛նչ անուններ՝ լուսանկարներով, փոքր բացատրական գրութիւններով, եւ զանազան յուշօրներով, որոնց կարգին թանգարանի ամենէն կարեւոր գանձերէն՝ Սայաթ Նովայի քամանչան ու «տաֆթար»-ը, այսինքն իր իսկ ձեռագիր տետրը իր երգերու բառերով: Իրարու մէջ բացուող այս սրահներու շարքը կրնայ ժամերով առիւթներ յայցելուները: Մենք ստիպուած ենք արագ անցնիլ եւ վերադառնալ տնօրէնին գրասենեակը, որ նաեւ ժողովասրահ մըն է ու գրադարան մը: Մէկ խօսքով՝ պատկառելի տեղ մը:

Պատկառելի, թէւ շատ պարզ, համեստ ու ընկերական անձ մըն է եւ ինք՝ Հենրիկը, ծնած 1948-ին՝ Թիֆլիս: Գրող, թարգմանիչ, գրականագէտ, հայոց հին ու միջնադարեան գրականութեան, Սայաթ Նովայի եւ դեռ ի՛նչ մարգերու հմուտ զիտնական, 1992 թուականէն ի վեր կը վարէ այս հաստատութեան տնօրէնութիւնը: Հեղինակ է այդ



ԳԱԹ՝ Հենրիկ եւ Արծուի Բախշինեաններուն հետ

նիւթերուն նուիրուած գիրքերու, յօդուածներու, թարգմանութիւններու, յատկապէս ֆրանսական գրականութիւնէն: Նաեւ՝ հրապարակագիր, մեր առօրեան յուզող հարցերու շուրջ իր հրապարակումներով:

Վերջապէս՝ հարուստ վաստակի տէր, ու տակաւին առոյգ, կորովի եւ շատ կիրթ անձնաւորութիւն մը:

Կը խնդրեմ, որ երկու խօսք ընէ թանգարանին եւ այնտեղ իրականացուող աշխատանքներուն մասին:

– Դուք գտնուում էք հիմա հայ գրականութեան, հայ թատրոնի, հայ երաժշտութեան եւ հայ գեղարուեստի ամենէն մեծ հաւաքածոն ամբարած Գրականութեան եւ արուեստի թանգարանում, որը գործում է 1921-22 թուականներից եւ անցել է զարգացման փառապանծ ուղի, թանգարան, որ բովանդակում է մեր գրականութեան եւ արուեստի գործիչներու արխիւները՝ Սայաթ Նովայէն մինչեւ Թաղիադեան, Աբովեան, արեւմտահայ գրողները, Եղեռնի գոհ գրողները, մինչեւ սփիւռքահայ գրողները, այլեւ թատրոնի մեծերը՝ «մեծն» Պետրոս Աղամեանէն, Սիրանոյշէն, Աւետ Աւետեանէն մինչեւ Վահրամ Փափագեան, մինչեւ նորերը, հայ երաժշտութեան լաւագոյն ներկայացուցիչներէն՝ Տիգրան Զուլխաճեանէն մինչեւ «մեծն» Կոմիտաս, մինչեւ Առնօ Բարաջանեան, Արամ Խաչատուրեան...

Յետոյ պիտի տեղեկանամ Հ.Ս.Հանրազիտարանէն, թէ Գրականութեան թանգարանը կազմակերպուած է 1921-ին, Ե. Շահագիզի նախաձեռնութեամբ, սկսելով Ս. Նալբանդեանի, Ռ. Պատկանեանի եւ Ս. Շահագիզի արխիւներով: 1945-ին հիմնուած է Գրականութեան եւ արուեստի թանգարանը, ներառելով թէ գրականութեան եւ թէ թատերական թանգարանները, եւ 1967-էն ի վեր կը կրէ Եղիշէ Զարենցի անունը:

– Վերջին տարիներին թանգարանում ունեցանք նաեւ հայ կինոարուեստի բաժին, այստեղ է գտնուում հայ կինոարուեստի հիմնադիրներից մէկի՝ Համօ Բեգնազարեանի արխիւը եւ ժամանակակից բեմադրիչներու եւ դերասաններու արխիւները:

Մէկ խօսքով՝ թանգարանը կը ներկայացնէ հայ գրականութեան եւ արուեստի հիմնական ժառանգութիւնը, որ տարուէ տարի կը հարստանայ, յատկապէս Սփիւռքէն ստացուած նիւթերով:

– Ես կ'ուզեմ առիթից օգտուելով, ձեր միջոցաւ դիմել սփիւռքահայ մեր բարեկամներին, որպէսզի չփոշիանան Սփիւռքում մնացած արխիւները, դրանք բոլորը բերուեն, կուտակուեն

այստեղ, նրանք լինեն տպագիր թե՛ ձեռագիր գործեր, լուսանկարներ: Թանգարանը պահպանում է ամեն ինչ, որպեսզի այդ նիւթերի հիման վրայ ուսումնասիրուեն եւ յաջորդ սերունդներին ներկայացուեն մեր ազգի երախտաւորների թողօնները: Միայն այդպիսի հարուստ ժառանգութեամբ մենք կարող ենք փաստել մեր մշակոյթին ինքնութիւնը եւ միայն դրանով մենք կարող ենք պահպանել մեր վաղուայ գոյութիւնը:

Կուգեմ գիտնալ, թե՛ մասնաւոր դժուարութիւններ ունի՞ թանգարանը:

Հենրիկ Բախչինեան հարցումիս հետեւեալ ձեւով կը պատասխանէ՝ շա՛տ փափկանկատօրէն...

– Թանգարանը ժամանակին ուներ դժուարութիւններ, այնքանով, որքանով Հանրապետութիւնը ինքը գտնուում էր դժուարութիւններու մէջ, յատկապէս պահպանութեան իմաստով. սակայն այժմ հիմնական դժուարութիւնները յաղթահարուած են, փա՛ռք Աստուծոյ կայ ելեկտրականութիւն, կան եւ պահպանութեան համար անհրաժեշտ սարքաւորումներ, հիմա պետութիւնը ոտքի է կանգնում, մեզ տրամադրում է բաւական լաւ տեխնիկա՝ բոլոր իմաստներով:

Միւս կողմէն Բախչինեան դիտել կու տայ, որ թանգարանին տարածքը բաւական մեծ է, «սակայն մեր տարածքից աւելի մեծ է մեր ունեցած հարստութիւնը», եւ կը յուսայ, որ պետութիւնը այդ մասին ալ կը մտածէ:

– Թերեւս փոխադրուիք այլուր, աւելի մեծ շէնքի մը մէջ, առանձի՞նն...

– Թանգարանը արժանի է առանձին շէնք ունենալու, թէ՛ւ մենք գտնուում ենք Երեւանի սրտին վրայ, Հանրապետութեան հրապարակում, եւ մենք դժգոհ չենք մեր տեղից, ուղղակի մեր արխիւներն են դժգոհ..., քանի որ նրանք երբեմն նեղուում են, մանաւանդ , որ համալրուում են օրէցօր, տարեցտարի:

Թանգարանի տնօրէնը կը մատնանշէ նաեւ այլ դժուարութիւններու տեսակ մը, որ Հայաստանի ամբողջ հայ մտաւորականութեանն է. դա՛ աշխատավարձի ցածրութիւնն է, դա՛ սոցեալ- տնտեսական դժուարութիւններն են, որոնք ժամանակի պէտք ունին, որպէսզի շտկուին: «Մասնաւոր որեւէ դժգոհութիւն յայտնելու առայժմ որեւէ հիմք չունեմ»...

– Իսկ հեռանկարնե՞ր...

– Հեռանկարներում, ի հարկէ սպասում են ֆոնդերի նորանոր համալրումներ, նոր արխիւներ, եւ ի հարկէ թանգարանը պիտի համալրուի եւ յազեցուի նոր տեխնիկայով. աշխարհը հիմա աւելի առաջ է գնում նորագոյն տեխնոլոգիաներով, որոնք Հայաստան մուտք են գործում, բայց շատ դանդաղօրէն, եւ յոյս ունենք, որ մենք շուտով կ'ունենանք թանգարանային արդի պահանջներին համապատասխան նոր տեխնիկա, եւ դրանով, այն հարստութիւնը որ մեր բոլորին հարստութիւնն է՝ իսկապէս կը պահպանուի եղածը, կը վերանորոգուի փճացողը, եւ կը յանձնուի յաջորդ սերունդներին:

– Ապա Հենրիկ կը փութայ եւ իր կռնակը՝ պատերը գրեթէ ամբողջութեամբ ծածկած գրադարաններէն կը հանէ ու մեզի կը նուիրէ մէկ-երկու գիրք, ապա եւս մէկ-երկու գիրք, մինչեւ որ մեր՝ կնոջս ու իմ առջեւ կը գոյանայ գիրքերու ամբողջ դէզ մը: Յատկապէս հպարտ է խօսակիցս, իր հաստատութեան պտուղը հանդիսացող այս հրատարակութիւններով, որոնցմէ մի քանին իր իսկ որդւոյն՝ Արծուիի ուսումնասիրութիւններն են:

Ուրախութեամբ ցոյց կու տայ նաեւ, որ այդ գիրքերէն ոմանք արդէն մեսրոպեան, մեր դասակա՛ն ուղղագրութեամբ լոյս են տեսած:

– Կը տեսնեմ, որ ունիք հրատարակչական բեղուն գործունէութիւն ալ,– դիտել կու տամ:

Պատասխանը Արծուիէին կու գայ.

– Թանգարանային արժեքները պահպանելը մի գործ է, սակայն զանոնք հանրութեան մատչելի դարձնելը՝ մի այլ գործ: Այդ արժեքները չպետք է մնան եօթը կողպեքի տակ, այլ պետք է զանոնք հանրահռչակեցնել: Իսկ մեր ֆոնդերում (մեր եմ ասում չնայած ես այստեղ չեմ աշխատում, այլ հետազոտութիւններ եմ անում) կան իսկական զանձեր, որոնք պետք է լոյս աշխարհի գան, իսկ ի՞նչ տեսքով՝ գրքերի՝:

Եւ Արծուի կը վերցնէ մեզի նուիրում գիրքերէն մին ու կը շարունակէ իր խօսքը, հարազատ զուակ մը գրկած հօր մը խանդավառութեամբ.

– Ես ինքս մեծ բախտը, հաճոյքն եմ ունեցել կազմել մի գիրք, որի բնագիրը տարիներ շարունակ գտնուում էր փակի տակ կարծես. դա իշխանուհի Մարիամ Թումանեանի յուշերի եւ ինքնակենսագրութեան գիրքն էր, որ շատ հետաքրքիր էր: Նա իշխանուհի էր, խորհրդային տարիներին ընդունուած չէր խօսիլ նրա մասին, բայց ահա հիմա հնարաւորութիւն ունեցանք հրատարակել առանձին գիրքով, այդ շատ արժանաւոր տիկնոջ գիրքը. իշխանուհին ակտիւ մշակութային գործիչ էր, հովանաւորել է Յովհաննէս Թումանեանին եւ ուրիշ գրողներին:

– Արդեօք ազգականութիւն կա՞ Յովհաննէս Թումանեանի հետ:

– Ոչ, կապ չունէին, սակայն շատ մօտիկ էին:

Յետոյ, գիրքը կարդալով, պիտի տեղեկանանք, որ Թումանեանը սիրահարուած է եղած իշխանուհիին...

– Ուրիշ աշխատութիւններ ալ կան,– կը շարունակէ Արծուի,– վերջերս ինձ համար մեծ յայտնութիւն էր տեսնել բալետի առաջին հայազգի պարուհի Եւգենի Արիստակէսեանի յուշերը, եւ յոյսով ենք մի օր հովանաւորներ գտնել եւ դա էլ հրապարակել: Շատ հետաքրքիր կեանք է ունեցել այդ պարուհին, հանդիպել է աշխարհի տարբեր նշանաւոր մարդկանց հետ, ապրել է Պոլսում, Եգիպտոսում, Մոսկուայում եւ ներկայ է եղել Իզմիրի 22 թուականի աղէտին, այդ մասին է գրում, գաղութային կեանքի մասին, իր գաղութային գործունէութիւնից է գրում, շատ հետաքրքիր է: Մենք գրեթէ չգիտենք մեր անցեալի կեանքը, մշակութային, հասարակական, ինչպէ՞ս է եղել դա: Հիմա նման հրատարակութիւնների շնորհիւ կարող ենք իմանալ:

– Այսպէս կաւարտենք մեր այս առաջին այցելութիւնը Գրականութեան եւ արուեստի թանգարանը: Կը ժամադրուինք երկրորդ հանդիպման մը՝ Արծուի աշխատանքներուն շուրջ զրուցելու: Շտապ դուրս կու գանք, քանի ունինք ուրիշ կարելոր ժամադրութիւն մը այս կէտօրէ ետք:

Մեծ գիտնականին մտերմութեան մէջ

27 մայիս, երեքշաբթի, կէտօրէ ետք

Յովիկ եւ Թամարա Բաղդասարեաններուն հետ ժամադրուած ենք բոլորակ աղբիւրին մօտ՝ Գեղարուեստի ու Պատմութեան թանգարաններու շէնքին առջեւ: Ուրեմն դուրս կու գանք լոյն այդ համալիրի ետեւի կողմը գտնուող Գրականութեան եւ արուեստի թանգարանէն ու կը շտապենք հանդիպելու մեր արդէն հի՛ն ծանօթ ամուլին:

Յովիկին հետ մեր առաջին հանդիպումը, տարիներ առաջ, Քեպէզ քաղաքի մէջ էր եղած, երբ խումբով գացինք ծանօթանալու տեղւոյն հայերուն, մեծ մասամբ Հայաստանէն

եկած: Յովիկն ալ անոնցմէ էր, սակայն իր ստանձնած գործի աւարտին՝ վերադարձաւ հայրենիք, հո՛ւն տեսնելով իր տեղը եւ իր դերը որպէս հայ եւ որպէս գիտնական:

«Փիծձա տի Ռոմա» թերթի ճաշ մը, ու ահա կուղղուինք «Ֆիզիկայի ինստիտուտ»-ը (Բնագիտութեան հիմնարկը), ուր Յովիկ մեզի համար ժամադրութիւն առած է Աշոտ Չիլինգարեանի հետ: Յովիկ միշտ գովեստով խօսած է մեզի իր այս ընկերոջ մասին, որ Հայաստանի ամենէն կարեւոր գիտնականներէն մէկն է:

Աջափնեակ քաղաքամասին մէջ, ծառաշատ հողաշերտի մը վրայ, շրջապատի աղմուկէն մեկուսացած, վանքի նման վայր մըն է Երեւանի համալսարանին կապուած այս հիմնարկը, որուն փոխանօրէնն է դոկտ. Չիլինգարեան, ու միաժամանակ տնօրէնը անոր Տիեզերական ճառագայթներու բաժնին:

Եւ ահա, առանց ձեւակերպութիւններու, արդէն տեղաւորուած ենք իր գրասենեակին մէջ ու սկսած գրուցել: Պարզ, անմիջական ու հաղորդական ու այնքա՛ն համեստ անձ մըն է մեր խօսակիցը:

– Խնդրեմ, քանի մը բառով մեզի ըսէք, թէ ի՛նչ է այս հիմնարկի առաքելութիւնը, – հարց կու տամ իրեն:



Աշոտ Չիլինգարեան

– Այս ինստիտուտը ունի հինգ բաժանմունք, սկսած արագացուցչային ֆիզիկայից, տնտեսական ֆիզիկայից, կիրառական ֆիզիկայից: Մեր բաժանմունքը կոչուում է Տիեզերական ճառագայթների բաժին, որը առաջինն էր Ինստիտուտում, եւ որից Ինստիտուտը սկսուեց 42 թուից, էն հետո ժամանակները, երբ Ալիխանեան եղբայրները ձեռնարկեցին առաջին գիտարշարը Արագած: Եւ այդ սկզբնական տարիներին տարրական մասնիկների հետազոտումը միայն կոսմիկական ճառագայթներում էր տեղի ունենում, որովհետեւ մարդու սարքած արագացուցիչները չկային, եւ առաջին մասնիկները հետազոտուել են եւ նկարուել են տիեզերական ֆիզիկայում, որտեղ Արտեմ եւ Աբրահամ Ալիխանեան եղբայրներն ունէին շատ հետաքրքիր սարքեր, որոնք մինչեւ հիմա Արագածում դուք կարող էք տեսնել:

Այստեղ նշեմ փակագիծի մէջ, թէ Տիեզերական ճառագայթներու Արագած գիտահետազոտական կայանը, որու աշխատանքները սկսած են 1942 թուականին, կը գտնուի 3200 մ բարձրութեան վրայ, Քարի լիճին եզերքը: ՏՃ Նոր-Ամբերդ գիտահետազոտական կայանն ալ սկսած է գործել 1960 թուականին ու կը գտնուի ծովու

մակերեսէն 2000 մ բարձրութեան վրայ, ոչ շատ հեռու Ամբերդի պատմական յուշարձաններէն: Այս տեղեկութիւնները կը քաղեմ Աշոտ Չիլինգարեանի տուած գրքոյկներէն: Ան կը շարունակէ.

– Վաթսուն տարուայ ընթացքում ի հարկէ շատ բաներ տեղի ունեցան ե՛ւ տիեզերական ֆիզիկայում, ե՛ւ արագացուցչային ֆիզիկայում:

Եւ գիտնականը մանրամասն կը բացատրէ թէ այսօր ինչպէ՛ս «մենք արդէն տեսնում ենք ո՛նց է սկսուել տիեզերքը, տեսնում ենք 13 միլիարդ տարի առաջ արձակուած առաջին աստղերի լոյսը, եւ արդէն մօտիկ ենք լրիւ հասկանալու սկիզբը եւ զարգացումը մեր տիեզերքին»:

– Եւ Հայաստանը այս աշխատանքին մասնակի՛ց է՝ աշխարհի յառաջացած երկիրներու հետ:

– Այո, ես կարող եմ ասել, չնայած Հայաստանը փոքր երկիր է, եւ չնայած մեր ֆինանսատրոււմը այդքան էլ մեծ չի, բայց աստղագիտութիւնը եղել է շատ ուժեղ Հայաստանում, եւ մենք փորձել ենք տրադիցիաները պահպանել: Դուք երեւի գիտէք, Վիկտոր Համբարձումեանի ստեղծած դիտարանին մասին, Արտեմ Ալիխանեանի ստեղծած Արագածի կայանին մասին: Ի դէպ այս տարի երկուսն էլ պիտի ըլլային 100 տարեկան, մենք այդ տարելիցները ուզում ենք նշել,– մեծ հայեր էին, մեծ գիտնականներ: Մինչդեռ հիմա մենք մեծ մարդկանց պակաս ենք զգում ե՛ւ քաղաքականութեան մէջ, ե՛ւ գիտութեան մէջ, ե՛ւ արուեստի մէջ:

– Ես ծանօթ եմ Գուրգադեանին, ան ալ այս ասպարէզին մէջն էր:

– Այո, հիմա Գարգադեանը ակտիւ չի աշխատում, բայց նրա ներդրումը շատ մեծ է կամմա աստղադիտակները սարքելու գործին մէջ: Նա Սովետական միութեան շատ մեծ գիտնականներից էր:

– Դու՞ք երբ միացաք այս հաստատութեան:

– Ես Երեւանի պետական համալսարանը ավարտելուց յետոյ՝ 71 թուականին, աշխատել եմ միայն եւ միայն Երեւանի Ֆիզիկայի ինստիտուտում, Տիեզերական ճառագայթների բաժանմունքում (ՏՃԲ): Ի հարկէ մի երկու ամիս բացակայել եմ, տարբեր կենտրոններում աշխատանք եմ կատարել, զբաղել եմ եւ Ամերիկայում: 92 թուականից ղեկավարել եմ ՏՃԲ-ը, եւ չնայած ծանր դրութեանը գիտութեանը եւ ընդհանրապէս մեր հանրապետութեան մէջ, մենք մեր աշխատակիցներին հետ յաջողել ենք յառաջ տանել գիտութիւնը, նոր ուղղութիւն ենք բացել, եւ ես կարող եմ հիմա հպարտօրէն ասել, որ մենք առաջատար դիրքեր ունենք աշխարհում մի շատ կարելուր եւ բուն զարգացող ուղղութեան մէջ,– դա՛ տիեզերական եղանակի հետազոտումն է, Space Weather Research: Մեր քաղաքակրթութիւնը աւելի եւ աւելի կախում ունի տիեզերքի վրայ հիմնուած տեխնոլոգիաներից

– Քիչ առաջ կը խօսէինք երիտասարդներու մասին, ո՞ր են մեր երիտասարդները այսօր գիտական մարզերուն մէջ, ի՞նչ կընեն, ի՞նչ կրնան ընել:

– Շատ ցաւոտ հարց է, որովհետեւ երիտասարդները գերադասում են ուսումը շարունակել արտասահմանում, որտեղ կարող են աւելի ժամանակակից սարքաւորումներով եւ մեթոտներով աշխատել, եւ մենք կորցրել ենք այս տարիներուն շատ մեծ քանակով երիտասարդներ, որոնք PhD ուսանողներ են, որոնք չեն վերադարձել արտասահմանից: Ահա այդ պատճառաւ մեր Տիեզերական ճառագայթների բաժանմունքում հիմնական նպատակներէն մէկն է ստեղծել պայմաններ, որ երիտասարդները մնան ու աշխատեն այստեղ, Հայաստանում:

Մեր կեդրոնը օժտուած է բոլոր սարքաւորումներով եւ մեթոտներով, ելեկտրոնիկայով եւ կոմպիւտրներով, եւ մենք չենք զիջում ոչ մի ամերիկեան կամ եւրոպական կենտրոնի, դրա պատճառով երիտասարդներ գալիս են մեր մօտ:

Ես դասաւանդում եմ Երեւանի պետական համալսարանում, մենք այստեղ մեր շէնքում սարքել ենք կենտրոն ուսուցման, ունինք լաբորատորիաներ եւ տուեալներ մշակման եւ փորձառական ֆիզիկայի եւ ելեկտրոնիկայի, եւ ինչ որ կարելու է՝ ուսանողը ոչ միայն տեսական գիտելիքներ է ստանում, այլեւ կարողանում է մասնակցել սարքերի հաւաքման եւ սարքերի ստեղծման բոլոր փուլերին:

Յառաջացնում ենք մի սարք, որ մի մասն է համաշխարհային սարքին, որ մենք ստեղծում ենք, հիմք ունենալով այն սարքաւորումները որ մենք այստեղ զարգացուցել ենք: Մենք ենք արտադրում ելեկտրոնիկան, հաշուիչ սարքերը, կոմպուտրային [համակարգչային] սարքաւորումները, – այդ լրիւ սարքը, որ մենք կը դնենք այս տարի Բուլղարիայում, Խրուաթիայում, թերեւս նաեւ Կոստա Ռիկայում, – այսինքն պահանջարկը շատ է այդ սարքերի, եւ դա կը լինի աւելի նոր, լաւ սարք տիեզերական եղանակը կանխատեսելու եւ ուսումնասիրելու համար:

– Ուրիշ ի՞նչ հեռանկարներ ունիք այս գործին մեջ:

– Հեռանկարներն այն են, որ մենք շատ լաւ հասկանանք արեգակնային եւ երկրային կապերը: Այդ ֆիզիկան սկսուել է 30-40 տարի առաջ, երբոր առաջին արբանեակներից մենք տեսանք ինչ է տեղի ունենում արեգակում: Այդ ճառագայթումները, գամմա ճառագայթումը եւ ռենտգենեան ճառագայթումը դեռ չենք կարող անցնել մթնոլորտից եւ միայն դրսից մենք կարող ենք տեսնել ի՞նչ է տեղի ունենում արեգակում, ո՞նց են արագանում այդ մասնիկները մինչեւ շատ մեծ էներգիաներ, որ մենք տեսնենք, հասկանանք՝ հասկանանք այդ հոսքը որ գալիս է տիեզերքից երկրագունդ, ռենտգենով, որ երբոր արագանում է շատ մեծ, ամենահզօր պայթումներում, ոնց որ մենք ենթադրում ենք գերնոր աստղերի պայթումներում. մենք օգտագործելով արեգակը որպէս մեր լաբորատորիան եւ ֆիզիկան՝ է՛լ աւելի լաւ կը հասկանանք այդ բոլորը:

Հիմնականում ի հարկէ մենք ուզում ենք հասկանալ այդ ֆիզիկան, պատկերացում ունենանք եւ տեսնենք որ ի՞նչ է տեղի ունենում, ոնց են այդ մասնիկները հասնում, ոնց են արագանում այդ հզօր ամպերը փլասմայի որոնք դուրս են մղում արեգակից եւ հասնում են երկրագունդ եւ ոնց են փոխազդում մագնիսական դաշտի վրայ, ինչ հետեւանքներ ունեն: Այդ հիմնական գիտութիւն է. իսկ կիրառական կողմը այն է, որ մենք ուզում ենք ստեղծել համակարգ, սերվիս, որ կանխատեսենք, զգուշացնենք այդ բոլորին կապակցաբար, որոնք շատ վտանգաւոր են արբանեակների եւ մարդկանց համար տիեզերքում:

– Իսկ արեգակնային դրութենէն դուրս ալ նման ազդեցութիւններ չկա՞ն մեր վրայ:

– Ես միշտ ասում եմ, որ մենք մի մասն ենք տիեզերքի: Մի հետաքրքիր օրինակ եմ բերում. 50 հազար լուսային տարի մեզնից հեռաւորութեան վրայ կայ մի միաւոր մեր գալակտիկայում [համաստեղութիւնում], նիւտրոնային աստղ է կոչւում եւ ունի 12 կիլոմետր շառաւիղ, փոքր աստղ է, Մոնթրէլի չափ երեւի, եւ 2004 թուականին, այնտեղ եղաւ ցնցում շատ ուժեղ, եւ գամմա ճառագայթումի շատ ուժեղ հոսք գնաց եւ սփռուեց մեր գալակտիկայում, եւ նա այդքան ուժեղ էր, որ մակրօ էֆֆեկտ ստեղծեց երկրագնդի վրայ, իսթարելով FM ռադիոյի հաղորդումներ որոշ ժամանակում: Պատկերացնո՞ւմ էք, դա ի՞նչ է նշանակում եւ կարող են ի հարկէ լինել ուրիշ այդ ձեւի բաներ:

Մենք միայն մի մասն ենք տիեզերքին եւ մենք այդ պիտի չմոռանանք: Տիեզերքը ազդում է մեր առօրեայ կեանքին վրայ: Իսկ ձեր հարցին պատասխանը կլուպալ

[երկրագնդային] տաքացման մասին, ի հարկէ մարդիկ ազդում են, մարդիկ սկսել են շատ մեծ ազդեցութիւն թողնել արեգակնային դրութեան վրայ. այդ կայ, եւ ոչ ոք չի կրնար ժխտել, բայց բացի մարդկանց ազդեցութիւնից, կայ աւելի ուժեղ ազդեցութիւն՝ դա արեգակի ազդեցութիւնն է, եւ դեռ մենք պիտի անջատենք մէկը միւսից: Հնարաւոր է, որ այս տաքացման 50 տոկոսը կամ 70 տոկոսը գալիս է այս արեգակի սիկլըներից, արեգակի փոփոխութիւններից, եւ միայն 30 տոկոսը մարդու ազդեցութիւնից: Դա շատ բարդ հարց է, բայց դա հետազոտութեան այլ ոլորտ է, որ սկսուել է արդէն...

Զրոյցէն ետք Դոկտ. Աշոտ Զիլինգարեան կ'ընկերանայ մեզի՝ ցոյց տալով Բնագիտութեան հիմնարկին դասարանները, աշխատանոցները՝ ուր ճառագայթներ ստացող ու վերլուծող սարքեր են, եւ որոնց քով, պահակի պէս, նուիրեալ այլ գիտնականներ եւ ուսանողներ կը գործեն. (ՏՃԲ- ի անձնակազմը կը բաղկանայ շուրջ 100 աշխատակիցներէ):

Դուրս կու գանք իր քովէն՝ մտածումներով ծանրաբեռն: «Մարդկային ի՛նչ հարստութիւն կայ այստեղ, մեր երկրին մէջ», – կ'անցնի մտքէս: Եւ ի՛նչ նեղ պայմաններ, որոնց մէջ կոչուած են աշխատելու անոնք: Ինչքա՛ն աւելի բարեկարգ միջավայրի մը ու աշխատատեղերու արժանի են անոնք:

Ծառերուն ու թուփերուն մէջ կորսուած՝ Ալիխանեանի կիսանդրին է այնտեղ, ու քիչ անդին Արթոյի «Արուս»ը՝ հայկական արագացուցիչին ռուսերէն համառօտագրուած անունը, որ Ալիխանեան ի՛նք տուած է անոր՝ վերածելով զայն մեզի ծանօթ այդ իգական անունին, – աւելի քան մարդահասակ՝ երիտասարդ հայուհիի մը դէմքը՝ քանդակուած տուֆ քարէ արձանի մը երկու երեսներուն վրայ:

Օրը՝ հայաստանեան այս օրը եւս, դրոշմուած պիտի մնայ մեր յիշողութեան մէջ:



Արթոյի «Արուս»-ը

Անկրկնելի 90-ամեակը

28 մայիս, չորեքշաբթի

Ահա վերջապէս Օրը, որուն համար Հայաստան ենք եկած այս անգամ, Օրը՝ գոր ուզեցինք մեր երկրին մէջ ապրիլ:

Սակայն, թէ այս օրը ինչպէ՞ս պիտի անցընէինք, – Մարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսէի դիւցազնամարտերուն եւ Հայաստանի Հանրապետութեան գոյաւման 90-ամեակը ինչպէ՞ս պիտի տօնէինք, – տակաւին մինչեւ երէկ յստակ չէր մեզի համար: Թէեւ ընկերս խոստացած էր զիս տեղեակ պահել, սակայն չէր կրցած: Ի վերջոյ գիտցանք, որ ՀՅԴ Երեւանի մարզային կոմիտէն Անի հիւրանոցին առջեւէն, իսկ Գերագոյն մարմինը՝ իր կեդրոնին առջեւէն օթոպիւս կը հանեն՝ ընկերները տանելու համար Մարդարապատ:

Գերագոյն մարմինի շէնքը մեր հիւրանոցէն շատ հեռու չէ, Հանրապետութեան փողոցի վրայ, ուստի տուեալ ժամուն՝ առաւօտեան 8:30-ին հոս ենք. ներկա՛յ: Առաջին հասնողներն ենք... փոքր չափի մարդատար մըն է, բաւարար՝ 10-12 հոգինոց մեր խմբակին համար, որ պիտի կազմուի հետզհետէ ժամանող մեր ընկերներէն: Նախորդ օրերուն տեղի ունեցած՝ ՀՅԴ Ընդհ. ժողովի մասնակիցներ են՝ Սուրիայէն, Աւստրալիայէն, Կիպրոսէն, Իրանէն, Պուլկարիայէն: Նաեւ Հայաստանէն: «Երկիր» թերթի լրագրող ընկ. Սեւակն ալ մեզի հետ է: Նախաձեռնութեան ոգի ունի. անմիջապէս փոքր հարցազրոյցներ կը կատարէ ներկաներուն հետ՝ օգտուելով առիթէն:

– Ինձի համար Մայիս 28-ը իմ ստացած դաստիարակութեան խորհրդանի՛շն է,– կ'ըսեմ՝ ի պատասխան իր հարցումներուն,– եւ Մայիս 28-ը իմ սեփական տօնը կը համարեմ, քանի որ անունս ալ անոր կապակցաբար է դրուած...

– Ես կը կարծեմ, որ Սփիւռքը գոյատեւեց, որովհետեւ կրցաւ Մայիս 28-ի խորհուրդով ապրիլ,– կաւելցնէ կինս՝ Նազիկ. – Հայրենիքէն դուրս՝ այս օրուան օրինակով մենք մեզ պէտք է դրսեւորենք:



Երկա՛ր օր մը կայ մեր առջեւ, ու մենք յանձնուած ենք մեր վարորդին, ու կազմակերպիչ մարմինի տնօրինումներուն:

Առաջին հանգրուանը Արամ Մանուկեանին յարգանքի տուրքն է՝ իր շիրիմը այցելութեամբ, Թոխմախի գերեզմանատունը: Պայծառ առաւօտ է, ուրիշ շատ ընկերներ ալ եկած են, ու բազմաթիւ պատանիներ, երիտասարդներ ստեղծած են եռագոյն դրօշներու անտառակ մը: Տպաւորիչ է: Արամը, որ մենք իբրեւ Հայաստանի Հանրապետութեան հիմնադիրը կ'ընդունինք, անշուք անկիւն մը թաղուած է, ուր այլ գերեզմաններու ընդմէջէն անցնելով կը հասնիս: Մակայն շատ գեղեցիկ, ընտիր խաչքար մը կայ վրան իբրեւ շիրմաքար. Յետոյ կը տեղեկանամ, թէ ան գետեղուած է Վարազ Առաքելեանի ճիգերով: Կը մտածես,

համայնավարութեան օրով այդպէս անտեսուած, նոյնիսկ իր յիշատակն ալ հալածանքի ենթարկուած մնաց Արամ Մանուկեան, իսկ հիմա՞ ինչո՞ւ պարտն ու պատշաճը չի տնօրինուիր՝ կարելոր ուխտատեղիի վերածելու համար անոր դամբանը: Եւ չզարմանա՞ս, երբ անոր կողքին կամ այլուր, մերօրեայ հանգուցեալ դաշնակցական կամ այլ կուսակցութեանց անդամ ղեկավար դէմքերու կը յատկացուի տասնապատիկ աւելի լայն տեղ՝ շքեղ գերեզմաններով...

Բայց պէտք է աճապարել, խումբը կը շարժի, ու մեր յաջորդ կայանը Սարդարապատն է:

Ներքնապէս միշտ հաւատացած էինք, որ պիտի գա՛ր այս օրը, ու մենք Մայիս 28-ը պիտի նշէինք հայրենի երկնքին տակ, սակայն որո՞ւ մտքէն կ'անցնէր, որ այդ պիտի պատահի մեր կենդանութեան օրով, ու մենք անձա՛մբ այդ բախտին պիտի արժանանանք:

Կամ անելի ճիշտ՝ պիտի խլենք մեզի ներկայացող այս առիթը ու հազարաւոր քիլոմէթրներ պիտի կտրենք այր ու կին՝ այստեղ Արամ Մանուկեանի շիրիմը ապրելու համար այս պահը, պատմակա՛ն պահը:

Մակայն... ո՞ր են մեր գաղափարակից ընկերները, համակիրները եւ հայութիւնը ամբողջ...

Օթոպիւսները մեր ետին ձգած, կը քալենք դէպի Յուշարձանը, որուն զանգակատուն-աշտարակը մագնիսի պէս մեզ իրեն կը քաշէ: Երեւոյ՞ Է. Օիճեռնակաբերդ ուխտագնացութեան նման, հայրենաբնակ մեր ժողովուրդը կու գայ շարք առ շարք իր տուրքը վճարելու Մայիս 28-ը կերտողներու յիշատակին: Մեր ընկերներն ալ հոս են, անոնք որոնք Ընդհ. ժողովի էին եկած նախօրէին: Բայց Սփիւռքը բացակայ է, բացի մեզի պէս ավի մը խենթերէ... ավստ՛ւ:

Կը ջանանք մեր խումբի անդամներուն հետ մնալ, սակայն հսկայ բազմութեան մէջ՝ չենք յաջողիր: Յուլերուն առջեւի հրապարակի եզերքը, մէկ անկիւնը, ծառերու քով բաց տեղ մը կը նկատենք ու «կը գրաւենք»՝ հետեւիլ կարենալու համար սկսելիք հանդիսութեան: Մինչ այդ բարձրախօսէն օրուան իմաստը կը բացատրուի: Ինչպէս երէկ՝ հեռատեսիլի կայաններէն, նոյնպէս այսօր պատշաճ ու ճիշտ կերպով կը ներկայացուի Մայիս 28-ի խորհուրդը: Գուցէ տակաւին անհրաժեշտ շեշտը չի դրուիր Դաշնակցութեան, դաշնակցական ղեկավարներու եւ մարտիկներու դերակատարութեան վրայ, սակայն կա՞յ ասոր կարիքը: Թերեւս այսպէս անելի լաւ է...

Նախագահին խօսքը այստեղ, ինչպէս երէկ՝ մամուլով, նոյնպէս պատշաճ է, հաւասարակշռուած, ազգաշո՛ւնչ:

Մի քանի խօսքեր պիտի յաջորդեն իրարու, ապա երեք ինքնաթիռներ ցածէն, զուգահեռ՝ պիտի անցնին մեր գլխավերեւէն ու երեք գոյն մուխի շղթայ պիտի ձգեն իրենց ետին, որմէ ետք ուղղաթիռները պիտի գան, շատ բարձրէն, ու չորս անկարգելորդներ, մէկը եռագոյն հսկայ դրօշով մը, միւսներն ալ մեր երեք գոյներով՝ դանդաղ, ոլոր-մոլոր էջք մը պիտի գործեն նոյն այս հրապարակին վրայ՝ արժանանալով ծափահարութիւններու: Մա «շոու»ի բաժինն է...



Յետոյ՝ սպասուած մեծ պահն է. հայկական բանակի զանազան վաշտերու կամ գումարտակներու տողանցքը, փողերային ու հարուածային նուագախումբերու առաջնորդութեամբ: Խումբ առ խումբ ճամբայ պիտի ելլեն աջէն, բարեւի կանգնին պատուոյ հիւրերուն առջեւ, ապա շարունակեն հրապարակը դառնալ, անցնիլ մեր ալ առջեւէն ու վերադառնալ ուրկէ որ սկսած էին:

Ասկէ անդին Հայաստանի նախագահը, նախկին նախագահը, Ամենայն հայոց կաթողիկոսը, պետական դէմքեր, կուսակցական ներկայացուցիչներ եւ այլ պաշտօնական անձնատրութիւններ կ'առաջնորդուին դէպի արծիւներուն առջեւ երկարող տարածքը, ուր ՀՀ իրաքանչիւր մարզ իր սեղանն է շտկած ու այցելուները կը պատուէ իրեն յատուկ քաղցրաւենիքով ու օշարակներով: Յետոյ ալ նախատեսուած է գեղարուեստական ելոյթ, որ սակայն կրնայ եւ տեղի չունենալ, քանի որ երէկ, փորձի ժամանակ, պարող պատանուհիներէն մէկը մահացած է երբոր ժամանակաւոր բեմը տեղի տուած է ու փուլ եկած:



Բաշ-Ապարանի յուշարձանը՝ իր բնական միջավայրին մէջ

Մենք կը բարձրանանք մինչեւ զանգակատան ստորոտը, ուր «կրտսեր»ները (cadets) շարուած էին, կ'երեւի երգելու համար, սակայն աւելի չենք յամենար, քանի որ պէտք է վերադառնանք ինչպէս պատուիրուած էր մեզի՝ Բաշ-Ապարան երթալու համար:

Երբ քալելով կընթանանք դէպի մեր օթոպիւսը, կը տեսնենք նոր հասնող ցանցառ խումբեր, որոնք պաստառներ բռնած կը յառաջանան դէպի յուշարձանը, վանկարկելով նախկին՝ առաջին նախագահին անունը: Ծիծաղի՞ նք, թէ՞ լանք...

Յաջորդ հանգրուանը, ուրեմն, Բաշ-Ապարանն է, երկրորդ վայրը մայիսեան հերոսամարտերուն: Երրորդը՝ Ղարաքիլիսան, մեր յայտագրին վրայ չէ, դժբախտաբար:

Այստեղի բազմութիւնը, որ շարք առ շարք կը ժամանէ՝ «մենք» ենք եւ «մերոնք», այսինքն մեր ընկերական շրջանակն է ու համակիրները: Կուսակցական նախաձեռնութիւն մը՝ մի քանի երեսներով:

Մարդատարները կը մնան բարձունքի ստորոտին, ու մնացեալ ճանապարհը ոտքով պիտի բարձրանանք, սալայատակուած, մաքուր առահետ է, սակայն ամեն մարդ չէ, որ աչքը կառնէ մինչեւ վեր ելլել:

«Վեր»ը՝ Բաշ-Ապարանի յուշարձանն է, եւ անոր կողքին, աւելի վեր ու դէպի ձախ՝ Դրոյի գերեզմանը, որուն շուրջ պիտի գործադրուի օրուան յայտագիրը:


Բոլորս հոս ենք, հին ու նոր ծանօթներ, հարազատ, գաղափարակից ընկերներ: Երկինքը արեւոտ է, տրամադրութիւնները բարձր:

Յատուկ զգացում մը կը պատէ զիս, եւ հաւանաբար ընկերներուս մեծ մասը: Այնպէս կը զգամ, որ ես ալ մասնակցեր եմ 90 տարի առաջ այստեղ տեղի ունեցած մարտերուն եւ այժմ կը վայելեմ յաղթանակի ուրախութիւնը: Կրկնակի՝ յաղթանակի, քանի որ Մայիս 28-ի խորհուրդը դիմացաւ ժամանակի բոլոր վերիվայրումներուն, կաշկանդումներուն, արգելքներուն եւ Հայաստանի վերանկախացման հետ վերագտաւ իր արժանի տեղը մեր ժողովուրդի սրտին ու պատմութեան մէջ:

Ընկերները հետզհետէ կը հաւաքուին Դրոյի բրգանման շիրիմին շուրջ, եւ Պուլկարիոյ մեր ընկ. Սահակը, զինուած լուսանկարչական մասնագիտական (այսինքն խոշոր) սարքով մը (խցիկով մը, եթէ կ'ուզէք camera-ն թարգմանել) մեզ կը լուսանկարէ առանձին, խումբ առ խումբ, ինչպէս որ կ'ուզենք:

Պաշտօնական խօսքեր պիտի ըլլան, երդման արարողութիւն՝ պատանիներու, որոնք երիտասարդական միութիւն պիտի անցնին եւ երիտասարդներու, որոնք կուսակցութեան շարքերը պիտի անցնին, Դրոյի գերեզմանի՝ ն առջեւ: Խորհուրդը մեծ է, չէ՛:

Պիտի ըլլայ նաեւ պարգեւատրութիւն, ինչ որ շատ հազուագիւտ (եւ ուշացած) դէպք մըն է մեր պատմութեան մէջ, մեր՝ կուսակցութեան, այլեւ հայութեան: Պարգեւատրում մարզի մը մէջ, ուր մեծարանքը միշտ յետմահու եղած է, եթէ եղած է: Այս անգամ բացառութիւնը այն է, որ պիտի պարգեւատրուին ՀՅԴ Շուշի գումարտակի անդամները,– այն գումարտակին, որ 1992 մայիս 9-ին յաջողեցաւ անակնկալի բերել թշնամին ու ազատագրել Շուշին: Պարգեւատրողը՝ Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետութեան նախագահն է՝ Բակո Սահակեանը (որ ներկայ չէ, սակայն, քանի որ ինքն ալ պաշտօնական անձնաւորութիւններէն մէկն էր ի Սարդարապատ):



Ժամանակը կը սահի, օդն ալ կը ցրտէ, ու շարժելու պահն է: Ընկերները հրաւիրուած են ընկերական խրախճանք-ընթրիքի մը, բացօթեայ, հայրենի լեռներուն մէջ, մօտակայ Ջրամբար լճակէն ոչ շատ հեռու բարձունքի մը վրայ:

Մի քանի փորձէ ետք կը յաջողինք մտնել «զինուորական» հսկողութեան տակ գտնուած դարպասէ մը ներս ու քիչ անդին կանգ առնել քառանկիւն, միայարկ շէնքի մը առջեւ:

Դուրսը սեղան շարուած է, «Ս» տառին ձեռով, եւ համադամ խորտիկներ, քանջարեղէններ եւ այլն դրուած են սեղաններուն: Խորովածներն ալ պնակ առ պնակ կը մատուցուին:

Ուրիշներ հասած են մեզմէ առաջ, եւ ոմանց, յատկապէս տարեց ընկերներու քէֆին քէֆ չկայ: Արդէն սկսած են բարձրադաղակ հնչեցնել ազգային-յեղափոխական երգեր... Սակայն...

Մէկ կողմէ անձրեւը կը սկսի տեղալ, հետզհետէ սաստկանալով, միւս կողմէ հանգստանալու որեւէ յարմարութիւն չկայ, եւ եթէ այրերը կրնան ձեռով մը ծառերու ետեւ անցնիլ, կիները դժուարութեան կը մատնուին: Կը համոզենք գոնէ մեր վարորդը, որ ժամ առաջ Երեւան վերադառնանք, եւ սեղանները արագ կը լքուին... Ի՛նչ խրախճանք:

Ի՛նչ կարեւորութիւն, սակայն : Օրուան տուած հոգեկան սնունդը մեզ պիտի բաւարարէ երկար ժամանակի համար...

Բնօրինակը, պատճէնը, սատանան եւ ճրագները - SOS!

29 մայիս 2008, հինգշաբթի

Ահա ուրիշ լեցուն օր մը Երեւանի մէջ՝ հանդիպումներու երկար ցուցակով մը, որուն գլուխը Դանիէլ Երաժիշտն է, բուն անունով Գրիգոր Դանիէլեան. իր հետ առաջին ծանօթութիւնս կայացաւ տարի մը առաջ, երբ երաժշտական համերգի մը զինք կը տեսնէի հանդիսավարի դերին մէջ: Անկէ առաջ Հայ արուեստ պարբերականին մէջ հանդիպեր էի իր անունին, իբր խմբագրական խորհուրդի անդամի եւ գրողի, ու անդրադարձեր, որ ըսելիք ունեցող մտաւորական մըն էր:

Բարձրահասակ ու նիհար, երկար մազերով՝ քիչ մը ճգնաւորի երեւոյթով, մշտաբայտ, զուարթախոհ ու կատակասէր, այլեւ սրաչ բայց անաչառ՝ անխնայ յ քննադատ, Գրիգոր առաջին պահէն կրնայ առինքնել խօսակիցը: Մենք մտերիմներ դարձանք քանի մը վայրկեանի մէջ: 2007-ին ժամանակը չներեց, որ հարցազրոյց մը ունենամ իր հետ, սակայն այս անգամ Երեւան հասնելուս պէս ապահովեցի մեր այս հանդիպումը:

Բայց կարելի չէ գրել մեր հանդիպումին մասին առանց գէթ հպանցիկ ներկայացնելու զրուցակիցս, որ ծնած է 1946-ին, վկայուած է նախ Երեւանի Կոմիտասի անուան պետական երաժշտանոցէն, ապա Մոսկուայի Չայքովսկիի անուան երաժշտանոցէն: Հայաստանի երաժշտական կեանքին մէջ այլազան ձեւերով իր մեծ ներդրումը բերած է ու կը բերէ՝ յատկապէս իբր խմբավար, յօրինող, մշակող, արուեստի քննադատ, հրապարակագիր եւ հեղինակ:

Իրաւամբ, դիտել կու տար Տիգրան Մանսուրեան 1988-ին՝ «Դանիէլեանի գործունէութիւնը մեր արուեստի մասն է կազմում, եւ արժանի կերպով է ներկայացնում մեր մշակոյթի մարգարիտներից մէկը՝ հնագոյն հայկական երգը»:

Գրիգոր եկաւ պանդոկ ու միասին ուղղուեցանք դէպի հարցազրոյցի կամ հանդիպումի նախասիրած անկիւնս՝ «Արուեստի կամուրջ» (որքա՛ն դիպուկ անունով) արդէն ձեզի ծանօթ ճաշարանը, ուր գաւաթ մը սուրճի շուրջ տեղի ունեցաւ մեր խօսակցութիւնը:

– Միրելի Գրիգոր, կուզեի, որ ըսես ինձի՝ ինչպե՞ս դուն դարձար այն անձը, որ ես: Ի՞նչ ազդակներ նպաստեցին քու այս ազգային մտահոգություններուդ ձեւաւորման: Քու մանկութեանդ, ուսմանդ կամ փորձառութիւններուդ մէջ ի՞նչը ազդեց որ ըլլաս այն ինչ որ եղար:


– Իմ ծնողները ամենապարզ մարդիկ են եղել, մայրս ինքնուս դերասանուհի էր, հայրս ինքնուս երաժիշտ: Առնչութիւն ունէին արուեստին՝ թատրոն, կինօ: Մենք ապրում էինք Ղափանում, թէեւ ես ծնուել եմ Երեւան: Ասեմ, որ էդ երաժշտական հակումները, հօրս եւ մօրս սերը դէպի թատրոնը, նաեւ հիւրերը, որ գալիս էին մեր տուն... [բնականաբար խմորում էին մեզ]. ինձ տուել էին երաժշտական դպրոց մը,– մենք եօթը երեխայ էինք, հինգը գնացել են [երաժշտական դպրոց] բայց երեքս աւելի պրոֆեսիոնալ [մասնագիտական] գծով շարունակեցինք: Ես ջութակ էի նուագում, քոյրս դաշնամուր եւ այլն:

Ղափանում միակ տեղը թատրոնն էր, որ պատանի ժամանակ ունէինք: Թատրոնը տարօրինակ ձեւով էր վերածնուել,– [թատրոն] կար, քաղաքային թատրոն, բայց այդ 56-57 թուականներին, Երեւանից մի խումբ թատերական շրջանաւարտներ ուղարկեցին. մի ամբողջ դասարան մեծամասնութեամբ եկան Ղափան ու օգնեցին տեղի ուժերին: Նրանց մէջ էին Երուանդ Ղազանճեան, Գալիա Նովենց, Գուժ Մանուկեան: Եւ մարդիկ մի մեծ եղանակ ստեղծեցին, մթնոլորտ: Ես էլ հօրս օգնական էի, թատրոնում ելեկտրականութիւնը, լոյսերը հայրս էր տնօրինում:

Ինձ թուում է իմ վրաս խոր ազդեցութիւն են ձգել թատրոնը, երաժշտական դպրոցը, յետոյ ռադիոն. ռադիոն շատ էր տալիս Կոմիտաս եւ Թաթուլ Ալթունեանի խումբի երաժշտութիւնը, եւ Վաղարշակ Սահակեան, որ Սայաթ-Նովայի անուան անսամբլ [համոյթ] էր ղեկավարում: Սրանք են իմ մանկական տպաւորութիւնները: Այդ ժողովրդական, ազգային արուեստի մթնոլորտում է... ինձ թուում է դա է սարքել ինձ այդպիսին, ընդմիջտ կապել ինձ գեղեցիկին, ներդաշնակին, եւ դրա համը մէկ անգամ տեսնողը,– ճշմարիտ գեղեցկութեան,– այլեւս կեանքում դառնում է նրա նուիրեալը: Եւ ետ գալ չի կարող էթէ այդ կայծը տեղի է ունեցել:

Մեզ տեղափոխեցին Երեւան, եւ դա առաջին դէպքն էր, որ գիւղից գալիս են Երեւան: Նոյնիսկ մշակոյթի նախարարութիւնը մեր ընտանիքին գրանցեց, բնակարանով ապահովեց. գիտէք այդ ժամանակ շատ դժուար էր... եւ ես ինկայ դրախտ, երաժշտութեան՝ դրախտը, եւ ես երախտապարտ եմ բոլոր նրանց, ովքեր իմ առջեւ բացեցին այդ դրախտի դռները:

– Իսկ գաղափարական հիմը, որ ունիս, ա՞յդ ուրկէ կու գայ:



– Ասեմ, ես եկայ ազգայինին նախ գեներով [ծիներով]. կարելի է ասել՝ գիւղի տղայ էի, բնութեան մասնիկն էի, յետոյ՝ Բախի արուեստը... Երբոր մենք անցնում էինք Բախ, Բեթհովեն, Մոցարտ, Հայդըն... դրանց մէջ այդ գեղեցկութիւնը ինձ ուղղակի ցնցեց, եւ ես էդ նոյնը, դրա հետքը գտայ մեր ազգայինին մէջ: Փնտռեցի եւ գտայ Կոմիտասի, Արամ Խաչատուրեանի արուեստում: Եւ դա կապեց ինձ Աստուածաշունչի հետ, որովհետեւ Բախը,

Կոմիտասը ամբողջությամբ հիմնուած են Աստուածաշունչին վրայ:

Յետոյ Աստուածաշունչի նկատմամբ իմ [հետաքրքրութիւնը] մանկութենէն կու գայ, որովհետեւ մեր բարեկամներին քսորել էին հին գրքեր՝ Աստուածաշունչ եւ այլն պահելու, թաքցնելու պատճառաւ, եւ մեր ընտանիքին մէջ խօսակցութիւնները իմ մէջ փոքրուց հետաքրքրութիւն բոցավառեցին: Էդ ի՞նչ էր, որի համար մարդոց ընտանիքով, քսորեցին Միբիր: Եւ յետոյ էդ Աստուածաշունչը եւ սկսեցի փնտռել, ու ինձ նուիրեց մի ուսանողուի Բաքուից, որը հայ չէր: Ու ես նուէր չվերցրեցի, ձրի չէի ուզում, ուսանող էր, եւ էն ժամանակ ոսկի մատանի ունէի, եւ տուեցի էդ ոսկին, որպէսզի օրհնուած լինի. եւ ես [աւելի] շահեցի քան էդ ուսանողը: Ոսկին տուեցի, առայ իսկական, ճշմարիտ խօսքը:

Եւ քանի որ ամբողջ դասական երաժշտութիւնը հիմնուած է հոգեւոր երաժշտութեան վրայ, Դաւթի Սաղմոսներին [եւ այլն], Բախը, [ուրիշներ], մինչեւ Կոմիտաս, – չկայ մի մեծ կոմպոզիտոր [երգահան] որ անդրադարձած չլինի [հոգեւորին]: Ու այդտեղից մէ՛ր հոգեւոր դաշտը եւ տեղափոխուեցի արդէն՝ Մաշտոց, մեր ազգային եկեղեցին, առաքելական, եւ արժէքները՝ երգ, շարական, տաղ, գանձ: Այդպէս եւ իմ ստեղծած անսամբլով սկսեցի քարոզել մի կողմից եւրոպական հոգեւոր երաժշտութիւնը, [միւս կողմից հայկական]: Պատահական չէ, որ Շարական անսամբլը այդպէս եւ կոչել: Երեք անսամբլ եմ ստեղծել, երեքն էլ պետական, երեքի անունները վկայում են (ինչպէս ձեզ մօտ [Գանատայի «Համագգային»-ի] Մանահին, Գլաձոր [անուններ էք դրել] այդպէս էլ եւ իմ անսամբլների անունները (մէկը գործում էր ֆիլհարմոնիայում՝ «Հայ համերգ» էր կոչում, միւսը ռադիօ-հեռուստատեսութեան կոմիտէում) դրել էի «Շարական», «Տաղարան» եւ «Գանձեր»:

– Երկանեանը այս գործին չէ՛ր առնչուած:

– «Տաղարան»-ին. ինձ երբոր տեղափոխեցին ռադիօ, որպէսզի ձայնագրութիւններում վաւերացնեն այդ հոգեւոր մշակումները, – ռադիօն էր ձայնագրութիւնների օրրանը, – Հայ համերգի «Տաղարան»ը [անգլուխ] մնաց, եւ երաշխաւորեցի եւ ցանկացայ, որ Երուանդ Երկանեանը ղեկավարի, նա արժանի էր: Հիմա նրա եղբայրն է՝ Սեդրակ Երկանեանը. բայց եւ երկուսին էլ ըստ արժանիքի գնահատում եմ, այլ կերպ Երուանդին չէի առաջարկի:

Ասեմ, որ ինձ «պատժեցին» էդ անունին համար, ոչ թէ անունին... «Շարական»-ը 1984-ին մասնակցեց Հոլանդիայում, Մասաթրիխտ քաղաքում՝ կրօնական երաժշտութեան միջազգային փառատօնին, եւ եթէ էդքան փայլուն ելոյթ չունենար՝ մեզ չէին նկատի Մոսկուայում: Մեր յաջողութիւնը մեզ հարուածի տակ բերեց: Էնտեղից զանգեցին ու ինձ կանչեցին Կեդրոնական կոմիտէ, գաղափարախօսական բաժինում, եւ խորհուրդ տուեցին, – եւ շատ լաւ էր, որ մեր պետական այրերը կողմ էին որ մնա՛յ անսամբլը, – դրա համար ասեցին եկէք անունը փոխենք «Տաղարան»-ի, Մոսկուայի բերանը փակենք, ու դուք շարունակէք ձեր գործունէութիւնը: Այսպիսի մարդիկ էլ կային ...

Եւ տարօրինակ է, որ այթէիստական երկրում, պետութիւնը, թէպէտ գրաքննութեամբ՝ բայց «Շարական»-ը պահում էր, աշխատավարձ էր տալիս, իսկ այսօր, որ ազատ, անկախ Հայաստան ունինք, խումբը լուծարուած է եւ թոչունի պէս երգում ենք ո՛ր ճիւղին պատահի... Կարծես էսօր պէտքը չի, կամ էնքան են տարածուել, էդ հոգեւոր կատարումների իմիտացիաները [կեղծումները, նմանակումները], արդէն չեն տարբերում բնօրինակը կեղծիքից, եւ դա պատահական չի: Ֆրեդերիք Նիցչէն ասում էր, որ տարօրինակ հասարակութիւն է, որ պատճէնները աւելի շատ է սիրում քան բնօրինակը: Էդ միտքը եւ զտել եմ չինացի նկարիչ Մի Ֆուի մօտ, 11-րդ դարէն, որ նոյնը ասում էր, որ իրենց մօտ հասարակութիւնը կեղծիքը եւ պատճէնը աւելի է գնահատում քան բնօրինակը:

– Մէկ հարցում եւս, սիրելի Գրիգոր. այսօրուան մշակութային ճգնաժամը, որ կ'ապրինք, որ նաեւ մեր ազգային անվտանգութեան կը սպառնայ ...

– Ի հարկէ, ի հարկէ...

– ...եւ ես ալ զանգակը ձեռքս առած մէջտեղ ինկած եմ այս առնչութեամբ,– լեզուի խաթարումը, մշակոյթի...

– ...ընդհանուր գործնթացը,...

– ...ուղղակի տգիտութիւնը, այս բոլոր երեւոյթները ինչպէ՞ս պիտի յաղթահարենք: Ինչպէ՞ս պիտի ընենք, որ մեր մշակոյթը իր արժանաւոր տեղը գրաւէ մեր կեանքին մէջ:

– Ես լաւատես եմ, բայց առայժմ ինչ որ գտնում ենք [մեր] միջոցներով,– ինչպէս որ հիւանդութիւնը դեղ ունի, չէ՞, բայց մեր ունեցած դեղի դրական ազդեցութիւնը աւելի դանդաղ է քան հիւանդութեան աճը, պրոգրեսիան, պիտի ասեի պրոգրեսիայում ռեկրեսիան [նահանջը կամ տեղատուութիւնը],– չենք հասցնում, որովհետեւ ինձ արդէն թւում է, երեխաները ծնւում են բջիջային հեռախօսները ականջներին մէջ եւ միկրոֆոնները [մանրախօսները] գոնդի [զննաձողիկի] պէս ստամոքսին մէջ: Ոչ մի ուսուցիչ չի կարող մտնել էդ ականջը՝ բջիջային ու նրա լսողութեան արանքը, որովհետեւ դա սերտաճել է. էնպիսի արագութեամբ է վիրուսը [Ժահրը] կամ սատանան գործում, որ շատ դժուար է պայքարել: Մեր քայլերը շատ դանդաղ են՝ համեմատ համաճարակի բռնկման:

– Այդ չի՞ նշանակեր, որ նոյն ճամբան պէտք է օգտագործենք հասնելու համար իրենց:

– Բայց հնարաւոր չի, որովհետեւ դպրոցներում խրախուսում է դա. ուսուցիչներն էլ են նոյնը: Արդէն, մի սերունդ է եկել, էն մութ տարիների սերունդն է, որ իսկականը չեն տեսել, որ համեմատեն, որ ավստսան, լացեն... Տեսէք, նորաշէն սափորը պահպանում է առաջին հեղուկի բոյրը մինչեւ վերջ, յետոյ ինչ էլ լեցնես մէջը, [էլ չի փոխում],– նրանց առաջին տպաւորութիւնը, արքետիպը [նախաստիպը], տրուած է կեղծիքէն, շատ դժուար է քանդելը: Ես տեսնում եմ մեր երեխաները պարծենում են «անցեալ տարուայ էն ինչ աստղի բոլոր երգերը ունեմ». մէկը ունի 700 երգ ու հիւանդութիւն է դա, հնչիւնամոլութիւն է դա, թմրամոլութիւն է դա: Մշակութային պատերազմ է յայտարարուած, որովհետեւ դա շատ զօրեղ զէնք է, չի պաշտպանում [նրա դէմ]:

– Դժուար է կըսես, բայց պիտի գտնե՞նք միջոցը յաղթահարելու:

– Դժուարանում եմ ասել. մենք անում ենք այն ինչ կարող ենք, ինչպէս Ռաբինդրանաթ Տագորը մի բանաստեղծութիւն ունի, ուր ասում է՝ «արեւը մայր է մտնում ու հարցնում է ո՞վ կարող է ինձ փոխարինել»,– եւ այնտեղից մի համեստ ձայն է լսում. «Ես, ձերդ պայծառափայլութիւն, ինչո՞վ կարող եմ...»,– ասում է ճրագը: Մենք ճրագներ ենք, բայց մեզ արեւ է պէտք, թէ ո՞նց պիտի ծագի, դժուարանում եմ ասել, որովհետեւ հակառակ կողմը շատ զօրեղ է, բոլոր լծակները իրենց ձեռքն է կեղծիքը տարածելու, վարակելու... Եւ դա զէնք է, մշակութային պատերազմ: Դա նման է, որ բանակի զինանոցը բացեն եւ հոգեկան հիւանդներին, երեխաներին տան զէնք: [Դեռ է՛ն ատեն] Պղատոնը, Կոնֆուկիոսը հաստատում էին, որ դա զէնք է, որ պետականութիւնը կախուած է արուեստից: Ունեին յանձարարականներ, ինչ կարգի երաժշտութիւն տան, որ զինուորները խիզախ լինեն,– դա Պղատոնն էր ասում, իսկ մերոնք չեն զիտակցում եւ դրանով փող են աշխատում, դրա համար դժուարանում են մտածել:

– Գրիգոր ջան, կա՞յ ուրիշ որեւէ հարց որուն կ'ուզէիր անդրադառնալ անպայման:

– Կուզէի ՍՈՍ (SOS) կանչէի, ՍՈՍ՝ փրկութեան կոչ Աստծուն, եւ գոյժ յայտարարէի, որ Աննիբալը դարպասների մօտ է: Մերոնք հաւքերի պէս, ինչպէս ճապոնացի պոետն է ասում, սաղարթում երգում են, բոյն են շինում, մինչդեռ ծառը տակից սղոցում են, եւ չեն նկատում:

– Հիմնականում արուեստը յանձնուած է այն մարդկանց, որոնք չեն ամուսնացած արուեստը. այդպէս են ղեկավարում սովորաբար, ոնց որ գառներին պահ տալիս են գայլին: Գայլը չի՝ ամուսնացած արուեստը: Այսօր արուեստում կան մարդիկ, որոնց միջոցով, այդ տրոյական ձիւ պէս տիրապետում են արուեստին: Նրանք, քանի որ ամուսնացած չունեն, քանդում են շատ, որովհետեւ սրտացաւ մարդ չեն տալու որ ղեկավարի. նա չի կարող, նա կ'ամուսնացած արժեքները փոշիացնել, վաճառել, աղաւաղել: Ինքնահաստատման եւ փառասիրութեան ամեն մի տենչացող ի՛ր խնդիրն է լուծում: Մէկը մի երգ սովորելով աստղ է դառնում: Մենք վեց տարեկանից ենք երաժշտութիւն սովորել, անյարմար կը զգանք աստղի մասին խօսել... վե՛ց տարեկանից, իսկ նրանք վեց ամսում աստղ են դառնում: Շատ վտանգաւոր է, որովհետեւ մատաղ սերնդին տալիս են իդէալներ, իրենց կեղծ իդէալները, թէ՛ սա՛ է բնականը, եւ քայքայում են ժողովրդին, որովհետեւ նրանք ոչ թէ թոյլ են տալիս, որ ընտրի երեխան, այլ դրականը ի սպառ վերացնում են, ասպարէզը մնում է մէկ տարբերակ, արդէն ընտրութիւն չկայ, նա դա էլ տեսնում է, երբեք չի տեսնում ճշմարիտը: Պիտի մի ելք գտնել:

Ես Կոմիտասի մի երգի խօսքերով կ'ասեմ՝
*Վրա՛յ հասիր, հա՛յ ազգասէր,
Ձեռքից կէրթայ Հայաստան...*

Ճաշարանէն դուրս կու գանք ու արդէն որպէս հի՛ն ծանօթներ կը բաժնուինք: Կը խոստանայ մի քանի յօդուածներու պատճեններ բերել ձգել հիւրանոց: Ինծի յանձնէր էր արդէն, նախ քան մեր գրոյցը սկսիլը, իր հրատարակած գիրքերէն ոմանք, նոյնիսկ երկուական օրինակով՝ մէկը «Համազգային»-ի գրադարանին փոխանցելու համար...

Դանիէլ Երաժիշտ խո՛ր մտածումներու մէջ կը թողու զիս: Եւ դեռ ուրիշ հանդիպումներ կան ծրագրուած օրուան մնացեալ մասին համար...

Օրուան միւս հանդիպումները

29 մայիս 2008, հինգշաբթի, յետմիջօրէի

Գրիգոր Դանիէլեանի ըսածները երկար ատեն պիտ ի արձագանգեն ուղեղիս մէջ, մանաւանդ որ իր մտահոգութիւնները իմս ալ եղած են ու են:

Բայց այդ էջն ալ պէտք է դարձնել ու շարունակել հայաստանեան այս օրը՝ վեցերորդը մեր այս ուղեւորութեան:

«Մքուէր Ուան». ինչո՞ւ հայերէն անուն մը չունի սա մեզի մօտ ու այնքան հաճելի ճաշարանը: Այնտեղ թեթեւ բան մը կ'առնենք, ապա Նազիկը կը յանձնեմ աղջկանս, որ քիչ մը շրջին իրենց ուզած վայրերը, իսկ ես կ'ուղղուիմ դէպի Մաշտոց պողոտայ, համար 37՝ «Համազգային»-ի գրասենեակը: Ժամադրուած եմ Միրանոյշ Դվոյեանի հետ:

Երկու հաճելի անակնկալ կը սպասէ ինծի: Առաջին անգամ է, որ կը տեսնեմ գրասենեակը իր այս վերանորոգուած ձեւով: Իսկապէս կերպարանափոխուած է, գեղեցկօրէն յարդարուած, լայնցած կարծես՝ շատ ներկայանալի տեղ մը դարձած, վայել՝ մշակութային միութեան մը: Բախտէս հոն են մեր երեք ընկերուհիներն ալ՝ Լիլիթը, գրասենեակի վարիչ տնօրէնուհին, որ առաջին օրէն ձեռնհասօրէն տարաւ իր ստանձնած գործը, իրմէ ակնկալուածէն շատ աւելին տալով եւ կը շարունակէ՝ այլ

պատասխանատուություններ եւ գրական-հրատարակչական աշխատանքներ ունենալով հանդերձ: Ներկայիս Ազգային ժողովին մէջ ՀՅԴ պատգամաւոր է: Թամարը՝ իր աջ բազուկը, որ Մոնթրէալէն գրասենեակ դրկած տեղատարափ խնդրանքներս կատարողն է... եւ Մոնիկը՝ իրենց նորագոյն աջակիցը:



Լիլիթին ու Թամարին հետ



Արքմենիկին ու Միրանոյշին հետ

Միւս անակնկալը՝ Միրանոյշին, Արքմենիկին ու Գուրգէն Խանջեանին հետ հանդիպումն է, նոյնիսկ եթէ, ինչպէս ըսի՝ առաջինին հետ ժամադրուած էի: Երեքն ալ երբեք չէի տեսած, ծանօթ էի Արքմենիկ Նիկողոսեանին, որ աշխատակցած էր «Հորիզոն»-ի գրական յաւելումածին, եւ որուն անունը կերելի նաեւ «Բագին»-ի խմբագրական խորհուրդի անուանացանկին մէջ: Երիտասարդ ու կորովի դասախօս, գրականագէտ, քննադատ...: Գուրգէն Խանջեանն ալ «Գարուն»-ի մէջ իր պատմուածքներուն ճամբով ճանչցած էի տակաւին 90-ական թուականներու սկիզբի տարիներէն, եթէ ոչ աւելի առաջ, ու սիրած իր թարմ ոճն ու ընտրած նիւթերը:

Գլխաւոր անծանօթը, եւ ինծի համար յայտնութիւնը՝ Դվոյանն է, եւ ուրախութիւնս շատ մեծ է, քանի որ դեմ-յանդիման կու գամ ուրիշ երիտասարդ ու յանձնառու

մտաւորականի մը, որ առաջին պահէն կը մտերմանայ ու բաժնեկից կը դառնայ մտահոգութիւններու:

Խանջեան շուտ պէտք է մեկնի, սակայն Արքմենիկին (որուն հետ ալ ծրագրած էի հանդիպիլ եթէ այսպէս պատահաբար հոս չըլլար) ու Սիրանոյշին հետ կը շարունակեմ զրուցել ու ներկայացնել խնդրանքս՝ գրել 40-ական թուականներուն Հայաստան ներգաղթած երիտասարդ գրողներուն մասին: Այս մասին մտածեր էինք «Հորիզոն»-ի գրական յաւելումաձի խմբագրութեան մէջ ու որոշեր էինք խնդրել հայրենի մտաւորականներէ, որ արտայայտուին. մոռացութեան տալու չենք այդ ներգաղթած դժբախտ գրողներու ճակատագիրը: Անոնցմէ մեկն ալ Կարպիս Սուրենեանն է, որուն հետ պիտի չկարենամ հանդիպիլ, քանի որ տարիքի բերամբ այքերուն «վարագոյր» իջեր է, գործողութեան պիտի ենթարկուի ու մարդու հետ տեսնուելու տրամադրութիւն չունի:

– Ամեն ինչ գրած եմ յուշերու մէջ,– կըսէ ան ինծի հեռաձայնէն:

Բարեբախտաբար յուշերու մեծածաւալ զոյգ հատորները նոր են լոյս տեսած, եւ Մոնթրէալի «Համագային»-ի գրադարանը խնդրած է ինձմէ, որ ձեռք ձգեմ այդ գիրքերը:


– Սեւակը շատ մօտ է Սուրենեանին, թերեւս ինքն ալ կը գրէ այդ յուշերուն մասին,– կը յուշէ Սիրանոյշ:

Սեւակ, Պոլսոյ «Ժամանակ»-ի խմբագրութեան անդամ եւ մեր յաւելումաձի աշխատակից, իրապէս ալ հետագային կը խոստանայ գրել: Սիրանոյշ նաեւ պիտի փորձէ այլ աշխատակիցներ ապահովել մեր այդ յատուկ թիւին համար: Ինք յանձն կ'առնէ Աբրահամ Ալիքեանին մասին գրել: Արքմենիկ՝ Աբիգ Աւագեանին, եթէ կարենայ ժամանակը գտնել:

Իրապէս բերքառատ հանդիպում մը...

Յաջորդ ժամադրութիւնս «Ազգ»-ի խմբագրապետ Յակոբ Աւետիքեանին հետն է: «Ազգ»-ի խմբագրատունը մեր հիւրանոցէն հեռու չէ, Հանրապետութեան փողոցին վրայ՝ «Երկիր»-ի դիմաց: Կամարաւոր շքամուտք մը, երկու յարկ վեր՝ մէկ ամբողջ յարկաբաժին, որուն մուտքին ալ, ձախին՝ խմբագրապետին գրքաշատ ու թերթառատ աշխատասենեակ-ընդունարանն է: «Ազգ»-ը, որ սկիզբ առաւ որպէս ՌԱԿ-ի օրգան, ահա մի քանի տարի է անկախ օրաթերթ է՝ հետաքրքրական ու որակաւոր բովանդակութեամբ: Երեւոյթ է: Մեր անպաշտօն գրոյցը կընթանայ ամեն ուղղութեամբ, մտերմիկ մթնոլորտի մէջ: Կը համաձայնինք վերստին հանդիպիլ ու հարցազրոյց մըն ալ ունենալ, բայց ի վերջոյ ատիկա կը մնայ Հայաստան ուրիշ այցելութեան մը:

Յակոբ Աւետիքեանին հետ...



Պանդոկէն երեսուն քայլ անդին, դէպի Հրապարակը, ֆրանսական փոքրիկ ճաշարանը թեթեւ ընթրիքէ մը ետք,– այդ ալ Արագին նախասիրած վայրերէն մէկն է, հաճելի ու մտերմիկ մթնոլորտով մը,– օրուան վերջին հանդիպումս պիտի կայանայ միշտ «Արուեստի կամուրջ»-ին մէջ՝ այս անգամ Դաւիթ Գասպարեանի հետ: Անուանի գրականագէտ, չարենցագէտ այս մտաւորականն ալ գրական յաւելումս աշխատակիցներու հոյի մէջ ունենալու պատիւին արժանացած ենք, իր հետ կապը հաստատելով «Համագային»-ի գրասենեակին ճամբով: Այս երեկոյ ցանկութիւնս է անձամբ ծանօթանալ, իր անունին նաեւ դէմք մը կապել կարենալու համար: Կը գրուցենք ասկէ-անկէ, Հայաստանի ու Սփիւռքի կեանքէն, մեր թերթէն ու հայրենի մամուլէն: Կը խոստանայ Մարոյեանի նուիրելիք մեր յատուկ համարին համար տրամադրել իր մէկ գրութիւնը: «Օգտագործեցէք ինչպէս որ յարմար դատում էք»,– կըսէ, – «ձեր յաւելումսին համար երկար է, առէք ձեզի պէտք եղած հատումները»:

Եւ իրապէս, յաջորդ օրն իսկ պրն Գասպարեան հիւրանոց կը թողու իր յօդուածին պատճէնը:



Դաւիթ Գասպարեանի հետ

Հանդիպում մեր պատմութեան հետ

30 մայիս 2008, ուրբաթ

Մեր Հայաստան կեցութեան եօթներորդ օրն է: Մեր առաջին շրջապտոյտը պիտի ընենք: Մեր ընկերակիցը ազնիւ հայորդի մըն է, մասնագիտական ուսմամբ, որ, սակայն այլեւս իր ասպարէզին մէջ գործ չգտնելով, դարձած է վարորդ: Իր հետ ճամբայ կտրելը խիստ հաճելի է, քանի որ հասարակաց շատ նիւթ ունինք խօսելու: Ինչպէս ժամադրուած ենք՝ ժամը 10:00-ին պանդոկին առջեւն է: Ի դէպ, երէկ երեկոյ եկաւ ու միասին, Արագին ալ մասնակցութեամբ, կազմեցինք մեր գալիք օրերու չուերթերը:



Հին ձեւերը կը յամենան...

Քանի որը ուրբաթ է, կանցնինք խմբագրատունէն ու նոր «Երկիր»-ը կը վերցնենք: Երեւանի կեդրոնէն դուրս կու գանք Ծովակալ Իսակովի պողոտայէն, Հայկ Նահապետի^օ, թէ՛ Վահագնի արձանին առջեւէն կանցնինք, Երեւանեան լիճի կողքէն, ապա՝ հարաւարեւմտեան քաղաքամասէն, ուր մեր ուշադրութիւնը կը գրաւէ նորակառոյց եկեղեցի մը՝ Զուարթնոցի նմանողութեամբ, առաւել՝ գաւիթով ու զանգակատունով: Եկեղեցաշինութեան նոր ձգտում մը նկատելի է, սակայն տակաւին դասական ճարտարապետութեան ձեւերը ինքզինք կը պարտադրեն: Հաւանաբար, եթէ խորհրդային անաստուածութեան եօթը տասնամեակները չըլլային, մեր եկեղեցական ճարտարապետութիւնն ալ քայլ պահած պիտի ըլլար արդի ժամանակներուն եւ կառոյցներուն հետ: Ուշացումով, հիմա արդէն այդ ընթացքին մէջ կը մտնենք, եւ վստահ եմ որ մեր երիտասարդ տաղանդաւոր ճարտարապետները պիտի ստեղծեն 21-րդ դարու վայել մեր գալիք կոթողները:

Սեբաստիայի, Լենինականի, Շիրազի եւ Չաուշի փողոցներէն ետք կը մտնենք Աշտարակի խճուղին, կամ M-1 մայրուղին, որ հիւսիս տանող գլխաւոր ճանապարհն է, բարեգարդ, երթելեկի երկու կողմերը իրարմէ բաժնուած:

Երկինքը՝ կապուտակ, ամպերը հեռուն, հորիզոնին վրայ միայն: Մէկ կողմէ Արագածն է, ձինսածածկ գագաթները մխրճած ամպերուն մէջ, միւս կողմէն՝ Արայի լեռը, կանաչապատ: Եւ արօտավայրեր՝ դեղին, կանաչ: Մասքենիները ճամբուն եզերքը՝ իրենց սպիտակ ծաղիկներով:

Առաջին հանգրուանը, ուր շատ պիտի չյամենանք, Աշտարակն է, ուր սակայն կ'արժէ միշտ պահ մը կանգ առնել եւ դիտել ու լուսանկարել այն տեսարանը, որուն ձախին սրածայր գմբէթով Սուրբ Սարգիսն է, միջնադարէն, աջին՝ իր հետ դարաւոր գրոյցի նստած պատմական կամարակապ կամուրջը, եւ խորքին՝ սանտրուած ժայռապատը որ լու՛ն վկան է անոնց այդ գրոյցին: Բարտի մը մենաւոր՝ յառաջամասին, ու մի քանի կարմիր կղմինտրէ տանիքներ կամբողջացնեն այս նկարը...



Աշտարակի պատմական կամուրջը



Բնութեան քանդակները

Յետոյ՝ պիտի անցնինք Աղձք գիւղէն ուր պիտի խոնարհինք մեր Արշակունի թագաւորներու մամռապատ, հի՛ն շիրմաքարերուն առջեւ: Անոնց կողքին՝ քանդակագործ Գրիգոր Գրիգորեանի նորակերտ արձանն է, մեր արքաներու կերպարներով, որ «հայ ժողովուրդի յաւիտենական երթը» կը մարմնաւորէ ըստ Հայաստանի Հանրապետութիւն օրաթերթին մէջ Մկրտիչ Մարգարեանի գրածին (մեր այս այցէն շաբաթ մը ետք լոյս տեսած):



Մամռապատ շիրմաքարեր...

Շարունակելով մենք այլ մե՛ր երթը, դուրս պիտի գանք M-1-էն, առնենք M-30-ը ու անցնելով Ագարակէն պիտի հասնինք Տեղեր, որուն վանքը, ԺԳ. դարէն, ամպոտող երկինքին ներքեւ, մեր առջեւ կուրուագծուի իր մութ-մոխրագոյն բազալիտայ կառոյցով: Արագը թելադրած էր անպայման տեսնել մեր այս կոթողը, գոր Աղբայրիկ Վարդապետ ճարտարապետին կառուցել տուած է Մամախաթուն՝ Վաչէ Վաչուտեան իշխանի կինը: Իսկապէս պետք է այցելել այս ինքնատիպ եկեղեցին, որ իր դասական ատեանին առջեւ ունի մեծ, լուսամուտով գաւիթ եւ գոյգ գմբեթաւոր մատուռներ աջին ու ձախին:



Տեղերի վանքը

Արագ նաեւ լուր տուած էր եկեղեցիին կից գործող ճաշարանին՝ իրեն ծանօթ տիրոջ, որ մեզ լաւ հիւրասիրէ... Կիջնենք իր քով եւ համեղ խորտիկներով բազմաթիւ սեղաններ կը տեսնենք շտկուած: Մեզի համար չեն ատոնք, ի հարկէ, այլ իտալացի զբօսաշրջիկներու խումբի մը, որ քիչ ետք պիտի ժամանէ: Մենք այլ նոյնը կ'ապսպրենք:

Այստեղ սքանչելի տեսարան կը բացուի մեր առջեւ: Հորիզոնին վրայ՝ Հայկական պար լեռնաշղթան, Արարատը՝ ամպերուն ու մշուշի մէջ կորսուած, վարը՝ դաշտերը, ճիշտ մեր մօտիկը, աջին՝ գետակ մը որուն մէջ բազմաթիւ ժայռաբեկորներ կը լողան...

Յաջորդ հանգրուանը Ամբերդն է, ուր պիտի հասնինք Բիւրականին քովէն անցնելով,– անուանի աստղադիտարանն է այդտեղ: Ամբերդ, Արագածի լանջին, 2300 մ բարձրութեան վրայ, Ժ. դարուն՝ Պահլաւունիներու օրով, ապա Բագրատունիներու, կարեւոր ռազմական կեդրոն է եղած: Դեռակը եւ պարիսպի որոշ մասեր է. դարէն են: 1236-ին, Մոնկոլական արշաւանքներուն հիմնովին քանդուած, ապա Վաչուտեաններուն կողմէ վերստին կառուցուած է:

Եկեղեցին Վահրամ Պահլաւունին շինել տուած է 1026-ին:

Ամբերդի շուրջ կանաչ է: Վարէն կը նայիս վեր՝ բերդին պատերը անառիկ կը թուին: Բայց եւ այնպէս, Նոյեմբերեանէն եկած ուսանող-ուսանողուհիներ ճամբան կը գտնեն բարձրանալու վերելք,– տղաք, որ եկած են իրենց՝ մե՛ր երկիրը ճանչնալու...

Հոս ալ երկար չենք կրնար մնալ:

Ճամբայ կելլենք դէպի Արագած, որուն ձիւնածածկ չորս գագաթները շղարշուած են ամպերով ու անոնց միջեւ՝ կապուտակ երկնքի ծուէններով: Հեռու չենք, սակայն ոլոր-մոլոր՝ ճանապարհը երկար կը թուի: Ահա արդէն կը հասնինք ձիւնի տարածքներուն եւ վերջապէս Քարի լիճ, որուն մակերեսը տակաւին սառած է այս ուշ գարնան. 3190 մ բարձրութեան վրայ ենք: Արեւը ողողած է մեզ: Լիճին միւս ափին տիեզերական ճառագայթներու հետազօտման կեդրոնն է, իսկ այս կողմը՝ ճաշարանը, ուր կու գան յատուկ խաշ ուտելու: Մենք գափուչինոյով մը պիտի բուարարուինք, պէտք է վերադառնալ Երեւան, քանի որ երեկոյեան Օշական համոյթի ելոյթն է, որուն՝ մեր աղջիկը հրահանգա՛ծ է, որ ներկայ գտնուինք:



Արագածի գագաթը՝ Քարի լիճին եզերքը - Ամբերդ

30 մայիս 2008, ուրբաթ, երեկոյեան

«Կենաց տուն». հոն է որ պիտի երթանք այս երեկոյ՝ ունկնդրելու համար Օշական համոյթը: «Պանդոկէն հեռու չէ»,– ըսաւ Արագ. կրնաք քալելով երթալ:

Իրապէս ալ, Աբովեանէն մտանք Հիւսիսային պողոտայ, անկէ ալ՝ անցանք Պուշկին, փնտռեցինք ու դիւրութեամբ գտանք Աշոտեան կեդրոնը, որուն մէկ յարկը «Կենաց տուն»-ն է, այդ բառին ամբողջական առումով իր առաքելութիւնը ճշտած «մշակութային

հասարակական կազմակերպություն» մը, որ գոյություն ունի 1997-էն ի վեր: Վանօ Դադոյեանն է առանցքն ու ոգին:

Այդ առաքելութիւնը սքանչելի կերպով բանաձեւուած է այն փոքրիկ գունաւոր թռուցիկին մէջ, որ դրուած է ակումբի մուտքին. այսպէս, այս կազմակերպութիւնը «... աշխարհը մէկ միասնական տուն ընդունելով, ազգերի ներդաշնակ գոյակցութիւնը եւ համաշխարհային մշակոյթն ու նրա հիմք հանդիսացող ազգային մշակոյթը կարելորելով,



Նկարին ձախ կողմը Գրիգորն է, կողքին դէպի կէտրոն՝ Գոհարը

ձգտում է բարձրացնել հասարակութեան հոգեւոր, գիտակցական եւ նիւթական մակարդակը, ամրապնդել ընտանիքը եւ ազգային հոգեբանութիւնը, նպաստել մանկավարժութեան մէջ եւ ուսումնական հաստատութիւններում դասաւանդման նոր մեթոդների ներդրմանը, օժանդակել հասարակութեան, մասնաւորապէս կանանց, երեխաների եւ երիտասարդների հոգեւոր եւ ֆիզիքական առողջութեան, ինչպէս նաեւ բնապահպանման գիտելիքների մակարդակի բարձրացմանը, ուսուցման ծրագրերի, տնայնագործութեան, ցուցահանդէսների, փառատօների, տօնահանդէսների, գիտաժողովների, դասընթացքների եւ հրատարակչութեան կազմակերպման միջոցով»:

Որքա՞ն ծանօթ մեղեդիներ՝ այս մէկ պարբերութեան մէջ, ծանօթ եւ անորոշաւոր...

Ուրեմն ահա այս «Տան» մէջ է, որ ներկայ կըլլանք «Օշական»-ի ելոյթին: Յաջորդ օրը խումբը պիտի մեկնի Ֆրանսա եւ այսօր իր վերջին փորձին հրաւիրած է անմիջական բարեկամներ եւ ընկերներ: Արագին շնորհիւ՝ այդ հրաւիրեալներէն երկուքն ալ մենք ենք:

Փոքր սրահ մըն է որեւէ դասարանի նման, մեծ պատուհաններով, պարզ աթոռներով, առանց բեմի ու բեմայարդարման:

Երաժիշտները, որոնց հետ միջանցքներուն մէջ կը շաղակրատէինք, պահ մը կանհետանան, մենք ալ կը տեղաւորուինք, եւ Վանոյի եւ կնոջ՝ Լալայի կարճ ելոյթներէն ետք, «Կենաց տան» գալիք ծրագիրներուն մասին, Օշական կը սկսի իր համերգը շարականներով ու կոմիտասեան երգերով լի յայտագրով մը:

Առաջին վայրկեանէն կը զգանք, որ սա մեր գիտցած, մեր լսած համերգներէն չէ: Կ'առինքնուինք, կը վերանանք: Հայաստանեան մեր այս կեցութեան ամենէն տպաւորիչ, ամենէն հոգեպարար պահերէն մէկը կը հանդիսանայ այս երեկոն, եթէ ոչ՝ Պահը:

Վերջին ծափերէն ու շնորհաւորանքներէն անմիջապէս ետք կը մօտենանք ղեկավարներուն՝ Գրիգոր Առաքելեանին ու իր կողակից Գոհար Յարութիւնեանին, որոնք երիտասարդ ու խանդավառ գոյգ մըն են: Կը համաձայնինք հարցազրոյց մը արձանագրել նոյն երեկոյ իսկ, մէկ-երկու ժամէն՝ պարզապէս երկուստեք քիչ մը հանգստանալէ ետք:

Եւ ահա դարձեալ «Արուեստի կամուրջ»-ի մեր սովորական անկիւնն ենք գրաւած, ներսի սրահի մուտքի աջին:

– Շատ տպաւորուեցայ ձեր ելոյթէն, ազդուեցայ՝ եւ շատ գոհ եմ, որ նման առիթ տրուեցաւ ինծի: Այժմ կը խնդրեմ, որ շատ հակիրճ դուք ձեզ ներկայացնէք, ըսէք թէ ո՛վ էք...: Քեզմէ սկսինք, Գրիգոր:

– Մենք ինքնե՛րս աստիճանաբար միայն պարզում ենք, թէ ո՛վ ենք, որովհետեւ շատ դժուար է խորանալ, այդ դարերի շեշտերով գնալ, եւ լինելով այսօր, ապրելով այսօրուայ աշխարհում, յետադարձ հայեացք ունենալ... Եւ նպատակը դա է, հասկանալ թէ ո՛վ ենք մենք: Ինչ որ այսօր լսեցիք այդ համերգին՝ կարծում եմ այդ նպատակին է ծառայում, որպէսզի ամեն մարդ, ոչ միայն հայ, ձգտի պարզել թէ ինք ո՛վ է:

Օշական անսամբլը [համոյթը] ստեղծուեց 2004 թուին հէնց Օշական գիւղում: Առաջարկ եղաւ ֆրանսահայ Ռոժէ Փիրանեանի կողմից, որ այժմ խումբին մէնէճըրն է [գործավարը], ստեղծելու այս խումբը, որ պէտք է հիմնուէր միջնադարեան երաժշտութեան իմ մշակումներին վրայ:

Օրագիրը այդպէս պէտք է կառուցուէր: Երբ վերադարձայ Ֆրանսայից Հայաստան, մինչ այդ Գոհարը արդէն ստեղծած էր երգեցիկ այդ խումբը, որ կիրակի օրերը Երեւանից գնում էր Օշական, պատարագ երգում, որոշեցինք այդ հիմքի վրայ աւելացնել մի քանի նուագարան. հետաքրքիր գաղափար էր՝ 8 երգիչ, 4 նուագարան, աշխարհի վրայ չկայ այդպիսի խումբ, սովորաբար հակառակն է լինում: Այդպէս սկսեցինք, մի երկու տարի առաւ ճիշտ պրոֆեսիոնալ [մասնագէտ] երգիչները գտնելու, ճիշտ այս ոճին համապատասխանելու համար, որովհետեւ ոճը սովորական երգեցիկ ոճ չէ, որ ամեն օպերայի երգիչ կարողանայ այս ձեւով երգել: Դրա համար առաջին հիւրախաղերը 2006 թուի սեպտեմբերին տեղի ունեցան, երբ խումբը ելոյթ ունեցաւ Ռադիօ-Ֆրանսի Օլիվիէ Մեսիանի անուան համերգասրահում եւ ձայնագրուեց համերգը իրենց կողմից:

Դրան յաջորդեց ծննդեան երգերի շրջանը ղեկտեմբերին, երբ Մարսելի ու շրջակայքի քաղաքապետարանները հրաւիրեցին, որ 12 կաթոլիկ եկեղեցիներում համերգ ունենանք: Շատ ուրախ ենք որ այսպիսի հնարաւորութիւն ունենք, ունենք մի մարդ, որ Ֆրանսիայում իր վրայ վերցրել է ու սրտով անում է այս գործը: Երկու տարուայ մէջ գրեթէ 30 համերգ ունեցանք Եւրոպայում եւ շատ ուրախ ենք որ խումբը բաւական ճանաչուած է, մանաւանդ Ֆրանսիա, ոչ միայն հայերի այլ յատկապէս դասական երաժշտութեան, հոգեւոր երաժշտութեան շրջանակների, փառատօների մէջ: Բոլոր հին ազգերը յայտնի են այսօր Եւրոպայում, նոյնիսկ շատ փոքր ազգեր, բայց հայ միջնադարը, հայ հոգեւոր երաժշտութիւնը մնացել է թաքնուած, նոյնիսկ հայերի համար թաքնուած, նոյնիսկ հայաստանցի՝ հայերի... Ուրախ ենք, որ այսօր բացայայտում ենք անում, եւ՛ մեզ համար, եւ՛ օտար ազգերի մարդկանց համար: Իրենք յայտնաբերում են մի նոր՝ հին, շատ հզօր մշակոյթ:

– Գոհար, ինչպէ՛ս ընթացած է քո՛ւ կեանքի ճանապարհը:

– Ես երաժշտագետ եմ եւ խմբավար, աւարտել եմ Երեւանի Կոմիտասի կոնսերվատորիայի [երաժշտանոցի] ֆուլկլորի ամբիոնը (ժողովրդական երգաստեղծութեան) եւ աշխատել եմ այնտեղ 8 տարի որպէս ֆուլկլորագետ-երաժիշտ: Ինքս ունենալով դասական կրթութիւն, բաւական ուշ սկսել եմ շփուել մեր հայ, միջնադարեան հոգեւոր երաժշտութեան հետ եւ բացայայտել եմ ինձ համար էնպիսի խորքեր, եւ հասկացել եմ, որ ամբողջ համաշխարհային երաժշտութիւնը ծագում է եւ գալիս է հին, ժողովրդական երաժշտութիւններից, այսինքն՝ այն երաժշտական հիմքից, որի վրայ հետագայում զարգացել է եւ ձեւորուել դասական երաժշտութիւնը Բախի, Մոցարտի, Բետհովենի եւ այլն:

Պէտք է ասել, որ խորհրդային շրջանը մեզ շատ հեռու էր պահել հոգեւոր արժէքներից, եւ բաւականին ուշ (30 տարեկանի մօտ՝ իմ պարագայիս) հայ ժողովուրդը սկսեց շփուել հոգեւոր արժէքների հետ, եւ գաղափարախօսութեան՝ որպէս հայ առաքելական եկեղեցու, եւ երաժշտական էդ մեծ գանձերի հետ, որ կան: Եւ էդպէս ստացուեց, որ 2002 թուականին, կոնսերվատորիայի մի խումբ երգիչների հետ, մենք միասին սկսեցինք երթալ ուխտի եւ երգել պատարագներ Օշական եկեղեցում՝ սուրբ Մեսրոպ Մաշտոցի գերեզմանին վրայ: Եւ էդ ուխտերը մեզ շատ մեծ ներքին ոյժ էին տալիս, եւ մենք ամբողջ տարածքով պատարագներ երգեցինք ոչ միայն Օշականում, այլ նաեւ նոր վերակառուցուած Ե.-Զ. դարի Կարմրաւոր եկեղեցում, Սաղմոսավանքում, Մուղնիի Ս. Գեորգ եկեղեցում, Աշտարակի ամբողջ շրջանում:

Մեզի համար մեծ ցաւ էր, որ մեր հասարակութիւնը, առաւելապէս կոնսերվատորիան կտրուած են եղել մեր հոգեւոր երաժշտութիւնից, եւ ցաւօք պիտի ասեմ, որ մինչեւ հիմա էլ, թէեւ եղան պրոյեկտներ [ծրագրեր] ստեղծելու հոգեւոր երաժշտութեան ամբիոն, բայց այդպէս էլ չստեղծուեց: Ներսէս [արք.] Պոզապալեանն էր ուզում դա անել, ինչ որ բաներ էլ արուեց, բայց այդպէս էլ մնաց փակ այդ հարցը. դա մեր ցաւոտ հարցերից մէկն է, եւ էն բանը, որ էսօր անում է Գրիգոր Առաքելեանը, պիտի ասեմ [մեծապէս գնահատուեցաւ]. Փարիզի երաժշտական կանալներից [կայաններից] մէկը, Ռադիօ-Ֆրանսի Ռադիօ-կուլտուր կանալը անդրադարձաւ հէնց երաժշտական այն մեծ արժէքին, հին լատային [հնչիւնային կառուցուածքի] երաժշտութեան վերբերմանը դէպի ժամանակակից կեանք, ժամանակակից արուեստ, եւ դա կոչուեց նոր պոլիֆոնիայի [բազմաձայնութեան] ծնունդ: Շատ յաճախ մենք լսում ենք կարծիքներ, որ հին, միջնադարեան երաժշտութիւնը թանգարանային նմուշ է, բայց իրականում էդպէս չէ, այսինքն էն գանձերը որ ստեղծուել են՝ հէնց մարդկայինն է, էն ինչ որ դուն էսօր պիտի կրես, որովհետեւ եթէ էսօր չկրես, կեանքը կը վերածուի... դժոխքի չեմ ուզում ասել՝ քառսի: Էդ ներդաշնակը, էդ գեղեցիկը մենք պիտի բերենք [մեր ներսից, մեր արմատներից]:

– Իսկ Գրիգոր, քո՛ւ անցած ճամբան ի՞նչ է եղած:

– Ես էլ աւարտել եմ Երեւանի կոնսերվատորիան, եղել եմ թաւջութակահար, եւ կոմպոզիտոր [երգահան]՝ Եդուարդ Միրզոյանի դասարանն եմ աւարտել: Ճիշտն ասեմ, ես էլ այդ շրջանում մօտ չէի թէ Կոմիտասին թէ [մեր հին երաժշտութեան], չնայած Միրզոյեանը չեմ յիշում ի՞նչ առիթով ասաւ՝ մէկ հատ նայիր Կոմիտասը ինչպէ՞ս կ'անի, աւելորդ ոչ մի նոթա չունի, նայեցի, եւ այդ օրուանից սկսայ բացարձակ ուրիշ երաժշտութիւն, ա՛յլ բան գրել: Միրզոյեանը մինչեւ հիմա ինձ ասում է չեմ հասկանում ինչպէ՞ս կարելի է 2 օրում այդպէս փոխուել: Այդպէս սկսեցի:

Յետոյ, երբ աւարտեցի, էն ժամանակ խումբ ստեղծեցի «Փիւնիկ» անունով, ժողովրդական նուագարանների խումբ, որ 8 նուագարան էր, 4 երգիչ՝ ճիշտ հակառակը [Օշականին]: 93-ին Շուէյցարիա եղայ, 95-ին առաջին անգամ Ֆրանսիա եղայ ես, եւ 95

թուից սկսեցին իմ կապերը Ֆրասիայի հետ, այդ համերգները շատ մեծ տպաւորութիւն թողին, շատ հայեր յիշեցին, եւ արդէն տասը տարի յետոյ դա իր արդիւնքը տուեց:

Այս խումբը սկսելուց առաջ եւ կարողացայ շնորհիւ Մարսելում [ապրող] Ժագ եւ Անի Տօնապետեաններին, որ հովանաւորեցին այս գործը՝ քեմանիով, քանոնով եւ ուտով հոգեւոր երաժշտութեան (Կոմիտաս, Նարեկացի) մի սիտի [խտասալիկ) պատրաստել, որի շնորհահանդէսին, որ եղաւ Մարսելում, եւ ծանօթացայ Ռոժէ Փիրանեանի հետ, որը եւ առաջարկեց այս խումբի ստեղծումը:

– Ինչ որ ունկնդրեցինք, 8 ձայնով եւ 4 գործիքներով, կրնա՞ւ մանրամասնել:

– Չորս գործիքներն են՝ քանոնը, սրինգը, դուդուկը եւ այդ քեմանին, որ նոր տեսակ է քեմանիի:

– Քեմանին հայերէ՞ն բառ է:

– Այո, քեմանի, քամանի, որովհետեւ կայ նաեւ պարսկերէն՝ քամանչա: Այս բոլոր գործիքները ընդհանրացած են այս շրջանում, եւ մեզ համար կարեւոր է [գիտնալ] թէ որոնք են, որ գործածուել են Հայաստանում վաղ շրջանում: Թ.–Ժ. դարում կար արդէն լարային ջութակի նման մի գործիք, պատկերւում է, որ ջութակահար է նստած նուագող. մինչդեռ Եւրոպայում ԺԴ. դարուն միայն ջութակը յայտնաբերուեց: Մաքուր հայկական գործիքներից, Կոմիտաս միայն սրինգն է, որ նշում է, նոյնիսկ դուդուկը չի նշում: Գիտականօրէն ապացուցուած է, այսինքն՝ պեղումներից գտած են սրինգի կտորներ, հեթանոսական շրջանից՝ կաւից սրինգ. պարկապուկն է նշում, հարուածային գործիքները՝ թմբուկ, զանգակներ եւ այլն: Մեզ համար շատ կարեւոր է [գիտնալ], որ քանոնը, կամ ուտը կամ այլ գործիքներ ԺԲ.–ԺԳ. դարերուն արդէն Հայաստանում գործածուել են, նոյնիսկ թագաւորական, պալատական երաժշտութեան մէջ, մինչեւ մեր թուարկութիւնը եղել են նաեւ նուագախումբեր, ուրեմն գործածում ենք մենք [դրանք] որպէս հայկական նուագարաններ: Մինչեւ միւս ազգերն էլ գործածում են տարբեր ձեւի նման գործիքներ. հարցը շատ շօշափում է մեր երաժիշտների մէջ, հայկական է, հայկական չէ, թառը պարսկական է եւ այլն: Այսպէս կը խօսեն, բայց լաւագոյն թառ նուագողները Արցախից են, գիտենք, վերջին շրջանում գոնէ, գիտենք որ լաւագոյն թառերը թթի ծառից են պատրաստուում, եւ Արցախը թթի ծառերի ճիշտ հայրենիքն է. շատ վիճելի հարցեր են, դրա համար շատ չենք խորանում...

– Լաւ, իսկ ձայնէ՞րը:

– Ձայները, դասական երգչախումբի օրինակով՝ սոպրանօ, ալթօ, տենոր, բարիտոն-բաս, այդ ձեւով է կառուցուած, բայց նաեւ, եթէ զգացիք, շատ ազատ կտորներ կան, ուր ութ հոգին էլ տարբեր բան կ'երգեն: Տարբեր շերտեր, տարբեր կերպարներ միաժամանակ հնչում են, խառնաշփոթ է, բայց ճիշտ այդ տրամադրութիւնն է, որ խառնաշփոթ է, բայց ներդաշնակ կերպով է:

– Գոհար, Գրիգորին յաջողութեան մէկ մասը ձեր այդ հասկացողութեամբ, հոգիով երգելն է: Ինչպէ՞ս կը նկարագրես ձեր տրամադրութիւնը իր այս մշակումներուն նկատմամբ:

– Ինձ համար դժուար է որպէս ունկնդիր կողքից լսել իր երաժշտութիւնը, որովհետեւ եւ ինքս իբր երաժիշտ, երաժշտագէտ՝ կարծես էդ երաժշտութեան մէջ եմ:

– Եւ կապրի՞ս...

– Այո, այո՛ : Փոքրուց շատ սիրել եմ Կոմիտաս, եւ Կոմիտասը ինձ համար եղել է մի աշխարհ ամբողջ եւ շատ յաճախ իրականութեան մէջ չեմ գտել դրա համարժէքը. եւ երբոր էդպէս ստացուեց, շատ հետաքրքիր է, եւ եւ Գրիգորը ծանօթացանք արցախեան նստացոյցի

ժամանակ, երբ կոնսերվատորիայի առաջ ուսանողներ նստացոյց էին անում, բռունցքները եղպէս պարզած, երգում էինք յեղափոխական երգեր եւ նաեւ Կոմիտաս էինք երգում:

Հետաքրքիր է, որ սովորել էինք կոնսերվատորիայում հինգ տարի, բայց չէր յաջողուել ծանօթանալ, եւ իմ ամենատպաւորիչ պահը եղաւ այն, որ Գրիգորը ինձ ասեց՝ «ես երագում եմ ստեղծել մի համոյթ, որը կոմիտասեան հնչողութիւնը կունենայ»: Այսինքն՝ նոյն գործիքները, ոչ թէ կը նուագեն արաբական, պարսկական ոճով՝ նոյն քանոնը,– ես պատկերացնում եմ տաւիդ, հի՛ն տաւիդի ձեւով, ծնկոցներով եւ այլն. Այսինքն՝ ինչ որ ես իմ ներսում լսում էի, եւ շատ յաճախ չէի տեսնում կոնսերվատորիայում, որովհետեւ ամբողջը հիմնուած էր դասական երաժշտութեան վրայ, կամ եթէ ազգային գործիքների, նուագարանների ամբիոնն էր՝ ամբողջութեամբ նուագում էր արաբական, պարսկական եղ ոճով, որը ես չեմ ընդունում: Դա ինձ համար հա՛յ երաժշտութիւն չի: Էն ինչ որ մենք հիմա Մերանգուլեան ենք լսում, թող ինձ ներեն էն երաժիշտները, որ հիմա անում են էդ գործը՝ դա ինձ համար շատ խորթ է: Այսինքն էն ինչ որ Կոմիտասը արեց, մաքրեց մեր երաժշտութիւնը թուրքական, պարսկական, արաբական եղ ելեւէջներից, ինք տուեց իսկական հայկականը, հինը, վեհը, բարձրը, գաղափարայինը՝ նորից խառնուեց, նորից ամբողջութեամբ աղտոտուեց, եւ ետ ամբողջ գործը կոմիտասեան՝ անիմաստ դարձաւ, կը ներէք, որովհետեւ մեր ժողովուրդին այսօր համեմատում են, ասում են՝ հա՛, պարսկական է, թուրքական է, արաբական է, բայց դա չի, բայց ցաւօք էղպիսի նուագը, էղպիսի ներքինը, էղպիսի արտաբերումը գործիքների ոչ մի կապ չունի հայ, արիական, էն իսկական երաժշտութեան հետ, որ Կոմիտասը [յայտնաբերեց]: Կամ ալ ինձ զարմացրեց իր մօտեցումը, թէ ինչ որ երագում էր Կոմիտաս ստեղծել է ս պիտի ստեղծեմ ասաց: Ես փորձում եմ: Դեռ նոր էինք ծանօթ, գնում էի փորձերի, լսում էի «Փիւնիկ»-ը եւ զարմանում էի, որ կարող է էղպէս թափանցիկ, վեհ հնչողութիւն լինի, զերծ էղ աւելորդ խաղերից, բաներից... եւ ես սկսեցի գնալ (Իգիթեանի կենտրոնում էր ստեղծուել «Փիւնիկ»-ը), սկսեցի տեսնել, որ մեծ գործ է արւում իրականութեան մէջ:

Ուղղակի դեռ մարդիկ հասու չեն, ինչպէս օրինակ՝ Եւրոպայում «բարոք» ոճը, հին միջնադարեան, շատ դժուարութեամբ մտաւ. բոլորը նուագում էին «տրեմոլոյ»-ով, էղպէս «վիպրացիոն» [թրթռացումներով] ոճով, եւ շատ դժուար մտաւ հին, միջնադարեան երգեցողութիւնը խորալների [երգչախումբերի]: Նոյնն էլ էստեղ: Մենք փորձում ենք պարզ, միջնադարեան վեհ, բարձր ոճը բերել մեր կեանքին մէջ, չէ՞, քանի որ մենք սերում ենք էղտեղից... իսկակա՛ն հայր: Եւ հայր ինձ թւում է պիտի գտնի իր ակունքները: Ամեն հայ, որ արձագանգում է դրան, իրօք պահպանել է իր ներսում էղ ակունքները:

– Գրիգոր, նկատեցի որ այդ ակունքներուն շատ հարագատ մնալով հանդերձ,– սա ես կըսեմ իբր սիրող, ոչ իբր մասնագէտ, զգալով աւելի քան դատելով,– դուն քայլ մը անդին ալ անցած ես, շատ արդիական մօտեցում ցոյց կու տաս: Կը բացատրե՞ս ասիկա: Իրապէս նորութիւն էր մեր լսածը: Երիտասարդներուն հասնելու համար՝ ասիկա շատ կարեւոր է:

– Սովորաբար նման դէպքում երբ բացատրում ես, թւում է թէ նախապէս մտածել ես, նոր ես արել: Չէ, հիմա արել-ստացուել է՝ նոր եմ բացատրում ինքս ինձ եւ հասկանում ինչո՞ւ է այսպէս լաւ, կամ լաւ չէ: Նախ սկսեմ նրանից, որ այսօր աշխարհում ամեն բան կայ,– մենք Եւրոպա յաճախ լինում ենք, Եւրոպայի մասին խօսենք,– ամեն բան լսել են, տեսել են, նոր բանով, ինչո՞վ պիտի զարմացնես, նոյնիսկ ազգայինն ես ցոյց տալիս, իրենց համար նոյնն է, ինչ որ ասենք պարսկականը, արաբականը. շատ հեռու չենք գնում ուրեմն, ոնց որ մի ճիւղ լինենք ուղղակի: Ուրեմն նախ պէտք է կարենաս ամենէն կարեւոր կէտերի վրայ

ուշադրութիւնը սեւեռել եւ այնպիսի նոր բան գտնես, որը Եւրոպայի համար էլ նոր է, ոչ միայն հայի համար:

Ես միշտ մտածել եմ, իմ ուսանողական տարիներից, որ այնպիսի բան ստեղծագործեմ, որ նոր հնչէ, թարմ հնչէ, մարդուն գրաւի: Երբոր գրաւեց, անկէ անդին՝ թէ ի՞նչ միտք կու տաս, ի՞նչ խորքեր կը բացես՝ դա արդէն «յետոյ»-ն է: Դրա համար ճիշտ եմ համարում այս առումով՝ նոր ձեւով, անսովոր ձեւով մատուցել, գրաւել մարդկանց, բայց ոչ,– սխալ թող չհասկանան ինձ,– ինչ որ էժան հնարքներով վերաբերման, որովհետեւ կայ մշակոյթի մեջ նման ուղղութիւն, որ եկէք ռիթմ դնենք, եկէք սապէս, նապէս... Բայց շունչը խաթարում է: Կլասիկ շատ գործեր կան, ուր Չայկովսկիի եւ Պետրովենի մեղեդիին կը ճանաչես, բայց ուր էդ սիմֆոնիկ հնչեղութիւնը չես զգար... միայն մեղեդիին չէ երաժշտութեան մեջ. ամեն ինչ իրար հետ է, որ ազդում է, ուրեմն ամեն ինչը պիտի կարողանաս վեր հանել: Օրինակ, ես փորձում եմ, Մաշտոցի շարականը, էդ դանդաղ սոլոները որ հնչում են, պահուած հնչիւնների հետ, երեւակայում եմ, որ երբոր տաճարի մը մեջ երգիչը երգում է, այդ արձագանգը ինչպէս կը մնայ, ձայները իրար վրայ կու գան եւ մթնոլորտ կը ստեղծեն, վերջը երբոր դուն մաքուր ձեւով երգես սենեակում կամ դահլիճում այդ էֆեկտը [ազդեցութիւնը] չի լինի: Մաքուր ցոյց տալով՝ աղաւաղում ենք երաժշտութիւնը: Ուրեմն պետք է այդ ձայները կարողանանք արուեստի լեզուով մատուցել, որպէսզի չկտրենք իր միջավայրից, այն ինչ որ Կոմիտասը արեց: Չէ որ, գիւղում երբոր լսում ես այդ երգերը... հիմա չենք կարող, բայց այդ օրերին գիւղացիները հաւաքում, երգում էին, այդ ջրի ձայնը, քամին, ամեն ինչը իրար հետ էր, եւ քանի որ Կոմիտասը համերգային դահլիճից պիտի մատուցէր, այդ ձայները չէին լինի, ուրեմն դաշնամուրի նուագակցութեան մեջ ինքը այդ ջրի վլվլոցը, ամեն բան կոնտեքստացնում էր, այսինքն արուեստի լեզուով, երաժշտութեամբ. դա՛ է արուեստի նպատակը:

Կոմիտասը ստեղծել է մի դպրոց, մի սիստեմ, որ ամեն երաժիշտ պարտադիր պետք է իմանայ:

– Գոհար, դո՞ւն ալ բան մը կ'ուզէիր նշել:

– Այո, Կոմիտասը ասում էր, որ հոգեւոր երգը, ժողովրդական երգը քոյր եւ եղբայր են. նրանք երկուսն էլ մէկ արմատ ունեն. եւրոպացիները ասում են ինչպէ՛ս կարողանում էք համադրել ժողովրդական, ուրախ, սոսնական երգը, պարերգը եւ հոգեւոր շարականը, բայց մենք տեսնում ենք, որ խորքում՝ իրենք նոյն ակունքները ունեն: Եւ իսկապէս, անցումը էդ հոգեւորից, ներքին խոկումից եւ վեհութիւնից՝ [դէպի] ուրախութիւնը, կեանքի՝ ուրախութիւնը, նրանք պիտի [լինեն] ներդաշնակ՝ ինչպէս ձեռք-ձեռքի տուած քոյր-եղբայր, մէկ միասնութիւն պիտի քայլեն: Եւ իսկապէս մեր համերգները դա ցոյց են տալիս, որ զգացում է, որ իսկապէս տխուրը, խորը, ներքինը,– կարծես բացայայտում ես ինքդ քեզ քո աշխարհը,– բայց դա նաեւ առիթ է, որ դու ուրախանաս, որովհետեւ քո ժողովուրդը միասնական է, սիրով է, ունի իսկապէս քրիստոնէական հիմքեր, եւ դա ուղղակի լուսաւոր երաժշտութիւն է: Շատ իւնիկալ [եզական] բան է, բայց մեր ժողովուրդը ստեղծել է ե՛ւ հոգեւոր ատեղիներ, եւ ի հոգեւոր երգեր, այսինքն ժողովրդականն ու հոգեւորը քայլում են ձեռք-ձեռքի տուած:

– Ի՞նչ ցանկութիւններ ունիք, ի՞նչ հեռանկարներ, Գրիգոր՝:

– Բնականաբար առաջինը բեմն է, որ երաժիշտը կուզի, հնարաւորութիւն՝ համերգ տալու, երգելու, ինչ որ չափով Հայաստանում, բայց ցաւօք, Հայաստանը դեռ չունի այդ դաշտը լսելու այսպիսի երաժշտութիւն, եւ եթէ ունի էլ՝ ասենք տարուայ մեջ մէկ-երկու անգամ,– փոքր է Հայաստանը: Բայց խումբը պետք է գործի, միշտ դուրս գայ տարբեր

երկիրներ, ցոյց տայ այս արուեստը, եւ նորից ասեմ Կոմիտասի խօսքերով, հայ երաժշտութիւնը կարելոր է ճանաչել ոչ միայն հայի համար, այլ ամբողջ աշխարհի համար կարելոր այսինքն մենք լաւութիւն կընենք ամբողջ աշխարհին:

– Բա՞ն մը պիտի աւելցնես, Գոհար

– Այո, անցեալ տարի հնարաւորութիւն ստեղծուեց, Տուլոնի եկեղեցում կոնֆերանս [համագումար] եղաւ հայ երաժշտութեան մասին, հոգեւոր եւ ազգային, որպէս եւրոպական երաժշտութեան հիմք: Ֆրանսիացիների համար շատ-շատ հետաքրքիր էր, որովհետեւ նա հանդիսանում էր աշխարհի՝ երաժշտութեան [հիմք] քանի որ հայերը կային Նոյեան երկրէն, եւ ես ցոյց էի տալիս, որ պատմականօրէն քանի որ հայերը գալիս են Արարատ լեռից, եւ իրենց մշակոյթը եւ լեզուական եւ երաժշտական գնում է աշխարհի մշակոյթի հիմքը, շատ կարելոր է, որ բոլոր ժողովուրդները ճանաչեն այդ երաժշտութիւնը : Դուք չէք պատկերացնում, ֆրանսիացիները ուղղակի լացում էին, ասում էին մենք կարծես մեր հայրենիքը գտանք, թուում է ուրիշ ազգ է, բայց այդ մարդիկը լացում էին, որովհետեւ նրանք զգում էին, որ միացան այնտեղ այն արժէքներին որոնք գալիս են Նոյեան, Արարատեան երկրից, եւ ամեն մարդ իր հարազատ մասնիկն է գտնում էնտեղ՝ բոլորովին չիմանալով հայերէնը՝ բացարձակ հասկանում է լեզուն:

– Վերջին հարցում մըն ալ ընեմ: Խումբը ինչպէ՞ս կը պահէ ինքզինք, հովանաւոր ունի՞ք, Գրիգոր:

– Խումբը միայն համերգների, հիւրախաղերի շնորհիւ է, որ գոյութիւն ունի:

– Այդ կը նշանակէ, որ դուք ուրիշ զբաղում պէտք է ունենաք՝ ձեր ապրուստը հոգալու համար:

– Այո՛, մարդիկ տարբեր խմբերում երգում են, օպերայում են աշխատում, կոնսերվատորիայում: Խումբը կարող է շատ աւելի յառաջ գնալ երբոր ունենայ ֆինանսական մշտական աղբիւր, պրոժէկտներ անի, շատ առաջարկներ արել եւ ես Հայաստանում, դեռեւս չի եղել արձագանգ. ձայնագրութիւնների քանակ կարող ենք մատուցել, Հայաստանի պետական ձայնադարանի համար, անթոլոկիա [հաւաքածոյ] արուի հայ երաժշտութեան՝

5-րդ դարից մինչեւ 12-րդ եւ այլն, եւ այլն: Շատ հնարաւորութիւններ կան, մնում է միայն գտնել միջոց: Յետոյ, խումբը նկարահանումներ ունենայ, եւ ժողովուրդը ժամանակ առ ժամանակ տեսնի, լսի:

– Գրիգոր, ինքդ ուրիշ պաշտօն ունի՞ս:

– Ես ուրիշ պաշտօն չունեմ, ժամանակին տարբեր տեղեր աշխատած եմ, ամեն տեղից դուրս եկայ, որ միայն այս գործով զբաղուեմ:

– Իսկ, Գոհար, դու՞ն...

– Ես կոնսերվատորիա աշխատեցայ ֆուլկլորի ամբիոնում, բայց երբորդ երեխան որ ունեցայ, դուրս եկայ: Եկեղեցում պատարագներ ենք երգում: Օշականի ստեղծուելուց յետոյ արդէն ամենը թողեցի, բայց հիմա դեկավարում եմ Միխիթար Սեբաստացի կրթահամալիրի երաժշտական ծրագիրը: Առաջին դասարանէն երեխաները սովորում են ժողովրդական եւ հոգեւոր երգեր, ինչպէս նաեւ դասական երաժշտութիւն, եւ եղ ամենը ռիթմիկ, շատ հետաքրքիր վարժութիւնների միջոցով մատուցում են: Դասական երաժշտութիւնը ռիթմիկ առարկայի միջոցով, եւ՛ հոգեւոր շարականներ՝ տօների, ծէսերի հետ կապուած:

– Շատ, շատ շնորհակալ եմ, որ օրուան այս ուշ ժամուն ընդառաջեցիք զրոյցի հրաւերիս: Յաջողութիւն ձեր ապագայ ծրագիրներուն:

Եւ լիովի յագեցած, բայց տակաւին ծարաւ՝ գիշերուան այդ ուշ ժամուն կը վերադառնանք պանդոկ, հիւրանոց...

Դէպի Սեւան եւ Վայոց ձոր

31 մայիս, շաբաթ

Սեւանայ լիճը ի՛մ յիշողութեանս մէջ անմոռանալիօրէն դրոշմուած է որպէս ոսկեփայլ տարածք մը, դիտուած թերակղզիի վանքերու բարձունքէն՝ ուշ յետ միջօրէին: Ուրիշ անգամ նոյն տեսարանը այր ու կին վայելած ենք ամպամած երկնքի տակ ու տեսած կապարագոյն լիճը՝ իր մակերեսին ծփացող սպիտակ ամպերով:

Այս անգամ տարբեր դիտանկիւնէ մը պիտի տեսնենք լիճը, եւ բոլորովին այլ, նոյնքան անմոռանալի պատկեր մը պիտի մնայ մեր մտքի պաստառին վրայ. կապուտա՛կ Սեւանը:

Սակայն օրը սկսինք Երեւանէն, ուրկէ կը մեկնինք կանուխէն, մեր հաւատարիմ վարորդին հոգածութեան անձնատուր: Մայրաքաղաքը կը թողունք հիւսիս-արեւելեան կողմէն 4 անցնելով Ալեքսանտր Միասնիկեանի պողոտայէն եւ Հրաչեայ Աճառեանի փողոցէն՝ միանալու համար Թբիլիսեան խճուղիին (M-4), որ Սեւան ու Դիլիջան տանող գլխաւոր մայրուղին է: Կը մտնենք Կոտայքի մարզը, կը քսուինք Աբովեան, Նոր Հաճրն, Բիւրեղաւան եւ Չարենցաւան քաղաքներուն ու վերջապէս կը հասնինք Գեղարքունեաց մարզը:

Այս անգամ սակայն թերակղզի պիտի չերթանք: Ուրեմն, Հրազդանը անցնելէ ետք պիտի առնենք լիճը եզերող M-10 ճանապարհը եւ ուղղուինք դէպի հարաւ: Աղուոր, արեւոտ օր մըն է, պայծառ երկինք, ու օդին մէջ կայ հաճելի, կենարար աւիշ մը:

Կը հետեւիմ քարտէսին ու Արագին տուած ցուցմունքներուն:

Առաջին կանգառ. Բերդկունք, այսինքն՝ բերդերը: Իրականութեան մէջ շատ բան չէ մնացած այդ «բերդեր»-էն, բացի ցանկապատի մը ետեւ. ծուարած քանի մը փլատակ պատերէ, որոնք կը մերժեն իյնալ ու կորսուիլ: Հետաքրքրական է գիտնալ ո՞ր դարերէն են մնացած :

Հիմա, այս գրած պահուս, կը բանամ «Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան»-ը եւ կը տեղեկանամ, որ արաբական տիրապետութեան շրջանին Դուին-Պարտաս տարանցիկ ճանապարհի վրայ կարելոր առեւտրական կեդրոն ու վաճառատեղի եղած են եւ աւերուած են թաթար-մոնկոլական արշաւանքներուն (ԺԳ.–ԺԴ. դարերուն)...

Կը շարունակենք ճանապարհը: Մեր գլխաւոր թիրախը Հայրավանքն է, որ ահա հեռուէն կերելի թառած իր բարձունքին: Ով որ որոշած է այդտե՛ղ կերտել այս եկեղեցին ու վանքը՝ շատ լաւ ընտրութիւն գիտցած է ընել անոր վայրը որոշելու համար (ինչ որ է պարագան, ի դէպ, մեր գրեթէ բոլոր կոթողներուն): Հայրավանքը շինուած է Թ.–Ժ. դարերուն,



Իր բարձունքին իշխող Հայրավանքը...

նախ եկեղեցին, որ իր համեմատություններով ու պարզ խաչաձև յատակագիծով գեղեցիկ նմոշ մըն է, ապա գաւիթը, որ անհամեմատօրէն մեծ է ու անհամաչափ:

Կարեւորը, սակայն, դիրքն է, որ տիրապետող է: Ահա այստեղէն է, որ Մեանի ջինջ կապոյտը տեսանք ու մեր աչքերով լափեցինք: Չէինք ուզեր հեռանալ...



... ու այնտեղէն դիտուած Մեանը կապուտակ

Սակայն չենք կրնար երկար յամենալ. շատ բան կ'ուզենք տեսնել՝ քանի մը հաշուած ժամերու ընթացքին :

Յաջորդ կանգառը Նորատուզն է (այժմ Նորատուս) որ աներեւակայելիօրէն հարուստ է խաչքարերով: Գիւղը ունի պատմական գերեզմանատուն մը, ԺԳ.-ԺԸ. դարերու, սակայն կը թուի թէ շատ աւելի հին շիրմաքարեր կան այստեղ, մամրակալած խոյեր, որ մեզ կը տանին



մինչև... Հայկ Նահապետ, աւելի ճիշտ՝ մինչև Հայկի թոռ Գեղամը: Չէ՞ք հաւատար, հարցուցէք տաս տարեկան Կարինէին, որ մեզ կ'առաջնորդէ, բացատրութիւններ կու տայ եւ կը վկայակոչէ գիւղին պատմաբանը՝ Արեւշատը, որ նոյնպէս հոն է, գերեզմանատան մուտքին, իր բարձր հասակով հակած իր ձեռնափայտին վրայ: Կը կարդամ, որ ըստ աւանդութեան՝ գիւղը կամ գիւղաքաղաքը (ներկայ Գաւառ քաղաքէն ոչ շատ հեռու)՝ հիմնուած է Գեղամ Նահապետի կողմէ, եւ

շրջակայքը կարելի է տեսնել բրոնզի ու երկաթի դարի դամբարաններ: Կարելի է ժամեր անցընել այստեղ, սքանչանալ մեր քարակոփ վարպետներու աննման ձեռագործներուն վրայ, խոկալ մեր նախնեաց սխրագործութիւններուն մասին, մտածել կեանքի իմաստին եւ ունայնութեան ալ մասին... Բայց՝ շարունակենք:

Կը մտնենք Ծակքար. Արագը թելադրած էր՝ չփախցնէք Ծակքարը: Գիւղ մը, շատ ուրիշ գիւղերու նման. հին, անդէմ, անդիմագիծ միայարկ-երկյարկ տուներով: Կը հարցնենք՝ ուր է եկեղեցին: Իրարու կը նային, չեն հասկնար ի՞նչ եկեղեցի. յետոյ կը յիշեն որ ճամբուն վերջաւորութեան բան մը կայ: Այո, քառանկիւն, կիսափուլ շէնք մըն է: Յետոյ կը հասկնանք, որ մեր աղջիկը կուգէր, որ պարզապէս գիւղը տեսնենք, իբր մտերմիկ միջավայր, ուր մեր ժողովուրդին մէկ փոքրիկ մասը կ'ապրի, ու հասկնանք խեղճութիւնը եւ օգնութեան կարիքը, որ նման վայրերը ունին: Մեր բառարանին հարց տանք անգամ մը եւս, թէ ուրկէ՛ կու գայ ա՛յս անունը, որ նախ համանուն գետակինն է, Ցակարքար ալ կոչուած: Աշոտ Ա. այս գիւղը, այլ գիւղերու հետ նուիրած է Սեւանի վանքին: Ներկայ բնակավայրը 1828-ին հիմնուած է Մուշէն, Ալաշկերտէն եւ շրջակայքէն գաղթած ընտանիքներու կողմէ: Այստեղ, գեղադիր, ամառանոցային կլիմայ ունեցող այս գիւղին մէջ կան պատմական եկեղեցիներ, վանքեր, նոյնիսկ Է.-Ը. դարերու հնութիւններ, որոնք ներկայիս գրեթէ անտեսուած կը մնան:

Հետաքրքրականը, սակայն, այս շաբաթ առաւօտով իրարու յաջորդող թափօրներն են, որոնց առջեւէն երկու պատանիներ իրենց ուսերուն դրուած ձողէ մը կախուած թոյլ մը կը փոխադրեն, ի՞նչ կրնայ ըլլալ... Կը հասկնանք, որ իրենց հանգուցեալ սիրելիներուն գերեզմանը այցի կերթան, այդ թոյլերուն մէջ՝ տունէն վառուած ածուխի վրայ՝ ծխացող խունկ տանելով...

Յետոյ՝ յետոյ Սելիմի կամ Մուլեմայի լեռնանցքը պիտի հասնինք, կտրելու համար Վարդենիսի լեռնաշղթան եւ մտնելու համար Վայքի մարզը, Մարտունի կամ անոր մօտ նախապէս պահ մը կանգ առնելով ու տեղւոյն մաքրամաքուր, նորակերտ բժշկական կեդրոնը մտնելով՝ մեր բնական կարիքները հոգալու համար: Զբօսաշրջիկներուն, յատկապէս Գանատայէն եկող զբօսաշրջիկներուն համար ամեն դուռ կը բացուի...

Մայրուղին, որով կիջնենք հիւսիսէն հարաւ, ըստ երեւոյթին կը հետեւի պատմական մետաքսի ճանապարհին, ու լեռնանցքը (2410 մ բարձրութեան վրայ) անցնելէ անմիջապէս ետք, պիտի գանք Սելիմի կամ Մուլեմայի կառաւանատունը (քարաւանատունը կամ քարաւանսարան), որ շինուած է 1332 թուականին՝ իշխան Չեսար Օրբելեանի միջոցներով:

Մրբատաշ խոշոր քարերով, «Լ»-ի ձևով ու եռանաւ շէնք մը, տանիքին փոքր լուսամուտներով, ուրկէ ներս սողոսկող արեւի լոյսը խորհրդաւոր լուսաւորում մը կը ստեղծէ:

Մուտքին կան գեղեցիկ բարձրաքանդակներ ու նախշեր, որ հասարակ որեւէ «մոթել»է մը կը զանազանեն զայն... Միջնադարեան Հայաստանի քաղաքացիական ամբողջական հագուազիւտ շինութիւններէն մէկն է, կըսէ ամենագէտ բառարանս: Ներսը կան 64 ձիերու մտուրներ եւ միակտուր քարէ մեծ ջրաւազան մը: Մարդիկ այստեղ կանգ կ'առնէին առեւտրական ճանապարհներու խաչմերուկին, իրենց կենդանիներուն հետ, կը հանգստանային, ով գիտէ ի՞նչ գաղտնիքներ կը փոխանակէին, ապա կը շարունակէին իրենց ճանապարհը:



Սելիմի կառուանատունը



Մուտքի քանդակներուն կատարելութիւնը



Ներքնամասը

Այստեղէն կը դիտուի Վայոց ձորը, կանաչապատ, անդնդախոր, իր ամբողջ գեղեցկութիւնը բանալով աչքերուդ առջեւ: Մինչեւ Եղեգնաձոր այդպէս է, Հայաստանի ամենէն հրապուրիչ շրջաններէն մէկը, եւ այս եղանակին՝ կարմիր կակաչներով, դեղին մարգարտածաղիկներով ու բազմագոյն այլ ծաղիկներով հարուստ լանջերով:

Ոչ շատ հեռու պիտի տեսնենք նաեւ պատմական կամուրջներէն մէկը, այժմ գլխաւոր ճանապարհէն քիչ մը ներս քաշուած, համեստ ու կիսափուլ: Պիտի հասնի՞նք վերականգնելու հազարաւոր այս ու նման մեր յուշարձանները...:

Պիտի շարունակենք մեր էջքը դէպի Եղեգնաձոր, բայց պիտի շրջանցենք քաղաքը ու մտնենք Զանգեզուրի ճանապարհը՝ M-2, հակառակ ուղղութեամբ: Մա Հայաստանի ամենէն երկար մայրուղին է, 402 քմ երկարութեամբ, Երեւանը կը կապէ պարսկական սահմանին՝ անցնելով Սիսեանէն, Գորիսէն ու հասնելով Մեղրի: Մենք այժմ կ'ուղղուինք դէպի Երեւան: Արենիի մօտէն եւ Խոսրովի արգելոցի հարաւային կողմէն անցնելով, պիտի հասնինք Նախիջեւանի բռնագրաւեալ շրջանի ամենէն մօտիկ կէտին՝ Երասխա աւանին, որմէ ետք,



Վայոց ձորը

արդեն Արարատ մարզին մեջ, պիտի քսուինք Արարատ քաղաքին, կանգ առնենք ճամբուն եզերքը՝ լեռան սքանչելի համայնապատկերին առջև, լուսանկարուինք: Վառելանիթի լցակայանը, ուր կը մտնեմ տեղեկություն առնելու համար, ըստ հայկական սովորութեան՝ օղի պիտի հրամցնեն, ապա պիտի շարունակենք քշել՝ լուռ, հմայուած, ապշած: Հեռուն՝ հորիզոնին վրայ, Խոր վիրապն է, անոր ձախին՝ Գեորգ Չաուշի հսկայ արձանը:

Դարձեալ կանգ պիտի առնենք՝ պտուղ գնելու: Արամին քով պիտի գտնենք նոր հասած մեծ ծիրանները: Աղուոր տաղաւար մը շտկած է, հարուստ բերքով: Երիտասարդ, կենսուրախ տղայ մըն է: Մեր հարցումին՝ թէ ինչպէ՞ս կ'ապրի, կը դիմանայ, – լաւատէ՛ սօրէն, – կը պատասխանէ: Ջուրը, միայն ջուրի խնդիրը որ լուծուի... շատ թանկ է, ու քիչ՝ ռոռոգման ջուրը: Ծնողները կամ մեծ ծնողները Եղեռնէն մազապործ ազատած, այս կողմերը ապաստան գտած են...

Եւ պիտի շարունակենք մեր երթը դէպի Երեւան ու զարմանանք, թէ որքա՛ն արաբատառ ցուցանակներով բեռնատար ինքնաշարժներ պիտի տեսնենք ճամբու ընթացքին: Խոշո՞ր բեռնակառքեր: Պարսկաստան կ'երթան, Պարսկաստանէն կու գան...

– Միայն պարսիկ չեն, թուրքեր ալ կան, ամբողջ շուկան թուրքական ապրանք է լցում, – դիտել կու տայ մեր վարորդը...

Կը հասնինք մայրաքաղաք, կը մտնենք Նորագաւիթ փողոց, ապա Արշակունեաց պողոտայ, կանցնինք Նորագաւիթ, Ներքին եւ Վերին Շէնգաւիթ քաղաքամասերէն, ապա Գրիգոր Լուսաւորիչ փողոցէն կը մտնենք Իտալիոյ փողոց, որուն շարունակութենէն՝ Վազգէն Մարգարէան փողոցէն ալ արդէն Հրապարակ կ'ելլենք: Անկէ՛ Աբովեանի վրայ մեր հիւրանոցը երկու քայլ է:

Օրը այսպիսով չաւարտիր սակայն:

Երեկոյեան պիտի հանդիպինք ընտանեկան պարագաներու, որոնք Չարենցի փողոցը կ'ապրին: Քալելով՝ Աբովեանն ի վեր, ապա աջ՝ Մայաթ Նովայով պիտի երթանք իրենց, Խանջեանի՞, թէ՛ Ալեք Մանուկեանի վրայ քիչ մը երկարելով մեր ճամբան՝ շինարարական

աշխատանքներուն պատճառաւ: Ամեն կողմ փողոցներու նորոգութիւն կայ, նոր անցքեր կը կառուցուին:

Այդ ազգականներուն բնակարանը պիտի հանդիպինք իրենց փեսային՝ Մերուժան Կարապետեանին, որուն կատարած մեծ գործը՝ մեր գրականութեան թուայնացման համար, հիացում կը պատճառէ ինծի: Հետը ժամադրութիւն կ'առնեմ հարցազրոյցի մը համար:

«Մեր պատասխանը»

1 յունիս, կիրակի

Տարբեր օր մը, բայց նոյն զգացական թրթիռներով լեցուն:

Հիւրանոցը, նախաճաշի սեղանին շուրջ, որ այսօր կը բաժնենք Սահակեան ամուլին հետ՝ խօսակցութիւնը կ'ընթանայ տարբեր շաւիղներով. Կարապետեանի մասին, որուն քոյրն է տիկ. Նայիրին, Հայաստան ներգաղթող մեր երիտասարդներուն մասին, մեր տարեցներուն, որոնք կրնան գալ ու հանգստեան կոչուիլ այստեղ, երկքաղաքացիութեան եւ այլեւայլ ազգային հարցերու մասին: Նայիրի ծրագրած է ամբողջացնել Կարապետեանի արխիւը, ու ես ալ կը խոստանամ իրեն փոխանցել անոր հետ փոխանակած նամակներուս, իր հետ ունեցած զրոյցներուս պատճենները: Կը խոստանամ, բայց տեսնենք ե՞րբ պիտի կարենամ յարգել խոստումս...

Յետոյ՝ Վերնիսաժի շուկան՝ Գանատա մնացած մեր հարազատներուն շատ ինքնատիպ նուէրներ գնելու, – որքա՛ն վարպետ արուեստագէտ՝ արհեստագործ մարդիկ կան, տարեց ու երիտասարդ, որ հայկական նախշերով, հայկական թեմաներով գործեր կ'արտադրեն: Խայտաբղէ՛տ շուկայ է այստեղ, բաց երկնքի տակ, եւ ընտրանքի դժուարութիւն ունինք. ո՞րը առնել, ո՞րը թողել...

Այսօրուան յայտագիրը միւս բոլոր օրերէն տարբեր է. ոչ տեսարժան վայր ունինք այցելելիք (թէեւ... ամեն տեղ տեսնելու արժանի բան կայ), ոչ ալ որեւէ անձնաւորութեան հետ հանդիպելու, զրուցելու նպատակ ունիմ (թէեւ փոքր հարցազրոյց մըն ալ այսօր պիտի կայանայ... յանպատրաստից): Այցելութեան պիտի երթանք մեր բարեկամներուն, ընկերներուն, պարզապէ՛ս:

Կիրակի՛ է...

Բարեբախտաբար երկու ընտանիքներն ալ, որոնց պիտի այցելենք, նոյն վայրին մէջ կը բնակին, Աշտարակ, իրարմէ 5-10 վայրկեան (հայաստանեան բառով՝ րոպէ) հեռու, կամ ըսենք իրարու մօտիկ:

Առաջինը Անահիտենց պիտի երթանք, ժամադրութիւնը կ'եսօրին է: Տաքուկ, պայծառ ու արեւոտ օր մըն է, Աշտարակն ալ կարծես իր կիրակնօրեայ զգեստներով կը դիմաւորէ մեզ:

Այս բնակավայրին անունը պատմութեան մէջ կ'երեւի Թ. դարէն, իսկ ոմանք զայն կ'առնչեն ասորական Իշտար աստուածուհիին հետ: Մակայն Քասաղ գետի երկու կողմերը տարածուող այս ամենէն այգեւէտ քաղաքին մօտերը պրոնզի եւ երկաթի դարերէն հետքեր գտնուած են:

Այսօր, Երեւանէն հազիւ 20 վայրկեան հեռու՝ հաճելի վայր մըն է ապրելու համար եւ կրնայ արուարձանի դեր կատարել: Ինչպէս նախապէս, նոյնպէս ներկայիս այգիներուն մէջ ցանուած բազմաթիւ մենատուներ կան:



Պաղտատեաններուն հետ

Նման մենատուն մըն ալ Պաղտատեաններուն կալուածն է, մեծ հողի մը վրայ: Նազիկին դասընկերուհին, իր գոյգ տղոց եւ անոնց հայրենական նորակազմ ընտանիքներուն հետ այստեղ կը բնակի:

Հին բնակարանը, ուր բոլորը միասին կ'ապրին, շրջապատուած է ընդարձակ պարտեզով մը, վարդենիներով, գոյնզգոյն այլ ծաղիկներով, սարփինաներով:

Երեխաներուն ճոռուղիներ կը միանայ թռչուններու ճոռուղիներին եւ կեանք կու տայ այս տաքուկ բոյնին: Պետրոս-Փիեռը, որ Լիբանանէն պիտի գայ այս օրերուն, եւ Նարինէն ունին երկու աղջիկ՝ Սերլի եւ Արելի, Տիրանն ու Թամարը մէկ աղջիկ՝ Վաննին (երկու՛ նուով):

Տիրան հպարտութեամբ զիս կը պտտցնէ տան ետեւը գտնուող իր գործարանը, ուր կ'արտադրէ արդէն համբաւի հասած իր «Կուրմէ-Տուրմէ» շոքոլաները, եւ եռայարկ տակաւին անաւարտ կառոյցը, որ իրենց նոր բնակարանը պիտի դառնայ:

– Ի՞նչ զգացումներ ունիս այստեղ, հայրենի հողին վրայ,– հարց կու տամ Տիրանին:

– Մեր հայրենիք վերադարձը մէկ հիմնական պատճառ մը ունի. եթէ մարդիկ այսօր իրենց առօրեային մէջ յաճախ կը խօսին Յեղասպանութեան ընդունման, ճանաչման գծով ապագայ նուաճումներու մասին, մենք անձամբ, ամէ՛ն մէկ անձ որ Սփիւռքի մէջ կ'ապրի՝ ի՛նք կրնայ տալ իր պատասխանը այդ ընդունման առնչութեամբ՝ այդ ալ Հայաստան վերադառնալով է, որովհետեւ բուն ծրագիրը Յեղասպանութեան եղած է տեղահան ընել հայ ազգը եւ բնաջնջել: Մեր պատասխանը, ուրեմն, վերադառնալն է: Հայրենիք վերադառնալով՝ ամեն մէկ անհատ արդէն իր պատասխանը տուած կ'ըլլայ: Պէտք չէ սպասել որ այս կամ այն երկիրը ընդունի, յարգարժան ճորձ Պուշը ընդունի, կամ ՄԱԿ-ը ընդունի... այս բոլորը երկրորդական բաներ են, որովհետեւ քաղաքական դաշտին մէջ ոչ մի նշանակութիւն ունին: Մեր վերադառնալով պատասխանը տուած կ'ըլլանք:

Պաղտատեաններու հովասուն պարտեզին մէջ, ամպհովանիի կամ ծածկի մը տակ՝ ճաշի սեղան է բացուած, եւ ճշմարտապէս կրնանք երգել՝ «Սեղանն է առա՛տ, դիմացն Արարա՛տ»...:

Ես կը շարունակեմ հարցուփորձել Տիրանը.

– Իսկ քու վերադարձդ ի՛նչ պայմաններու տակ էղաւ:

– Այնքան ատեն, որ Սփիւռքի մեծ հատուածը կ'ապրի երկիրներու մէջ, որոնք դժուար վիճակներու մատնուած են, ինչպէս Լիբանանը, որմէ մենք վերադարձանք, շատ քաջալերելի կ'ըլլայ որ մարդիկ այդ երկիրներէն գան, նոյնիսկ եթէ այսօր իրենք ֆինանսապէս շատ տալիք չեն ունենար Հայաստանի, իրենք կրնան գալ իրենց գիտելիքներովը Հայաստանի մէջ

նորութիւններ բերել: Մենք որոշեցինք, – կը շարունակէ Տիրան, – մեր այս տարիքին, երբ բախտը ունեցանք 600 տարի ետք անկախ Հայաստան մը ունենալու՝ երկա՛ր ժամանակուան համար, այդ առիթը օգտագործե՛լ, թէ ոչ հեռուէն խօսելով բան մը ըրած չէինք ըլլար: Ըսինք զանք, ինչ «էլ որ լինի», հոս, հաստատ, մէկը իր հացը կը ճարէ: Այդ փոքր հացը մեզի համար շատ աւելի կարեւոր է քան «յառաջացած» նկատուած երկիրներու մէջ մեծ հացի կտորները, որ այսօր կը նուաճենք, այդ «յառաջացած»-ն ալ փոխաբերական է, շատ բան կայ այդ ««յառաջացած»-ին մէջ, որ ինծի համար զերօ է, մանաւանդ բարոյական գետնի վրայ...

– Ի՛նչ եղած են ժողովուրդներ, մշակոյթէն բռնած, այդ յառաջացած երկիրներուն մէջ, – կ'աւելցնէ ան, – օրինակ Աւստրիոյ մէջ, որ «գլխախօ»-ի երկիր կը նկատուի, իրենց երիտասարդները գացած են դէպի ամերիկանացած երաժշտութիւններ, շատ փոքր տոկոսն է, որ կը հետեւի իրենց արժէքներուն, ո՞ւր հասած է աշխարհը: Եւ մենք ունինք ասանկ երկիր մը, ուր կրնանք գալ եւ օգնել ու մեր ծաղիկը ցանել մեր պարտէզին մէջ, որ այսօր դատարկ է, բայց վաղը կը լեցուի...

Կրնանք երկա՛ր յամենալ այս դրախտային միջավայրին մէջ, սակայն երեկոյեան ալ տարբեր յայտագիր ունինք: Ուստի դժուարաւ կը բաժնուինք մեր այս նորայայտ հարագատներէն:

Տիրան կ'առաջարկէ մեզ հասցնել Ուշի, ուր պիտի այցելենք այլ սիրելիներու, բայց անկէ առաջ կը տանի ցոյց տալու իրենց տան գրեթէ դրկից երկու եկեղեցիներ՝ ԺԳ. դարու Մայիտակաւորը, որուն մուշ գոյնի քարերով շարուած չորս պատերն են միայն կանգուն, եւ Ե. դարու Ծիրանաւորը, բաց գոյնի քարերով... հոս եւս կը տնտնանք, կ'ուզենք հաղորդուիլ պատմական այս ժառանգութեան ալ խորհուրդով: Ի վերջոյ կը շարունակենք մեր ճամբան, դէպի հիւսիս եւ քիչ անց կը մտնենք այս գիւղը, կամ աւանը, ուր իրենց կեանքի երազը իրականացած տեսնելու հաճոյքը կապրին Մարգարն ու Էլիզը:

Կը յառաջանանք պատմական այս գիւղի դարձնարձիկ, հողոտ ճամբաներէն, պտղատու ծառերու՝ այգիներու, տնակներու, անասուններու ընդմէջէն: Վաղ միջնադարէն յիշատակուած այս բնակավայրը, այն վայրն է, ըստ աւանդութեան, որ Նոյ նահապետ Մասիսի կատարէն իջնելէ ետք՝ տեսած է որպէս վերջին ապացոյցը, որ ջրհեղեղի ջուրերը ետ կը քաշուին... Ուշի անունը կու գայ Յուշի անունէն, կըսէ ամենագէտ տեղանուններու բառարանս:

Կանգ կ'առնենք նորակերտ, եռայարկ շէնք մը պարունակող հողաշերտին առջեւ. երկաթէ ճաղաւոր դարպասին, դուրսէն, կովուկ մը կապուած է:

Իսկապէս երազային կը թուի ամեն ինչ: Հայաստան, Աշտարակ, Ուշի եւ Մարգարենց տունը:

Թորոնթօ յաճախ գտնուած ենք Շարապլխանեաններու յարկին տակ, նոյնիսկ գիշերած այնտեղ. տան սենեակներէն մէկը կարծես տեւական մեր անունին ապահովուած ըլլար...

Ու այս երազին մասին շա՛տ խօսած. ճեմելով իրենց թաղի փողոցներուն մէջ, դեռ անկախութենէն ալ առաջ, հարց տուած ենք մենք մեզի՝ ինչո՞ւ Հայաստան չենք երթար, ինչո՞ւ քաջութիւնը չունի՞նք Հայաստան փոխադրուելու...

Ահա այս հարցումներուն ալ իրենց ինքնուրոյն պատասխանը տուած եղան Շարապլխանեանները՝ հանգստեան իրենց տարիները որոշելով անցընել առաւելաբար Հայաստանի մէջ, քանի որ կարելի չէր բոլոր կապերը խզել Գանատայի հետ, ուր կապրին տակաւին իրենց հարագատները:



Շարապխանեաններուն հետ

Մարգար կու գայ կը բանայ դարպասը, ի՛նչ երանաւէտ հպարտութեամբ մեզ ներս կ'առաջնորդէ, ուր Էլիզը կը դիմաւորէ մեզ՝ միշտ բծախնդիր տանտիկիների կերպարանքով, այլեւս հրաժարած համակարգչային յայտագրերու մասնագէտի իր հանգամանքին: Ապա նոյն հպարտութեամբ մեզ կը պտտցնեն տան բոլոր բաժինները՝ մուտքի յարկը իր ճաշարան-նստասենեակով, վերի յարկը՝ իր ննջարաններով, կոչուած «Արարատ», «Արագած» եւ «Արայի լեռ», իւրաքանչիւր սենեակը այն լեռան անունով, որ կերելի իր պատուհանէն... Ապա՝ դալար տանիքը, որմէ կրնաս ըմբոշխնել համայնապատկերը՝ գրեթէ 360 աստիճանի վրայ:

Երեկոն կը շարունակուի ճաշի սեղանին շուրջ, ուր մեզի կը միանան Կորիւնն ու Սուգաննան, Ուայթըրը եւ գաւակը՝ Արմանը, եւ Վարդանը, բոլորն ալ դրկից-դրացի, որոնք մաս կը կազմեն Մարգարին ու Էլիզին նոր ծանօթներու անսահման շրջանակին:

Գիտեմ, որ կրթութեան եւ մշակոյթի հետ այնքան սերտօրէն առնչուած մեր ընկերները կրնան իրենց ուզածին չափ վայելել Հայաստանի մշակութային կեանքը, Երեւանի մէջ կամ այլուր, սակայն Մարգար, յաւիտենական ուսուցիչը, վերստին անցած է գործի եւ գիւղի բնակիչներուն կը սորվեցնէ իրենց առօրեայ լեզուին մէջ խառնուած բոլոր ռուսերէն բառերուն հայերէն համագործները, երբեմն ալ ինքն ալ նոր սորվելով առտնին գործածուող շատ բառեր, անոնցմէ՝ սորվելով: Հիմա, ճաշի սեղանին շուրջ բոլորը ճիգ կ'ընեն մաքուր հայերէն խօսելու...

Իսկ մի քանի օր առաջ, Մայիս 28-ի 90-ամեակին առթիւ, այս տանը մեծ բակին մէջ Հանրապետութեան հիմնադրութեան տարեդարձն է տօնուած, գիւղի մեծերուն եւ փոքրերուն մասնակցութեամբ, ու Մարգարի պատրաստած երգերով ու արտասանութիւններով...

Այլապէս Էլիզն ու Մարգարը իրենց պարտէզը կը մշակեն, ծառ կը տնկեն, կը հայրենանա ն: Դժուար է աւելի երջանկացնող կեցութիւն մը երեւակայել:

Թումանեանի աշխարհը

2 յունիս, երկուշաբթի

Պաղտատեաններու, Շարապխանեաններու երջանկութիւնը մասամբ կը բաժնենք՝ հայաստանաբնակ զաւակ ունենալով... երկու տարուան մէջ Արագ սորվեր է երկրի ծակն ու ծուկը եւ ծնողքին համար լաւ առաջնորդ («գիդ») է դարձեր:

Այսօր դարձեալ իր մասնակցութեամբ Երեւանէն M-1 ապա M-3 ճանապարհներով կ'ուղղուինք հիւսիս: Կանուխ ճամբայ կ'ելլենք, արեւ կայ, բայց ամպերն ալ քիչ չեն ու հետզհետէ պիտի ծածկեն երկինքը:

Առաջին կանգառը Ապարանն է, ուր գիւղամիջի աղբիւրէն պիտի յագեցնենք մեր ծարար եւ շարունակենք մեր ճամբան: Հետուն՝ ձախին Արագածն է, կատարները ամպերուն մէջ մխրճած, աջին՝ Արայի լեռը:

Ռիա Թագան (հին Ղոնտաղսազը) եգիտիական գիւղ մըն է, ճամբուն վրայ, ու պէտք է տեսնել գերեզմանատունը, ուր ամենավաղ ժամանակներու հայկական շիրմաքարեր կան՝ խոյի, ձիու եւ այլ կենդանիներու կերպարանքով:



Ռիա Թագա

Սպիտակ, 20 տարի առաջ՝ երկրաշարժի աղետին գրեթէ կեղրոնը (կեղրոնը՝ նախկին Նալբանդ, այժմ Շիրակամուտ գիւղն էր), կերպարանափոխուած քաղաք մըն է, նորակերտ, ուր պիտի տեսնենք նաեւ շատ նոր եկեղեցի մը, միշտ հի՛ն, աւանդական տեսքով...

Այդտեղէն՝ աջ պիտի թեքինք ու միանանք M-7 ճանապարհին ու քշենք Փամպակ գետի եզերքէն, Բագումի եւ Փամպակի լեռնաշղթաներուն միջեւ:

Ճամբան մեր խօսակցութեան նիւթերն են մեր ցուցամոլութիւնը, Հայաստանի մէջ տիրող անգործութիւնը, արտագաղթը եւ... օտար ամուսնութիւնները, որոնք միայն Սփիւռքի մտահոգութիւնը չեն, այլ Հայաստանի ալ, որուն պանդուխտ զաւակները երկրէն դուրս շատ արագ կ'օտարանան, իսկ երկիր մնացած զաւակներէն շատեր կ'ին կերթան դրացի երկիրներէն եկող գործարարներուն եւ զբօսաշրջիկներուն: Վանաձորին կողքէն անցնելով, M-6 ճանապարհով կ'ուղղուինք դարձեալ հիւսիս եւ կը մտնենք Թումանեանի աշխարհը, որ «կանչում է կրկին, կանչում անդադար...»



Նոր պանդոկը՝ Դեբեդի եզերքը...

Այժմ Դեբեդն է, որ կը հոսի բարձրաբերձ ժայռոտ լեռներու միջեւ, տեղ տեղ վարար ու աղմկոտ, տեղ տեղ ալ՝ լայն ու վեհ, միշտ զգլխիչ տեսարաններ բանալով առջեւդ: Անոր չքնաղ մէկ կէտին վրայ, Ձորագետի մէջ, Ճէմս Գաֆեսճեանը իր պանդոկներէն մէկն է շինած: Այցելելիք վայր է, տեսնելիք: Ճարտարապետական կոթող մըն է, հիւրանոցը ինքը, արդի մօտեցումով եւ հայկական շունչով, կամարակապ երկյարկանի շէնք մը, որ հանդարտ նստած է գետի ափին, ու կը դիտէ անոր յաւիտենական անցքը:

Կը մտնենք, կը տեսնենք հոս եւս պատրաստութիւն կը տեսնեն հիւրընկալելու զրօսաշրջիկներու մեծ խումբ մը: Արագ շատ լաւ ծանօթ է տիրոջ, որ հոն չէ, սակայն պաշտօնեաները մեծ հաճոյակատարութեամբ կընդունին մեզ: Հոն պիտի ճաշենք: Կը տեղեկանանք, որ պարապ սենեակ չկայ, ինչ որ շատ լաւ նշան է:

Համեղ ու թեթեւ ճաշ մը, եւ կը շարունակենք մեր ճամբան, եւ ոչ շատ հեռու կը մտնենք Դսեղ՝ Թումանեանի ծննդավայր գիւղը, ուր իր տուն-թանգարանն է, լաւ պահուած, ծառաշատ պարտէզով մը շրջապատուած: Կայ յուշարձան, ուր իր սիրտն է թաղուած, եւ կայ կիսանդրին, որ լո՛ւ կը հսկէ շրջապատին վրայ: Կը շրջինք տունը, ուր Ամենայն հայոց բանաստեղծին իրերը, կահկարասիքը, հրատարակած գիրքերը, լուսանկարները եւ այլն կը տեսնենք ցուցադրուած՝ առանց մասնաւոր գեղարուեստական ձեւաորման: Շատ աւելի հոգածութեան, խնամքի անհրաժեշտութիւնը կը զգացուի:

Երկար չենք կրնար յամենալ, տակաւին ուրի՛շ տեղեր պիտի տեսնենք: Յաջորդ հանգրուանը, Ալավերդիէն անդին՝ Ախթալան է, ուր պիտի այցելենք կիսաւեր ամրոցը (Ժ. դար), եւ ամրոցի ներսը կանգուն՝ Ախթալայի կամ Պղնձահանքի վանքը, իր երեք եկեղեցիներով: Վանքը կը յիշատակուի Ե. դարէն, միջնադարուն եղած է գրչութեան կեդրոն:

Իվանէ Զաքարեան իշխանը նորոգած է 1229-ին: Երկինքը ամբողջովին ամպոտած է, եւ մութ քարերով կերտուած գլխաւոր գեղեցիկ եկեղեցին, (Ս. Աստուածածին կամ Մարիամ-Աննայի), աւելի շատ իբր ուրուագիծ կերտելի մեր աչքին՝ կանաչապատ խորքի մը վրայ: Պատանի մը կը վազէ եւ գիւղէն բանալին կը բերէ, որ կարենանք այցելել:



Ախթալա

Կըսուի թէ հայ-վրացական է,- մօտ ենք Վրաստանի սահմանին: Մքանչելի որմնանկարներ կան պատերուն, խորանին երկու կողմերը:

Անկէ, վերադարձի ճամբուն վրայ կը շրջանցենք Սանահինը, քանի ժամանակը արդէն բաւական յառաջացած է, ու կը բարձրանանք Հաղբատ: Երկրորդ անգամն է կ'այցելեմ մեր այս սքանչելի համալիրը (Ժ.-ԺԳ. դդ) եւ դարձեալ առիթը չեմ ունենար լուսաւոր երկնքի տակ ըմբռնելու անոր ճարտարապետական



Լաւ պահպանուած հագուագիւտ որմնանկարներ գեղեցկութիւնը: Այս այցելութենէն յիշատակ կը տանիմ տեղոյն քահանային հետ մեր հանդիպումը: Սփիւռքահայ երիտասարդ կրօնաւոր մըն է կարծեմ, որ անգլերէն գիտնալով, նաեւ հմուտ առաջնորդի դեր կը խաղայ օտար զբօսաշրջիկներուն համար: Մի քանի լուսանկար, ու կը շարժինք:

Վերջին կանգառը Օձունն է (Զ. դարէն) որ պիտի չկարենանք այցելել, այլ պարզապէս անձրեւին տակ լուսանկարել վազէ ի վազ, ու ետ՝ ինքնաշարժ մտնել:

Վերջապէս, անգամ մըն ալ կանգ պիտի առնենք Ձորագետ, Գաֆեսճեանի հիւրանոցը, սուրճ մը պիտի խմենք ու բռնենք վերադարձի ճամբան:

Երեկոյեան 10-ի մօտ է, որ պիտի հասնինք «Աւիատրանց»՝ Աբովեան փողոցի մեր պանդոկը:



Հաղբատի համալիրը



Օձունի համալիրը

Երեւանեան ուրիշ հեւքոտ օր մը

(Հարցազրոյցներով՝ Արծուի Բախշինեանի եւ Մերուժան Կարապետեանի հետ)

3 յունիս, երեքշաբթի

Արեւոտ, երկա՛ր օր մը կը բացուի մեր առջեւ:

Այսօր այր եւ կին տարբեր յայտագրեր ունինք եւ միայն երեկոյեան՝ մեր ընկերներուն տունը պիտի յաջողինք հանդիպիլ իրարու: Մինչ Նազիկ Արագին հետ կը պտտի մայրաքաղաքին մէջ, կայցելէ աղջկանս «որդեգրած» արուեստի դպրոցներէն ոմանք, ականատես կըլլայ կատարուող նորոգութիւններուն, ես նախ կը հանդիպիմ Գրիգոր Գոյումճեանին, միշտ «Արուեստի կամուրջ» (Արթայրիճ) նախասիրած ճաշարանս, խօսելու համար «Հորիզոն»-ի մէկ ծրագրին մասին:

Գոյումճեան Երեւանի համալսարանի դասախօս է, ու տարիներ առաջ, առիթով մը, իր դասարանին է որ ինքս ալ դասախօսեր էի մեր մամուլի պատմութեան մասին, իր



Գրիգոր Գոյումճեանի հետ

ներկայութեամբ եւ գործուն, խանդավառ մասնակցութեամբ: Ինք ներգաղթած է քառասունական թուականներուն եւ ծանօթ է երիտասարդ գրողներու այն սերունդին, որ այդ տարիներուն Սփիւռքէն եկած է Հայաստան եւ ընդհանրապէս տխուր վախճան մը ունեցած, կամ ի վերջոյ հեռացած է հայրենիքէն: Գրիգոր երկար ցանկ մը ցոյց կու տայ ինծի, ա՛յդ գրողներու ցանկը: Հորիզոնի գրական յաւելումս թիւ մը կուգենք նուիրել անոնց, եւ իրմէ ալ կը խնդրեմ որ իր մասնակցութիւնը բերէ: Կը խոստանայ...

Նաեւ, մեր զրոյցէն ի յայտ կու գայ, որ ինք մեծապէս հետաքրքրուած է Թուրքիոյ մէջ ապրած ու ապրող տարբեր ազգութիւններու եւ ցեղերու փոխարաբերութիւններով եւ համեմատութիւններով: Չեղբին ունեցած բազմաթիւ փաստաթուղթերով ինքնավստահ կը յայտարարէ, որ Թուրքիոյ թէ՛ ներկայ նախագահը եւ թէ՛ վարչապետը... հայկական ծագում ունին: Վա՛յ մեզի...

Յաջորդ ժամադրութիւնս Արծուիին հետ է՝ Գրականութեան եւ արուեստի թանգարանը: Ինչպէս նշեր էի, նախորդ հանդիպմանս, երբ իր հօր՝ Հենրիկ Բախշինեանի հետ հարցազրոյց էի ունեցած, որոշեր էինք կրկին հանդիպիլ ու զրուցել ի՛ր աշխատանքներուն մասին:

Արծուի, որ 1971-ին ծնած է Երեւան, աւարտած է ԵՊՀ-ի բանասիրական լսարանի հայոց լեզուի եւ գրականութեան բաժինը, ապա ՀՀ Գիտութիւններու ազգային կաճառի Մ. Արեղեանի անուան գրականութեան հիմնարկէն ստացած Բանասիրական գիտութիւններու թեկնածուի աստիճան՝ պաշտպանելով «Վահան Տերեանի ստեղծագործական աշխատանոցը» բնանիւթով իր թեզը: Մեղուաջան աշխատող մըն է, կաշխատակցի հայրենի մամուլին, կը դասախօսէ երկրի մէջ թէ՛ արտերկրի, «Հայ արուեստ» հանդէսի

խմբագրութեան եւ ... «Հովեր» սենեկային երգչախումբին անդամ է: Արդէն իսկ հեղինակն է 10-է աւելի հրատարակուած եւ թերեւս ալ նոյնքան անտիպ գործերու:

Կը տեղաւորուի՞նք թանգարանի ժողովասրահներէն մէկուն անկիւնը, թէ՛ «տեղաւորուի՞լ» բառը շատ չի յարմարիր տեւաբար շարժման մէջ եղող այս երիտասարդ մտաւորականին...

– Արծուի, տեսանք քու պատրաստած հանրագիտական աշխատանքդ հայկական կինոարուեստին մասին (Արծուի Բախչինեան, ՀԱՅԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԻՆՈՅՈՒՄ,



Արծուիին հետ

Գրականութեան եւ արուեստի թանգարանի հրատ., Երեւան 2004, 688 էջ), շատ կուզէի գիտնալ թէ ինչպէ՞ս հետաքրքրուեցար այդ նիւթով եւ ինչպէ՞ս իրականացուցիր այդքան մանրակրկիտ պրպտումներով կատարուած այդ աշխատանքը:

– Իմ մանկութիւնը անցաւ Խորհրդային Միութեան վերջին տասնամեակներին, երբոր ապրում էինք փակ աշխարհում, եւ սինեման այդ դուռն էր, որով մենք կարծես տեսնում էինք երկաթէ վարագոյրից անդին ի՞նչ է կատարում: Եւ սինեման այդպէս շատ սիրուելիք բան է, յատկապէս պատանիին համար, – եւրոպական, ամերիկեան սինեման, որ հազուադէպ էինք տեսնում, եւ սովետական սինեման, որ էլի լաւ բաներ ունէր, բայց շատ սահմանափակ էր, եւ մենք չէինք սիրում նայիլ, հիմա լաւագոյն բաները էսպէս մի քիչ նոստալժիկ նայում ենք. երբեք տոմս չէինք առնում խորհրդային ֆիլմ դիտելու, բայց արտասահմանեան ֆիլմերի համար մեծ պահանջարկ կար, բոլորս նկարներ էինք հաւաքում, իմ սերնդի մարդիկ ժուռնալներից կտրում էինք, պահում դերասանների նկարներ, էդ ինֆորմացիան [տեղեկութիւնը] գրառում մեզ մօտ, իսկ եթէ յանկարծ այդ հեքիաթային աշխարհում մի հայրենակցի անունի էինք հանդիպում, մի հայի դէմք, մի հայերէն խօսք, սա արդէն մի հրաշքի պէս էր թւում մեզ: Եւ դեռ այդ տարիներին այսպէս գրառում էի մօտս, թէ ահա այսինչ ֆրանսական ֆիլմում ինչ հայկական ազգանուն տեսանք, եգիպտական ֆիլմում..., ասում էինք այս «Տովային սատանաներ» ֆիլմի աղջիկը հայ է՝ Նելլի Գալֆայանն է...

Եւ այդպէս սկսեցի հաւաքել, հաւաքել, մինչէւ որ սկսեցի գրել, նաեւ աւելի խորը ուսումնասիրել այդ մարդկանց մասին եւ տեսայ, որ լրիւ չուսումնասիրուած մի դաշտ է: Եւ 16 տարի, համբերատար ձեռով... այն ժամանակ ինտերնետ [համացանց] չկար, Կուկըլ չկար, IMDB (Internet Movie Data Base) չկար, որ աշխարհի ամենէն հարուստ ֆիլմի շտեմարանն է, ուր կարող էս շատ արագ հայերին գտնել, նոյնիսկ ամենէն չնչին գործ կատարած մարդոց անունները: Հիմա արդէն հեշտացել է աշխատանքը, բայց մինչէւ ինտերնետի գալը եւ համբերատար նստում էի, տպագրուած գրքերի մէջ հերթով նայում էի ֆիլմագրաֆիաները [ֆիլմագրութիւնները], որտեղ մի «եան»ով ազգանուն կար, կամ արդէն գիտէի, որ այսինչ դերասանը հայ է, կէս-հայ է...

Այդպէս հաւաքեցի նիւթը եւ շարունակում եմ հաւաքել: Գիրքը չորս տարի առաջ լոյս տեսաւ, բայց անցած չորս տարիներին էլի այնքան շատ անուններ հաւաքուեցին, որ...

– Կարելի է երկրորդ հատոր մը հրատարակել...

– Այո, իրօք. ի հարկէ առ այժմ այդ մասին չեմ մտածում, շատ աւելի ծաւալուն պիտի լինի: Հազիւ կարողացայ չորս տարի առաջ ֆինանսներ գտնել, զիտէք հիմա առանց մեծ

հովանավորի հնարավոր չէ նման աշխատանք հրատարակել: Կուգեմ այստեղ երախտագիտութեամբ նշել գլխավոր հովանավորիս անունը, որ շատ թանկագին մի անձնավորություն է, ընկերուհի, Թայլանդից եկած հայազգի նկարչուհի Էլիզապեթ Ռոմիլդը, ծննդեան ազգանունը՝ Դաիթեան, որ շատ հաւանեց իմ գործը, ինքն էլ սինեման սիրելով ու ինքն էլ լինելով կինոաստղի գեղեցկութեամբ մի երիտասարդ կին, ասաց որ դու իմ եղբայրն ես, ես իմ մի-երկու նկարը կը վաճառեմ եւ քու գիրքդ կը հրատարակենք: Առ հասարակ ուզում եմ ասել, որ իմ գիրքերի մեծ մասը հրատարակուել է Սփիւռքից եկած նուիրատուութիւնների շնորհիւ: Մեր հարուստները, ցաւօք չեն կարող գնահատել մշակոյթի, արուեստի մասին հրատարակութիւնները, իսկ Սփիւռքը (Ճիշտ է որ հայերէն կարդացողների թիւը քջանում է, իմ էդ Էլիզապեթն էլ վարժ չի կարդալու, բայց) գնահատում է, որ հայերէն գիրք պէտք է լոյս տեսնի:

– Կը յուսամ, ուրեմն, որ այս հատորդ ճոխացած երկրորդ հրատարակութեան մը կ'արժանանայ:

– Անպայման՝ն:

– Լաւ, Արծուի, իսկ ուրիշ ի՞նչ աշխատանքներ կը տանիս ներկայիս:

– Ես, քանի որ դեռ դպրոցական տարիներից ամեն օր հաւաքչական աշխատանք եմ կատարում, կարծես գործս չի վերջանում...: Իմ հետաքրքրությունները կարող եմ երեք մասի բաժնել. առաջինը՝ հայերի մասնակցութիւնը եւ ներդրումը համաշխարհային մշակոյթին մէջ, երկրորդը՝ հայ քիչ ուսումնասիրուած գաղթավայրերի պատմութիւնը եւ երրորդը՝ անտիպ մնացած հետաքրքրական յուշագրութիւններ, փաստաթուղթեր... Ես կրթութեամբ բանասէր եմ, չնայած ինձ աւելի սինեմայի մասնագէտ գիտեն, քանի որ նաեւ գրում եմ առօրեայ մամուլով ֆիլմի մասին, համագործակցում եմ «Ոսկի ծիրան» փառատօնի հետ, հրաւիրում եմ դասախօսութիւնների տարբեր երկիրներ խօսելու սինեմայի մասին, բայց կրթութիւնս հայ բանասիրութիւնն է, եւ շատ եմ սիրում այդ տե քստի [բնագրի] հետ աշխատանքը, իսկ մեր գրականութեան եւ արուեստի թանգարանի (ԳԱԹ) ֆոնդերում [պահեստներում] կան հիանալի նիւթեր որոնք պէտք է հրատարակել, շրջանառութեան մէջ դնել:

Վերջերս մեծ յայտնութիւն էր ինձ համար հայ առաջին պարուհի Եւգենիա Արիստակեան-Պոլիակինայի յուշերի յայտնաբերումը, որ յոյսով եմ, եթէ հովանավոր գտնենք, ապա սիրով յանձն կ'առնեմ հրատարակելու այդ ինքնակենսագրութիւնը, որ ոչ միայն հայ մշակոյթի պատմութեան անձանօթ էջեր է բացում, այլեւ հայ համայնքների, կուսակցութիւնների գործունէութեան մասին՝ Ռուսաստանում, Պոլսում, Եգիպտոսում,... Սա մի՛ ուղղութիւն է, ուրեմն՝ անտիպ գործերի հրատարակութիւնը:

Հայի նպաստը [համաշխարհային մշակոյթին]... ասացի, որ շարունակում եմ հաւաքել ֆիլմի մասին տուեալները: Եւ իմ միւս սերը մշակոյթի մէջ, որ պարարուեստն է: Հայ պարարուեստի պատմութիւնը,– բեմական պարը նկատի ունիմ ի հարկէ,– դեռեւս գրուած չէ: Ես իմ մասնակցութիւնը որպէս բանասէր,– ոչ որպէս պարագէտ, եւ դրա յաւակնութիւնը չունեմ,– բերում եմ արդէն տաս տարուց աւելի նաեւ այդ թեմայով նիւթերը ժողովելով՝ Հայաստանից դուրս հայ պարողների մասնակցութիւնը տարբեր երկիրների բեմական պարի, լինի դա թատերապար՝ բալետ, լինի ժողովրդական պարեր. ահագին նիւթ եմ հաւաքել, էլի յոյսով եմ դա էլ կը հրատարակուի: Սա էլ մի ասպարէզ է:

Եւ ասացի հայ գաղթավայրեր, որոնք քիչ են մնացել, քիչ են ուսումնասիրուել: Էլի գրեթէ պատրաստ է հայ-չինական կապերի նուիրուած իմ աշխատութիւնը. հայ-

ճապոնական կապերը ուսումնասիրել եմ, հայ-չեխական կապերը, հայ-հարաւսլաւական, հայ-այրանական...

Այսպէս տեսնում եմ որտեղ է ասպարէզը բաց՝ մեր արուեստի պատմութեան եւ հայ գաղթավայրերի պատմութեան մէջ, եւ իմ մղումը այդ է՝ իմ միջոցով փորձել լեցնել այդ բացը, ոնց որ առաջին քարը ես դնում եմ, թող լինի զուտ տեղեկատուական բնոյթի, թող լինի ոչ շատ համակողմանիօրէն, բայց ասէնք դուր բանայ յաջորդ աւելի խոր ուսումնասիրութիւնների համար:

Այս հետաքրքրութիւնս սկսուեց երբ, 10-11 տարի առաջ ինձ բախտ վիճակուեց որոշ ժամանակ ապրել Շուեդիայում, եւ այնտեղ ես մուտք գործեցի պատմագիտութեան աշխարհը, եւ տեսայ թէ ինչքան չուսումնասիրուած տուեալներ, փաստեր կան որ պէտք է դնել գիտական շրջնառութեան մէջ: Այդպէս ծնունդ առին իմ երկու գիրքերը՝ «Հայաստան Սկանդինաւիա» եւ «Armenia-Sweden Historic and Culturel Relations»:

Այսպիսով, մի կողմից բանասէր, տեքստաբան, մի կողմից պատմաբան, մի կողմից մշակութաբան (կինօ եւ պարարուեստ): Թւում է իրարից շատ հեռու են, բայց չէ, կարելորդ էլի բանասիրական-հայագիտական աշխատանքն է՝ գտնել փաստը եւ դնել շրջանառութեան մէջ:

– Եւ անմիջական պատրաստ աշխատանք մը կա՞յ, որ հրատարակութեան կը սպասէ:
– Այո, այո, «Հայը համաշխարհային պարարուեստում». դա գրեթէ պատրաստ է, յուսանկարներով շատ հարուստ է, եւ ուզում եմ գունաւոր տպել այդ մի գիրքը:
– Այս ասպարէզներուն մէջ, ուր հետաքրքրութիւններդ են, ըստ քեզի հաւաքականօրէ՛ն ի՞նչ կայ ընելիք. դուն անձնակա՛ն ճիգով կընես այս բոլորը:

– Ինձի երբեմն ասում են, որ մի ինստիտուտի [հիմնարկի] գործ ես անում, եւ շատ շոյուած եմ զգում եւ գտնում եմ, որ հաւաքականօրէն պէտք է, ասէնք ամեն երկրում, ուր հայ համայնք կայ եւ հայկական անցեալ կայ, մենք ունենանք այսպէս նուիրեալներ, իրենց տեղում, իմանալով տեղական լեզուն, ունենալով տեղական թանգարաններ, արխիւներ [իրենց տրամադրութեան տակ], նուիրուեն այդ գործին: Ի հարկէ այս գործում ասէնք շահ չկայ, եւ մարդ պէտք է ժամանակ ներդնի, ջանքեր ներդնի ու եթէ կարենանք ամեն տեղ ունենալ մէկը որ զբաղի հայկական անցեալը վեր հանելով, կապ պահպանի Երեւանի համապատասխան աշխատանք տանող մարդկանց հետ, նիւթեր ուղարկի, շատ աւելի արդիւնաւետ կըլլայ աշխատանքը:

– Ինչ լաւ պիտի ըլլայ, սիրելի Արծուի, եթէ սոյն հարցազրոյցը մարդիկ գիտակ դարձնէ այն անհրաժեշտութեան, որ գուրգուրանքով վարուին Սփիւռքի մէջ կուտակուած մեր արխիւներուն հետ...

Ու կը շարունակենք մեր զրոյցը՝ այս մասին դեռ երազներ հիւսելով...

3 յունիս, երեքշաբթի , յետմիջօրէին

Դուրս գալով գրականութեան եւ արուեստի թանգարանէն, հիւրանոց կը վերադառնամ, մեր սենեակի սառնարանին մէջ մի քանի պտուղ եւ քիչ մը միրգ ու չիր կը ճարեմ՝ մինչեւ երեկոյ դիմանալու համար, ու փողոց կիջնեմ դարձեալ՝ շարունակելու օրուան ծանրաբեռն յայտագիրս:

Նախ կանցնիմ Քրիստափոր Միքաէլեան կեդրոնէն՝ Կիրոն տեսնելու յոյսով, եւ դարձեալ յուսախաբ, կը վերադառնամ Հանրապետութեան հրապարակ՝ Նոյեան Տապան



Աշոտ Գրիգորեանի հետ

գրատունը, փնտռելու համար Մոնթրեալի «Համազգային»-ի գրադարանին խնդրած գիրքերը, որոնց մէկ մասը գտեր էի Գրքերու աշխարհ գրատունէն՝ Մաշտոցի վրայ: Երկու հատոր եւս կը յաջողիմ գտնել: Ապա կերթամ Ճարտարապետութեան թանգարանը, որ կառավարական թիւ 3 շէնքի գետնայարկն է, բաւականին մեծ տարածք մը կը գրաւէ, բայց շատ է անշուք: Օր մը կը յուսամ ան իր առաքելութեան արժանի շէնքն ալ կունենայ:

Այստեղ ժամադրուած եմ Երեւանի ճարտարապետներուն հետ՝ երկխօսութեան մը: Իմ փափագովս է, որ թանգարանի տնօրէնը՝ իմ հին ծանօթ Աշոտ Գրիգորեանը կազմակերպած է սոյն հանդիպումը, որմէ ինք դժբախտաբար պիտի բացակայի՝ «նախարարին հետ տեսակցութեան մը պատճառաւ»:

Քիչ մը կանուխ հասած ըլլալով, կը շրջիմ թանգարանը, ուր միշտ ալ հետաքրքրական ցուցահանդէս մը կըլլայ. Այս անգամ Էմիլ Ղազախեցեանինն է, յետմահու, իր հարազատներուն նախաձեռնութեամբ կայացած: Ղազախեցեան ճարտարապետ էր, սակայն իր գեղանկարներուն նուիրուած է ցուցահանդէսը:

Թէեւ 50-60 աթոռ է շարուած, բայց հազիւ 10 հոգի ներկայ էր, մի քանին՝ թանգարանի աշխատող տիկիները, մի քանին ալ երիտասարդ ճարտարապետուհիներ եւ ուսանողներ, որոնց հետ հաճելի պահ մը պիտի անցընեմ, զրուցելով մեր ասպարէզին, անոր դժուարութիւններուն, գործելակերպերուն, յոյսերուն եւ երազներուն մասին... Անշուշտ ակնկալութիւնս էր, որ աւելի մեծ թիւով ներկաներ ըլլային, սակայն ինչո՞ւ այդքան պիտի հետաքրքրուէին Գանատայէն եկած մի ոմն ճարտարապետի ըսելիքներով...

Անկէ ետք վարձակառք (թաքսի) մը պիտի առնեմ եւ փութամ Այգեձոր փողոց, կեդրոնի հիւսիսային կողմը, ուր քալելով ալ կրնայի երթալ եթէ քիչ մը աւելի ժամանակ ըլլար: Հաճելին՝ վարորդին հետ խօսիլն էր... Ակսել Բակունցի մասին, այո՛, Ակսել Բակունցի, որուն հիացողներէն մէկը կը թուէր ըլլալ այս հայրենակիցս: Նախկին ուսուցիչ չ'մը արդեօք...

Այգեձոր փողոցի վրայ է աշխատանոցը Մերութան Կարապետեանի եւ իր տասնեակին, որոնք լռիկ-մնջիկ նուիրուած են ազգակերտման կարեւոր աշխատանքի մը՝ մեր գրականութիւնը թուայնացնելու գործին, որուն մասին է, որ կուզեմ հարցազրոյց մը ունենալ: Փոքր շէնք մըն է, բնակարան մը, որ դարձած է փեթակ: Զայն պտտելէ ետք կը տեղաւորուինք զլիաւոր սենեակին մէջ, համակարգիչի մը առջեւ, որպէսզի կարելի ըլլայ նաեւ ուղղակի տեսնել կատարուող աշխատանքը: Մերութանին հետ մեր զրոյցին կը միանան Յովհաննէս Կիզողեան, որ գործին համակարգչային արհեստի գաղտնիքներուն տիրապետողն է, Մերութանի կողակիցը՝ Եղիսաբէթը (Էլիզը) եւ ուրիշներ:

– Մօտ 15 տարի առաջ Յովհաննէս Կիզողեանի եւ բարձր տեխնոլոգիայի [արհեստագիտութեան] բնագաւառների մի շարք մասնագետների հետ քննարկում էինք անդադար մեր խնդիրները, այն փուլում, երբոր մեր ազգը մտնում է նոր գլոբալիզացիայի [աշխարհայնացման] դարաշրջանը: Գիտէք ինչ կայ, անընդհատ կարելի է խօսիլ գլոբալիզացիայի դէմ, բայց ոչ մէկը տնից հեռաստացոյցները, հեռախօսները դուրս չի հանում, չեմ գիտեր ինչու...

Պետք է գտնել ուրիշ լուծումներ այս նոր աշխարհի մարտահրավերներին դիմագրավելու: Լաւագոյն լուծումը քիչ թէ շատ յաջող ձեւով հայ մշակոյթը, որի մէջ եւ գրաւոր մշակոյթը համակարգչային դրութեան մէջ ներմուծելն է. հայերէնը որեւէ խնդիր չունի, որ համակարգիչը նոյնիսկ մտածի հայերէն եւս:



Յովիկին ու Մերուժին հետ

Ուղղակի պետք է գիտակցել եւ ներդրուել յաջող ձեւով, այլապէս կորուստներ կունենանք, ինչքան ուշ՝ այնքան շատ, հիմա էլ կորուստներ շատ ունենք, բայց բաւականին բան է մեր կողմից արուել: Այլ բան է, որ Հայաստանում եւ Սփիւռքում մենք չունենք մշակուած միասնական քաղաքականութիւն այս հարցերի շուրջ, որովհետեւ խնդիրը իսկապէս միասնական ճշգրիտ քաղաքականութիւն վարելն է: Սկսած ամենէն տարրական բաղադրիչներից, սկսած ստանդարտներից [չափօրինակներից], սկսած տառերից, սկսած ուղղագրութիւններից . ով ինչպէս խելքին փչում է՝ գրում է, եւ համարում է, որ Աստուած իրեն այդ իրաւունքը վաղուց տուել է:

Արեւմտահայը լիարժէք իրաւունք ունի արտասանելու Boghos, բայց որեւէ իրաւունք չունի գրելու Բօղոս [փոխան Պօղոսի], անթոյլատրելի բան է: Մէկ ուղղագրութիւն ունինք, պիտի անկասկած ուղղագրութեան խնդիրը հոս լուծուի,– շատ հիւանդոտ խնդիր է. վերջ ի վերջոյ ո՞վ պիտի լուծէ, մե՞նք պիտի լուծենք, թէ՞ թուրքական զօրքերը պիտի գան լուծեն: Անկէղծ եմ ասում. Ինչի՞ ենք սպասում. Խնդիրը ոչ կուսակցական է, ոչ քաղաքական... Արդէ՛ն քաղաքական էր ի սկզբանէ: Ո՞վ պիտի լուծէ, իսկապէս ուրիշ ազգէ՞րը պիտի լուծեն մեր ուղղագրութեան հարցերը: Աշխարհի միակ ազգն ենք, որ գրում ենք հինգ-վեց ուղղագրութեամբ: Կարծես Հայաստանը քիչ էր, հիմա գաղթօջախներն ալ սկսան տարբեր գրելաձեւեր որդեգրել, եւ չես կրնար փոխել,– վիրաւորում ես գաղթօջախի լոկալ [տեղական] հայրենասիրութիւնը:

Ուրեմն տեսէք, առաջին բանը որ ծրագրեցինք, հայ գրաւոր մշակոյթի թուայնացուած շտեմարանուած տարբերակը գոյգալ ցանցում ունենալն էր, այսինքն ամբողջ հայ գրաւոր մշակոյթը, որը աշխարհի ամենախոշոր մշակութային պլոկներից մէկն է,– սա ոչ թէ չափազանցութիւն է, սա իրատեսութիւն է, դատելով այն ինչ որ մեզ ժառանգուել է, մօտաւորապէս մեր ազգի թիւը այսօր պիտի լինէր 20-25 միլիոն, որովհետեւ այնքան մեծ է ծաւալը,– մենք ոչ թէ իրան չենք իւրացնում, մենք չենք հասցնում ցանկել իրան: Թողնենք նաեւ, որ աշխարհում հնագոյն գրաւոր մշակոյթ ունեցող ազգերից ենք,– մեզմէ առաջ նայէք ովքեր ունեն յոյներ, լատիներ, եգիպտացիներ, հնդիկներ, չինացիներ, ուրի՛շ. Գանատացիները կա՞ն հոն, թէ՞ ֆրանսացիները...

Ուրեմն, շտեմարանուեց ամբողջ հինգից տասնութերորդ դարի գրականութիւնը, որը ֆինանսաւորուեց բոստոնաբնակ 94-ամեայ մի կնոջ կողմից՝ Ալիս Օհաննասեանի (Յովհաննէսեանի), որին ենք պարտական այս թուային գրադարանի ստեղծումը, որը նուիրուած է իր յիշատակին:

Ուրեմն շրջիր եւ տես:

Մերուժան Կարապետեան պաստառին վրայ կը բանայ եւ արդար բայց ոչ ցուցամով հպարտութեամբ ինձի ցոյց կու տայ ինչպէս շրջիլ համացանցին վրայ, որոնել այբբենական

կարգով, գտնել մատենագիրներու կենսագրութիւնները տարբեր լեզուներով, մատենագիտութիւնը, հրատարակութեան թուականներով...

– Կարող էք բանալ իւրաքանչիւրը, բաղդատել որեւէ բաժինը մեր հրատարակութիւններու համապատասխան բաժիններու հետ:

Գրութիւնները լրիւ մատչելի են: Եթէ հայերէն չէք գիտեր, անգլերէն գիտէք, կամ ըսենք իտալերէն, կամ յունարէն, եթէ թարգմանութիւնը կայ, ուրեմն կրնաք եւ կարդալ այստեղ զայն:

Այսպէս բաժիններով դուք ունիք ամեն ինչը՝ պատմագրութիւն, պատմագրութեան հեղինակները՝ պատմիչները, յօդուած թէ գիրք, բնութագրական գծերը եւ պարբերացումը, հայ պատմագրական գրականութեան հիմնական ժանրերը, հայ պատմիչների ստեղծագործական աշխատանոցը (լաբորատորիան), ժամանակի ընկալումը միջնադարեան հայ պատմագրութեան մէջ, ժամանակի հաշուարկումը եւ այլն:

– Այո բոլորը ինչպէ՞ս հասցուցած էք ի մի բերելու. Կայի՞ն նման ուսումնասիրութիւններ, թե՞ դուք գրած էք:

– Մենք գրած ենք, մասնագէտների պատուիրած ենք, ամեն ինչ, ամեն ինչ: Այս աշխատանքին շուրջ համախմբուել են եւ Հայաստանի, եւ դրսի լաւագոյն հայագէտները:

– Ո՞վ նախաձեռնած է այս աշխատանքին:

– Ձեր առաջ կանգնած՝ այս երկու մարդը [Կարապետեան Մերուժանը եւ Կիզոնեան Յովհաննէսը], եւ մեզ հովանի, թեւ եւ թիկունք եղաւ Ամերիկեան համալսարանի նախագահ Յարութիւն Արմէնեանը:

Երբոր մենք այս ծրագրով դիմեցինք Մատենադարանի տնօրէն Սէն Արեւշատեանին, ինչպէս նաեւ Հայաստանի գիտութիւնների ակադեմիայի նախագահ Ֆադէյ Սարգսեանին՝ պատասխանը մօտաւորապէս այս էր. քի չ գլխացաւանք ունենք, նոր գլխացաւանք էք ստեղծում մեզ համար...

Ամեն ինչ ունենք, թարգմանական, թղթեր, նամակներ, կոնդակներ, այլ գրութիւններ, աշխարհագրութիւն, բժշկութիւն, երաժշտութիւն, ըսենք օտարալեզու հայ հեղինակներ, բնագրեր, տեղեկատու գրականութիւն, Աճառեան բառարաններ, Օրմանեանի Ազգապատումը:

– Այս կայքէջը մատչելի՞ է, եւ կրնա՞մ մտնել:

– Մեր website-ը (www.digilib.am) ձրի, ազատ, մատչելի է աշխարհի չորս ծայրերում: Նաեւ ունենք որոնում. Սա աշխարհի առաջին searching system-ն է հայերէնով: Անունը դրել ենք «Բանբեր» (Բան+բեր), կարող էք որոնել ըստ թուականի, ըստ անունի եւ այլն. Եւ արդէն կայքէջի կէտը Ունոկոդով [Unicode] է, այսինքն ամեն մարդ կրնայ կարդալ:

Ինչ որ ձեզ ցոյց տուեցի, մեր website-ն է, որ բաց է 1999 թուականից; Ան 2001-ին արժանացաւ Հայաստանի նախագահի մրցանակին՝ բարձր տեխնոլոգիաների բնագաւառում մեծ յառաջընթացի համար:

– Իսկ ձեռագիրներն ալ դրի՞ք, մատենադարանի ձեռագիրները:

– Ասեմ ինչպէս է. մերը տեքստեր են [գրութիւններ], որ ենթակայ են մշակման:

Ձեռագիրը պիտի լինի ձեռագրի նկար, իսկ մեզի նկարը երբէք չի հետաքրքրում, որովհետեւ նկարից գիտելիքներ չես կարողանում առնել. գիտելիքը տեքստի մէջ է: Եթէ ձեռագիրը վերցնում ենք, մենք զայն «հրատարակում» ենք, վերածում ենք տեքստի:

Շինեցինք գործնական նմոյշ մը, CD մը (սեղմասկաւառակ) գրադարանի տարբերակով, եւ 150 «հատոր» դրեցինք նմոյշին մէջ: Database [շտեմարան] շինեցինք, որ երկու մասից է՝ հեղինակներ եւ գործեր:

Հեղինակներ կարող ենք փնտռել անունով կամ ազգանունով, սա ինքը՝ կը դասաւորէ: Հոն կը գտնենք ինչ գիտենք այս հեղինակի մասին. եւ միշտ պատուիրած ենք լաւագոյն մասնագէտին՝ յօդուած այդ հեղինակին մասին: Ապա հեղինակէն կարելի է անցնիլ գործի database: Հոս ալ դրուած է այն ամենը որ գիտենք գործին մասին, ներառեալ ելեկտրոնային հրատարակութեան աղբիւրը, հեղինակին բոլոր հրատարակութիւնների լիակատար բիրլիոգրաֆիան [մատենագիտութիւնը], գրքի բովանդակութիւնը եւ այլն, եւ Երեւանի ազգային գրադարանում ո՞ր թիւերի տակն է՝ պահպանում. Նաեւ գրախօսութիւնները. Թարգմանութիւնները՝ հայերէն աշխարհաբարով, նաեւ օտար լեզուներով:

Մի նմոյշ ստեղծեցինք, սեղմասկարտակի վրայ, տեսնելու համար, որ հայաշխարհը սրա կարիքը ունի՞ թէ ոչ:

– Եւ ի՞նչ յայտնաբերեցիք:

– Շատ վատ արդիւնք, շատ վատ արդիւնքներ: 2001-ից ութ տարի է անցել, մի քսան օրինակ է վաճառուել, Հայաստանում մի հատ՝ Սահմանադրական դատարանին (որի նախագահը այս սեղմասկարտակի օգնութեամբ հրատարակեց մենագրութիւն Հայ սահմանադրական մտքի պատմութեան վերաբերեալ), Սփիւռքում որոշ հայագիտական ամբիոններ են գնել:

– Բայց չէ՞ որ համացանցի վրայ ալ կարելի է գտնել այս բոլորը:

– Տեսէք, համացանցի վրայ այս բոլոր հնարաւորութիւնները չկան: CD-ն ունի ուրիշ հնարաւորութիւններ: Տեքստը ճիշտ է, որ կայ, բայց հոս աշխատանքներ կիրարկուած են:

– Պէտք եղած քարոզչութիւնը եղա՞ւ:

– Չէ, մեր ուժերն ալ հերիք չէին. Ամեն մարդ իր գործին մասնագէտն է, ես որ պատմաբան եմ՝ ապրանքի շուկայնացման մասնագէտ չեմ, ճիշտ է: Բայց շարունակեմ: Օրինակ, այս կէտը որ սեղմում ենք, մեզ բացում է Ազգաթանգեղոսի ամբողջ գիրքը, որ կարող էք կարդալ, պատճէնել, ի՞նչ կուզէք, պատճէններ տանել, բերել, ուսումնասիրել: Այս bar-ի [կողագիծի] վրայ սեղմելով՝ ստեղծում էք ամբողջ գործի համաբարբառը, concordance-ը, օրինակ՝ այբբենական կարգով՝ բոլոր բառերը, իւրաքանչիւրին յաճախականութիւնը, եւ օգտագործման ճշգրիտ տեղորոշումը բնագրում, յանգաբառարանը (որ լեզուաբանների համար հետաքրքրական է) եւ այլն, եւ այլն:

– Երկու հոգի՞ էք այս ամենը ընողը:

– Չէ, խումբ է աշխատողը. Կան լեզուաբաններ... Յովիկը ֆիզիկոս է, բայց նա մեր ծրագրաւորողն է եւ կան այլ մասնագէտներ:

Մերուժան կը շարունակէ.

– Հիմա, քանի որ սա CD-ի վրայ դրինք 150 հատոր, ապա միաժամանակ կարող ենք շինել 150 հատորների համաբարբառը, որ աւելի մեծ է ստացուել, քան Հայկազեան բառարանը, Ե.-ԺԸ. դարերին վերաբերեալ: Եթէ Երից վարդապետները ձեռքով պիտի անէին այս աշխատանքը, հիմա գործիքն է անում: Որեւէ բառ, այդ բոլոր հատորներուն մէջ ի՞նչ կոնտեքստի [շրջարկի] մէջ որ գործածուել է՝ երեւում է: Ի՞նչ բառարան կուզէք շինէք հիմա ասկէ մեկնելով:

– Այսինքն, ասոր յաջորդ քայլը այն պիտի ըլլայ, որ մեր բառարանները վերանորոգուին: Իսկ, եթէ CD-ին չվաճառուեցաւ, կայքէջը գործածողներ եղա՞ն արդեօք:

– Այո՛, այո՛, կայքէջը օրական մտնում է 2000 մարդ: Որպէս գրադարան՝ դա փոքր թիւ չէ: Յատուկ հետաքրքրուողները ունին շատ հետաքրքիր աշխարհագրութիւն Ճապոնիայի Արքայական խոհարարական գրադարանից սկսեալ...

Ուրեմն, Նարեկացու հազարամեակն էր, Մխիթարեան միաբանության պատուերով որոշեցինք Նարեկի սեղմասկաւառակը պատրաստել, Աբբահայրը եկաւ եւ 1000 օրինակ նուէր բաժանեց մտաւորականութեանը: Վեց լեզուով՝ գրաբար բնագիրը, արեւմտահայերէն, արեւելահայերէն, անգլերէն, ֆրանսերէն, ռուսերէն, այսինքն maximum [առաւելագոյն] տեքստը մշակելի դարձնել ընթերցողի, ուսումնասիրողի, գրողի համար: Նոյն այս ձեւով կարելի է հրատարակել գրաբար մեր բոլոր գրքերը: Ցաւօք, գրաբարին [հետ] մենք աւելի վատ վարուեցինք քան թիւրքերը հայերին՝ 15 թուականին, բառին բուն իմաստով: Գրաբարը մենք մոռեցինք մեր ձեռքերով, գոնէ օրինակ չվերցնելով՝ եւրոպացիները ինչպէս են վարում լատիներէնին [հետ]:

– Երբոր ուղղագրութիւնն ալ փոխեցին, ա՛լ աւելի հեռացանք մեր արմատներէն:

– Այո, այո, լրիւ ճիշտ էք: Եւ այսօր յայտնուեցինք մի դաշտում, ուր մեր ամբողջ ժառանգութիւնը որ գրաբարով է, մեր ներկայ սերունդը հիմնականում անհաղորդ կը մնայ անոր: Լաւագոյն թարգմանութիւնը, քիչ-շատ յաջող, ի վերջոյ թարգմանիչի կողմից բնագրի մեկնութիւն է:

Մի բան էլ աւելցնեմ. Ե.–ԺԸ. դար, բացի թուայնացնելուց, որոշեցինք պատրաստել լիակատար քննական բնագրերը եւ լոյս ընծայել նաեւ թղթային եղանակով «Մատենագիրք հայոց» շարքով, որ Անթիլիաս տպուեցաւ: Աշխատանքները շարունակում ենք, վերջին գործը որ արուեց՝ հայագէտ-բնագրագէտ Ալեքսանտր Յակոբեանի կողմից պատրաստուեց Յովհան Օձնեցու «Կանոնագիրք հայոց»-ի Ը. Դարու բնագիրը, որ մինչեւ այսօր չէ տպուած, 79 ձեռագրերով, որ մեր Մատենադարանում, Վենետիկում, Վիեննայում, Երուսաղէմում էին պահում:

– Իսկ նո՛ր շրջանի գրականութեան թուայնացո՞ւմը...

– Նախանցեալ տարուանից Թրփանձեան ընտանիքի (ԱՄՆ) հիմնադրամի բարերարութեամբ անցել ենք նաեւ արեւմտահայ գրականութեան թուայնացմանը: Արդէն մօտ 68 հեղինակների աշխատանքներ են հաւաքուած, ամբողջ խումբը աշխատում է, այս տարի պիտի ամփոփենք հիմնական գծերի մէջ:

– Մինչեւ ո՞ր թուական նկատի ունիք:

– 1850–2000: Եթէ ծրագիրը ֆինանսական շարունակութիւն ունենայ, հարկաւ շատ աւելի պիտի խորանայ: Գիտէ՞ք ինչ կայ, երբ Յակոբ Օշական ենք ասում, ահռելի ժառանգութիւն է, ահռելի՛, գիտէ՞ք ինչքան ճշգրտելիք ունենք:

– Գրականագիտական գործեր ալ պիտի ըլլա՞ն:

– Չէ, եղած նիւթական միջոցների շրջանակում առաջին հերթին որոշեցինք բնագրերը մատչելի դարձնել, բայց հետագօտութիւններ՝ գրական եւ գրականագիտական հրաշալի կը լինեն եթէ ֆինանսաւորում լինէր եւ կարողանայինք այդ բոլորը համացանցով բոլորին մատչելի դարձնել...

– Եւ անցնելով այլ բնագաւառներ, օրինակ պատմաբանական...

– Ի հարկէ:

– Իսկ արեւելահա՞յ գրականութիւն:

– Արեւելահայ գրականութիւն չենք սկսել, ոչ, ներողութիւն, ես եւ Մանուէլը (աշխատակիցներից մէկը) գաղտնի սկսել ենք, երկուսով, յատկապէս այս վերջին վեց ամսուան Հայաստանի վայրիվերումների ժամանակ, որոշեցինք որ պիտի թուայնացնենք շտապ «Քաջ Նազարը», Դերենիկ Դեմիրձեանի: Շատ տպաւորիչ գործ է եւ շատ արդիական՝ այս օրերին մեզի վերաբերող: Երկուսով արել ենք, գուցէ օգտակար լինի դա մեր ազգին:

Մերուժան շատ բան ունի ինձի ցոյց տալիք, բայց ժամանակն ալ արագ կը սահի, կանցնի:

– Սա Հայկական էլեկտրոնային ձեռագրադարանի մայր շտեմարանն է: Բացեք, տեսեք՝ Մատենադարան, Վենետիկ, Վիեննա, Երուսաղեմ, Նոր Ջուղայ, Ֆրանսայի ազգային գրադարան, Հալեպի Քառասուն Մանկանց եւ այլն: Ուր ունինք նոյնիսկ մէկ ձեռագիր՝ նա պիտի լինի մէջը:

– Ձեռագրին վերաբերեալ բոլոր մանրամասնութիւնները արձանագրուած են: Ձեռագրին նկարագրութիւնը, էջերու լուսանկարները եւ դիմացը՝ տեքստը, թուայնացած պատմութիւնը, որո՞ւն պատկաներ է, ինչպէ՞ս հասեր է ուր որ կը գտնուի ներկայիս:

– Քանի՞ հազար հոգի էք այս գործը ընող...

– Հազար ր... (բոլորը կը խնդան):

– Եթէ հազարաւոր անձեր չկան, կան հազարաւոր ժամեր այս գործին ետին...

– Հազարաւոր ժամերը չեն կարելորը, գիտէ՞ք ինչ է ամենէն կարելորը. Ամենէն կարելորը գաղափարն է եւ սերն է, Մէրը՝ որ սա պիտի անենք:

– Բայց յաջողեցա՞ք, այդ է որ չափազանց կը տպաւորէ զիս:

– Մենք սարքեցինք մայր նախօրինակը, որ հայաշխարհին բացատրենք որ ինչ պիտի անենք, մեր սարքածը ուղղակի ո՞ւր պիտի գնայ, ուր էլ լինենք, սա հային, այլեւ աշխարհին ընդհանրապէս մատչելի պիտի ընէ հայ մշակոյթը: Մենք չենք փախչելու սրանից: Մենք ետ քարանձաւ չենք վերադառնալու, չէ՞, [այս ամենը] մեր նախորդ սերունդը բերեց, հասցրեց, չէ՞, մինչեւ Յեղասպանութիւն: Իրենց մարմիններին կապելով այս ձեռագիրները փրկեցին, մենք այսօր ամենաշատը իրենց պահում ենք ձեռագրատների մէջ որպէս թանգարանային նմուշ:

Եթէ լաւ ենք պահում՝ յարգ ու պատիւ է, բայց ուսումնասիրելու մասին եմ խօսում: Մենք չենք փորձում հասկնալ մէջը ի՞նչ կայ: Սա նշանակում է, որ մենք չուսումնասիրելով մեր անցեալ ժառանգութիւնը չենք կարող նաեւ սերել նոր մշակոյթ: Ինձ հասկացա՞ք, չէ՞: Մեր ամբողջ ազգի մտաւոր ժառանգութեան տէրը չենք լինում: Սա որպէս պահեստ տեղ մը պահելը դեռ մեր խնդրին մէկ հարիւրերորդն է, հասկացա՞ք, ա՛յս է:

– Ճիշտ անունը ի՞նչ է այս կազմակերպութեան:

– Մենք գործում ենք Հայաստանի Ամերիկեան համալսարանին մէջ որպէս առանձին ծրագիր՝ Հայ դասական մատենագրութեան թուային գրադարան:

– Ամերիկեան համալսարանը պիտո՞ճէ կը յատկացնէ՞:

– Ո՛չ: Ծնորհիւ Ամերիկեան համալսարանի նախագահ Յարութիւն Արմէնեանի, որը իսկական հայ մարդ է, եւ մշակոյթի արժէքը փայլուն է գիտակցում, ֆինանսաւորում գտան այս ծրագրերը, եւ աշխատանքը հասաւ մինչեւ հոս:

– Իրմէ՞ ե տք... Պիտի կարենա՞նք շարունակել:

– Մենք պատրաստ ենք աշխատելու: Ծրագիրը պիտի շարունակականութիւն ունենա՞յ: Պիտի այս ազգը իր մէջ ուժ գտնի տե՛ր կանգնելու: Մենք պատրաստ ենք այսօր առաջարկելու այսպիսի տասնեակ ծրագրեր, մէկը միւսից փայլուն: Մենք ինքներս ենք մշակում ծրագրերը: Մենք կցորդ չենք տեխնոլոգիային [արհեստագիտութեան], մենք աւելի առաջ ենք շատ բաներում... Տեսեք, մենք երբոր պատրաստեցինք թուային գրադարանը, Եւրոպա դեռ չունէր թուային գրադարան:

– Ե՛րբ բացիք գրադարանը:

– Աշխատանքների հիմնական մասը աւարտեցինք 1999-ի վերջին, կայքը բացեցինք 2000 թուականի Սուրբ ծննդեան գիշերը՝ անմոռանալի օր: Եւրոպական էլեկտրոնային

գրադարանները դեռ չկային, Ամերիկայում կային, որոշ ամերիկեան համալսարաններ ունեին: Եւ տասը տարուան մէջ [աշխարհի մէջ] հսկայական քայլեր եղան: Խնդիրը նիւթականի վրայ է: Ոչ թէ կարելոր է ո՞վ է անում, թող անէ, Աստուած հետները, այլ կարելորը՝ թէ պիտանի՞ է ազգին. Ազգը դրե՞լ է իր առաջ եղ խնդիրները, այդ գործիքների օգնութեամբ արդի աշխարհի ելեկտրոնային տեխնոլոգիաների գործիքների օգնութեամբ իր նախորդ մշակութային ժառանգութիւնը աւելի իւրացնել, աւելի տէր կանգնիլ, աւելի մատչելի դարձնել, թէ՞ ոչ շարունակելու ենք նախկին ձեւով, նախկին մեթոտներով: Պատրաստել ենք ելեկտրոնային գրադարանը, աշխարհի վրայ հայկական քանի՞ դպրոց է դա գործածում:

– Բայց քանի՞ն գիտէ, այդ մասին ալ պիտի մտածուի:

– Ադի ճիշտ է, դա էլ ունենք: Իմանալը մի խնդիր, գործածելը, այսինքն կրթական ծրագրերի մէջ մտցնել՝ երկրորդ խնդիր: Նայէ ինչո՞ւ չէ, գրաբարի ուսուցումը, իւրացումը ո՞վ է մեր փոխարէն անելու: Չիօսիմ Սփիւռքի մասին, Հայաստանու՝ մ այսօր գրաբարի դասաւանդումը ողբերգական վիճակի մէջ է, ողբերգական՝ վիճակի: Ո՞վ պիտի անի: Չեմ խօսում արեւմտահայերէնի մասին: Արեւելահայ հաստուած ենք կոչում ու եթէ արեւելահայերէնի լաւագոյն իմացողները այսօր մեր Հայաստանի Ազգային ժողովի պատգամաւորներն են, դուք կարո՞ղ էք երեւակայել թէ արեւմտահայերէնի իմացութիւնը ի՞նչ մակարդակի վրայ է, եւ ո՞ւր է արեւմտահայ դպրոցը որ իր մէջ խտացրել է Հայաստանից գնացածը, Սումգայիթից ու Բաքուից գնացածը, ռուսահայ գաղութը, չէ՞... Ես կեանքիս մէջ Ամերիկա ոտք չեմ դրել, բայց լիարժէք պատկերացնում եմ՝ ի՞նչ է Լոս Անճելըսի արեւմտահայի զարգացած դպրոցի վիճակը ...

– Արշակաւան ...

– Արշակաւան, լաւ ասեցիք: Բայց մեղք է չէ՞, այդ արեւմտահայերէնը ի՞նչ է լինելու:

– Հիմա այս թուայնացած տեքստերը եթէ չգործածեցիք, մենք նմուշի հաւաքածոյ չենք սարքում: Սրանք գործիքներ են՝ մեր կեանքը հեշտացնելու....

– Մէկ բան եւս պէտք է ընէք, կարդաք եւ ձայնն ալ արձանագրէք, որ ապագային հայերէն չզիտցողը կարենայ բառերը սորվիլ...

– Այսինքն դուք այնուամենայնիւ յոյս չունէք, որ այս ազգը ապրելու է, եւ յոյսը ունեմ: Աւդիոտեքստեր [audiotexts – լսագրութիւններ] շինենք, եւ դրան դէմ չեմ, աւդիոտեքստերը իսկապէս օգտակար են: Ինչ պատուիրէք կարելի է շինել, դա իսկապէս ճիշտ է, հիմա օրինակ, ծրագրում ենք հայ ժողովրդական հեքիաթներու բազմահատորեակը այդ ձեւով հրատարակել: Նրանք բարբառներով են, եւ շատ կարելոր է, որովհետեւ այդ բարբառները այսօր [խօսող չկայ]: Օրինակ, Վանի բարբառը, քանի՞ մարդ գիտէք որ անով կը խօսի: [Եթէ մենք չսարքենք], ո՞վ պիտի սարքի, այսինքն մէկը պիտի գայ փրկի՞ մեզի, թէ ոչ մենք ինքներս, ոչ թէ փրկուենք այլ ապրե՛նք դրանով, ապրե՛նք: Առաջինը՝ վատ է, որ չգիտենք, կորցրել ենք, չգիտենք, ամենավատը՝ որ չենք փորձո՞ւմ սովորել: Եւ քանի չենք սովորում, վաղը նաեւ լրիւ մոռանալու ենք մեր էպոս [դիւցազնավէպը]՝ Սասնայ ծոերը, որովհետեւ Սասնայ ծոերը գրական հայերէնով չի գրուած, եւ չի գրուել երբեք, նա միայն բարբառներով է յայտնի, չէ՞: Այսինքն Սասնայ ծոերը մենք միայն գրական թարգմանութիւններու միջոցաւ ասկից յետոյ կարող ենք կարդալ:

– Իսկապէս աներեւակայելի գործ կընէք: Ես շատ հեռաւոր գաղափար մը ունեի միայն այս մասին: Կը յուսամ այս հարցազրոյցի ճամբով շատեր կը տեղեկանան, թէ ի՞նչ մեծ աշխատանք կը տանիք:

Շնորհակալութիւն, մեծապէ՛ս շնորհակալութիւն:

Ամերիկեան համալսարանը երկու քայլ անդին է, Պոռշեանի ծայրը, եւ Մերուժան զիս կ'առաջնորդէ հոն, տնօրէնին՝ «Հորիզոն»-ի գրական յաւելուածի աշխատակից, բանաստեղծ-արձակագիր բժ. Յարութիւն Արմէնեանի մօտ:

Ան ժողովի մը մէջ է իր գործակիցներէն խումբի մը հետ, կը հրաւիրէ, որ միանամ իրենց: Կը նստիմ սեղանին շուրջ, բայց միտքով հոն չեմ, տակաւին քիչ առաջուան հարցազրոյցն է, որ ուղեղիս մէջ կը դառնայ:



Տեսարանը՝ Արմէնեաններու պատշգամբն

Քիչ ետք ժողովը կ'աւարտի, կ'իջնենք վար, ուր արդէն Նազիկն ալ հասած է, ու վարորդը մեզ բոլորս կը տանի Յարութենց տունը, ուր տարի մը առաջ ալ հիւրասիրուելու հաճոյքն էի ունեցեր:

Սոնան ալ հոս է, ան, որ իր արուեստագէտի նրբին ճաշակով ամբողջ յարկաբաժինը արդի արուեստի թանգարանի մը վերածած է, խնամքով ընտրելով ամենէն յետին բռնակը, հայելին կամ լուսամփոփը:

Կ'ընթրենք մեծ պատշգամբ, վայելելով Արարատը կանգնած մեր դիմաց եւ Երեւանը փռուած մեր առջեւ:

Եղեգնաձորի դրախտը

4 յունիս, չորեքշաբթի

– Կու գաք իմ քով, այնտեղէն կ'երթանք ո՛ր որ կ'ուզէք,– իր այնքան համոզիչ ձայնով մեզ Եղեգնաձոր կը հրաւիրէր մեր հին ծանօթ-անծանօթ ընկերը՝ Ստեփան դարձած Անթուանը:

Ծանօթ՝ որովհետեւ տարիներէ ի վեր կը ճանչնանք իրար, անծանօթ՝ որովհետեւ ինք՝ Օթաուա, մենք Մոնթրէալ, շատ առիթ չենք ունեցած մտերմանալու, եղբայրանալու: Եւ անհա՛ ոսկի առիթը: Ինք տարուան կարեւոր մասը Հայաստան կը բնակի, կը զբաղի

բարեգործական աշխատանքներով: Բնակարանն ալ Եղեգնաձոր է, մարզկեդրոնին մէկ ծայրամասը, բարձունքի մը վրայ: Բայց այդ մասին քիչ ետք՝ երբ հասնինք հոն:

Ուրեմն, առաւօտուն, մեկնելէ առաջ քիչ մը ազատ ենք, կանցնինք Քրիստափոր Միքայէլեան կեդրոնէն, ի վերջոյ կը յաջողիմ «բռնել» Կիրոն «Հորիզոն»-ի իմ կրտսեր գործակիցս եւ անմիջական յաջորդս որպէս խմբագիր, այժմ ՀՅԴ Բիւրոյի քաղաքական գրասենեակի պատասխանատուն, եւ միշտ մտերիմ ընկերս, որուն հետ նոյն ալիքին վրայ կըլլանք յաճախ: Կառնեմ ինծի պակասող «Դրօշակ»-ները, որոնք աւաղ, դադրած են նամակատարով հասնելէ:

Եւ ահա ճամբան ենք, Անթուան-Ստեփանին հետ, M-2 ճանապարհին վրայ՝ դէպի Եղեգնաձոր: Գագիկն է մեր վարորդը, իր համատեղացին, հողի՝ մարդ մը: Ճամբուն ընթացքին Ստեփան մեզ պիտի համոզէ, որ քանի մը օր մնանք իր տունը ու վայելենք շրջակայքը, հեւ ի հեւ վազվզելու տեղ՝ հանդարտէ՛ն առնենք մեր կեցութիւնը, Երկրին հա՛ մը առնենք...

Արցախն ալ՝ ուրիշ անգամ, եւ աւելի երկար ժամանակ տրամադրելով... Իրաւունք կու տանք իրեն:

Կանցնինք մեզի ծանօթ վայրերէն, որ հակառակ ուղղութեամբ կտրեր էինք անցեալ շաբաթ, ու կը հասնինք Վայոց ձոր մարզը:



Բարի արագիլ, բախտի արագիլ...

Արենի հրաշալիքը

Սեւակի ծանր շիրմաքարը

Հեռուն, սարահարթի մը վրայ, յստակօրէն անջատուած իր շրջապատէն, բայց եւ այնպէս սքանչելի կերպով ընդելուզուած անոր հետ՝ փոքրիկ եկեղեցի մը: Կը մօտենանք: Արինի Մուրբ Աստուածածինն է, 1321-ին շինուած, Մոմիկի գլուխ գործոցներէն մէկը, վերանորոգուած՝ մեր շատ սիրելի Գարեգին Ա. կաթողիկոսին կողմէ՝ 1997-ին: Մօտակայ Ամաղու վանքն ալ Մոմիկի գործն է: Ըստ երեւոյթին ան բնութիւնն ու մարդակերտ կառոյցը իրարու ներդաշնակելու կարողութեան լաւապէս տիրապետած ճարտարապետն էր:

Անկէ՛ Զանգակատուն գիւղ, Պարոյր Սեւակի տուն-թանգարանը, որ անպայման պէտք է այցելել: Չեմ յիշեր ինչու տունը չենք մտներ, – գուցէ փակ է, – բայց կիջնենք պարտեզ, ուր մեծ բանաստեղծին դամբանն է, բաղկացած մէկ հսկայ ժայռէ, վրան անունը՝ բարձրաքանդակ տառերով: Ծառերու շուքին, խաղաղութեա՛ն մէջ: Բակին պատերուն առջեւ, տան ցանկապատին ալ ընդելուզուած՝ զանազան փոքր յուշարձաններ են,

խաչքարերու նման՝ Մեւակի խօսքերով, առնչուած իր դառն ճակատագրին... Լուռ դուրս կու գանք այդ սրբավայրէն: Լուռ եւ զայրացած:



Սուր կամուրջը...



Եւ անոր մօտիկ՝ ամենահամեղ խորովածը

Կը շարունակենք ճանապարհը Արփայի եզերքէն ու կը հասնինք Սուր (Ագարակաձորի կամ Դադայի) կամուրջը, որ ԺԳ. Դարէն ի վեր լուռ կը հսկէ գետի հոսանքին վրայ, մէ՛կ գեղեցիկ թռիչքով երկու փետրը կապելով իրարու: Գեղատեսիլ է բնութիւնը. Կիջնենք, կը քալենք, յղկուած, կլորցած քարերուն վրայէն, կը փորձենք մեր ձեռքերը լուալ Արփայի գուլալ ջուրերուն մէջ:

Եւ ահա մեզ կանչող կայ,– կը հրաւիրեն միանալու իրենց, բաժնելու խորովածը: Բանուորներ են՝ ճանապարհաշէն մարդիկ, որոնք թոյլ չեն տար, որ հեռանանք այդտեղէն առանց համտեսելու իրենց ծիրանի օղին: Մերժելը մեծ անպատուութիւն է... Ու կը նստինք քարերուն, ծառի կոճղերուն վրայ՝ հովասուն այդ անկիւնը, ու կը վայելենք պահը: Ստեփանը իրաւունք ունէր...

Եւ կը հասնինք Եղեզնաձոր, ուր 1991-ին, Հայաստան առաջին գալուստ մէկ գիշեր իջեւանած եմ Գլաձոր հիւրանոցը: Կանցնինք առջեւէն (հին, խորհրդային նմուշ մըն է), կը դառնանք, Ստեփան մեզի ցոյց կու տայ Գիտելիք համալսարանը, որ Աբրահամ եպս. Մխիթարեանի ջանքերով ստեղծուած է, եւ որ շաբաթ-կիրակի օրերը կը գործէ, որպէսզի կարելի ըլլայ Երեւանէն հրաւիրել լաւագոյն դասախօսները... Չենք յաջողիր տեսնել սրբազանը, սակայն լաւապէս կը հասկնանք, թէ ի՛նչ կորովի ու հաւատքի տէր անձ մը ըլլալու է ան...



Դէպի Ստեփանին պալատը

Ահա նաև Նարայե Խաչատրեան «փողոց»ի վերջաւորութեան, բարձունքի մը վրայ՝ Ստեփանին «պալատ»ը,– հայրենի հողին վրայ տուն ունենալը համագոր է պալատի տէր ըլլալուն,– որու ճակտին Եռագոյնը կը դիմաւորէ մեզ:

Ստեփան կը փութայ մեզի ցոյց տալու տան ետեւի դարատափը, ուրկէ Արարատի գագաթը կ'երեւի: Այնքան հպարտ չէինք տեսած մեր ընկերը:

Կ'ընթրենք տիկին Գոհարի պատրաստած համեղ ճաշերը: Ան Ստեփանին դրացին է եւ ի՛նք տան հոգ կը տանի, մանաւանդ տանտիրոջ բացակայութեան օրերուն: Երբ հիւրեր գան այս «Bed and Breakfast» (գիշերելու եւ նախաճաշի յարմարութիւններով) իջեւանը, ի՛նքն է, որ կը զբաղի անոնցմով: Մեզի հանդէպ ա լ աւելի հոգածութիւն ցոյց կու տայ, քանի որ իբր բարեկամ եւ ոչ յաճախորդ ենք եկած...

Ընթրիքէն ետք կը ձեմենք Մխիթարեան «փողոցն»-ի վար,– որ աւելի շատ գիւղական ճամբու մը կը նմանի,– մեր գլխուն վերեւ կամար կազմած ծառերէն թութ ու այլ հատապտուղներ քաղելով եւ ծանօթանալով թաղի հայաչուի երեխաներուն:

Դրա խտ ենք եկած: Իրաւացի՛ էր Ստեփան:

5 յունիս 2008, հինգշաբթի

Մկրտութի՛ւն

Մկրտութիւն՝ լճակի մը մէջ... ահա օրուան գլխաւոր իրադարձութիւնը: Անկէ առաջ, սակայն, ուրիշ ծրագիրներ ունինք:

Տիկին Գոհար արդէն խոհանոցն է, եւ իր հետ բերած հացին բոյրը անդիմադրելի է: Նախաճաշը՝ Արարատի վարդագո՛յն կատարը դիտելով ճաշասենեակի պատուհանէն:

Եւ ահա մեր վարորդը՝ Գագիկն ալ եկած է.

– Ո՞ւր էք ուզում գնալ էսօր:

Մեր նպատակն է Գնդեվանքը տեսնել, Արագին թելադրութեամբ: Այդ՝ Ջերմուկի ճանապարհին վրայ է: Անկէ առաջ սակայն մեզմէ ոչ շատ հեռու կայ Խաչիկ գիւղը, ուր կ'ուզեմ անգամ մը եւս այցելել: Առաջին անգամ այնտեղ գտնուած եմ 1991-ին, դաշնակցական ընկերոջ մը տունը, վայելած անոր ընթրիքը, հիացած՝ գիւղական տան մը մէջ այնքան մեծ գրադարանի մը առկայութեամբ, ունկնդրած այր եւ կնոջ վեճը՝ նախագահական ո՛ր թեկնածուին քուէ տալու առնչութեամբ...

Այստեղէն կարելի է Մասիսը տեսնել բոլորովին տարբեր դիտանկիւնով, ինչ որ սակայն գրեթէ հնարաւոր չ'ըլլար՝ քանի որ ալեհեր ծերունին ամպերը գլխուն է հաւաքած դարձեալ:

Խաչիկը սահմանապահ գիւղ է, վերէն կը հսկէ Նախիջեւանի վրայ, որ տակաւին իր տունդարձին կը սպասէ...



Վայքի Սուրբ Տրդատը



Վայոց ձորի համայրը

Եւ ահա միշտ M-2-ով կողողուինք դէպի Գնդեվանք, Արփային ընկերակցութեամբ: Ճամբան շուք տեղ մը կը փնտռենք՝ սուրճ առնելու համար: Գագիկ գիտէ ո՛ր կանգնիլ ճիշտ գետին եզերքը, հովասուն սրճարան մը: Մեզմէ գատ մարդ չկայ. Ազնիւ տէրերը չեն գիտեր ի՛նչ ընեն մեզ գոհ ձգելու համար:

Անկէ ետք դուրս կու գանք գլխաւոր ճանապարհէն եւ Ջերմուկի ճամբով կելլենք դէպի հիւսիս՝ նո՛ր ճանապարհով, որ դիւրին է եւ արագ: Կը հասնինք Գնդեվանքի վերել, հոն իմանալու համար, որ այդտեղէն վանքը ոտքով իջնելն ու ելլելը շատ դժուար է, ամեն մարդու գործ չէ, լեռնագնաց ըլլալու է... Ուստի եկած ճամբով կիջնենք ետ, եւ կառնենք հին ճանապարհը, քարքարոտ, անբարեկարգ, բայց... իսկակա՛ն բնութեան մէջ: Մէկ կողմէն ձիգ լեռնալանջքն է, ժա՛յրը, միւս կողմէն արդէն բաւականին նեղ Արփան, ու մէջտեղը՝ քարերով «զարդարուած» ճամբան: Գետին մէջն ալ շատ են քարերը՝ դարերու ընթացքին յղկուած, ողորկ ու փայլուն դարձած:



Գոհար մըն ալ Գնդեվանքն է



Հի՛ն հին դարուց յիշատակ...

Գնդեվանքը թեթև բարձունքի մը վրայ է, բայց՝ ձորի մը մեջ ու իր պարիսպով, եւ կիշխե շրջապատին վրայ: Դրախտային է բնութիւնը:

Սոփի իշխանուհին շինել տուած է 936 թուականին՝ գործակալ-նկարիչ Եղիշէին: Վայոց ձորը անակն մատանի էր, արձանագրած է Սոֆի, «եղի ակն ի վերայ»: Իրապէս ալ այս եկեղեցի՝ նալ գոհար մըն է: Պարիսպը, սեղանատունը եւ սենեակները ԺԷ. դարուն աւելցած են:



Բացատրութեան կարիք չկայ...

Վերադարձի ճամբուն նախ կանգ կառնենք ակի մը մօտ, որ թթու ջուր ունի, հանքային համեղ ջուր մը: Արմէնը, Մասիսը եւ Սիմոնն ալ, երեք ընկերներ, կու գան, իրենց ինքնաշարժը կը կանգնեցնեն մերինին կողքին եւ թթու ջուրէն կը խմեն. Բուժիչ է...

Յետոյ՝ Մալիշկա, ռուսական անունով թուող սա գիւղը, Վայոց ձորին մեջ, ուր նոր եկեղեցի մը ցոյց պիտի տրուի մեզի: Կառուցուած է 1996-2000, ռուսաստանաբնակ դարձած Արա Աբրահամեանին կողմէ: Սուրբ Աննա: Գեղակառոյց տաճար մը, սիրուն շրջապատով: Բայց... դատարկ: Սոմ վաճառող մամիկը կըսէ հոս պատարագ չըլլար, միայն նուիրատուին տարեկան այցելութեան աստէն քահանայ կը տեսնեն: Պտղատու այգիներով հարուստ այս գիւղին անունը կու գայ «մի լիճ կայ» բառերու աղաւաղումէն: Կըսուի թէ իրապէս այդ

կողմերը լիճ եղած է: Գիւղը շէնցած է 1826-28 ռուս-պարսկական պատերազմէն ետք:

Ինքնաշարժին մեջ կը շարունակենք մեր խօսակցութիւնը, Գագիկ կափստսայ, որ մարդիկ կը ձգեն, կերթան Ռուսաստան կամ այլուր.... գործ չկայ:

Օրուան մնացեալ մասը շատ տարբեր ձեւով պիտի շարունակուի: Ստեփան անակնկալներ վերապահած է մեզի համար, նախ պիտի երթանք մի քիչ լեռնագնացութեան: Սքանչելի է օդը. Տաքուկ



Սուրբ Աննան

յետմիջօրէ մը: Իր տունէն քալելով պիտի անցնինք լեռնային դաշտերէն, իջնենք մօտակայ լճակը, որուն տեղը շատ մարդ գիտնալու չէ: Ստեփանն ու ես պիտի հանուինք, մտնենք ջուրը մկրտուինք...

Յետոյ, քանի մը քայլ եւս՝ եւ ահա արդէն «քաղաքամէջ» պիտի հասնինք, Սիսական ճաշարանը, Եղեգիս գետի ափին, բացօթեայ համեղ ձուկ ուտելու: Եւ... «Ձախորդ օրեր ձմռան նման, կու գա՛ն ու կերթա՛ն...» ունկնդրելու:

Անկէ Ժագլիսէնց, Ստեփանի դրացիին տունը. Յունաստանէն քառասունականներուն զաղթած դաշնակցական ընտանիք է, միշտ

հաւատարիմ մնացած իր ուխտին... Մինչ տանտիկինն ու երիտասարդուհիները մեզ անոյշով ու անուշեղէններով կը հիւրասիրեն տան առջեւի ծաղկազարդ բակին մէջ, դուրսը աղմուկ, իրարանցում պիտի լսենք, թէեւ արդէն մուր է: Ու ականատես պիտի ըլլանք իւրայատուկ տեսարանի մը՝ զինուորին վերադարձին: Թաղի տղոցմէ մէկն է, զինուորական ծառայութիւնը աւարտած՝ տուն կը բերուի գնդապետին իսկ կողմէ: Մայրը, նշանածը, դրացիները բոլորը բերկրանքի մէջ են: Անմոռանալի պահ մը եւս: Բայց այս մէկը Ստեփանն ալ չէր նախատեսած:

Չէ, շատ ճիշտ ըրինք մի քանի օր Եղեգնաձոր մնալու որոշում տալով:



Լեռնագնացութիւն հայրենի

Ամբողջական ներշնչումի օր մը

6 յունիս, ուրբաթ

Առաւօտ կանուխ ճամբայ պիտի ելլենք, սակայն տունէ՛ն կը սկսին օրուան կարեւոր իրադարձութիւնները:

Նախ կը ծանօթանանք տիկին Գոհարի անուշիկ թոռնիկներուն, որոնք մասամբ իր ինամքին են յանձնուած, քանի որ անոնց հայրը զացած է հեռաստան՝ ապրուստ ապահովելու, մայրն ալ՝ Գոհարին հարսը, կնշխատի անկարելին կարելի դարձնել:

Նազիկ շուտով կը կապուի այդ ձագուկներուն եւ անոնց հետ ալ կ'երթայ տեսնելու թոնիրը, որուն վրայ երեկոյեան մեծ ընթրիքը պիտի պատրաստուի. Հիւրէ ր կը սպասենք:

Այդ հիւրերէն ոմանք արդէն երէկ էին հասեր ու մեզի հետ գիշերեր Ստեփանին տունը: Մէկը Մեւանն է, ամբողջովին ֆրանսախօս՝ Ստեփանի եղբոր զաւակը, Ֆրանսայէն եկած ու որոշած Հայաստան հաստատուիլ: Միւսը՝ իր ընկերուհին է, Պէաթրիսը, ուքրայնացի աղջիկ մը, որ որոշեր է հայանալ, եւ երրորդը՝ անոր մօր նախկին ամուսինը, որ երկարատեւ ինքնաքսորէ ետք վերադարձեր է հայրենիք ու կուզէ այլեւս հո՛ս ապրիլ եւ ստեղծագործել:

Բայց անոնց մասին աւելի ետք. Հիմա արագ պետք է նախաճաշել եւ դուրս գալ այս իւրայատուկ «ապարանք»էն: Գագիկը մեզի կը սպասէ իր ինքնաշարժով:

Մեզի այլեւս արդէն ծանօթ՝ Վայոց ձորի գլխաւոր ճանապարհով կուղղուինք դէպի Սիսիան, Արփայի կողքին, անցնելով հին հրաբխային լաւաներէն գոյացած ու կուտակուելով

փոքր բլուրներ կազմած քարերուն մօտէն եւ հանդիպելով իրարու յաջորդող գիւղերն ու
 ասանները:

Կը հասնինք Սիւնիքի սահմանը, կ'անցնինք Իւրայէլեանի կերտած դարպաս-կոթողէն,
 ապա Ռրոտանի եզերքէն կը շարունակենք, վայելելով նաեւ Սպանդարեանի ջրամբարի
 գեղեցիկ տարածքը ու կը մտնենք Սիսիան: Առաջին հանգրուանը՝ Սուրբ Յովհաննէսի
 եկեղեցին, որու հոգատարը (Ժամկոչը) կը հաստատէ, որ ասիկա ոչ թէ է., այլ Ձ. դարու կոթող
 է: Շատ է նման Սուրբ Հռիփսիմէին, սակայն մինչ ան վարդագոյն տուֆով է կերտուած, այս
 մէկը մութ գոյնի մոխրագոյն քարերով է շինուած: Կը վկայակոչուի Սեդո Խանգաղեանը, չեմ
 յիշեր ինչ առնչութեամբ: Յետոյ կ'անցնինք եկեղեցիին յարակից տարածքը, ուր կողք կողքի կը
 հանգչին 75 մարտիկներ՝ Արցախի ճակատին վրայ իրենց կեանքը հայրենիքին նուիրած:
 1991-ին, երբ առաջին անգամ կու գայի այստեղ, անոնք մեզի պէս հասարակ եւ անանուն
 մահկանացուներ էին: Հիմա՝ հերոսացած անմահներ, – մահ իմացեալ՝ անմահութիւն է: Եւ
 ակամայ, մտովի կը կրկնէ՝ մ մեր օրհներգի վերջին տունը՝ «Ամենայն տեղ մահը մի է»... 75
 հոգի նոյն վայրէն:



Աստ հանգչին 75 հերոսներ



Մեծ եղեռնի յուշարձանը՝ քարերուն միջեւ կազմուած խաչը... Սուրբ Յովհաննէսը

Այդտեղէն կը մեկնինք վշտի ու հպարտութեան խառն զգացումներով եւ անցնելով քաղաքին անհրապոյր փողոցներէն, շուտով դուրս կու գանք դէպի դաշտերը եւ կը կանգնինք համեստ շէնքի մը առջեւ, ուր հաւանաբար յուշանուէրներ կարելի է գտնել: Մա մուտքն է Քարահունչին, ուր բաց երկնքի տակ, կանաչութեան մէջ, Ջօրաց քարերն են ցանուած, զանազան չափերու եւ այլազան դիրքերով: Մեր պատմութեան խորհրդաւոր ժառանգութեան մաս կը կազմեն անոնք. Կըսուի, թէ եօթը հազար տարուան հնութիւն ունին: Քարահունչը՝ Stonehenge-ի նախահայրը, այս վերջինէն 3000 տարի աւելի հին է, – կըսուի: Կըսուի նաեւ, որ այստեղ աստղադիտարան է եղած եւ աստղագիտութեան համալսարան, վկայ՝ այն ծակերը, որոնք քարերուն մէջ փորուած են աստղերը դիտելու համար... Ես հաւատացողներէն եմ. թերահաւատներ ալ կան... Պարիս Հերունին է այս բոլորին մասնագէտը:



Քարահունչ – Ջօրաց քարեր...




Առանց բացատրութեան

Հոսկէ ալ հրաժեշտ կ'առնենք եւ կ'ուղղուինք դէպի Տաթեւ: Կը մտնենք Զանգեզուրի լեռնային շրջանները, կանցնինք զանազան բնակավայրերէ: Կ'ափսոսանք, որ ճանապարհները բարեկարգ չեն պէտք եղածին չափ, այլեւ կը պակսին անհրաժեշտ ցուցանակները՝ մեզ անշեղ մեր նպատակակէտին հասցնելու համար: Ի վերջոյ Տաթեւի



Տաթեւ հասնելու համար...



Տեսարանը Տաթեւի մօտակայքէն



համալիրը մեր ճարտարապետական հարստության ամենէն կարեւոր գանձերէն մէկն է, եւ կանկնկալես, որ գրօսաշրջիկը հոն ներքաշելու համար աւելի ճիգ թափուած ըլլայ: Մեր վարորդը դիտել կու տայ նաեւ, որ աւելի կարճ ճանապարհով ալ կարելի է հոն հասնիլ, դժբախտաբար լաւ վիճակի մէջ չէ անիկա (այսինքն աւելի վա՛տ վիճակի մէջ է)...

Բայց եւ այնպէս, այդքան մըզ-մըզ չըլլանք ու վայելենք մեր երկրի այս հրաշագեղ բնութիւնը:

Բարձրերէն անցնելով կիջնենք, կը հասնինք Սատանի կամուրջը, որ բնական կամուրջ մըն է. տակէն գետը կը հոսի, իսկ ինք գոյացած է դարերու ընթացքին շթաքարերու կազմութեամբ: Փոքր պուրակ մը կայ շուրջը՝ մի քանի նստարաններով, եւ բնական աւազան մը՝ տաք ջուրով, ուր կարելի է եւ լողալ: Ես պատրաստուած եկած եմ, բայց չեմ փորձուիր. Մաքրութիւնը վստահութիւն չի ներշնչեր... այսուհանդերձ միջավայրը

Սատանի աւազանը...

առինքնող է, կը նստինք հաց ուտելու (պանիր եւ վարունգ ալ...), ու կը հրաւիրենք մեզի միանալու փոքրիկ Վրէժը, որ կը դեգերի այդ կողմերը, ու ինք ալ իր ձեռքի հացը կ'երկարէ մեզի: Չես կրնար չսիրել վառվռուն այս հայրողին, բոլոր հայրողիները:

Այստեղէն կը սկսի վերելքը դէպի Տաթեւի բարձունքը:

Սատանի կամուրջէն կը սկսինք բարձրանալ լեռներու լանջքն ի վեր՝ ոլորապտոյտ ու նեղ ճանապարհով: Այս փորձառութիւնը անգամ մըն ալ ապրած եմ Լիբանանի մէջ, Խատիշայի հովիտի ժայռափոր վանքը այցելելու առթիւ, այն տարբերութեամբ, որ այստեղ գոնէ երկու ինքնաշարժ կրնան քով-քովի անցնիլ...

Քանի կը բարձրանանք, այնքան համայնապատկերը կը բացուի, եւ հայկական լեռնաշխարհը իր այնքան հմայիչ երեսները ցոյց կու տայ, իրարու յաջորդող լեռնաշղթաներով. Վանքը չհասած կանգ կառնենք անդունդի եզրին կառուցուած յատուկ դիտարանը, ուրկէ 360 աստիճանի վրայ գգլխիչ տեսարանը կը բացուի առջեւ:

Յետոյ, քիչ մը անդին, ահա եւ Տաթեւն է, որ առաջին անգամ ըլլալով տեսնելու վայելքը պիտի ունենանք:



Տաթեւի համալիրը

Ի գուր կը փորձեմ գտնել բարձրադիր դիտակետը, որմէ քաշուած են գիրքերու մէջ կամ այլուր իմ տեսած լուսանկարները: Հաւանաբար հեռանալ եւ այլ բարձունքէ մը մօտենալ է պէտք: Մենք ուղղակի կը մտնենք պարիսպէն ներս, ուր գլխաւոր եկեղեցին, յարակից մատուռներն ու շէնքերն են ամփոփուած:



Ամեն դիտանկիւնէ՝ գեղեցիկ

Տաթեւ կը գտնուի նախկին Գորիսի շրջանին մէջ, Որոտանի աջ ափին, պատմական Ծղուկ գաւառին մէջ: Հիմնուած է Դ. դարուն, Ե.–Ը. Դարերուն եղած է դպրութեան առաջնակարգ կեդրոն: Ը. Դարու վերջերուն դարձած է Սիւնեաց եպիսկոպոսութեան աթոռանիստ տաճարը: Թ.–Ժ. Դարերուն շարունակուէր է կառուցապատումը, ԺԱ. դարու Ա. կիսուն ունեցեր է մինչեւ 1000 միաբան: Ս. Պօղոս-Պետրոս մայր տաճարի շինութիւնը աւարտեր է 906-ին, Ս. Աստուածածին եկեղեցին՝ 1087-ին: Այստեղ գործած են մանկանկարչութեան դպրոց եւ համալսարան: Աւերուէր է սելճուքներու արշաւանքներուն (ԺԲ. Դարուն) եւ 1136-ի երկրաշարժին պատճառաւ: ԺԲ. Դարու վերջաւորութեան նորոգուէր է: Այժմ ալ նորոգման ընթացքի մէջ է. բոլոր լուսանկարներու մէջ կերելի բարձր կոունկը, եւ դժուարաւ անկիւն մը կը ճարեմ, որ խուսափիմ զայն ընդգրկելէ նկարի շրջանակին մէջ:

Ահա այսպիսի պատմական վայրի մը մէջ կը գտնուինք այս պահուս եւ կը սքանչանանք մեր նախահայրերու կերտած ու մեզի ժառանգ ձգած այս հարստութեան վրայ: Կատարեալ խաղաղութիւն է: Մեզմէ զատ գրեթէ ուրիշ այցելու չկայ: Երիտասարդ վարդապետը կը նկերանայ մեզի, բացատրութիւններ կու տայ, յատկապէս բակին մէջ կանգնած պատմական «գաւազան» կամ «ձօձուող» սիւնին մասին, որ դիմացած է բոլոր երկրաշարժերուն՝ իր առանցքին վրայ շարժելու, տատանելու իր յատկութեան շնորհիւ: Միքայէլ հայր սուրբը մեզ կ'առաջնորդէ նաեւ Գարեգին Նժդեհի թաքստոցը, ուրկէ ան յաջողած է կազմակերպել Լեռնահայաստանի ինքնապաշտպանութիւնը եւ թոյլ չէ տուած, որ Զանգեզուրն ալ յանձնուի թշնամիին:

Բայց ահա արդէն վերադարձի պահն է: Դուրսը վանքին նայող ճաշարան մը կայ. Կը նստինք պատշգամբ, սուրճ մը եւ անուշեղէն մը կ'առնենք ու ճամբայ կ'ելլենք:

Սիւնիքի լեռնային տեսարանները կը վայելենք անգամ մը եւս. մեր բախտէն՝ օդը միշտ լաւ է, արեւ կայ, բայց կիզիչ տաք չէ երբեք:

Կը կտրենք Վայոց ձորն ալ, եւ արդէն ահա Եղեգնաձոր ենք: Ստեփանին տունը հասնելէ առաջ, մեր վարորդը մեզի ցոյց կու տայ ի՛ր տունը, ծառաշատ պարտեզով: Ինքն ալ

կուզէ իջեանի վերածել իր «ապարանք»ը, թէկուզ երկու սենեակ ալ ինք վարձու տալով այցելուներուն: Չեմ գիտեր, կ'ակնկալէ՞ր արդեօք, որ մենք նիւթական ներդրում ընէինք...

Ստեփան կը սպասէ մեզի:

Նազիկ կ'երթայ դիմաց՝ Գոհարին տունը, տեսնելու համար, թէ ինչպէ՞ս խորովածը ուղղահայեաց կախուած շամփուռներով գետնափոր թոնիքին մէջ կը պատրաստուի:

Դեռ հիւրերը չեն եկած, կը լուացուինք եւ Սեւանին, Պէաթրիսին ու Պարգեւին հետ զարեջուր մը կ'առնենք: Սեւան դիտել կու տայ, որ դուրսէն Հայաստանի մասին խօսելով չէ, որ հայրենիքին կը ծառայենք. Պէտք է գալ, հո ս հաստատուիլ, այստե՛ղ գործել, ինչ որ ինք արդէն լրջօրէն մտադրած է ընել:

Եւ ահա կու գան նաեւ հիւրերը. Անցեալ օրուան մեր հանդիպած դրացիներն են, տիկ. Ժագիլն էլ եւ իր հարսն ու դուստրը, այլեւ գնդապետը, որուն կողքին նստելու հաճոյքը պիտի ընծայուի ինձի: Պատի՛ւր:

«Սեղանն է առա՛ւտ,

Դիմացն Արարա՛ւտ...»

Ճիշտ ու ճիշտ: Տան ետեւի դարաստափին վրայ ենք: Բացօթեայ խնջոյք մը՝ հայրենի երկնքին տակ: Նոյնիսկ մանտոլին նուագող վարպետ մըն ալ հրաւիրուած է:

Կենացներ, բնականաբար, եւ հոգեշահ ու անկապ գրոյց: Բոլորը կը մտերմանան եւ կը դառնան հարազատներ:

Գնդապետը կը խոստանայ մեզ անձամբ տանիլ Սպիտակաւորի Ս. Աստուածածին վանքը, որ մօտակայ, գրեթէ անհասանելի բարձունքի մը վրայ է կերտուած, ուր ամփոփուած են զօր. Նժդեհի աճիւնները՝ մեծ մասամբ (փոքր մասն ալ կը գտնուի Խուստուփ լեռան լանջքին): Սա Արազին թելադրած յուշարձաններէն մէկն էր, որ ա՛յս անգամ չկրցանք այցելել: «Յաջորդ գալուդ՝ ա՛նպայման կը տանեմ», կըսէ երիտասարդ զինուորականը: Երբ հայրենի բանակը նման ուժերով է համալրուած, կռնակդ ամո՛ւր կը կր զգաս...

Ստեփանին յաւէտ երախտապարտ կը մնանք:



...եւ ինչպէ՛ս

Ցտեսություն

7 յունիս, շաբաթ

Եւ ահա եկաւ ցտեսություն ըսելու օրը:

Նախ Եղեգնաձորին, Եղեգնաձորի մեր ապարանքին, ապարանքի տէր ու տնօրէն, մեր սիրելի ընկերոջ, աւելի ճիշտ՝ եղբօ՛ր՝ Ստեփանին, եւ «տնեցի»ներուն, այլեւ տիկ. Գոհարին ու թոռնիկներուն:

Գագիկն է դարձեալ, որ մեզ Երեւան պիտի տանի: Պարզեւն ալ մեզի հետ պիտի գայ: Արուեստագէտ տղայ է, ճաշակ ունի, բախտը չէ բաներ: Հիմա վերստին կեանք մը պիտի կերտէ՝ կաշիով, փայտով, զանազան նիւթերով՝ յուշանուէրներ, ապարանջաններ յօրինելով: Մեզի յիշատակ կու տայ փոքրիկ կօշիկով փակակալներ: Ճամբան կը խօսինք ցուցամոլութեան մասին, հիւանդութիւն մը որ համաճարակի է վերածուէր կարծէք մեր մէջ: Նաեւ՝ օտար ամուսնութիւններուն մասին, – «պարսիկները հաստատուում են այստեղ ու հայ աղջիկ են առնում», – կ'ափսոսայ Գագիկ, – «Սփիւռքի մէջ հայը հայի հետ են կարգում, իսկ հոս ու...»:

Այլեւս բոլորովին հարազատ է մեզի այս ճամբան, որմէ քանի անգամ ենք անցեր թէ այս եւ թէ նախորդ այցելութիւններու առթիւ: Ահա եւ արագիւնները, Արարատեան դաշտի, բարձր ձողերու (ծառի կոճղերու) վրայ իրենց շինած բոյներուն մէջ: Այդ «ծառ»-երը պետութեա՛ն կողմէ պահպանուող յուշարձաններն են...

Երեւան. Կը վերադառնանք մեր հիւրանոցը՝ մէկ գիշեր հոն պառկելու եւ վաղը առաւօտ անկէ՛ օղակայան երթալու համար:

Կիրոն կու գայ, մեզ կ'առնէ ու կը տանի մօտակայ «Grand café» կամ նման անունով (...) ճաշարան մը, որ շատ է ներկայանալի, տաքուկ, հաճելի: Արագն ալ մեզի հետ է: Երկար կը շաղակրատենք, բայց դեռ չենք հասնիր ամեն բան ըսելու իրարու:

Ապա, Նագիկն ու Արագը հիւրանոց տանելէ ետք, – մինչ այդ ես ալ փակ շուկան կ'այցելեմ՝ առաջին անգամ ըլլալով եւ կը հիանամ գոյնզգոյն պտուղներուն, բանջարեղէններուն, միրգերուն ու պանիրներուն եւ պէսպիսի մթերքներուն, անոնց ներկայացուած ձեւին, մաքրութեան ու ընդհանուր մթնոլորտին վրայ, – Կիրոն զիս Երեւանը կը պտտցնէ. Ոչ յուշարձանները, այլ առօրեայ կեանքով բաբախող Երեւանը. Նայիրի հիւանդանոցը, որ բաւական առաջնակարգ կը թուի, Կոմիտաս պողոտան, որ բաւական զարգացած կերելի, եւ այլ վայրեր, որոնք ինձի անձանօթ էին մնացած ցարդ, քանի այնքան՝



յուշարձաններ տեսնելու, թանգարաններ այցելելու, ներկայացումներու ներկայ գտնուելու, մարդոց հետ հանդիպելու եւ հարցազրոյցներ ունենալու հետամուտ եմ եղած միշտ, որ զրկուած եմ քաղաքը իր ամբողջութեան մէջ ընկալելու կարելիութենէն: Կը բարձրանանք Կասկատի վերելը եւ դարատափէն անգամ մը եւս կը դիտենք Երեւանը, ինչպէս Մոնթրէալ՝ Մոն-Ռուայալի դարատափէն կը դիտենք այդ քաղաքը, իր

Երեւանի փակ շուկան այդ օրերուն

քաղաքամէջը, Մէն-Լօրանը, կամուրջները եւ անկէ անդին՝ մինչեւ հեռաւոր բլուրներն ու հորիզոնին վրայ անհետացող լեռնագագաթները:

Այստեղ կանդրադառնաս որ Երեւանը երկունքի մէջ է. կարելի է ըսել՝ շարունակական երկունքի՝ իր շինարարական բազմաթիւ ծրագիրներով:

Կը զգամ, որ Կիրոն երջանիկ է: Չի խօսիր, բայց կը զգամ իր հպարտութիւնը, երբ ցոյց կու տայ ի՞նչ քաղաքը ինձի, մեզի: Չեմ գիտեր, թէ բարձր պաշտօնը, որ կը վարէ՝ ՀՅԴ Բիւրոյի քաղաքական գրասենեակի որպէս պատասխանատու, ամբողջութեամբ կը լեցնէ իր հոգին, – կը յիշեմ որքան կը փափաքէր քաղաքական ասպարեզի մէջ գործել, երբ «Հորիզոն»-ի մէջ կրտսեր գործակիցս էր, – բայց միայն Հայրենիքի մէջ ապրի լը արդէն կը թուի թէ մեծագոյն գոհանակութիւնը կը շնորհէ իրեն: Կը նախանձիմ: Եւ՝ լաւագոյնը կը մաղթեմ իրեն:



Անմահները միշտ հոն են...

Պանդոկէն կը յաջողիմ հեռաձայնով խօսիլ ուրիշ մէկ հի՛ն ընկերոջս՝ Զարեհին հետ, որուն հետ ծանօթ էի հեռուէ հեռու, երբ ինք Ճեմարանի «Ջահակիր»-ի խմբագրութեան անդամ էր, եւ՝ «Յուսաբեր»-ի Երիտասարդական շարժում էջի, յետոյ երկար տարիներ Մոնթրէալի մէջ զինք իբրեւ գործակից, գաղափարակից ընկեր եւ բարեկամ էի ունեցեր, ապա ինչ-ինչ պատճառներով թուլցեր էին կապերը եւ իր ալ Հայաստան հաստատուելով գրեթէ խզուեր, գրեթէ՝ քանի որ միշտ ալ հասարակաց ընկերներէ լուրերը կ'առնէի: Հեռաձայնային մեր խօսակցութեամբ կը վերագտնենք զիրար... նոյն հարազատ ընկերն էր, թէկուզ տարակարծիք՝ մեր այսօրուան արածներուն եւ չարածներուն նկատմամբ: Կը վերյիշէ Շանթի խօսքը, որ Հայրենիքը պիտի ըլլայ մեզ բոլորս, – բոլոր գաղափարաբանութիւններու կամ հատուածներու պատկանողներս, – իրարու վերստին միացնողը: Անկասկած:

Օրուան վերջին ժամը Լիզային հետ պիտի անցընենք, Նալբանդեանի վրայ՝ Լակոնիտ արեւելեան ճաշարանը, աւելի ճիշտ՝ անոր մայրի բացօթեայ բաժինը: Սա արդէն անանդութեան վերածուած հանդիպում մըն է, որ Հայաստանէն մեկնելէ առաջ պետք է ունենանք՝ մեր հին ընկերուհիին հետ՝ բաժնելու մեր ցաւերն ու ուրախութիւնները:

Ճամպուկները գրեթէ պատրաստ են: Վերջին կարգադրութիւններն ալ կ'ընենք պառկելէ առաջ:

Ժամադրուած ենք արդէն. Մեր բարեկամ վարորդը առաւօտ կանուխ մեզ օդակայան պիտի հասցնէ:

Ափսոս, ներկայ պիտի չըլլանք Նորավանք՝ անոր նորոգման նուիրատու, Մոնթրէալի Ս. Յակոբ եկեղեցւոյ եւ վարժարանին հաստատարիմ բարերար, մեր բարեկամ, անժամանակ մահացած Տիգրան Հաճեթեանի աճիւններու թաղման արարողութեան: Բայց մեզ պիտի փոխարինէ Արազը:

...Ես սակայն չեմ ձանձրանում (որպէս եզրափակում)

Այսօր

Ահա այսպէս, իր աւարտին հասաւ այս յօդուածաշարքը, որ պատումն էր Հայաստան հինգերորդ ուղեւորութեանս, Հայաստանի Հանրապետութեան 90-ամեակին առիթով՝ 2008-ի մայիսի վերջին, յունիսի սկիզբին՝ երկու շաբաթ տեւողութեամբ, պատում, որ երկարեցաւ յունիսէն մարտ՝ շուրջ 10 ամիսներու վրայ, գրեթէ առանց ընդմիջումի, շաբաթ-շաբաթ: Գրի առնելով՝ ես երկարաձգեցի մեր ուղեւորութիւնը ու անոր վայելքը: Բայց ինչպէս ամեն լաւ բան, այս ալ վերջ մը պիտի ունենար:

Իրապէ՞ս:

Վերտառութիւնը որ ընտրէր էի, կրնար դրուած ըլլալ իմ բոլոր գրածներուն գլուխը, սկսեալ 14 տարեկան պատանիի այն առաջին գրութենէն որ լոյս կը տեսնէր «Յուսաբեր»-ի մէջ: Կրնայ դրուիլ նաեւ իմ ապագայ բոլոր գրելիքներուս վրայ:

Դարձեալ եւ միշտ՝ Հայաստան:

Նախ նոյն այդ յղադրը մեր մտքերուն մէջ դրոշմուեցաւ «Հայաստան ամեն բանէ վեր» մեր բարձրադասակ հաստատումով՝ Պատանեկանի ու Երիտասարդականի մեր իրաքանչիւր հաւաքոյթ-ժողովէ ետք:

Ապա՝ «հայութեան եւ Հայաստանի ազատագրութեան դատին» ծառայելու մեր ուխտով ան որոշեց մեր կեանքի ձեւն ու ընթացքը:

Եւ հիմա արդէն կրնանք Հայաստանը դարձնել մեր էութեան առանցքը, մեր առօրեայ կեանքի բովանդակութիւնը:

Դարձեալ եւ միշտ Հայաստան...

Երբ այս ուղեգրութիւնը կը պատրաստէի, մահացաւ ընկերս՝ Ադգէնը, եւ իր մասին գրած յօդուածիս մէջ յիշեր էի, որ տարիներէ ի վեր արդէն Հայաստան հաստատուած, ան ամեն անգամ որ Մոնթրէալ գար իր զաւակները տեսնելու, անոնց իսկ վկայութեամբ՝ կը ձանձրանար այստեղ, հակառակ հարազատներուն հետ ըլլալուն, այնքան որ Հայաստանի մէջ կեանքը իրեն համար ուրիշ լիցք ունէր, ուրիշ բովանդակութիւն:

Եւ ահա միւս ընկերս, Ստեփանը, որ նոյնպէս Հայաստան կապրի (տարուան մէկ մասը, թերեւս մեծ մասը), կարդալով այդ գրածս, ու արդէն «որդեգրած» ըլլալով արեւելահայերէնը, ել-նամակ մը կը դրկէր ինձի, չորս բառով.

– Իսկ դու չե՞ս ձանձրանում...

Հին վերք մը կը գրգռէր սիրելի Անթուան-Ստեփանը:

1947-48 տարիներն էին: Գալուստ մեծ հայրիկս ոտքի էր ելած Հայաստան ներգաղթելու: Երբ Աղեքսանդրիայէն Գահիրէ մեզի այցելութեան կու գար, ամբողջ օրը տան մէջ կը շրջէր երգելով «Հէյ ջան Երեւան»: Սակայն կամ չընդունուեցաւ, կամ ալ ինք մերժեց գաղափարականն հրաժարիլ եւ հրաժարեցաւ ներգաղթելէ:

1962-ին դասընկերս՝ Մեդրակը, դպրոցական այլ ընկերներ մաս կազմեցին յաջորդ ներգաղթողներուն: Այդ օրերուն էր, որ եգիպտահայ գաղութը արտագաղթի տենչէ մը վարակուած էր: Մեր մտքէն ալ անցաւ Հայաստան երթալ փոխանակ Աւստրալիա կամ Գանատա գաղթելու, ինչպէս կ'ընէին մեր համերկրացիները մեծաւ մասամբ: Սակայն չկրցանք մենք մեզ համոզել, յանդգնութիւնը չունեցանք գուցէ եւ ... հասանք Գանատա:

Երեք տարի առաջ մեր չըրածը, մեր չհամարձակածը ըրաւ մեր կրտսեր աղջիկը՝ Արագը, որ անկէ ի վեր, քանիցս կրկնեց վերելի «յանդիմանական» հարցումին տարբերակը՝ «դո՞ւք երբ պիտի փոխադրուիք Հայաստան»...

Եւ այս տողերը գրի առած ատեն չեմ կրնար չվերլիշել ինչ որ ծանօթներէն կամ ընկերներէն ողբ. Յակոբ Չիլինկիրեանը, որ, առիթով մը Հայաստանի (այն ատեն՝ Խորհրդային Հայաստանի) մասին մէկ գրած յօդուածս կարդալով կամ տուած մէկ դասախօսութիւնս լսելով, ըսաւ ինծի՝ «դուն Հայաստան պիտի վերջանաս»...

Այդ մարգարէութիւնը դեռ չէ իրականացած, ցաւօք:

Սակայն ամբողջ կեանքս, – ինչո՞ւ ոչ, մե՞ր ամբողջ կեանքը, քանի որ հարցը միայն ինծի՝ չի վերաբերիր, – անցաւ ապրուելով Հայաստանի համար՝ երէկուան, այսօրուան եւ վաղուան Հայաստանին համար:

Ինչպէ՞ս ձանձրանայի, կամ ինչպէ՞ս ձանձրանամ, – ձանձրանալու ժամանակ չունեցայ...

– Այո, ամենէն մեծ գրկանքն է, սեփական երկրէն դուրս ապրիլը. Այդ պատճառաւ ալ Մեծ եղեռնէն 3, 4 թէ 5 սերունդ ետք տակաւի՛ն կը կրենք Յեղասպանութեան հետեւանքները, կենթարկուի՛նք նոյն այդ Յեղասպանութեան:

Բայց կրնա՞ք երեւակայել ի՞նչ պիտի ըլլար մեր կեանքը՝ եթէ գէթ այսպէ՛ս չապրէինք հայրենիքին համար: Իրապէս ձանձրանալի պիտի ըլլար, աւելին՝ անտանելի:

Ես, եւ ինծի պէս շատեր, շնորհիւ ատենին մեր ղեկավարութեան կողմէ տրուած որոշումներուն, Սփիւռքի մէջ կրցանք ապրիլ մեր ազգութիւնը, ապրիլ հայրենագուրկ, բայց ոչ՝ առանց հայրենիքի ամենօրեալ առկայութեան՝ մեր կեանքի բոլոր փուլերուն, բոլոր պահերուն, բոլոր ձգտումներուն մէջ:

Բախտաւորները, քաջերը յաջողեցան նաեւ վերադառնալ երկիր: Թող շատնան անոնք: Երանելի օր մը թերեւս մենք ալ կը յաջողինք, ես ալ կը յաջողիմ: Մինչ այդ, սակայն, շարունակենք ապրիլ Սփիւռքի մէջ այնպէս, որ... չձանձրանանք:

(Հորիզոն, 2008-05-19 – 2009-04-06)

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԽՃԱՆԿԱԸ – 2009

Ի՞նչ կարող ենք ընել միասնաբար

(«Հայկական ճարտարապետության 21-րդ դարը»
համագումարին՝ Երևան, 21-22 ապրիլ 2009)

Կը խօսիմ Գանատայի հայ ճարտարապետներու ու յարակից մասնագետներու նոր կազմուող ԿԱՄԱԸ ընկերակցութեան անունով:

Առաջին հերթին շնորհաւորենք Սփիւռքի նորաստեղծ նախարարութիւնը եւ Սփիւռքի նախարարուհի տիկ. Հրանոյշ Յակոբեանը, որոնք նախաձեռնեցին կազմակերպել հայ ճարտարապետներու եւ ճարտարագետներու համահայկական առաջին այս համագումարը:

Ատենն էր, որ նման համախմբում մը կատարուէր՝ ճանչնալու համար մեր ներուժը նաեւ այս մարզէն ներս եւ հունաւորելու համար զայն Ազգին ու Հայրենիքին յառաջընթացին ի խնդիր:

Կասկած չկայ, որ համահայկական մասնագիտական ընկերութիւններ յաւելեալ եւ ազդու միջոցներ կրնան հանդիսանալ յատկապէս Սփիւռքի պարագային՝ հայութեան առնչելու շատ արժանաւոր ու տաղանդաւոր հայորդիներ, որոնք այլապէս շատ մօտիկ կրնան չըլլալ հայ կեանքին՝ այլազան պատճառներով:

Արդ, այս համագումարը սքանչելի առիթ մըն է, որ աշխարհի տարբեր կողմերէն եկած հայ ճարտարապետներ ու յարակից մասնագետներ, ինչպէս առաջադրուած է՝ ստեղծեն համահայկական ընկերակցութիւն մը, որպէսզի միասնաբար կարենանք հետապնդել հետեւեալ նպատակակէտերը.

1. Սփիւռքի ու Հայաստանի ներուժը միացնել եւ իրարու հետ բաժնել մեր հմտութիւնը ճարտարապետութեան այսօրուան գլխաւոր խնդիրներուն վերաբերեալ, ներառեալ «կանաչ» շինանիւթերու, շինելաձեւերու, շինութեան արուեստի ու արհեստագիտութեան մարզերը: Ի վերջոյ մեր ցրուածութեան դժբախտութիւնը կրնանք վերածել կռուանի՝ մեր հաւաքական ուժի գոյառման համար՝ աշխարհի տարբեր վայրերու եւ Հայաստանի ծաղիկներէն առաջնակարգ մեղր ստեղծելով մեր փեթակին մէջ:

2. Նպաստել այս մարզերու հայ մասնագետներու փոխադարձ ծանօթացման՝ Հայաստանի թէ Սփիւռքի տարածքին, եւ զարկ տալ անոնց ծառայած շրջանակներու (շուկաներու) ընդարձակման՝ ճամբորդութիւններու, ցուցահանդէսներու, հրատարակութիւններու եւ համացանցի ճամբով: Փոխադարձ ծանօթացումը համագործակցութեան առաջին քայլն է: Իրենց ոյժերը միացնելով, Հայաստանէն թէ աշխարհի տարբեր ծայրերէն հայ մասնագետներ կրնան միջազգային մրցոյթներու մասնակցիլ, ծրագիրներ յանձն առնել եւ իրագործել: Ի հարկէ հայ հանճարի այս համաշխարհայնացումը նորութիւն չէ, պարզապէս շարունակութիւնն է միջնադարեան աւանդութեան՝ Տրդատ ճարտարապետի 21-րդ դարու ժառանգներուն կողմէ:

3. Ունենալ համացանցային պաշտօնաթերթ մը: Վերոնշեալ նպատակի իրագործման լաւագոյն միջոցն է նման պաշտօնաթերթը, որ կապը պիտի հանդիսանայ բոլորին միջեւ, եւ մեզ իրարմէ տեղեակ պահել շարունակական ձեւով: Բոլորս պիտի կարենանք մեր լուրերը,

մեր յաջողութիւնները, մեր գրութիւնները, մեր պրպտումները, մեր կարիքներն ու հարցումները հասցնել իրարու: Պաշտօնաթերթը կրնայ նաեւ ծառայել հասարակութիւնը աւելի իրազեկ դարձնելու մեր հարցերուն՝ Հայաստանի մէջ թէ՛ Սփիւռքի, իսկ ասիկա արդէն պատեհութիւն կը ստեղծէ հանրութեան զարգացման առումով՝ ճարտարապետութեան, քաղաքաշինութեան, բնապահպանման եւ այլ մարզերու մէջ ընդհանրապէս:

4. Չարկ տալ այս ոլորտներուն մէջ մեր լեզուի զարգացման՝ քայլ պահելով արհեստագիտութեան յառաջդիմութեան հետ, – ասիկա կրնայ իրականանալ մէկ կողմէ մեր այդ պաշտօնաթերթին ճամբով, միւս կողմէ տարբեր միջոցառումներով, մանաւանդ բազմալեզու բառարանի մը կամ բառարաններու շարքի մը հրատարակութեամբ: Այս ալ ուրիշ նպաստ մը կը կանխարձանայ մեր մշակոյթին համար, կը հարստացնէ մեր լեզուն, այլեւ կամրագրէ մեր հայերէնի իմացութիւնը:

5. Ծանօթացնել արդի ու դասական համաշխարհային ճարտարապետութիւնը Հայաստանի ու հայկական ճարտարապետութիւնը՝ աշխարհին: Ասիկա դաստիարակչական աշխատանք մըն է, որ շարունակութիւնը կը հանդիսանայ ցարդ կատարուած անհատական թէ՛ հաւաքական այլ աշխատանքներու Սփիւռքի թէ՛ Հայաստանի մէջ:

6. Նպաստել ճարտարապետական մեր ժառանգութեան պահպանման: Այդ ժառանգութիւնը չի սահմանափակուիր ի հարկէ ներկայ ՀՀ եւ ԼՂՀ սահմաններէն ներս գտնուած մեր գանձերով: Անոնց բազմապատիկը ցրուած կը մնան պատմական Հայաստանի ինչպէս նաեւ Արտերկրի այլազան տարածքներուն վրայ, ուր հայկական գաղթօճախներ կան կամ եղած են: Գտնել, ցանկագրել, լուսանկարել, չափագրել, արխիւագրել, այլեւ արժեւորել այդ բոլորը՝ անհա գործունէութեան անսպառ դաշտ մը: Այս գործին մաս կը կազմէ նաեւ հայ ճարտարապետներու ու յարակից մասնագէտներու արխիւներու հաւաքումն ու պահպանումը, որ նոյնպէս մեծ աշխատանք է ու կը կարօտի միացեալ ուժերու:

7. Մասնակից դառնալ Հայաստանի գիւղական շրջաններու շինարարութեան ու շէնացման զարգացման: Հայաստանի ապահովութեան ռազմավարական կարելոր հարցերէն մէկն է ասիկա, ուր համահայկական տնտեսական ներուժին կրնայ միանալ նաեւ մեր շինարարական ներուժը ու նպաստել մեր երկրի ամրակայման:

8. Վերջապէս, նպաստել ճարտարապետական եւ ճարտարագիտական կրթութեան ու վարժանքի զարգացման՝ միջազգային չափորոշիչներով: Երբոր ունենանք համահայկական ցանց մը, մենք կրնանք առաջին հերթին օգնել հայ ուսանողներուն կողմնորոշուելու դէպի ճարտարապետութեան, ճարտարագիտութեան ու յարակից մասնագիտութիւնները, հաստատել համահայկական կրթաթոշակ, մրցանակ ու քաջալերանքի հիմնադրամ՝ անոնցմէ ամենէն փայլուն ու խոստմնալիցներուն համար, ապա յարմարութիւններ ստեղծել իրենց ուսումը կատարելագործելու եւ վարժանքի շրջանը բոլորելու ամբողջ երկրագունդին վրայ եւ ձեռք ձգելու միջազգային առումով կրթութիւն եւ հմտութիւն: Միեւնոյն տրամաբանութեամբ, նաեւ այս մարզերու մեր դասախօսները Արտերկիրէն Երկիր եւ փոխադարձաբար կրնան գործուղուիլ եւ հարստացնել ճարտարապետական-ճարտարագիտական կրթական ոլորտը:

Թոյլ տուէք ինձի, խօսքս փակելէ առաջ ոգոկոչել յիշատակը մէկու մը, որուն ներկայութիւնը այսօր մեր մէջ կրնար մեծապէս իմաստալից ըլլալ, – այդ՝ Հախնազարեան Արմէնն է, որ ամբողջ կեանք մը նուիրեց՝ անձամբ, յաճախ միւս-մինակ՝ հետապնդելու համար այստեղ նշուած նպատակներէն շատերը: Ըսենք ողորմի՛:

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ ԱՐԹԻՆԵԱՆ

Անգամ մը եւս՝ իւրաքանչիւր պահը ըմբռնելու անյագ տենչով

*Կանչում է կրկին, կանչում անդադար
Էն չքնաղ երկրի կարօտը անքուն,
Ու թեւերն ահա փրոած տիրաբարձ
Թրոչում է հոգիս, թրոչում դէպի տուն:
Յովհ. Թումանեան (Անուշ)*

Քանի մը օր է, որ վերադարձած ենք Հայաստանէն, եւ մեր միտքը հոն է տակաւին, ու արդէն յաջորդ ուղեւորութեան մասին կը մտածենք...

Այր ու կին, երկուքս ալ Հայաստանի ժամով կ'ապրինք եւ Երեւանի օդին ջերմութիւնն է, որ կը ստուգենք ամեն առաւօտ: Իւրաքանչիւր ճամբորդութիւն մեզ քիչ մը աւելի սերտօրէն կ'առնչէ մեր երկրին, որուն մայրաքաղաքի կեդրոնի փողոցները, մարզերը տանող ճանապարհները աւելի ու աւելի ծանօթ կը դառնան մեզի համար, դէմքերը՝ աւելի մտերիմ, կեանքի կշռոյթը՝ աւելի հարազատ:

Դարձեալ (իմ վեցերորդ, կնոջս երրորդ) սա այցելութիւնը կը սահմանափակուի երկու շաբաթներու տեւողութեամբ, եւ մեր ընելիքներուն մէկ մասը միայն կը յաջողինք ընել, մեր տեսնելիքներուն՝ մէկ մասը տեսնել, մեր հանդիպումներուն՝ մէկ մասը իրագործել: Դժգոհ չենք, քանի որ դեռ շատ բան կը մնայ յաջորդ անգամուան համար...

Հայաստանէն վերադառնալէ ետք միշտ խառն զգացումներ կը պատեն մեզ, որոնց յաճախ անդրադարձած եմ, եւ չեմ ուզեր այստեղ վերստին անոնց մասին խօսիլ:

Այս անգամ, սակայն, այլ հարց մը կը չարչրկէ ուղեդս. ինչո՞ւ ուրիշներ նոյնքան յաճախ կամ երբե՞ք չեն այցելեր հայրենիք,– անշուշտ կան շատեր ալ, որոնք մեզմէ շատ աւելի յաճախ կ'երթան եւ շատ աւելի երկար կը մնան: Ունինք նման բարեկամներ, որոնք տարուան մէկ մասը այնտեղ կ'անցընեն, Արարատը՝ միշտ իրենց հորիզոնին վրայ: Կը նախանձիմ անոնց:

Հիմա, սակայն, կրնամ մխիթարուիլ, որ մենք ալ կ'իջեւանինք մեր դստեր՝ Արագին յարկաբաժինը, որուն պատշգամբը կը բացուի Արարատին վրայ (Մեծ Մասիսին, գէթ):

Բայց միւսնէ ընդ. անոնք որոնք մէկ անգամ, գուցէ ազգային պարտականութիւն մը կատարելու համար, այցելել են, կամ՝ երբեք չեն գացեր, չեն զգացեր հայրենի հողին ուժը իրենց ոտքերուն տակ: Ափսո՛ս...

Պէտք է խոստովանիմ, որ ծրագրուած ուղեւորութիւն մը չէր այս մէկը: Անցնող յունուարի մէջ էր, երբ «հրաւեր» (նամակ) մը բացուեցաւ համակարգիչիս պատաստին վրայ: Նորահաստատ նախարարութենէն էր, Սփիւռքի նախարարուհիէն, որ զիս (ինչպէս շատեր, որոնց անունները եւ ել-հասցէները ձեռք կրցած էր ձգել) կը հրաւիրէր մասնակցելու հայ ճարտարապետներու առաջին համահայկական հաւաքին: Մքանչելի պատրուակ մըն էր, նման «պատմական» առիթ չէի կրնար բաց թողել: Անշուշտ հայրենաբնակ մեր զուակին հետ ըլլալու հեռանկարն ալ յաւելեալ ազդակ մըն էր, որ մեզ պիտի մղէր չմերժել նախարարուհիին առաջարկը:

Որոշումը շատ արագ տրուեցաւ, բարեբախտաբար դժուար չեղաւ նաեւ առաջաձգել տարեկան արձակուրդս, եւ անմիջապէս ապահովեցի ուղեւորմանս:

Հիմա ճամբորդութիւնը կայացած է, եւ ինչպէս նախորդ բոլոր անգամներուն, պարտաւորուած կը զգամ մեր վայելքը բաժնելու ընթերցողներուս հետ, զորս կը հրաւիրեմ

յիշատակներով հարուստ սեղանիս շուրջ բոլորուելու, շաբաթե-շաբաթ՝ մեր ճամբորդութեան մասնակից դառնալու համար:

Հայաստանը մեր բոլորին ժամադրավայրն է, երջանկութեա՛ն ժամադրավայրը, կը գրէի 2005-ին, Ցեղասպանութեան 90-ամեակին առթիւ կատարած այցելութեանս ուղեգրութեան մէջ: Այդ միշտ այդպէս է, եւ կուզեմ որ հետս գտնուիք բոլոր այն վայրերը, ուր այցելեցի, հանդիպիք բոլոր այն անձերուն, որոնք ակնկալ-անակնկալ առջեւս ելան, ներկայ գտնուիք այն տասնեակ մը թատերական կամ երաժշտական ելոյթներուն, որ տեսանք, այլեւ Կիլիկիոյ (Ատանայի) ջարդերու հարիւրամեակին նուիրուած գիտաժողովին թէ ճարտարապետական համագումարին, որուն համար էր, ի վերջոյ, ինչպէս ըսի, որ ճամբայ ելայ այս անգամ:

Վերջապէս, ամբողջ ճամպրուկ մը գիրքեր բերի հետս, գրեթէ բոլորը նուէր ստացուած: Այդ մասին ալ պիտի արժէ երկու խօսք ընել:

Ի տարբերութիւն նախորդ այցելութիւններուս, այս անգամ ի վերջոյ Արցախն ալ տեսնելու պատիւն ու վայելքը ունեցանք, ու կարելի չէ չպատմել նաեւ այդ մասին: Արցախը՝ իր բազմահազար նահատակներով, որոնք, իմացեալ մահով, մեզմէ իլուածը մեզի վերադարձուցին: Ինչպէ՞ս չվերյիշել, ուրեմն, Վահագն Դաւթեանի «Հողն այս մի պատառ» քերթուածին տողերը հետեւեալ.

*«... Չգիտեմ սակայն, թէ ի՞նչ խօսքերով
Եւ ինչպէ՞ս լինեմ ես շնորհապարտ
Նրանց, որ հողն այս, փոքրիկ այս հողը՝ նման նշխարի,
Փրկել դարերից, փրկել դաւերից ազահ աշխարհի,
Փրկել են բերել ու ինձ շնորհել...»*

Մեփական յարկի տակ

2009-04-17, ուրբաթ

Մեր բնակարանը, Մոնթրէալ: Ամբողջ ցերեկը՝ վերջին պահու կարգադրութիւններ, ճամպրուկները լեցնելու, պարպելու, վերստին լեցնելու եւ ծանրութիւնները հաւասարակշռելու, արտօնեալ քաշը չանցնելու ճիգեր:

Ճիշտ է, ուղեւորութիւն մը օդանաւ բարձրացած պահէն չէ, որ կը սկսի...

Տակաւին, մինչեւ տունը ձգելու վայրկեանը, յաւելեալ խնդրանքներ՝ թէ՛ Արազէն, որ այս կամ այն կարիքը ունի (համակարգիչի առնչուած սարք մը, լուսանկարչական ուրիշ սարք մը, եւ այլն), թէ՛ զանազան ծանօթներէ՝ իրենց հարազատներուն տանելու թերթ, դրամ, լուսանկար եւ այլն, եւ այլն): Շատ սիրով՝ այնքան ատեն, որ ծանրութեան սահմանազանցութիւն չկայ...

Ատենին օդակայանն ենք՝ շնորհիւ Ժանին, որ կ'առաջարկէ մեզ ի՛նք տանիլ հոն:

Նստաքարտերը ապահովելու եւ ճամպրուկները յանձնելու գործողութիւնները արդիական ելեկտրանային միջոցները արագ ու անխափան կը կատարեն:

Որոշեալ ժամուն՝ վերելքը:

2009-04-18, շաբաթ

Առաւօտ, Փարիզի Շառլ-Տրկոլ օդակայան, թիւ 2 համալիր. մեր օդանաւը հեռուն կանգ կ'առնէ. օթոպիւսով կը տարուինք «F» կայանը, անկէ ալ ոտքով պիտի անցնինք «E» կայանը: Երկար պիտի քալենք, բայց դժգոհ չենք, ժամանակ ունինք, իսկ ամբողջ 7-8 ժամ նստելէ ետք քիչ մը շարժիլը լաւ է:

Թերթավաճառի մը քով պիտի գտնենք L'Histoire ամսագրի ապրիլի համարը, որ 10 կամ աւելի էջեր, նաեւ կողքի նկարը նուիրած է Հայոց ցեղասպանութեան: Թովմաս տեղեկացուցած էր ինձի, որ նման թիւ մը կայ, բայց Մոնթրէալ չէր հասած տակաւին: Գլխաւոր յօդուածը գրողը... քի՛ւրտ մտաւորական մըն է: Ճշմարտութիւնը կը գրէ:

Հայաստան գացող թռիչքին սպասման սրահին մէջ անշուշտ շատ ուրիշ հայերու պիտի հանդիպինք: Մէկը՝ Անդրանիկ Ուզունեան, Նիւ Ճըրզիէն, տարեց ճարտարապետ մը. ինքն ալ ճարտարապետներու համագումարին կ'երթայ: Կը ծանօթանանք. բաւական սահուն, թէեւ որոշ շեշտով հայերէն կը խօսի: Իր եւ կնոջ միջեւ խօսակցութիւնը՝ անզլերէն: Յետոյ, Երեւան, ուրախութեամբ պիտի ունկնդրեն իր հայերէն զեկոյցը, թէեւ շատ մասնագիտական բաժինը անզլերէնով պիտի տայ. հաւանաբար ես ալ նման դժուարութեան մատնուիմ, եթէ փորձեմ զուտ մասնագիտական դասախօսութիւն մը տալ...



Պատանի ուխտաւորները

տնօրէնին հետ կ'երթան սեփական աչքերով տեսնելու այն երկիրը, որուն մասին կարդացած, լսած-տեսած են, բայց երբեք վայելած անոր հողին զօրութիւնը:

Կը պատմեն, թէ որքան-որքան աշխատած են, ձեռնարկներ կազմակերպած՝ դրամ հաւաքելու, իրենց ճամբու ծախսը հոգալու համար: Հիմա պիտի քաղեն իրենց այդ աշխատանքին պտուղը: Կը յիշեմ մեր ալ Պատանեկանի մանթրի կամ այլ երեկոները՝ նոյն նպատակով: Կասկած չկայ, որ Սփիւռքի իւրաքանչիւր վարժարան նման քայլի դիմելով կ'ամրապնդէ հայեցի դաստիարակութիւնը մեր նոր սերունդին:

Ճամբորդներուն մէջ աչքի կը զարնէ առատ, սպիտակ բաշերով գլուխ մը. սկիզբը ֆրանսերէն, իսկ հայ տղոց հետ՝ սպաներէն խօսիլը կը լսենք: Յետոյ ուշադրութիւնս կը գրաւէ իր մաքուր, եգիպտահայու շեշտով խօսուած հայերէնը... կը մօտենամ, կը հարցնեմ թէ Եգիպտոսէ՞ն է: Ֆրանսա՛ ծնած եմ, կըսէ. անունը՝ Գլոտ Մութաֆեան (շատ ծանօթ մտաւորական մը): Պատմութեան, մե՛ր պատմութեան մասնագէտ (եւ հանգստեան կոչուած՝ ուսողութեան դասախօս...): Կը ծանօթանանք, ինքզինքս կը ներկայացնեմ որպէս Արազին հայրը... այլեւս, ամեն տեղ, աւելի հեշտ է այդպէս ճանչցուիլը:

Պիտի հանդիպինք Գաթերին Խաումէին: Անունը ինք գրեց նոթատետրիս մէջ՝ հայերէնով: Ուրուկուէյէն է, ինք կանուխ հասած է, եւ անհամբեր կը սպասէ իր դասընկեր-դասընկերուհիներուն (Մոնթրէալի տեղի ՀԲԸՄ-ի դպրոցի շրջանաւարտ կարգի):

Յետոյ, թռիչքին ընթացքին այդ 15 աշակերտները պիտի մտերմանան մեզմէ շատերուն հետ, լուսանկարուին մեզի հետ: Պիտի ստեղծուի ընտանեկան մթնոլորտ: Բոլորն ալ խանդավառ են. իրենց ուսուցիչին եւ

Երեւան կը հասնինք ժամուան մը յապաղումով (Փարիզէն մեկնումը ուշացած էր քիչ մը): Հիմա հաճոյք է, նոյնիսկ հպարտանքի առիթ՝ Զուարթնոց օդակայանը ժամանելը: Ոչ միայն շէնքը, սարքերը, այլեւ անձնակազմը, հաճոյակատար, զարմանք կը պատճառեն, մանաւանդ երբ կը վերյիշեմ առաջին անգամ Հայաստան գալստի 1991-ին:

Մտից անցաթուղթը (վիզան) առնելու համար տղարը դրամի պէտք է փոխել, եւ պատուհանին ետեւ պաշտօնէան արագ կընէ լումայափոխութիւնը: Բայց կողքին մեքենայ մըն ալ կայ. ուղեկցորդուհի մը կը թելադրէ, որ ան գործածեմ՝ աւելի արագ յառաջանալու համար: Դժբախտաբար գործիքը կը խանգարուի, եւ... վերջինը կըլլանք վիզան ձեռք ձգող: Բայց դժգոհ չենք, մենք մեզի ենք:

Արագը երկու թաքսիներով մեզի կը սպասէ, քանի որ բոլոր ժամպրուկները նոյն ինքնաշարժին մէջ չեն թխմուի:

Ձոյգ վարորդները՝ աղջկանս ծանօթները, պիտի օգնեն նաեւ զանոնք բարձրացնելու չորրորդ յարկ՝ Արագին բնակարանը:

Սա տարբեր զգացում մը կը յառաջացնէ. պանդոկին մէջ միշտ «հիւր» ես, ատկէ ալ՝ հայաստանեան «հիւրանոց» բառը «պանդոկ»ին փոխարէն: Հոս՝ սեփական յարկիդ տակ ես, եւ նուազ կը զգաս այցելուի, ժամանակաւոր կենտրոնի հանգամանքդ:

Տո՛ւն եկած ես:

Չծրագրուած, իսայտաբղէտ օր մը

2009-04-19, կիրակի

Առաջին առաւօտը. երկինքը ամպոտ է, Արարատը՝ պահուրտած ամպերուն ետին:

Նախաճաշէն ետք վար կ'իջնենք, կը մտնենք Սուրբ Սարգիս, որ ճիշտ մեր բնակած շէնքին կողքին է: Արդէն անո՛ւ շէնքերգողութիւնը կը լսուի դուրսէն ալ: Մոմ վառելու յատուկ սենեակ մը կայ, եւ պատերուն՝ զանազան աղօթքներ, ամենէն ծանօթները, որ մարդիկ սորվին ու... քրիստոնէանան: Պատարագը հոգեպարար է: Կը նշմարենք տարբերութիւններ մեր գիտցած արարողութիւններէն: Աչքի կը զարնէ հաւատացեալներու երկրպագելու ձեւը. համբոյրը կը զետեղեն փնջուած մատերուն ծայրը եւ ձեռքը կը տանին, զետին կը դպցնեն: Հետաքրքրական է:

Կուկըլին կը դիմեմ՝ հայերէնով, այս եկեղեցիին մասին տեղեկութիւն քաղելու համար, ու կը գիտնամ, որ այս վայրին վրայ, «Երեւանի երբեմնի բերդին յանդիման, Չորագետի վերելում, Հրազդան գետի ձախ ափին, քրիստոնէութեան վաղագոյն ժամանակներից գործում էր մի վանք-անապատ»: Հոն կային երեք եկեղեցիներ, որոնցմէ մէկը կը կոչուէր Ս. Սարգիս: 1679-ի երկրաշարժէն քանդուած, երկու անգամ վերաշինուած՝ ներկայ առաջնորդանիստ եկեղեցին ամբողջովին վերանորոգուած է 1976-ին, Վազգէն Ա. կաթողիկոսի ջանքերով, արդեամբ լոնտոնաբնակ Սարգիս եւ Աստղիկ Քիրքճեան ամուլին, ու

Հոգեպարար...





Մուրթ Սարգսիսի դրացնութեան մէջ...

նախագծումով Ռաֆայէլ Իսրաէլեան եւ Արծրուն Գալիկեան ճարտարապետներուն: 2000 թուականին աւելցուած է զանգակատունը:

Կանցնինք Արազի ընկերներէն Լարային ու Բաֆֆին յարկաբաժինէն, որ մեզմէ շատ հեռու չէ, կը տեսնենք երեք ձագուկները, որոնք Երեւան հասակ կ'առնեն, կը յանձնենք Մոնթրէալի իրենց հարազատներուն կողմէ ուղարկուած քաները: Ներողութիւն կը

խնդրեն, որ տունը տակն ու վրայ է, որովհետեւ «ձմրան զգեստները վերցնելու եւ ամռանները մէջտեղ հանելու վրայ ենք»...

Ապա մեր առաջին գործը պիտի ըլլայ ապահովել շաբթուան ներկայացումներու եւ միջոցառումներու յայտագիրը, որ դիրութեամբ ձեռք կը ձգուի Արմենիա զբօսաշրջային կեդրոնէն՝ Նալբանդեանի վրայ՝ Հրապարակէն ոչ շատ հեռու:

Յետոյ կ'երթանք Ազգային պատկերասրահ: Երէց բարեկամս՝ լուսանկարիչ-արուեստագետ Արա Աւետիսեան խնդրած էր, որ գտնենք իր հօր եւ իմ ուսուցիչ Օննիկ Աւետիսեանի նկարները եւ լուսանկարուինք անոնց առջեւ: Կորոշենք ամենէն վերի՝ Է. յարկէն սկսիլ մեր այցելութիւնը եւ յարկ առ յարկ իջնել վար: Եթէ հոն են՝ գետեղուած պիտի ըլլան Գ. յարկին վրայ, ժամանակակից հայ արուեստի բաժնին մէջ, կըսուի մեզի: Հայաստան առաջին գալուս այցելած էի պատկերասրահը, բայց ոչ ամբողջութիւնը: Վերի յարկերը չէի տեսած, ու ինծի համար, հաճելի յայտնութիւն մըն էր տեսնել քանի մը յարկի վրայ տարածուող միջազգային գեղարուեստի հարուստ հաւաքածոյ մը: Վերստին վայելեցինք նաեւ հայ դասականներու գործերը, ներառեալ Յ. Այվազովսկիին եւ շատ ուրիշներ: Այն բաժինը, ուր Օննիկ Աւետիսեանի գործերը կրնային ըլլալ՝ փակ էր, սակայն յարկի պատասխանատու տիկիններէն մէկը ազնութիւնը ունեցաւ մեզի համար բանալու, ու կըրցանք գտնել եգիպտահայ անուանի արուեստագետի գործերէն երկու կտաւներ: Մտադրեցինք ուրիշ օր մը վերադառնալ եւ շարունակել մեր այցելութիւնը, մանաւանդ որ ներքնայարկը յատուկ ցուցահանդէս մըն ալ կար Մինաս Աւետիսեանի գործերուն նուիրում:

Դուրս եկանք այս զանձարանէն ափսոսալով, որ թանգարանային նուազագոյն անհրաժեշտ պայմաններէն զրկուած է ան, – պատուհանները, որ բնական լոյսի առաւելութիւնը կընծայեն, նաեւ կը խանգարեն տեսողութիւնը, – աւելորդ փայլքեր կը տեսնուին իւղանկարներուն եւ ապակեձածկ նկարներուն վրայ, դուրսի ապականած օդը ազատ համարձակ մուտք կը գործէ ցուցասրահներէն ներս, ցուցօններու բացատրութիւնները ամբողջական տեղեկութիւն չեն տար (օրինակ՝ ջրաներկ, իւղաներկ եւ այլն, եւ այլն, կամ՝ որո՞ւ կողմէ նուիրում է տուեալ նկար մը կամ քանդակ մը, կամ ինչպէ՞ս է ձեռք ձգուած, եւ մասամբ նորին): Հայրենաբնակ թէ սփիւռքաբնակ մեր մեծատունները նման հաստատութիւններու ալ օգնութեան ձեռք պէտք է մեկնեն: Մշակոյթի պահպանումը ազգային ռազմավարութեան մաս պէտք է կազմէ:

Կէսօրուան ճաշը՝ «իտալական» փոքրիկ ճաշարանի մը մէջ, հաճելի անկիւն մը, որ ճիշտ ու ճիշտ ալ «Անկիւն» կը կոչուի:

Երեկոյեան առաջին մասը՝ Արովեանի վրայ, Ազգային գեղագիտական կեդրոնի փոքր թատրոնը (որուն աթոռներուն նորոգութիւնը կամ փոխարինումը Արագին յաջողուցած ծրագիրներէն մէկն է), ուր իր իսկ թելադրութեամբ պիտի դիտենք «Օֆելիայի ստուերներու թատրոնը», գործ՝ գերմանացի գրող Michael Ende-ի, բեմադրութիւն երիտասարդ բեմադրիչ Վահան Բաղդասարի: Այս վերջինը վեպը ռուսերէնէ թարգմանած, պատշաճեցուցած եւ թատերակի վերածած է մեծ հմտութեամբ: Երեւութեամբ՝ պատանիներու համար գրուած է, սակայն ընկերային մեծ հարցեր կը շօշափէ, իտր իմաստասիրութիւն կը նդգրկէ: Բեմադրիչը պատանի ու երիտասարդ դերասանները, իրական կերպարներն ու ստուերները բացառիկ յաջողութեամբ իրարու ազուցած է: Յետոյ պիտի շնորհաւորենք Վահանը եւ պիտի առաջարկեմ հետը հարցազրոյց մը ունենալ ուրիշ առիթով մը, առիթ, որ սակայն պիտի չներկայանայ դժբախտաբար, գէթ այս անգամ:

Թատրոնէն դուրս պիտի գանք ու անցնինք դիմաց՝ Art-bridge (Արուեստի կամուրջ) գրատուն-սրճարանը, որ մինչեւ Հայաստանէն մեր մեկնումի նախօրեակը պիտի դառնայ մեր նախընտրած ժամադրավայրը՝ հոն ունենալու համար մեր հանդիպումներն ու իմ հարցազրոյցները, ինչպէս եղած էր նախապէս երբ Հայաստան կու գայի:

Մեզի պիտի միանայ նախ Արագի անմիջական գործակից երիտասարդ լուսանկարիչ Կարէն Միրզոյեանը, իսկ քիչ ետք՝ մեր ընկերուհին, «Համազգային»-ի գրասենեակի աշխոյժ տնօրէնուհին, Ազգային ժողովի աննկուն պատգամաւորը՝ արժանաւոր մտաւորական Լիլիթ Գալստեանը: Ածականները քիչ են վայել կերպով բնութագրելու համար սիրելի Լիլիթը:

Կարէնին հետ մեր խօսակցութիւնը պիտի ընթանայ այլ երկիրներու եւ Հայաստանի բաղդատականներով՝ ճարտարապետութեան (աւելի ճիշտ՝ հին շէնքերու պահպանման, նորերու ճաշակաւոր ընդլուզման՝ հիներու կողքին), այլեւ ընդհանրապէս կրթութեան, բարեկրթութեան եւ բարքերու ոլորտներուն մէջ, ու Կարէն պիտի ափսոսայ, որ որքա՛ն ետ ենք տակաւին...

Լիլիթին հետ միշտ նոյն մտահոգութիւններն են մեր՝ հայրենիքը, կուսակցութիւնը, հայ մշակոյթն ու գրականութիւնը եւ մասամբ նորին: Ասոնք՝ մեր շարունակական խօսակցութեան նիւթերն են, տարուէ տարի՝ հանդիպումէ հանդիպում, եւ ոչ միայն: Արդէն ահա 15 տարիէ ի վեր...

Տունդարձի ճամբուն թաքսիի վարորդը պիտի յայտնէ՝ «դուք բարի եկեր էք, բայց ես այլեւս չեմ կրնար դիմանալ, պիտի փոխադրուիմ Բելոռուսիա»...

Խայտաբղէտ օր մը՝ որպէս առաջին օր:

Գիրք ու կարագ

2009-04-20, երկուշաբթի

Այս առաւօտ լեռը իր ամբողջ փառահեղութեամբ կը բացուի մեր առջեւ:

Կօգտուիմ մեր բնակարանի դիրքէն, կորոշեմ քալելով երթալ հրապարակ, որուն յարակից Էրեբունի նորակառոյց (կամ վերակառոյց) հիւրանոցին մէջ տեղի

Արագի պատշգամբն



պիտի ունենայ «Ատանա-100» գիտաժողովը, նուիրուած Ատանայի ջարդի հարիւրամեակին: Այս մասին տեղեկացեր էի ձեռնարկներու (միջոցառումներու) շաբաթական յայտագրէն, որ երէկ ձեռք ձգեր էինք:

Ներկաները առաւելաբար պատմաբաններ են, որոնցմէ ոմանք հին ծանօթներ են, ուրիշներու ալ ծանօթացեր էի Եղեռնի 90-ամեակին նուիրուած գիտաժողովին, 2005-ին: Շատ կը տպաւորուիմ երկու երիտասարդ, արժանաւոր մտաւորականներէ, Ծիծեռնակաբերդի Յեղասպանութեան թանգարանի տնօրէն Հայկ Դեմոյեանէն ու իր տեղակալ Սուրէն Մանուկեանէն (այս վերջինի յօդուածն ալ լոյս տեսած էր «Հորիզոն»-ի Ապրիլ 24-ի բացառիկին մէջ):

Ներկայ կըլլամ օրուան երեք նիստերէն երկուքին եւ երկու հարց ալ ես կու տամ առաջին նիստի մասնակից զեկուցաբերներուն.– Ատանայի ջարդարարներէն ոմանք դերակատար հանդիսացա՞ն նաեւ 1915-ին (պատասխանը՝ այո՛), իսկ Ատանայի ջարդերէն դասեր ունի՞նք քաղելիք այսօր՝ հայ-թրքական յարաբերութիւններու ներկայ փուլին (պատասխանը՝ դարձեալ այո՛, դասեր պէտք է քաղենք մեր պատմութեան իւրաքանչիւր պահէ)...

Ժամը 4:00-ին պիտի միանամ աղջկանս ու կնոջս՝ Արթւրիճի մէջ, որպէսզի պատաստ մը բան նետենք մեր բերանը:

Նազիկ օրուան ընթացքին այցելած է «Կանանց ռեսուրսային կեդրոնը», հարցազրոյցներ ունեցած անոր ղեկավարին՝ Լարա Ահարոնեանին եւ անոր օգնականին՝ Տաթևիկ Աղաբեկեանին հետ: Լարան, ինչպէս նշեցի, Գանատայէն ներգաղթած է ընտանեօք եւ նուիրուած հայ կիներու հարցերու լուծման աշխատանքին: Մեծ հաւատքով ու ամեն տեսակ զոհողութիւններու ի գին կը փորձէ դժուարութեան մատնուող հայուհիներուն օգնել՝ ընկերային, հոգեբանական եւ այլ մասնագիտութիւններու ճամբով: Այստեղ Լարան երկու հրատարակութիւն տուած է կնոջս. մէկը իր այդ Կեդրոնի պարբերաթերթն է, կամ տարեգիրքը («Ֆեմինիստ»), անոր առաջին թիւը՝ 1-2008, որ կ'արձարծէ կնոջ իրաւունքներու հարցերը եւ դիմակայած խնդիրները նա՛ եւ արուեստի ճամբով, իսկ միւսը վէպ մըն է՝ «Բալագոյե», գրուած Լուսինէ Վայաչեանի կողմէ (հրատ. Լուսակն, Երեւան 2008, 344 էջ). երիտասարդ կնոջ մը ապրած «արկածախնդիր» կեանքն է ու դիմագրաւած բոլոր դժուարութիւնները, որ ան կը ջանայ յաղթահարել իր անկոտորում կամքով:

Քալելով պիտի վերադառնանք տուն, իսկ անկէ ալ պիտի փութանք Մոսկովեան փողոց թիւ 3՝ Պատանի հանդիսատեսի թատրոնը՝ դիտելու (վայելելու՛ւ, ըմբռնելու՛ւ) Հրանտ Մաթեւոսեանի «Աշնան արեւ»ը («դրամատիկական նովել»), ներկայացուած «Համախոհներ» թատերախումբին կողմէ, գլխաւոր՝ Ադունի դերին մէջ Ջուլիետա Ստեփանեանը. բեմադրութիւնը Արտաշէս Յովհաննիսեանի, երաժշտութիւնը՝ Տիգրան Մանսուրեանի, բեմականացումը Վալերի Թումասեանի: Քայքայման վտանգին առջեւ գտնուող հայ գիւղն է, հին ու նոր բարքերու բախումը, երեք տարբեր սերունդներու տագնապները: Բացառիկ է Ջուլիետայի խաղարկութիւնը, նոյնպէս Մաթեւոսի Գիւլբենկեանի, որ պառաւ կնոջ դերը վարպետօրէն կը խաղայ: Կերթանք կը շնորհաւորենք բոլորը, հեռաձայնի թիւերն ալ կ'առնենք հարցազրոյց ունենալու համար, բայց այդ մէկն ալ ի վերջոյ կը մնայ յաջորդ գալստեան...

Սակայն օրուան յայտագիրը չէ աւարտած: Ժամադրուած ենք Մերուժան Կարապետեանին հետ, պարտականութիւն մը կատարելու եւ միաժամանակ Նազիկին ազգականը՝ Մերուժին կնոջ մայրը ու բոլոր հարազատները տեսնելու համար: Ուրիշ աւելի յարմար օր մը դժուար թէ գտնենք, եւ ժամ առաջ կուգեմ իրեն յանձնել հետս բերած գումարը,

որ իրեն նուիրեց «Հորիզոն»-ի մտատրական ընթերցողներին մէկը՝ գնահատելով հայ հին ու այժմ արդէն նոր գրականութեան թուայնացման համար իր ղեկավարած աշխատանքը, այդ մասին տեղեկանալով «Հորիզոն»-ի էջերէն՝ անցեալ տարուան ուղեգրութեանս ընդմէջէն:

Այստեղ կ'ուզեմ պարզապէս արձանագրել Մերութանին հակազդեցութիւնը, որ զինք արժանի կը դարձնէ բերածէս տասնապատիկ, հարիւրապատիկ անգամ աւելի մեծ գումարներու.

– Այս նուէրը լաւ նպատակի մը պէտք է յատկացնեմ. իմ կեանքիս մէջ ի՞նչ կը փոխուի, եթէ անով քանի մը հարիւր կրամ կամ քիլոկրամ յաւելեալ կարագ գնեմ: Մինչդեռ կայ արժեքատր գիրք մը, 1916-ին Երեւանի մէջ լոյս տեսած, նուիրուած Վանի հերոսամարտին, որուն հեղինակը այդ հերոսամարտին մասնակից դաշնակցական երիտասարդ գործիչ մըն էր: Ականատեսի վկայութիւն մըն է, որ մոռցուած է, հաւանաբար 20 հոգի չկայ, որ անոր գոյութեան իսկ տեղեակ ըլլայ: Ան փրկուած է ստալինեան հալածանքներէ, կ'երեւի որովհետեւ կեանքի վերջին 30 տարիներուն լռած է, աշխատած է որպէս հաշուապահ եւ ուշադրութիւն չէ գրաւած, այսինքն ի՞նչ փրկուիլ, կենդանի մեռեալ մը դարձած է: Այս գումարը այդ գիրքը շարելուն կը յատկացնենք, իսկ տպագրութեան ծախսն ալ յուսանք տեղէ մը կը ճարուի...

Երեկոյին մնացեալ մասը կ'ընթանայ մեր ընտանեկան պարագաներուն, այլեւ ազգային թերութիւններուն եւ արատներուն մասին խօսելով:

Վերադարձի՞ն, թէ Մերութենց գացած ատեն մեր վարորդը նախկին կառավարութեան (առաջին նախագահի), նոյնիսկ նախկին վարչակարգի կարօտը կը քաշէր եւ կ'ափսոսար, որ Արեւմուտքը չհանդուրժեց, որ Սովետին նման հզօր պետութիւն մը գոյութիւն ունենար ու քանդեց զայն... Փաստօրէն, այս մարդը աւելի շատ կարագ կը փնտռէր:

Տրդատի, Մանուէլի եւ Մոմիկի ժառանգորդաց համաժողովը

2009-04-21, երեքշաբթի

Ահա եւ Օրը, որուն համար ճամբայ ելանք առաջին հերթին. Ճարտարապետներու համահայկական համաժողովն է, որ տեղի կ'ունենայ այսօր եւ վաղը՝ «Հայկական Ճարտարապետութիւնը եւ 21-րդ դարը» ընդհանուր խորագրին տակ:

Բացումը կը կատարուի ՀՀ կառավարութեան շէնքին մէջ, Հանրապետութեան հրապարակին վրայ: Կը մտնենք ետեւի մուտքէն՝ Մելիք Ադամեան փողոց, թիւ 1, եւ կ'առաջնորդուինք կառավարութեան նիստերու դահլիճը:

Ինչպէս ըսի՝ սա Սփիւռքի նախարարութեան նախաձեռնութիւնն է, եւ բացումն ալ կը կատարէ ինքը նախարարուհին՝ տիկ. Հրանոյշ Յակոբեան: Իր խօսքին մէջ ան կը շեշտէ անհրաժեշտութիւնը «անկախ Հայաստանի եւ Սփիւռքի համախմբմամբ, ժամանակի պահանջներին ու ոգուն համապատասխան վերարժեւորել[ու] ունեցածն ու կորցրածը, ճանաչել[ու], պահպանել[ու] ու գնահատել[ու] այն, ինչ ունինք եւ փորձել[ու] համատեղ ուժերով կառուցել մեր երագանքների Հայաստանը»:

Իւրաքանչիւր հանդիպումի (արդէն փետրուարին Մոնթրէալ առիթ եղած էր ծանօթանալու իրեն) տիկ. Յակոբեան աւելի ու աւելի ցոյց կու տայ իր ղեկավարի արժանիքները եւ այս պաշտօնին կոչուած յարմարագոյն անձը ըլլալու փաստը:

Կը կարդացուին ՀՀ նախագահի, ԼՂՀ նախագահի եւ Ամենայն հայոց կաթողիկոսի ուղերձները, ապա ողջոյնի խօսքով ելոյթ կ'ունենան ՀՀ գլխաւոր ճարտարապետ Նարեկ Մարգսեանը, Հայաստանի ճարտարապետութեան միութեան նախագահ Մկրտիչ Մինասեանը եւ ճարտարապետներ Սփիւռքի տարբեր շրջաններէն, ներառեալ Գանատան (տողերս գրողը):

Նարեկ Մարգսեանն ալ, կարծես բոլորիս մտածումներու թարգմանը հանդիսանալով, իրաւամբ կը հաստատէ. «Տարբեր երկրներում ապրող սփիւռքահայ գործընկերների հետ մեր համագործակցութիւնը կրում է ոչ կանոնակարգուած բնոյթ, բացակայում է ընդհանուր տեղեկատուական դաշտը: Մինչդէռ ծրագրաւորուած համագործակցութեան դէպքում սփիւռքահայութիւնը կարող է հսկայական օժանդակութիւն բերել ոչ միայն կոնկրետ նախագծերի իրականացման, այլեւ քաղաքաշինական փաստաթղթերի՝ գլխաւոր յատակագծերի մշակման, կանաչ ճարտարապետութեան եւ նոր տեխնոլոգիաների ներդրման հարցերում: Հայաստանն էլ, իր հերթին, կարող է Սփիւռքի ճարտարապետներին եւ ուսանողներին ծանօթացնել մեր հսկայական մշակութային ժառանգութեանն ու արդի հայկական ճարտարապետութեան առանձնայատկութիւններին»:

Ապա կը փոխադրուինք կառավարութեան ընդունելութիւններու տունը, Մաշտոց պողոտայ թիւ 47 (Մատենադարանին մօտ), ուր Հայաստանի ճարտարապետութեան ազգային թանգարան-հիմնարկի (իստիտուտի) տնօրէն, ճարտարապետ-մտաւորական իմ ընկերը՝ Աշոտ Գրիգորեանը, բացումը կը կատարէ ցուցահանդէսին: Համաժողովի դահլիճին կից սրահները զարդարուած են խայտաբղետ պաստառներով եւ ցուցատախտակներով, որոնք ճաշակաւոր ձեւով այցելուներուն կը հրամցեն հայրենիքի թէ Սփիւռքի բազմաթիւ ճարտարապետներու անձնական թէ հաւաքական աշխատանքները, արժանանալով գնահատանքի, նաեւ հիացմունքի: Հայու ստեղծագործական տենղը փաստօրէն աւելի քան երբեք կենդանի է:

Կէսօրուան ճաշին հիւրն ենք Ազգային ժողովին (Բաղրամեան պողոտայ թիւ 19), ուր ԱԺ նախագահ Յովիկ Աբրահամեանի անունով բարի գալուստի ելոյթ կ'ունենայ այդ օրերուն փոխնախագահ Հրայր Կարապետեան: Այստեղ կ'արժէ նշել, որ օղակայանի քննութիւններուն նման՝ ստուգիչ կամարի տակէ կ'անցնինք ու մեր անցագիրներն ալ կը նայուին: Ըստ երեւոյթին՝ բոլորս կանխաւ արձանագրուած ենք, բայց սխալմամբ ոմանց անունները ցանկի վրայ չ'են (նոյնիսկ կազմակերպիչ յանձնախումբի անդամներէն մէկուն անունը), եւ ստիպուած կըլլանք սպասել, որ իւրաքանչիւրի անունը կրկնակի ստուգուի եւ անհրաժեշտ արօժնութիւնը ստացուի: Սա՝ ապահովական տեսակետէն յուսալաղորիչ է...

Յետոյ... յետոյ կը վերադառնանք մեր ժողովավայրը, ուր տեղի կ'ունենայ առաջին նիստը, 9 ելոյթներով, վեցը Հայաստանէն, մէկը Ռուսաստանէն, մէկը Իրանէն, մէկն ալ... Գանատայէն: Իմս շարքին երկրորդն է, եւ կը վերաբերի այն քայլերուն, որ կրնանք առնել միասնաբար՝ ստեղծելով համահայկական ճարտարապետական ընկերակցութիւն մը (տես վերելը): Միւսները կը խօսին հայ ճարտարապետութեան զարգացման ուղիներուն եւ այդ

«Ի՞նչ կարող ենք ընել միասնաբար»...



ուղղութեամբ Սփիւռքի ճարտարապետներու դերին, ժառանգութեան պահպանման եւ ճարտարապետութիւնը որպէս հայ ինքնութեան գրաւականը նիւթերուն մասին: Կը տեղեկանանք, որ Սփիւռքի 20 տարբեր երկիրներէ 100 մասնագէտներ եկած են, Հայաստանէն՝ 150: Որպէս առաջին փորձ՝ իրապէս տպաւորիչ է:

Երեկոյեան խումբը հիւրը պիտի ըլլայ Երեւանի քաղաքապետարանին (Արգիշտի փողոց թիւ 1), պաշտօնական ընդունելութեան արժանանայ քաղաքապետ Գագիկ Բեգլարեանի կողմէ: Մենք՝ այր ու կին կը բացակայինք, քանի որ Արագը ուրիշ կարգադրութիւններ ըրած է, եւ ... իւրաքանչիւր վայրկեանը հաշուած է...

Տունդարձին, թաքսիի վարորդը, իմանալով, որ ճարտարապետներու համաժողովէն դուրս կու գանք, ինքն ալ ունենալով շինարարական փորձառութիւն (նախորդ կեանքին մէջ...), կը գանգատի նոր շինութիւններու տգեղութեան, անկարգ-անկանոն քաղաքաշինութեան եւ օրէնքներու խախտումին մասին...

Երեկոյեան պիտի երթանք Կոմիտասի անուան սենեկային (կամերային) երաժշտութեան տունը, Բսահական փողոց թիւ 1), վայելելու համար Սպեղանի երգչախումբի ելոյթը: Մա մանկապատանեկան եւ երիտասարդական բացառիկ խումբ մըն է: Հիմնուած է 1996-ին՝ «Արցախի ազատամարտում զոհուած հերոսների գաւակներից՝ ի յիշատակ բոլոր նահատակների»: Հիմնադիրն ու ղեկավարն է Սարինա Աւթանդիլեանը, որուն ամուսինը եւս այդ հերոսներէն մէկն է: Կը յիշեմ, ատենին ողբացեալ ընկերս՝ Ադգէն Արմենեանը որքան կը գուրգուրար այս խումբին վրայ:

Սարինա, իր դժբախտութիւնը ուժի վերածելով, որբերուն տէր կանգնած է, դառնալով երաժիշտ եւ անոնցմով ստեղծելով այս խումբը: Յաղթահարած է սկզբնական դժուարութիւնները եւ այժմ արդէն ունի միջազգային ճանաչում գտած սքանչելի երգչախումբ մը:



Սպեղանին...

Այս երեկոյ մեզի կը ներկայացնէ Կոմիտասի «Նանիկ, Նանանիկ»-ը եւ «Ջուր կու գայ վերին սարէն»-ը (որ մայիսին ալ Գերմանիոյ Հալլէ քաղաքի մէջ միջազգային փառատօսին պիտի նուագած ըլլար անոր մասնակից բոլոր երգչախումբերու հետ միասնաբար), այլեւ Վաչէ Շարաֆեանի «Տէր, որ ի մէջ լերինն» մաշտոցեան շարականը, ինչպէս նաեւ երոպական դասական երաժշտութեան հսկաներու գործերէն գողտրիկ փունջ մը:

Որքա՛ն սփոփարար է մեզի համար տեսնել այդ մատղաշ սերունդի այդպես հոգիո՛վ երգելը:

Երեկոն պիտի աւարտենք Չարենց փողոցի վրայ, «Չարենց 28»՝ իր հասցեով իսկ անուանուած ճաշարանը, մեր հին ընկերներուն հետ՝ Լիզային (նախկին մոնթրէալցի), Հրաչին ու Սեդային՝ Լոս Անճելըսէն (երեքն ալ համերգին էին) եւ Մկոյին (Պէյրութէն), որուն կը հեռաձայնենք, որ միանայ մեզի:

2009-04-22, չորեքշաբթի

Համաժողովի երկրորդ (եւ վերջին օրը) յատկացուած է զանազան ելոյթներու, ամենէն կարեւորը սակայն վերջին նիւթն է, ուր ծնունդ պիտի առնէ հայ ճարտարապետներու եւ յատկապէս մասնագէտներու համահայկական ընկերակցութիւնը:

Առաջին հերթին տեղի կ'ունենայ «տեսակոնֆերանս» մը (տեսաժողով, հեռաժողով) Գալիֆորնիա հաւաքուած խումբ մը հայ ճարտարապետներու հետ, որոնք կը թուի թէ ծանօթ են Հայաստանի վիճակին եւ որոշ քննադատութիւններ եւ համապատասխան առաջարկներ կ'ընեն՝ բարելաւելու համար ճարտարապետութեան եւ քաղաքաշինութեան մակարդակները: Ասիկա անախորժ հակազդեցութիւն մը կը ստեղծէ ոմանց մէջ:

Օրուան երկրորդ նիստը ունի ութ զեկուցողներ, ըստ բաժնուած օրակարգին, սակայն չնախատեսուած մի քանի զեկոյցներ ալ կ'աւելնան: Խօսողներու մեծ մասը Հայաստանէն են, ոմանք՝ Ամերիկայէն կամ Ռուսաստանէն: Ճարտարապետական կրթութիւնը, գործունէութիւնը եւ քաղաքաշինութեան իրավիճակը կը ներկայացուին:

Ամենէն հետաքրքրականը ռուսախօս Եւրի Գրիգորեանի ելոյթն է, իր նախագծումներու եւ իրականացումներու ցուցադրութեամբ: Երիտասարդ, տաղանդաւոր այս ճարտարապետը կրնայ համաշխարհային համբաւի տիրանալ. մաղթենք, որ չխանգարեն, չհալածեն զինք:

Այս նիստը նախատեսուածէն շատ աւելի երկար տեւելուն պատճառաւ երկուքի կը բաժնուի: Դադարին, մեծ օթոպիւսով կը փոխադրուինք Էրեբունի հիւրանոց (հրապարակին տօին), ուր կը գտնուին Սփիւռքի նախարարութեան գրասենեակները: Ճաշը հոն կը մատուցուի, ապա կը վերադառնանք ժողովավայրը:

Վերջին նիստին, որ կը գումարուի տիկին նախարարուհիին եւ Հայաստանի ճարտարապետներու միութեան նախագահ Մկրտիչ Մինասեանի նախագահութեամբ, պիտի քննուի հայ ճարտարապետներու համահայկական ընկերակցութեան կազմութեան հարցը:

Երկու զեկոյցներէ ետք ձայնը կը տրուի մասնակիցներուն:

Կ'առաջարկեմ, որ միայն համաժողովին, եւ ոչ անկէ առաջ, մեզի բաշխուած կանոնագրի նախագիծը վաւերացնելու հարց չծագի, այլ բոլորս աւելի ժամանակ ունենանք՝ զայն քննելու, մեր համապատասխան երկիրներու գործակիցներուն հետ խորհրդակցելու եւ բարեփոխութեան մեր առաջարկները ներկայացնելու համար:

Նոյնպէս, մեր համահայկական ընկերակցութեան խորհուրդի ընտրութիւնը կատարուի նոյն ձեւով, եւ փոխանակ տեղւոյն վրայ մենք մեր թեկնածութիւնը դնելու, մեր պատկանած ընկերակցութիւններուն կողմէ առաջարկուին թեկնածուները:

Ժողովի մասնակիցները ընդհանրապէս համաձայն կը թուին, եւ տիկ. Յակոբեան կ'ընդառաջէ մեր առաջարկներուն: Կը խոստանայ ժողովին արտայայտուած կարծիքները նկատի ունենալով բարեփոխել կանոնագիրը եւ ուղարկել շրջանները՝ առ ի քննութիւն:

Պահ մը, պահ մը միայն, կը ստեղծուի շփոթ մը, երբ հայրենաբնակ երեց ճարտարապետները այն տպաւորութիւնը կունենան, որ նոր կազմուելիք ընկերակցութիւնը պիտի գայ փոխարինելու արդէն իսկ գոյութիւն ունեցող կարգն ու սարքը՝ Հայաստանի ճարտարապետներու միութիւնը: Կը կատարուի անհրաժեշտ ճշտումը, կը տրուի անհրաժեշտ լուսաբանութիւնը:

Սփիւռքի նախարարուհին նիստը եւ համաժողովը կը փակէ բազմիցս շնորհակալ ըլլալով ներկաներուն, յատկապէս՝ Սփիւռքէն եկողներուն, որ ի գին ամեն տեսակ զոհողութեան՝ յանձն առին գալ ու մասնակցիլ այս նախաձեռնութեան:

Յետոյ՝ կարճ դադար մը, տուն երթալու, հանգստանալու, փոխուելու եւ վերադառնալու այստեղ՝ վարչապետ Տիգրան Սարգսեանի կողմէ մեզի ի պատիւ տրուելիք ընդունելութեան: Հոս ալ ինձի հաճոյքը կընծայուի ըլլալու իր եւ տիկ. Յակոբեանի սեղանակիցը, մի քանի բառ (եւ այդքան միայն) փոխանակելու իրենց հետ: Այդքան՝ որովհետեւ երեկոն ճոխ է գեղարուեստական որակաւոր յայտագրով մը՝ հանդիսավարութեամբ ծանօթ դերասան Ազատ Գասպարեանի, որ ինքնին ներկայացում մըն է արդէն..., եւ մասնակցութեամբ Սիլվա Իւզրաշեանի (ասմունք), Գեորգ Տապալաղեանի (տուտուկ),- երեքին ալ ատենին հանդիպած եմ Գանատա կամ այլուր,- ու նորութիւն նորութեանց՝ Արարատեան թեմի առաջնորդարանի



Ծաղկազարդը

Ծաղկազարդ երգչախումբին, ղեկավարութեամբ Լիլիթ Գրիգորեանի (8 երգչուհի, մէկ սրնգահար, մէկ դաշնակահար), որ ելոյթին բացումը կը կատարէ «Ազգ իմ փառապանծ»-ով: Բացառի՛կ: Նախարարուհին մտադիր է այս երգը դարձնել նախարարութեան օրհներգը: Իսկ նախարարութեան տարբերանշանը ընտրած է Արարատի խորապատկերին առջեւ թռչող կռունկը՝ է՛ր երբեմն Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի նշանը, կարծես աւելի արդիական վերարտադրութեամբ:

Յաջորդող երկու օրերուն

նախատեսուած են Էջմիածին, Գիւմրի այցելութիւններ, Ծիծեռնակաբերդ՝ ծառատնկումի եւ Եղեռնի զոհերու յիշատակին յարգանքի միջոցառումներ, որոնցմէ կը զրկուիմ՝ այլ ծրագրեր ունենալով օրակարգիս վրայ:

Օրուան աւարտին կը տեղեկանամ, որ կինս ու աղջիկս այցելած են Փայտարուեստի թանգարանը, Պարոնեանի վրայ՝ Մաշտոցի անկիւնը (մեր բնակած շէնքին գրեթէ կից), եւ Եղիշէ Չարենցի տուն-թանգարանը: «Պէտք է անպայման պահ մը գտնես եւ դուն ալ այցելես երկուքն ալ», հրահանգելու պէս կը թելադրուի ինձի: Պիտի չկարենամ, ուստի ասոնք ալ պիտի աւելնան յաջորդ տարուան կատարուելիքներու ցանկին վրայ...

Նազիկը այսօր երկու գիրք գնած է. Չարենցի թանգարանէն՝ Չարենցի «Վերջին խօսք» հատորը (Հայագիտակ, Երեւան 2007, 528 էջ), պատրաստութիւն Անահիտ Չարենցի, մտայղացում եւ հրատարակութիւն Ալբերտ Իսոյեանի, լոյս տեսած նախկին վարչապետ ողբ. Անդրանիկ Մարգարեանի մեկենասութեամբ... իսկ Արթւարիճէն գներ էր Դաւիթ

Գասպարեանի «Հայ գրականութիւն» դասագրքի Գ. հատորը (Երեւան, 2007, 704 էջ), ուր Չարենցի եւ Ժամանակակիցներու մասին է, որ կը խօսի հնուտ գրականագէտը:

Գալով ինծի, իմ ձեռքբերումս, համաժողովի շէնքի մուտքի սեղանին վաճառող՝ «Ճարտարապետութիւն-շինարարութիւն» շատ ներկայանալի, շատ հետաքրքրական պարբերաթերթի համարներէն մէկն է (թիւ 8-30, յունիս-յուլիս 2008), որ ամբողջութեամբ նուիրուած է մեծ ճարտարապետ՝ ողբ. Ռաֆայէլ Բարայէլեանի, որուն բազմաթիւ իրագործումներէն ամենէն ճանչցուածը Սարդարապատի հերոսամարտին նուիրուած կոթողային յուշահամալիրն է:

Շատ ուրիշ թիւեր կան ցուցադրուած, բայց...

Արթարիձէն մինչեւ Տաշիր Պիծծա

2009-04-23, հինգշաբթի

Այսօր եւս լեցուն, լիացուցիչ օր մը պիտի ըլլայ մեզի համար:

Նախաճաշէն անմիջապէս ետք պիտի երթանք Արթարիձ, ուր մեզմէ առաջ արդէն հասեր էր Արագ, իմ վաղեմի ընկերոջս՝ Թումի Վարդապետեանին հետ հանդիպելու: Թումին, կամ Թովմասը, ինչպէս եւ կը սիրեմ կոչել զինք. երկարամեայ լրագրող՝ Հէլվըրհիլէն (Մասաչուսեց), այժմ հանգստեան կոչուած է, բայց իր յօդուածներուն միշտ կը հանդիպինք Armenian Weekly-ին մէջ: Հիմա յաճախ կ'ուզէ Հայաստան գալ եւ լուսանկարել երկիրը, ժողովուրդը: Կուզէ Արագին հետ ալ հարցազրոյց մը ունենալ:



Արթարիձ՝ Նազիկ, Վ-Ա., Յովսէփ, Արծուի եւ Թումի

Թումիին հետ էր նաեւ Յովսէփ Տաղտիկեանը, ուրիշ ամերիկահայ մը, որ աւելի շատ Երեւան կ'ապրի քան Պոսթըն: Իրեն նոր կը ծանօթանամ: Ինք նուիրուած է Հայաստանի օգնելու գործին: Իր մասին աւելի ուշ՝ երբ Գորիսի պանդոկին մէջ անգամ մը եւս դեմ-դիմաց գանք:

Ես Արծուի Բախչինեանին հետ ժամադրուած եմ: Ինք այն երկրորդ բախտաւոր անձն է, որուն գումար մը բերած եմ յանձնելու, նուէր՝ «Հորիզոն»-ի մտաւորական մէկ ընթերցողին կողմէ, որ կարդալով անցեալ տարի իր հետ ունեցած հարցազրոյցս, կ'ուզէ քաջալերել զինք: Արծուիի հակազդեցութիւնն ալ ճիշտ նոյնը կ'ըլլայ, ինչ որ Մերուժանինն էր եղած: Ինք եւս կ'որոշէ իր գալիք գրքերէն մէկուն հրատարակութեան յատկացնել այդ գումարը, եւ ոչ պարզապէս սա կամ նա նիւթական վայելքին: Այո՛, այսպիսի մտաւորականներ կան հոս: Այսպիսի մտաւորականներ ալ կան:

Մինչ Նագիկն ու Արագը... գեղեցկանալու կերթան, ես «տնօրհներ»ի կելլեմ: Ուրիշ բաշխելիք բաներ ունիմ, ես սիրելի Արտաշին՝ մեր հաւատարիմ վարորդին հետ կը շրջիմ՝ հասցէէ հասցէ. առաջին՝ «Ազգ»-ի խմբագրատուն, ուր կը տեսնեմ հին դպրոցական ընկերս՝ Ծուլիկեան Յակոբը, ու իրեն կը թողում Մելանիային յանձնուելիք «Հորիզոն»-ը: Մելանիա Բաղալեանի մէկ յօդուածն էի արտատպեր Գրիգոր Շահինեանի նուիրում գրական յաւելումսին մէջ: Ապա մեր կեդրոնը՝ (Քրիստափոր Միքայէլեան), Կիրոյին փոխանցելու իր հարազատներուն կողմէ իրեն ուղարկուած իրերը, դեղերը, իսկ գրադարանին՝ Գէորգ Մանճիկեանի յուշերու հատորը, որ Մոնթրէլայ հրատարակուեցաւ: Անկէ՝ «Համազգային»-ի գրասենեակը, հոն ալ նոյն հատորէն երկու օրինակ յանձնելու, մէկը՝ ՀՕՄ-ի գրասենեակին փոխանցելու համար:

Յետոյ պիտի երթանք, վարսաւիրանոցէն վերցնենք գեղեցկացած՝ կինս ու աղջիկս եւ երթելէկի խճողումներու մէջէն փորձենք հասնիլ Առնօ Բաբաջանեանի անուան պետական երաժշտամանկավարժական կոլեջը, ուր պիտի կայանայ Կոմիտասի 140-ամեակին նուիրում համերգի ծրագիր մը: Պիտի ուշանանք, եւ ակամայ ուշացնենք հանդիսութիւնը:

Տնօրէնն ու անձնակազմը անհամբեր կը սպասեն մեզի, որովհետեւ համերգէն առաջ յատուկ արարողութիւն մըն ալ կայ: Մոնթրէլայէն երիտասարդուհի մը Արագին բարեգործական աշխատանքներուն համար 1000 տոլարի յատկացում մը կատարած է, սակայն նկատի առնելով, որ այդ գումարով շինարարական մեծ ծրագիր մը չիրագործուիր, ընդունած է, որ լաւագոյն ուսանողներուն որպէս մրցանակ բաշխուի ատիկա: Եւ ահա, երաժշտամանկավարժական քոլեջի այս տարեկան համերգը լաւագոյն առիթն է ատոր համար: Կը հաւաքուինք տնօրէնին՝ Արմէն Յարութիւնեանի աշխատասենեակը, ուսուցիչներէն խումբի մը հետ, եւ 15 ուսանող-ուսանողուհիներու Արագ անձամբ կը յանձնէ պարգեւները:

Համերգը տեղի կունենայ կոլեջի մեծ դահլիճին մէջ. ներկաները ուսանողներն են, ուսուցիչ-ուսուցչուհիները, ծնողներ, բարեկամներ եւ մենք: Յայտագրին մասնակցողները՝ ուսանող եւ ուսուցիչ: Բացումը կը կատարուի «Հայաստան»-ով (Երկի՛ր դրախտավայր), եւ երգ ու նուագ կը յաջորդեն իրարու, Կոմիտասի ստեղծագործութիւններով, եւ կը բացայայտեն տաղանդները թէ հիներուն եւ թէ նորերուն: Ի՛նչ հարստութիւն: Ի՛ գուր չէ, որ զաւակս առինքնուած է այս երկրի այս մեծ յատկանիշով եւ կաշխատի չափով մը դիրացնել արուեստագէտներու կեանքը: Ան ցոյց կու տայ մեզի այն դոյլերը որ պատերուն տակ դրուած են, համերգասրահին մէջ՝ տանիքէն կաթկթող անձրեւի ջուրը հաւաքելու համար, եւ կ'ափսոսայ, որ տակաւին անհրաժեշտ նորոգութիւնը ընելու համար գումար չկայ իր տրամադրութեան տակ:

Համերգէն ետք կրկին պիտի հաւաքուինք Արմէնին աշխատասենեակը՝ մրգի եւ օղիի սեղանի մը շուրջ, կենացներ խմենք, ծանօթանանք իրարու, լուսանկարուինք...

Այսօր երեկոյեան ալ մշակութային յայտագիր ունինք. պիտի երթանք Երեւանի պետական կամերային (սենեկային) թատրոնը, 58 թիւ՝ Մաշտոց պողոտային վրայ, Մատենադարանին ստորոտը, աջին, տեսնելու «Փնտռում է տղամարդ» թատերակը, որ քեպէզցի գրող Գարոլ Ֆրեշէթի գործն է՝ «փսիխոդրաման» (հոգեդրաման կամ հոգե-եզերերգութիւնը), այնքան վարպետ խաղարկութեամբ գոյգ մը երիտասարդներու՝ Լուիզա Ներսիսեանի եւ Արշալոյս Յարութիւնեանի (այս Արշալոյսը՝ այր է, ինչպէս Հայաստանի գրեթէ բոլոր Արշալոյսները...): Բեմադրութիւն՝ նոյնպէս երիտասարդ Լուսինէ Երնջակեանի, որ դուստրն է թատրոնի գեղարուեստական ղեկավար եւ ՀՀ արուեստի վաստակաւոր գործիչ Արա Երնջակեանի:

Հետաքրքրական վայր է ի՛նքը, փոքր թատերասրահը, ուր հանդիսատեսները գրեթե բեմին եզերքն են, կարծես մա՛ս կը կազմեն ներկայացման: Հոս են Հրաչն ու Մեդան, որոնց հետ ալ յետոյ կերթանք մօտակայ Տաշիր Պիծծան, ուր դարձեալ մեզի կը միանայ Մկոն: Դուրսը տեղատարափ անձրեւ է, բայց այդ անձրեւին տակ ճիշտ այստեղ կը հաւաքուին երիտասարդները, մոմերը կամ ջահերը ձեռքին՝ Մատենադարանի առջեւի հրապարակէն քալելու համար մինչեւ Ծիծեռնակաբերդի յուշահամալիրը: Սա՛ պահանջատիրական ասանդական ջահերթն է՝ Ապրիլ 24-ի նախօրեակին: Կիրոյին բամբ ձայնն է, որ կ'արձագանգէ պողոտային վրայ՝ թափօրին ետեւէն ընթացող բեռնակառքին վրայ զետեղուած մեծ բարձրախօսէն: Անընդունելի կը գտնէ Թուրքիոյ հետ սահմանը բանալու ի խնդիր ՀՀ նախագահին եւ Արտաքին գործոց նախարարին տուած համաձայնութիւնը «Ճանապարհային քարտէս»-ի մը շուրջ, որուն մանրամասնութիւնները տակաւին անյայտ են մեզի համար,– կըսէ,– եւ որուն յայտարարուիլը ճիշտ այսօր՝ անարգանք է մեր նահատակներու յիշատակին:

Ոստիկանական ինքնաշարժներ կընկերակցին թափօրին:

Փիծծայի անուան տակ՝ պիտի ուտենք հայկական համեղ խմորեղէն մը, բազմաթիւ բոյսերով լեցուած: Այսօրուան մեր խօսակցութիւնը պիտի ընթանայ մեր հոգիներուն ներքին բաւիղներէն՝ մնացողներու եւ հեռացողներու հոգեվիճակներու, տառապանքներու, գաղափարական անշեղ հաւատարմութեան՝ նոյնիսկ շարքերէն դուրս եղած ըլլալով, այսուամենայնիւ նաեւ անտրտունջ ու հետեւողական կերպով ծառայելու պատրաստակամութեան անբացատրելի երեւոյթներու վերլուծումով, եւ մասամբ նորին:

Անձրեւը կը դադրի, երեկոն հաճելի է, ու բոլորս հետիոտն կը վերադառնանք մեր տուները:

Ծիծեռնակաբերդէն մինչեւ «Մեծ Լռութիւն»

2009-04-24, ուրբաթ

Ահա եւ ուխտի օրը, որ անպայման պիտի ընդգրկէ Ծիծեռնակաբերդ ուխտագնացութիւնը:

Առաջին անգամ 2005-ին, Մեծ եղեռնի 90-ամեակին էր, որ քալեցինք, սկսելով մեր ընկերոջ՝ ողբ. Ադգէնին բնակարանէն, ուր իջեւանած էինք՝ Այգեձոր փողոցին վրայ, անցնելով Կիւեւեան կամուրջէն եւ մարզահամերգային համալիրի ստորոտէն բարձրանալով վեր:

Այս անգամ Արագին բնակարանէն պիտի սկսինք քալել, պիտի անցնինք Յաղթանակի կամուրջէն, միշտ Հրազդանի վրայ, անոր եզերքէն (թէեւ գետը վարն է, հովիտին մէջ) շարունակենք ճանապարհը եւ Հրազդան մարզադաշտէն քիչ անդին պիտի նստինք մեր տրամադրութեան տակ դրուած օթոպիւսները եւ այդպէս ընթանանք, որպէսզի վերադարձողներու ճամբան չփակենք:

Յետոյ, հազարաւորներու հետ մենք ալ պիտի քալենք, քալենք ու կանգնինք, քալենք ու կանգնինք, մինչեւ հասնինք վերեւ: Ճամբան պիտի զրուցենք ումանց հետ, լուսանկարենք մանուկներ, ունկնդրենք Լուսինէ Զաքարեանի անուշ ձայնը, որ յիշատակ մնաց մեզի, կամ ուրիշներու երգերը, որ կը ձայնասփռուին տեղ-տեղ՝ բարձրախօսներէն: Մտահոգ էինք, որ կրնայ անձրեւել, բայց երկինքը կը գործակցի:



Այստեղէն կրնաք գնել ծաղիկները...

ու տանիլ մինչեւ անշէջ հուրը



1 500 001-րդը

Յուշահամալիրի երկա՛ր պատին վրայ պիտի փնտռենք մեր մեծ ծնողներու ծննդավայրերը՝ Սեբաստիա, Հաճըն, Կեսարիա, Ակն եւ այլն: Պահ մը կանգ պիտի առնենք Սովսէս Կորկիսեանի շիրիմին առջեւ, ապա անշէջ հուրին շուրջ դնենք մենք ալ մեր բերած ծաղիկները, նկարենք նաեւ այդտեղ կանգնած տարիքաւոր կին մը, որ Հրանդ Տինքի ի յիշատակ ցուցանակ մըն է բռնած՝ «1 000 000 եւ 1» խօսուն մակագրութեամբ:

Յուշարձանին կոնակէն ալ մի քանի լուսանկար, քանի որ սքանչելի է տեսարանը այդտեղէն, ապա վայրէջքը մինչեւ Հրազդան մարզադաշտը, եւ անկէ՛ մեր տունը: Արագը մեզի հետ չէ, որովհետեւ Սերժը եկած է խոհանոցին ծորակները նորոգելու. երէկ ալ բաղնիքիները ըրաւ: Ինք ճարտարագետ է, բայց շինարարութեամբ կը զբաղի եւ ոմանց ալ տուններու նորոգութեան ու խնամքի գործերը կընէ, աւելի շատ օգնելու, օգտակար ըլլալու տրամադրութեամբ: Արագն ալ կը վայելէ անոր այդ հոգածութիւնը...

Կէսօրէն ետք անմոռանալի հանդիպում մը, մեր տան մէջ, Շաղիկ Արծրունիին հետ, եւ իր 16-ամեայ դստեր՝ Ծովիկին, որ հոս հասակ առաւ եւ մեր երկու բարբառներով ալ դիւրութեամբ կը խօսի, թէեւ հետզհետէ արեւելահայերէնը կը դառնայ աւելի տիրական: Շաղիկին հետ քանի մը ամիս է, կապի մէջ էի, երբեմն օրական, օրն ալ մի քանի անգամ՝ երբ կը պատրաստէի իր հօր՝ մեր շատ սիրելի Գրիգոր Շահինեանի յիշատակին նուիրուած «Հորիզոն»-ի գրական յաւելումը: Հիմա արդէն ինքն ալ կապուեցաւ այդ յաւելումին եւ կը ջանայ որեւէ ձեռով օգտակար ըլլայ: Ինձի կը յանձնէ «Համագային»-ի Լիբանանի շրջանի «Բանբեր»ը, նոյնպէս հօրը նուիրուած (մարտ 2009, 32 էջ), որմէ օրինակ մը յատուկ հետը բերեր էր Պէլրութեան:

Այսպէս, նստասենեակի պատուհանին տակ, ուր գրադարանի նման խորշ մը կայ՝ մեր ձեռք ձգած գիրքերն ու հրատարակութիւնները կը հաւաքուին, կը բազմանան: Առաջինները, որ դրեր էինք հոն՝ Արագը գնած էր նախապէս, մեր խնդրանքին վրայ: Երկու կարետը եւ բաւականին ծաւալուն գործեր, մէկը Աբրահամ Ալիքեանի հաւաքածոն՝ «Հեզ իրիկուն» (բանաստեղծութիւններ եւ թարգմանութիւններ, Ars poetica մատենաշարի անդրանիկ հատորը, հրատ.՝ Սարգիս Խաչէնց, Փրինթինֆո, Երեւան 2008, 478 էջ), իսկ միւսը, նոյն

հրատարակիչն՝ Գրիգոր Պըլտեանի «Երկխօսութիւն Նարեկացիի հետ» (Երեւան 2008, 528 էջ, «Իմացութիւն գրադարան», Էսթետիկա, արուեստի տեսութիւն մատենաշարէն, մեկենասութեամբ Գալուստ Կիւլպէնկեան հաստատութեան եւ Զաւէն Եկաւեանի): Առաջին գրքին մասին «Հորիզոն»-ի գրական յաւելումաձի Ալիքեանի նուիրում թիւին մէջ հրատարակել էի Գրիգոր Շահինեանի ակնարկը: Երկրորդին մասին ինձի տեղեկացուցեր էր Արթօ Չաքմաքչեան, որուն քանդակն ու գծանկարները այդ հատորին կու տան յաւելեալ որակ: Երկու գիրքերն ալ կարելոյր յաւելումներ գրադարանիս համար: Ափսոս, որ պիտի չկարենամ հանդիպիլ Սարգիս Խաչէնցիին. ուրի՛շ անգամ:

Ապրիլ 24-ը պիտի աւարտենք օրուան խորհուրդը վերապրելով, տեսնելով Պերճ Զէյթունցեանի «Մեծ Լռութիւն»-ը, Երեւանի Հրաչեայ Ղափլանեանի անուան դրամատիկական թատրոնը՝ 28, Իսահակեան փողոց, նուիրում Դանիէլ Վարուժանի ծննդեան 100-ամեակին (առաջին անգամ ներկայացուած է 1984-ին): Այդ օրերէն մինչեւ հիմա գլխաւոր դերին, Վարուժանի կերպարին մէջ՝ ՀՀ ժողովրդական արտիստ, պետական մրցանակի դափնեկիր Գուժ Մանուկեան: Իր այնքան վարպետ խաղարկութեան մէջ հարց իսկ չես տար, թէ ինչո՞ւ 31 տարեկան Վարուժան սպիտակահեր է...: Շատ լաւ են նաեւ ՀՀ ժող. արտիստ Արթիւր Ութմազեանը Ռուբէն Սեւակի դերին մէջ, ՀՀ ժող. արտիստ եւ պետ. մրցանակի դափնեկիր Վլադիմիր Մսրեան՝ Կոմիտասի, եւ միւս բոլորը իրենց դերերուն մէջ: Յայտագրին մէջ նշուած է՝ բեմադրութեան հեղինակ՝ ՀՀ ժողովրդական արտիստ Արմէն Խանդիկեան, բայց նաեւ աւելցուած է, որ ներկայացումը կը վարէ Վահան Մալխասեանը: Պատասխանատուութիւնները ներկայացնելու հետաքրքրական ձեւ է:

Տուն կը վերադառնանք լիացած:

Ամենէն երկար օրը

2009-04-25, շաբաթ

Օրը պիտի սկսի ու վերջանայ նոյն տեղը, կռահեցիք՝ Արթւրի՛ճ:

Մեզի համար այլեւս հարազատներ են հոն աշխատող տղաքն ու աղջիկները, որոնք սպասեակներ ըլլալէ զատ, ե՛ն նաեւ արուեստագէտներ, ուսանողներ՝ ամեն մէկը իր պատրաստութեամբ: Եւ զարմանալի չէ, որ այս հաճելի վայրը ճաշարան կամ սրճարան չէ միայն, այլեւ գրատուն, ցուցասրահ, երաժշտութեան ունկնդրութեան սրահ եւ տակաւին ինչ որ կանցնէք ձեր մտքէն:

Առաջին հանդիպումը ժամը 11:00-ին է, անձի մը հետ, որուն անունը տեսեր էի, լսեր էի, բայց մտքէս անգամ չէր անցներ, թէ ինչ արժանաւոր մէկն է: Իրեն հանդիպելու թելադրութիւնը եկաւ մեր հասարակաց ընկերոջմէն՝ Սարգիս Գաւուքճեանէն, «Համագգային»-ի գրական յանձնախումբի գործակիցս, որ ճատրակի, կամ հայաստանեան եզրով՝ շախմատի սիրահար մըն է, իսկ Գագիկ Յովհաննիսեանը, ինդրոյ առարկայ անձը՝ ՀՀ շախմատային «Ֆետերացիայի» (դաշնակցութեան) գլխաւոր քարտուղարն է (նոյն

կազմակերպության նախագահը նոյն ինքն ՀՀ նախագահն է):

Ունինք ժամ մը, որուն ընթացքին կարելի պիտի ըլլայ հարցազրոյց մը արձանագրել ոչ միայն իր հետ, այլև Մեծն Տիգրան Պետրոսեանին անուանակից երիտասարդ Տիգրան Պետրոսեանին ալ հետ, որ Հայաստանի լաւագոյն շախմատորդներէն մէկն է,– թերեւս հինգ առաջիններէն մէկը,– եւ որ նոյնպէս Մագոյին առաջարկով (որ մէկն ու մէկն ալ մասնակից ըլլայ) եւ իմ խնդրանքով Գագիկ կրցաւ հրաւիրել մեր հանդիպումին. միւսները երկրէն դուրս կը գտնուէին այդ պահուն: (Հարցազրոյցները լոյս տեսած են այս շարքէն դուրս, առանձնաբար):

Յաջորդ տեսակցութիւնս, միշտ նոյն վայրին մէջ, եւ արդէն կնոջս ալ մասնակցութեամբ՝ Սիրանոյշին հետ է, Դոյեան Սիրանոյշին. մտերմիկ գրոյց մը կէսօրուան թեթեւ ճաշի մը շուրջ: Ահա արդէն շուրջ տարի մըն է, աւելի ճիշտ՝ տասը ամիս, որ ծանօթացած եմ իրեն, եւ դարձած մտերիմ ու գործակից: «Հորիզոն»-ի գրական յաւելումաձի աջակիցներէս մէկն է, Հայաստանի հետ կապս: Կը մտմտանք գալիք ծրագիրներու, յատուկ նիւթերու նուիրուելիք համարներու եւ այլ բաներու մասին:

Մեր երազներուն մասին պիտի մտմտանք նաեւ կէսօրէ ետք, Աշոտ Գրիգորեանին հետ, ճարտարապետական թանգարանի տնօրէն բարեկամս, որ թանգարանի հիմնադրամն



է հաստատած՝ բազմաթիւ կարելոր ծրագիրներ առաջադրելով եւ Սփիւռքի հետ գործակցութեամբ զանոնք իրագործել փափաքելով – արխիւներու հաւաքում, ցուցահանդէսներ, հրատարակութիւններ՝ Հայաստանի եւ Սփիւռքի ճարտարապետներուն նուիրուած եւ այլն, եւ այլն: Կարելի է ժամեր խօսիլ, բայց...

Տակաւին ուրիշ ընելիքներ ունինք եւ պէտք է վերադառնանք տուն: Ընթրիքէն ետք Կարինէն պիտի գայ, Նազիկին զարմիկին զարմիկի՛ն դուստրը, որ 20-րդ դարու 40-ական թուականներուն Հայաստան ներգաղթած ընտանիքի զաւակ է: Նման պարագաներու բնականաբար խօսակցութիւնը պիտի ընթանայ ընտանեկան պատմութիւններով եւ առտնին կեանքի մանրամասնութիւններով, որոնք միշտ ալ

Վերժինը...

դժուարութիւններու, խոչընդոտներու են առնչուած: Թատրոնի ծրագիրը ջուրը պիտի իյնայ, քանի որ կարելի չէ կարճին կապել հարազատներու նման հանդիպումները: Սակայն օրը չէ աւարտած, եւ տակաւին գոնէ քանի մը հեռաձայն կարելի է ընել, հին կապերը թարմացնել եւ ժամադրութիւն մը եւս առնել՝ երեկոյեան իննին համար, միշտ մեր սովորական ժամադրավայրը: Որո՞ւ հետ՝ Վերջիհանին: Եթէ ճիշտ կը յիշեմ, ցերեկը Սիրանոյշն էր, որ տուաւ իր անունն ու հեռաձայնի թիւը եւ թելադրեց որ խօսիմ հետը, ըսելով՝ «ինքն ալ կրնայ "Հորիզոն"-ին աշխատակցիլ»: Եւ ահա, առանց այլեւայլի, հին ծանօթներու նման կու գանք դէմ-յանդիման



Տ. Պետրոսեանի ու Գ. Յովհաննէսեանի հետ

Արթւրիճի մէջտեղը: Նրբակազմ, եռանկիւնաձեւ երկար դեմքով, շիկահեր, սպիտակամորթ երիտասարդուհի մըն է: Վերջիհան Ձիֆլիօղլու (կրնար Վերժին Ձիֆլեան եղած ըլլալ, բայց հիմա առաջին ձեւով կը ճանչցուի) «Հորիզոն»-ի երբեմնի աշխատակից՝ սիտնիաբնակ Թորոս Ձիֆլեանի եղբօր աղջիկն է: Ինք «Հուրբիթ»-ի թղթակից է, եկած է... Ապրիլ 24-ի նշման մասին լրագրելու: Նաեւ բանաստեղծ է, եւ մտահոգ է Պոլսոյ՝ ներկայ Իսթանպուլի հայ գաղութի եւ անոր մշակոյթի ու գրականութեան հարցերով: Երկար կը գրուցենք:

Մեր մտերմիկ գրոյցը, սակայն, պիտի ընդհատուի մի քանի անգամ: Չէ՞ որ Արթւրիճը ժամադրավա՛յր է:

Մա ներսը նստողը Ստեփան Հանէսեանը չէ՞, Մոնթրէալի համալսարանի պարգեւատրեալ քիմիագետ-դասախօսը:

– Ստեփա՛ն...

Կոդջագուրուինք, կը ծանօթացնէ նաեւ իր աղջիկը՝ Նորան, որ ճարտարապետ է (հայերէն չի խօսիր), բայց ահա եկած է Հայաստան, առաջին թէ երկրորդ անգամ, այժմ՝ ներկայ գտնուելու Գիտութիւններու ազգային կաճառին (ակադեմիային) կողմէ իր հօր մեծարման նուիրուած հանդիսութեան:

Բայց... այս ալ Արեւիկն է, անհաւատալի. եւ զուակը՝ Արմէնը, Նիւ-Եորքէն, ապա քոյրը՝ Անին, Սամուէլին կինը, եւ Սամուէլին աղջիկը՝ Շուշան Պետրոսեանը, որուն ձայնով կը հմայուին շատեր, շատերու կարգին՝ Նազիկն ալ: Հապա Յակոբէ՛նք, Ծուլիկեանները, ընտանիքով, ճիշտ մեր քովի սեղանը...

Այո՛, իսկական ժամադրավայր, բայց ոչ թէ Արթւրիճը, այլ Երեւանը ի՛նքը, Հայաստա՛նը,– ինչպէս կըսէի...

Այսօր Նազիկին ուշադրութիւնը գրաւած է Միվիլիթաս (նախկին արտգործ նախարար Վարդան Օսկանեանի ղեկավարած) հիմնադրամի մէկ հրատարակութիւնը՝ «Հայաստան 2008 – Ճգնաժամ եւ հնարաւորութիւն» (Երեւան, Հայաստան հրատ., 80 էջ, լոյս տեսած՝ Միացեալ թագաւորութեան միջազգային զարգացման վարչութեան աջակցութեամբ), որ Արթւրիճ գետեղուած էր՝ փափաքողին համար: Ուրեմն անկէ՛ ալ օրինակ մը մեզի հետ Մոնթրէալ կու գայ:

Դէպի Նորավանք ու Գորիս

2009-04-26, կիրակի

«Նորավանք»:

– Օթոպիւսին վրայ գրուած պիտի ըլլայ. Հրապարակը. չուշանա՛ք, ճիշտ 8:00-ին ճամբայ պիտի ելլենք:

Տիանան էր, որ երէկ հեռաձայնեց եւ անգամ մը եւս յիշեցուց. Մոնթրէալէն լուրը տուած, հրաւիրած էր, որ միանանք իրենց: Պիտի երթանք ամուսնոյն՝ մեր սիրելի Տիգրան Հաճէթեանի շիրիմը օրհնելու: Մեծ, հանգստաւետ, մանիշակագոյն օթոպիւս մը վարձած է, մէկ մասը մենք ենք՝ ընտանեկան պարագաներ, բարեկամ-ազգական, բայց մեծ մասը Սայաթ-Նովան է, գուսանական համոյթը՝ Թովմաս Պօղոսեանի առաջնորդութեամբ:

Կ'անձրեւէ. Երեւանը, ապա ճանապարհը ամբողջ՝ տխուր է:

Թովմաս, որ մարդատարի անցքին մէջ կ'երթայ-կու գայ, ասոր անոր ցուցմունք մը կընէ, կատակ մը, «հրահանգ» մը կու տայ, նաեւ կը գրուցէ հետս. խօսքը երկու օր առաջ



Ամերիկայի նախագահ Օպամայի կատարած յայտարարութեան, աւելի ճիշտ՝ չկատարած խոստումին մասին կը դառնայ: Կըսեմ, լաւ է այսպէս, «Ցեղասպանութիւն» բառը չգործածելով, մեզի յաւելեալ պատճառ տուաւ, որ շարունակենք մեր պայքարը: Թովմաս կը յիշէ Մեսրոպ սրբազանը (Աշճեան), որ նման կարծիք է յայտնէր տարիներ առաջ՝ ուրիշ նախագահի մը թերացումին առթիւ:

Կընթանանք M-2 ճանապարհէն: Արագը վանքը պիտի միանայ մեզի ու անկէ պիտի շարունակենք մեր ճամբան մինչեւ Ստեփանակերտ: Ահա եւ դուրս կու գանք M-2-էն եւ կը դառնանք աջ՝ կը մտնենք կիրճը, երկու կողմէն ձիգ կտրուած իր ժայռապատերով, որ մեզ կը հասցնէ Նորավանք:

Ուշ ենք, անձրեւը դանդաղեցուց մեզ: Պատարագը արդէն աւարտած է, սակայն պիտի կատարուի գերեզմանի օրհնութիւնը: Ան գետեղուած է բակի մուտքին դիմաց, աջին, վերը՝ ցանկապատին մօտ: Շիրմաքարը կայ, բայց ծածկուած է. տակաւին չէ փորագրուած, չէ գետեղուած ինչպէս որ պէտք է: Կը հաւաքուինք շուրջը, հովանոցներով: Տեսարան է: Միւնեաց թեմի կորովի առաջնորդ Աբրահամ եպիսկոպոս Մկրտիչեանը եւ կերելի տեղւոյն քահանան՝ Տէր Մահակ Մարտիրոսեանը կը կատարեն արարողութիւնները: Դպիրներուն մաս կը կազմէ նաեւ ընկերս՝ Անթուան-Ստեփան Թերճանեանը, որ, կանդրադառնամ, շատ լաւ գիտէ մեր ծէսերն ու երգեցողութիւնը: Նշեմ, որ նշանակուէր է Եղեգնաձորի Գիտելիք համալսարանի փոխ-տեսուչ, իսկ տեսուչը Աբրահամ սրբազանը ինքն է: Գալով Տէր Մահակին, ան ալ վարպետ լուսանկարիչ է, եւ մեկնումի ատեն ձեռք պիտի ձգենք՝ վանքի կրպակէն, Նորավանքի նուիրուած իր տեսասալիկներէն մէկը:

Արարողութիւնէն ետք հարիսայի օրհնութիւնը, միշտ Սրբազանին կատարողութեամբ, սպասարկութիւնը՝ ճաշարահին մէջ, քանի որ անձրեւը կը շարունակուի, Սայաթ-Նովայի ելոյթը՝ ճաշի աղմուկին մէջ... Տիգրանի յիշատակը յարգելու եկած են նաեւ տէր եւ տիկ. Վահագն Յովնանեանները՝ բարերար ամուլը, ծանօթ գործարար Վարդանեան ընտանիքի անդամներ, այլ յայտնի ու անյայտ բարեկամներ: Առաջին անգամ հոս է, որ կը հանդիպիմ Ջաւէն Սարգսեանին՝ անուանի լուսանկարիչ եւ Փարաջանովի տուն-թանգարանի տնօրէնը, որ Արագին ալ օգտակար հանդիսացած է ատենին:

Հոս է նաեւ Կարէն Մաթեոսեան՝ այժմ արդէն դադրած այնքան արժէքաւոր «Հայ արուեստ» ամսագրի խմբագիր բարեկամս, որ նաեւ խմբագիրն է «Նորավանք 2009» գեղատիպ, յօդուածներով եւ լուսանկարներով հարուստ հրատարակութեան, գոր անձամբ կը մակագրէ, կը ձօնէ մեզի Տիանան, որ բնական հովանաւորն է հատորին:

Աւելցնեմ, որ Տիանա Հաճէթեան կը շարունակէ ամուսնոյն սկսած գործը եւ ամեն տարի յաւելեալ նորոգութիւն մը, բարելաւում մը կը կատարէ այս վանքի շրջափակէն ներս: Այս տարի ինքնաշարժներու կայանատեղին եւ մուտքի լուացարանները նորոգուած են: Աղջիկս դիտել կու տայ, որ ինչ հոյակապ գործ կատարուած է ԺԳ.-ԺԴ. դարերու զոյգ եկեղեցիներուն վերականգման մէջ: Եւ կը զարմանանք, որ չենք իսկ գիտեր, թէ ո՞վ է վերանորոգման ճարտարապետը: Մեր նոր ստացած գրքին մէջ կը գտնենք ու կը գիտնանք, կը կոչուի Հրաչ Գասպարեան:



Գորիսի Միրիալը...

Արագը հասած էր Արտաշին հետ, ներկայ
ալ եղած այս վերջին բաժնին: Մա լաւ
գաղափար էր, եւ Արտաշը ինքն էր առաջարկողը,
որ փոխանակ Երեւան վերադառնալու եւ յաջորդ
օրը Արցախ երթալու, կրնանք այստեղէն
շարունակել ճամբան:

Այդպէս ալ կընենք, ու ժամը 3:00-ի շուրջ կը
մեկնինք, ճամբայ կելլենք դէպի Արցախ:
Վերստին կը բռնենք M-2-ը, ու մեզի արդէն ծանօթ
վայրերէն անցնելով կողողովնք դէպի Միւնիք,
ուրկէ պիտի անցնինք ԼՂՀ՝ Լեռնային
Ղարաբաղի Հանրապետութիւն: Մակայն, քանի
կը յառաջանանք, օդը կը դառնայ աւելի

աննպաստ: Կը հասնինք տեղ մը, ուր ոստիկանութիւնը ճամբան փակած է, առջելը
բեռնատար մը կայ, սահած է ու կիսով դուրս ինկած ճանապարհէն: Մեքենաներ բերած են,
կը փորձեն բարձրացնել, ետ ուղիին վրայ դնել՝ ի գուր: Ճամբան, սակայն, քիչ ետք կը
բանան, ու մենք կը յառաջանանք, բայց հետզհետէ աւելի մեծ դժուարութեամբ: Թէեւ ոչ
ասֆալտին վրայ, սակայն անոր երկու կողմերը,
դաշտերուն վրայ ձիւն է իջած, իսկ մատախտղը
կը թանձրանայ, դիմացէն եկողը չենք տեսներ,
ու շատ վտանգաւոր կը դառնայ: Քիչ կը մնայ
հսկայ բեռնատար մը, որ կը փորձէ առջելինին
առջելը անցնիլ՝ մեզ ջախջախէ:



Կորոշենք Գորիս կանգ առնել: Բայց ո՞ւր:
Արագին ձեռքի հեռաձայնը գործի կը լծուի, հոս-
հոն՝ ընկերներուն հետ քանի մը բառ կը
փոխանակուի, եւ ահա արդէն նախ կանգ
կառնենք Խաչիկին մօտ, ուր ատենին Արագ
իջեւանած է (եւ շատ գոհ չէ մնացած սենեակին ջեռուցումէն), ապա՝ «Միրիալ», որ
նորակերտ, արդիական, ճաշակով յարդարուած ու կահաւորուած անկիւն մըն է, շատ
տարբեր քաղաքի հնաճ միջավայրէն:

Ընթրիքի ատեն կը ծանօթանանք նաեւ ամերիկեան «Peace Corps»-ի ներկայացուցիչին,
որ Հայաստան ապրող կին մըն է, եւ ծառայելու եկած երիտասարդի մը: Մենք մեզի հարց կու
տանք, թէ այս օտարականները ի՞նչ կընեն Գորիսի մէջ:

Մեզի կը սպասարկէ Նայիրի Առաքելեան, – Հայաստանի մէջ այրերուն կը տրուի այդ
անունը, – որ թատրոնի սիրահար մըն է եւ մեկ կողմէն այդ արուեստին կը հետեւի:


Անմոռանալի երեկոյ մը Ստեփանակերտի մէջ

2009-04-27, երկուշաբթի

Մքանչելի առաւօտ մը Գորիսի մէջ: Մեր սենեակի պատուհանէն կը նայինք դուրս, չենք հաւատար մեր աչքերուն: Դրախտային վայր մըն ենք եկած. «Միրհաւ» մեր պանդոկի կոնակը կանաչ այգի մը կայ, իսկ հորիզոնին վրայ կանաչ լեռներ: Ծաղկած ծառեր, ծաղիկներ՝ ամեն կողմ:

Աւա՛ղ, սակայն, որովհետեւ Գորիսը չտեսած, – հոս ալ շատ բան կայ տեսնելիք, – ճամբայ կելլենք դէպի Ստեփանակերտ: Եւ ըսել, որ երէկ երեկոյ երկմտանքի մատնուած էինք, թէ շարունակե՞նք ճանապարհը, թէ՞ ոչ:

Կանցնինք բնութեան տարբեր հրաշալիքներու ընդմէջէն, – տեղ մը սրածայր ժայռեր, ուրիշ տեղ մը գիւղի ստորոտին՝ քարանձաւի բազմաթիւ մուտքեր, – ու կը հասնինք «սահման»: Այսինքն, Հայաստանի եւ Արցախի արուեստականօրէն մեզի պարտադրուած սահմանը, կարծես անոր երկու կողմերն ալ նոյն երկիրը չէ, նոյն ժողովուրդը չէ: Ստուգման կետի հսկիչ զինուորականները շատ հաճոյակատար են: Այստեղ միայն մեր անուններն ու անցագրի համարները կ'արձանագրուին: Պէտք է երթալ Ստեփանակերտ, արտգործ նախարարութենէն անցաթուղթերը (վիզաները) առնել: Ասիկա մեր երկուքին՝ «օտարերկրացի»-ներուս պարագային է: Արագը եւ մեր վարորդը՝ Արտաշը այս հարցը չունին...



Դրախտավայրն Գորիս...



Սինեաց աշխարհի վահանները... Ապաստարանները...



Չար մտադրութիւնները հեռու պահող հսկիչը... Արցախի մուտքը...
Քաշաթաղէն դէպի Շուշի

Այդ կէտէն անդին ոլորապտոյտ ճամբով կը մտնենք Քաշաթաղի լեռնանցքը: Իրաւունք ունին «բաղ» (պարտեզ) կոչելու այս կանաչապատ լեռնաշխարհը, բայց ինչո՞ւ «Ղարա» (սել): Մեզի շատ հարազատ տեսարաններ կը բացուին մեր առջեւ. պահ մը կը կարծենք, որ մեր Լաւրենտիան (Laurentides) լեռներուն մէջն ենք՝ Մոնթրէալի հիւսիսը:

Ահա եւ Շուշին: Ազերիներէն ազատագրուած, բայց տակաւին անբաւարար չափով հայաբնակ դարձած ու ոչ-ամբողջովին վերականգնած Շուշին, միջին դարերու այդ ամբողջը, որ ԺԹ. դարու վերջաւորութեան, քսաներորդ դարու սկիզբը մշակութային կարեւոր կեդրոն էր, Շուշին, որ մեր կարեւոր դեկավար դէմքերէն շատերու ծննդավայրն է եղած: Հրասայլերու եւ զինուորական օդանաւներու հարուածներու տեղերը չափազանց վերքերու նման աչք կը ծակեն: Բայց, եթէ պահ մը չտեսնելու տանք այդ վիրաւոր շէնքերը, կանդրադառնանք, որ հաճելի, գեղեցիկ ու գեղատեսիլ տեսարաններով հարուստ վայր մըն է այստեղ, միջին հաշուով 1400 մ բարձր լեռան մը վրայ թառած այս քաղաքը, ուր իրապէս պիտի ուզէի բնակիլ....

Նախ կ'այցելենք «Կանաչ ժամ»-ը (Ս. Յովհաննու Մկրտիչ, ԺԹ. դար), որ հաճելի պարտեզներով է շրջապատուած: Վերանորոգուած է 1955-ին: Այստեղ մտմ, յուշանուէր եւ

գովացուցիչ կամ սուրճ ծախող կինը Բաքուի փախստականներին է: Ինչ ահաւոր բաներ ունի պատմելիք:



Կանաչ ժամը



...եւ Կանաչ ժամէն դիտուած՝ Ղազանչեցոցը

Յետոյ՝ Կանաչ ժամէն երեւոցոյ՝ Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին, պէտք է ըսել՝ Մայր տաճարը (կառուցուած 1868–1887), որ քաղաքին կեդրոնն է եւ անոր գլխաւոր կոթողը: Շուշիի ազատագրումէն ետք հոյակապ կերպով վերանորոգուած է շնորհիւ քարագործ վարպետ Վոլոդիա Բաբայեանի անձնական ջանքերուն եւ իր սալապատ բակով՝ նախանձելի դիրք մը ունի: Պատանիներու խումբ մը հայկական պար կը պարէ այդ բակին մէջ եւ կը նկարահանուի: Արագն ալ անմիջապէս կը սկսի լուսանկարել զիրենք:

Ապա, շարունակելով մեր ճանապարհը՝ կիջնենք Ստեփանակերտ, որ Շուշիէն շատ լաւ կէրէտի: Հիմա կը հասկնանք, թէ ինչո՞ւ այնքան կենսական էր Շուշին ազատագրելը, այդ բարձունքէն թշնամին տեւական ուրբակոծման կենթարկէր Արցախի մայրաքաղաքը:

Նախ կերթանք Հեղնար հիւրանոցը, որ մեզի թելադրուած էր Կիրոյին կողմէ: Նախապէս մեր աղջիկը խօսեր էր տիրոջ՝ Համլետին հետ, ապահովեր մեր սենեակները: Նոր, մաքուր, բարեզարդ, երկյարկանի շէնք մըն է (կամ՝ մի քանի շէնքեր), վարդագոյն պատերով, քիչ մը Ֆլորիտայի «Ար-տեգօ» ոճը յիշեցնելով: Կը տեղաւորենք մեր ճամպրուկները, դեռ չենք գիտեր ի՞նչ պիտի ընենք, ինչպէ՞ս պիտի անցընենք օրուան մնացեալ մասը: Երթա՞նք Գանձասար, ինչպէս կը մտածենք ընել, թէ ոչ ատիկա վաղուան ձգենք եւ այսօր այս քաղաքին ծանօթանանք աւելի:

Մեր երկմտանքը երկար չի տևեր: Պանդոկի յարակից բաժինէն (որ առանձին մենատուն մըն է, փոքր խումբերու յատկացուող) դուրս եկող երիտասարդներէն կիմանանք, որ իրենք Արամ Խաչատուրեանի անուան քառեակն են, Երեւանէն, եւ երեկոյեան վեցին ելոյթ պիտի ունենան Մշակոյթի պալատի համերգասրահին մէջ: Կը հրաւիրեն, որ ներկայ ըլլանք: Որոշումը տրուած է:

Բայց, սոված ենք, ո՞ւր կրնանք ճաշել արդեօք: Կը յանձնարարուի Ռոսիա ճաշարանը: Հեռու չէ,– հոս ամէ՛ն տեղ հեռու չէ,– եւ ահա արդէն բազմած ենք չորս թէ հինգ աստղանի այս ճաշարանի սեղաններէն մէկուն շուրջ ու կը գննենք մութ գոյն փայտէ ներքին դասական յարդարումը՝ սեղանի կարմիր ծածկոցներով, սլացիկ գաւաթներով եւ ... ամենեւին ոչ՝ այնքան ալ անմատչելի զինքերով իր գեղեցիկ ճաշացուցակներով: Լաւ ընտրութիւն մը անկասկած:

Յետոյ պէտք է անցնիլ Արտաքին գործոց նախարարութենէն՝ մեր վիզաներուն համար:

Եթէ հոն ըլլայ՝ բարեւ մըն ալ կրնանք տալ մեր ընկերոջ՝ արտգործ նախարար Գեորգի Պետրոսեանին, կը մտածեմ:

ԼՂ արտգործ նախարարութեան վիզայի համար գրանցումը եւ անցագրերուն մէջ անցաթուղթի գետեղումը շատ արագ կ'ըլլայ, հաւանաբար երբոր կը յայտնեմ, որ նախարար ընկ. Պետրոսեանը տեսնել ու բարեւ մը ըսել կը փափագիմ:

Ինչ զգացում է, չէ՞, բարձր պաշտօնի վրայ գտնուող գաղափարակից ընկերոջ մը հանդիպիլ, ողջագործուիլ եւ տաս-տասնըհինգ վարկեան մը հետը մտերմօրէն գրուցելու առիթ ունենալ օրուան կարելոր հարցերուն շուրջ, մտահոգութիւնները բաժնել եւ դուրս գալ որոշ բաւարարութեամբ, որ այսուամենայնիւ ամուր ենք, եւ թշնամին չի կրնար դիւրաւ խաղի բերել հայութիւնը...

Ապա, անկէ ոչ շատ հեռու՝ Արցախի պատմութեան թանգարանը պիտի այցելենք. գրեթէ ժամը 4-ն է, պիտի փակեն, բայց տեսնելով որ հեռուէն եկած ենք, ուղեկցորդուհիներէն մին՝ Գայիանէ կ'առաջարկէ մեզ պտտցնել ու արագ-արագ խօսելով մեզի ցոյց կու տայ ամբողջ թանգարանը իր երկու յարկերով: Հարուստ նիւթ կայ այստեղ Լեռնային Ղարաբաղի մասին, – ոչ միայն պատմութիւն, այլեւ մշակոյթ, ազգագրութիւն եւ այլն, եւ այլն: Մեր ճանչցած բոլոր մեծերը (Ղարաբաղի ծնունդ) հոս են, մեր անմահ հերոսներն ալ, եւ անկիւն մը, պատի մը վրայ պիտի տեսնենք մենք մեզ, այսինքն Գանատայի հայութիւնը, Օթթաուայի մէջ Խորհրդային Միութեան դեսպանատան առջեւ ցոյցի պահուն... Անշուշտ Արցախի դատին համար կարժէ ընել նուիրատուութիւն մը՝ թանգարանի ֆոնտին:



Գեորգի Պետրոսեանի հետ

Պահ մը ետ՝ պանդոկ, որմէ ալ Մշակոյթի պալատը՝ մեր քառեակի համերգին:



Պապիկն ու տատիկը՝ թանգարանի պատին Արամ Խաչատուրեան քառեակը

Ահա եւ մեր տղաքը կու գան բեմ, Ա. ջութակ՝ Ռուբէն Քոսեմեան, Բ. ջութակ՝ Հայկ Վարդանեան, ջութ (alto)՝ Վահէ Յովկէան (որ կը թուի թէ նաեւ խումբին ղեկավարն է) եւ թաւ ջութ (cello)՝ Վահան Գեորգեան: Պիտի

Գեղեցիկ, ներկայանալի շէնք մըն է, թէեւ նորոգութեան կը կարօտի: Կը փնտտենք տոմսարկղը, սակայն տոմս ծախսող չկայ. համերգը անվճար է, պետութիւնը հրաւիրած է երաժիշտները եւ կազմակերպած անոնց ելոյթը: Կը մտնենք ու լաւագոյն տեղերը կը գրաւենք: Սրահը կը լեցուի հետզհետէ, մեծամասնութիւնը կիներ ու երիտասարդներ, պատանիներ են...



ներկայացնեն Շոթակովիչի «Ը. Քառեակ»-ը, Միրզոյեանի «Քառեակ»-ը, Կոմիտասէն «Ալ ալլուդս» եւ ուրիշ երկու գործեր ու Ռուբէն Ալթունեանի «Բերդ պար»-ը: Արամ Խաչատուրեանի անուան պետական քառեակը՝ Հայաստանէն: Փայլուն կատարողութիւն:

Դուրս կու գանք Մշակոյթի պալատէն, տակաւին չէ մթնած: Արագ կուզէ քաղաքի գերեզմանատունը այցելել: Արտաշ փողոցները գրեթէ բոլորը գիտէ այլեւս: Դարձեալ Շահումեանի արձանի հրապարակէն մեկնելով կուղղուինք միւս ուղղութեամբ, եւ ահա գերեզմանատունը, քաղաքին մէջ իսկ, ժողովուրդին հաւասար բարձրութեան վրայ... : Երեւանի Եռաբլուրին մէկ տարբերակն է, հարիւրաւոր գերեզմանաքարերով, գուցէ հազարաւոր: Քով-քովի, հայր ու զաւակ, նոյն ընտանիքէն երկու, երեք անուններ՝ տղայ ու աղջիկ: Մեծ մասը ազատամարտիկ, ուրիշներ՝ պատերազմի զոհ: Կեղքունը՝ յուշարձան կոթող մը նարնջագոյն տուֆով: Կը շրջինք լուռ, կը լուսանկարենք: Առանձին կը մտորենք: Որքան սուղ է սա հայրենիք ըսուածը, հայրենի հողը: Եւ որքան՝ սո՛ւրբ:

Կը վերադառնանք պանդոկ: Ընթրիքի: Անակնկալներ կը սպասեն մեզի: Առաջին՝ հոս են Տիգրան եւ Անժէլ Գոյումճեանները, Տիգրանը ծանօթ պատմաբան է, ներկայ էր Ատանա-100 գիտաժողովին, անցեալ շաբաթ՝ Երեւան: Սան Ֆրանսիսկոյէն էին, բայց այժմ ֆրանսաբնակ. իրենց կընկերանան ֆրանսացի գրող մը՝ Gérard Macé, եւ իր կինը: Երբ կը լսէ որ Եգիպտոս ծնած ենք, վեր՝ սենեակ կը բարձրանայ ու կը բերէ, մեզի կը նուիրէ իր վեպերէն մէկը՝ «Le dernier des Égyptiens» (Folio, Gallimard, Saint-Amand / Cher, 1988, 1997, 120 էջ), գիրք, որ նուիրուած է Շամփոլիոնին (մեհենագրերու վերծանիչը) եւ կը կարդացուի գաղտնի ռոստիկանական վէպի մը նման, եւ որ յաջորդ մէկ-երկու օրէն պիտի աւարտեմ...

Երկրորդ անակնկալը քառեակի անդամներուն ալ նոյն պահուն ընթրելն է, բայց աւելի կարեւորը՝ ընթրիքէն ետք մի քանի հայկական կտորներով եւ Փիածուլայի թանկոներով մթնոլորտը տաքցնելն է:

Բայց կայ երրորդ անակնկալը, որ ա՛լ աւելի պիտի նպաստէ մթնոլորտի շիկացման. այդ՝ Մարգարիտա Խաչատրեանի եւ «Հասարակական կազմակերպութիւնների համագործակցութեան իրաւապաշտպան համակարգող խորհուրդ»-ի ներկայացուցիչներուն եւ իրենց ընկերակցող երիտասարդներու ներկայութիւնն է:

Մարգարիտան զաւակը զոհ տուած է մեր արցախեան ազատամարտին եւ անկէ ի վեր ստեղծած է այս խորհուրդը ու նուիրուած մեր զինուորներու բարօրութեան: Իսկական «զինուորի մայր»-ն է, որ իրեն նման կամաւոր գործակիցներով կայցելէ զօրամասերը, կը ստուգէ մեր զինուորներուն վիճակը, կը փորձէ օգնել՝ երբ դժուարութիւններ ունին (ընկերաբան, հոգեբան, ամեն տեսակի մասնագէտ ունի իր կողքին), այլեւ հաճելի պահեր ընծայել ծառայողներուն, սահմաններու վրայ ըլլան անոնք թէ այլուր՝ անոնց տանելով, ընծայելով գեղարուեստական յայտագրեր: Ահա այդ նպատակով ալ խումբին կընկերանան



այդ կրակ ու բոց երիտասարդ-երիտասարդուհիները, տարբեր ասպարէզներէ, որոնք պիտի երթան երգելու, պարելու, ասմունքելու զօրամասերուն մէջ: Եւ երբ Արամ Խաչատրեան քառեակի տղաքը նուագել կը սկսին, անոնք ալ կը մասնակցին իրենց երգուպարով, մանաւանդ Սասնայ, Մշոյ կողմերու մեր ժառանգութեամբ:

Մեր արժանապատուութեան փրկիչները..

Բոլորն ալ այդտեղերէն եկած պապեր ունին...

Ներկաներէն մէկը նոյնիսկ կենաց կառաջարկէ Դաշնակցութեան՝ կառավարութենէն դուրս գալուն առիթով (այդ օր եղած էր յայտարարութիւնը, եթէ չեմ սխալիր):

Յանպատրաստից խրախճանքը կը դառնայ մեր ուղեւորութեան ամենէն անմոռանալի պահերէն մէկը, եթէ ոչ պա՛հը:

Այսօր ալ մի քանի փոքրիկ հրատարակութիւններ կ'ունենանք. Գայիանէ Ղազարեան մեզի կը նուիրէ Վանուհիի «Իմ մասին» վէպի Ա., Բ. եւ Գ. պրակները (48, 48 եւ 40 էջ, Երեւան, 2006), «Երկուտով» սեռային դաստիարակութեան պարբերաթերթի մարտ 2006-ի համարը, (32 էջ) եւ վերոյիշեալ Խորհուրդի իր իսկ խմբագրած «Ճիշ հոգու» պարբերաթերթի մարտ 2009-ի համարը, «Երբեմն բերնէ-բերան լցուած հոգին ուզում է ճչալ» ենթախորագրով...

Վաղը Գանձասա՛ր պէտք է երթանք:

Խաչէնի անմահական մեղրը

2009-04-28, երեքշաբթի



Ուխտագնացութիւն...

Այսօր Գանձասարի օրն է, բայց եղաւ նաեւ Խաչէնի օրը:


Առաւօտ. պայծառ, կապուտակ երկինք, բախտաւոր ենք: Պանդոկի պատուհանէն Ստեփանակերտը կը տարածուի մեր առջեւ:

Համեղ նախաճաշէն ետք ճամբայ կ'ելլենք: Քաղաքի հիւսիսային կողմէն անմիջապէս որ դուրս կու գանք՝ ձախին, բլուրի մը գագաթը մեզի կը սպասեն բոլորին ծանօթ Պապիկն ու Տատիկը՝ այլապէս ճանչցուած «Մենք ենք, մեր սարերը» յուշարձանը, որ իր քարէ լռութեամբ (եւ պապիկին փակ, իսկ տատիկին ծածկուած բերաններովն) իսկ շատ է խօսուն:

Զբօսաշրջիկներ ալ կան, մեծ մարդատարով մը եկած են, եւ ահա Արազին ծանօթները կ'ելլեն՝ ձանիկն ու Մարկրիթը, Ֆրանսայէն, որոնք Solidarité protestante franco-arménienne կազմակերպութեան սիւներէն են, որոնք Լենինականի երկրաշարժին եկան ու մեծ օգնութիւն ցոյց տուին եւ անկէ ի վեր ալ շարունակ նոր բարեգործութիւններ կը կատարեն Հայաստան եւ Արցախ: Իրենք ալ Գանձասար կ'երթան, բայց անկէ առաջ պիտի հանդիպին



Վանք գիւղի նշանաւոր պատը



Ամեն քայլափոխի՝ նոր հրաշալիք մը

Դէպի Դումանի տուն-թանգարանը...


Խաչէն գիւղը, ուր մանկապարտէզ մը եւ գիւղի մշակութային-համայնքային կեդրոնի կառուցումը իրականացուցած են: Կը հրաւիրեն, որ միանանք իրենց, միասին ճաշենք: Կը խոստանանք:

Կը շարունակենք մեր ճամբան դէպի հիւսիս-արեւմուտք, բայց Խաչէնի ցուցանակի չենք հանդիպիր: Չենք յաջողիր նաեւ այցելել Նիկոլ Դումանի տուն-թանգարանը, որ ընկեր մը թելադրած էր անպայման տեսնել. կը տեսնենք ցուցանակը, բայց չենք կրնար գիւղ մտնել. ճամբան շատ էր քարքարոտ:

Փոխարէնը կը վայելենք գեղատեսիլ բնութիւնը, կը լուսանկարենք պատկառելի ծառեր...

Ահա եւ Վանք գիւղը, որմէ վեր Գանձասարն է: Ճամբուն երկու կողմերը գրաւած փոքր գիւղ մըն է, ուր մէկու մը թերթ մը ունինք յանձնելիք. Արծուին խնդրեր էր, որ տանինք տանք: Կը հարցնենք զովացուցիչ վաճառող կրպակի տիկինին: – Նա՛ է, – կըսէ, – քոյրն է, որ կու գայ դիմացէն. Իրե՛ն տուէք:

Կը տեսնենք նորակառոյց դպրոցը, ամուր ու գեղեցիկ, բարերարի մը նուիրատուութեամբ իրագործուած (Ռուսաստանէն): Եւ զբօսարան մը, աւագանով, ճաշարանով, ճաշակար: Բայց ուշադրութիւնը գրաւողը պատ մըն է, որ փողոցի երկանքին կերկարի ու կը հասնի այդ զբօսարանին: Կազմուած է ինքնաշարժի թիւերով. թշնամիին լքա ծ ինքնաշարժներու...



Գանձասարի պատմական վկաները



Նստիլ այստեղ ու խոկալ

Ինչպէս յաճախ այլոց պարագային, Գանձասարի վանքն ալ բարձունքի մը վրայ է, ուր կը տիրէ խաղաղութիւն: Ունի հսկայ բակ, թէ ցանկապատէն ներս, թէ ալ դուրս: Մէկը նստած է ծառի շուքին: Վանքին առջեւ, դուրսը կայ հին գերեզմանատուն մը, պատմական դամբարաններով, եւ աղիւսէ փոքր տաղաւար մը, որ գրեթէ կանաչապատուած է այլեւ: Ձախին, ճամբէն վար եւ անմիջական տեսողութենէ դուրս՝ նոր գերեզմանատունն է:

Քաղաքական-մշակութային կարեւոր կեդրոն, վանքը շինուած է 1216-1238 թուականներուն՝ Չալալեան իշխան Հասան-Դոլանի կողմէ իր հօր՝ Վախթանգ իշխանի կտակին համաձայն: Կը գտնուի համանուն լեռան վրայ՝ Մռաւի լեռնահամակարգի հարաւային լանջին: Հողի ընդերքը արծաթով հարուստ ըլլալուն Գանձասար է կոչուեր



Խաչէն գետը...



Վլադիկն տունը...

վայրը: 1555-1815 այստեղ եղել է Հայոց Աղուանքի կաթողիկոսարանը: Կը նկատուի հայկական ճարտարապետութեան գլուխ-գործոցներէն մէկը:

Ցանկապատէն ներս մէկը խոտ կը հնձէ: Շատ գեղեցիկ, բարեկարգ բակ մըն է, լաւ խնամուած: Սայաթն է, որ հոգ կը տանի: Մեզ տեսնելուն՝ գործիքը կանջատէ ու կը դիմաւորէ մեզ: Կը պտտցնէ, բացատրութիւններ կուտայ: Իրմէ է, որ կը տեղեկանանք, թէ ղարաբաղցիին երկու խորհրդանշանները եղեր են էշն ու մեղուն, ինչպէս կ'երեւին վանքի ընդունարանի պատին երեւոյթ քանդակին (կամ նկարին) վրայ. էշը՝ յամառութեան, մեղուն՝ աշխատասիրութեան համար. եւ Սայաթ կ'աւելցնէ,– Մեղուն գացեր, էշն է մնացեր...

Կարելի է երկար յամենալ այստեղ, նստիլ ծառի մը շուքին ու ոչինչ ընել, ապրիլ երկիրը: Սակայն պէտք է շարժիլ:

Վերադարձի ճամբուն վրայ է, որ Խաչէն տանող ցուցանակը կը նշմարենք, դուրս կու գանք գլխաւոր ճանապարհէն եւ ահա արդէն գիւղն ենք: Ֆրանսայէն եկած խումբը... մեկնելու կը պատրաստուի. իրենք ալ հիմա՝ Գանձասար պիտի երթան:

– Եկէք, մտէք ներս, հո՛ս ճաշեցէք, բաւական ճաշ աւելցած է,– կ'ըսէ Մարկրիթը ու մեզ կը յանձնէ գիւղապետին (հիմա կը կոչուի համայնքապետ)՝ Էոնեստ Գրիգորեանի հոգածութեան: Մեզի սեղանակից կըլլայ նաեւ գիւղի ծերունիներէն (70 տարեկան, գրեթէ ... տարեկից) Վլադիկ Ապրեսեանը:

Աղուոր, մաքուր կառուցուածք է, որ իրականացած է. ակումբը մեծ տարածք մըն է, մեր՝ Մոնթրէալի հայ կեդրոնի Ահարոնեան սրահին նման, սակայն երկու կողմէն մեծ պատուհաններով: Քովը՝ մանկապարտէզն է, եւ սրահը անոր ալ կը ծառայէ:

Կ'այցելենք նաեւ վերանորոգուած եկեղեցին, որ նոյնպէս բարեկարգ է, եւ... աւելի շատ ամերիկեան բողոքական եկեղեցիներուն կը նմանի:

Վլադիկ կը պնդէ, որ իրենց տունը մտնենք (որ եկեղեցիին կից է) եւ սուրճ մը առնենք: Կարելի չէ մերժել: Գիւղական տուն. հաւ, աքլոր, թռչուններ ու անմահական մեղր. Վլադիկին ռուս կինը, որ հայերէն չի խօսիր, բայց կը հասկնայ, մեզի «Café de Paris»-ով, տուրմով, մեղրով կը հիւրասիրէ: Թանձր, համեղ մեղր է, որ նոյնիսկ լուսանկարուելու կ'արժանանայ: Մեր գիւղացին ալ, որ բանակային եղած է, հեռաւոր վայրերու մէջ ծառայած ու այդտեղերէն ալ կինը բերած՝ մեծ հպարտութեամբ ցոյց կու տայ մեզի ընտանեկան լուսանկարները, զաւակները, թոռնիկները....



Մեղր ու կարագով հիւրասիրութիւնը

Ստեփանակերտ, վերադարձին, պիտի այցելենք յուշանուէրներու եւ արուեստի գործերու շատ ճաշակաւոր վաճառատուն մը, որ դիւրաւ կրնար Մոնթրէալի մէջ ալ գործել իր ունեցած այդ գեղարուեստական մակարդակով:



Ստեփանակերտ – Արդիական վաճառատունը եւ աւանդական գորգագործութիւնը

Ապա՝ գորգի արհեստանոց մը, որ Արտաշը գտեր էր նախորդ գալուստ, երբոր մեր ծանօթներն էր բերեր Արցախ: Փոքր գորգի մը կը տիրանանք՝ որպէս յիշատակի մեր այցելութենէն, կեղծ սակարկութենէ մը ետք... կեղծ՝ որովհետեւ մեր նպատակը օգտակար ըլլալ է:

Չհասած, «Հեղնար» լուր կու տանք, որ հոն, պանդոկը պիտի ընթերնք:



Տնջրի ծառը

2009-04-29, չորեքշաբթի

Շնորհակալ պէտք է ըլլալ Սիւնիքի մատախուղին, որուն պատճառաւ կիրակի երեկոյ Գորիս մնացինք, ու արցախեան մեր կեցութիւնը մէկ օրով երկարեցինք:

Այսօր ահա երրորդ օրն է, որ հոս , եւ դարձեալ մեզի շնորհուած է պայծառ երկինք, զարնանային ջերմ օդ:

Հիւսիս-հարաւ մայրուղիով կ'ուղղուինք դէպի Ամարաս: Հոս նշեմ, որ այդ մայրուղին ոչ միայն կառուցուեցաւ Մփիւռքի օժանդակութեամբ, այլեւ կը պահուի ու կը խնամուի սփիւռքահայերու կանոնաւոր ներդրումներով: Օրինակ՝ երկար հատուածներ Մոսկուայէն Վահէ Հայրապետեանի հոգածութեան յանձնուած են, ինչպէս կը նշեն ցուցանակները:

Մքանչելի տեսարաններ կը բացուին մեր առջեւ: Այս անգամ Շուշին կը տեսնենք դիմացէն՝ արեւելքէն: Ահա «Ղազանչեցոց»-ը՝ իր սլացիկ աշտարակներով: Սարահարթը կ'երեւի իր ամբողջ վեհութեամբ, ու բոլորիս յստակ կը դառնայ, թէ ի՛նչ յանդգնութեամբ մեր տղաքը Քարին տակ գիւղէն մագլցած են անդունդն ի վեր ու յանկարծակիի բերած թշնամին: Պիտի խոնարհինք անոնց սխրանքին առջեւ:

Մեր նպատակակէտը Ամարասի վանքն է, սակայն մեզի պատուիրուած է ճամբան շեղել, Կարմիր Շուկայէն անմիջապէս ետք, եւ այցելել չինարի ծառ մը: Ծա՞ռ մը: Այո,

Շուշին այդ անդունդն ի վեր ազատագրուեցաւ...

պատմական յուշարձան մըն է այս մէկը, որ... 2000 տարեկան է: Կերեակայէ՞ք 2000 տարեկան, այսինքն Արտաշիսեաններու, Արշակունեաններու, Բագրատունիներու բոլոր հարստութիւններու օրերէն, Մետրոպ Մաշտոցի, Վարդան Մամիկոնեանի եւ անոնց յաջորդներու ժամանակներէն վերապրած...

Արդարեւ, ճամբուն եզրին ցուցանակ մը կը մատնանշէ Տնջրի ծառին տանող գիղական ճանապարհը: Զայն կը բռնենք ու կանգ կ'առնենք կամուրջի մը վրայ, որուն տակէն գետ մը կը հոսի, իսկ երկու կողմերը հովիւներ են՝ ոչխարներու հօտով, խոզերով, որոնք կը հանգստանան, ջուրին եզերքը կը տապալկին: Իսկ աչքդ կտրածին չափ՝ թութի ծառ: Շերամապահութիւնը տարածուած է այս կողմերը:

Կը շարունակենք, քիչ-քիչ կը բարձրանանք, ինքնաշարժը կը կանգնեցնենք, քանի որ հետզհետէ աւելի խորտուբորտ կը դառնայ հողէ ճամբան, եւ քիչ մըն ալ ոտքով շարունակելով՝ ահա կը հանդիպինք մեր պատմութեան վկան հանդիսացող այս կարեւոր ծառին:



Տնջրի ծառին հետ... մեր պատմութեան հետ

Հեռուէն շատ չի գանազանուիր շրջապատի միւս ծառերէն, բայց քանի կը մօտենաս՝ կ'անդրադառնաս համեմատութիւններուն եւ այնքան աւելի կը զգաս անոր «արժանիք»ները: Ի վերջոյ, ան դիմադրեր է 20 դարերու բոլոր հարուածներուն, կայծակ ու փոթորկի, սելճուկ ու թաթարի, եւ կարծես ուզեր է դառնալ խորհրդանիշը նոյն հողին վրայ ապրող իր ժողովուրդին:

Տնջրի ծառը 54 մ բարձրութեան է հասեր. իր բունի (գոյգ բուներու) միացեալ շրջագիծը, հողին մակարդակին՝ 27 մ է: Փիղի մը ոտքերուն նմանող իր բուներուն միջեւ կարելի է... փիքնիք ընել: Պիտի մագցինք այդ խարիսխներուն վրայ, լուսանկարուինք, անմահանա՞նք...

Յետոյ, մեր ճամբան պիտի շարունակենք, լուսանկարենք լեռ ու ժայռ, ծառ ու ծաղիկ: Ըսեմ, որ գրեթէ բոլոր լուսանկարներուն մէջ երեւցող սպիտակաւեր գազաթը Մեծ Քիրսն է (2724 մ), որ ԼՂՀ-ի օրհներգին մէջ ալ կը յիշուի Մոսաին հետ (3343 մ):

Պիտի հասնինք պարսպապատ եկեղեցի մը՝ Ամարաս, որ հիմնադրուած է Գրիգոր Լուսաւորչի կողմէ՝ Դ. դարու սկիզբները, եւ վերանորոգուած է վերջերս: Վանքը հանդիսացած է Հայոց Աղուանքի կաթողիկոսական կեդրոնը: Բայց շրջափակը նոյնքան կարեւոր է. հոն, պարիսպի ներսի կողմը, 36 դասարաններ են, կիսաբոլորակ թաղով



Ամարաս վանքը եւ Ա-Բ-Գ-ի դասը

(տանիքով), ամեն մէկը մեր այբուբենի մէկ տառին նուիրուած: Մերոպ Մաշտոցն է հիմներ, ու ինքն ալ դասաւանդեր է այստեղ: Ըստ աւանդութեան ԺԴ դարուն Լենկ Թիմուր վանքը քանդել տուեր ու քարերը Արաքսի մէջ թափել տուեր է: Թիմուրի ժառանգորդներն ալ ԻԱ դարու սկիզբը նման սխրագործութիւն մը չըրի՞ն՝ Նախիջեւանի խաչքարերով...

Կաղ ժամկոչը, որ մեզ կը պտտցնէ ու կը լուսաբանէ՝ ազատամարտիկ է:

Կը հեռաձայնենք «Հեղնար»՝ մեր պանդոկը, դարձեալ լուր կու տանք, որ պիտի վերադառնանք ու հոն ճաշենք եւ անկէ մեկնինք դէպի Գորիս: Այդպէս ալ կընենք եւ անգամ մը եւս կը համտեսենք այդ հիւրանոցին պարզ ու համեղ ճաշերը:

Քաշաթաղի (կամ Բերդձորի) միջանցքէն անցնելէ եւ սահմանին մեր անցաթուղթերը ցոյց տալէ ետք պիտի հասնինք կազալցակայան մը: Հոն ալ աշխատողներէն մէկը, վճարման կիշէին ետեւ՝ ազատամարտիկ մըն է, որուն հետ պիտի զրուցենք Շուշիի ազատագրութեան մասին...

Գորիս չմտած՝ պիտի շեղինք ու երթանք հեռուէն դիտենք նաեւ Խնձորեսկի բնական ժայռափոր քարայրները, իսկ քաղաքէն ոչ-շատ հեռու՝ սրածայր կոնաձեւ այնքան յատկանշական ժայռագագաթները, որոնց նման մէյ մըն ալ Կապաթովկիոյ նկարներուն մէջ տեսեր ենք՝ Արագին կողմէ լուսանկարուած:

Յետոյ, ահա արդէն Գորիս ենք, նոյն «Միրհաւ» հիւրանոցը, ուր մեր սենեակները կը սպասեն մեզի: Հոն են նաեւ Թումի Վարդապետեանն ու Ճօ Տաղտիկեանը, որոնց Երեւան ալ հանդիպեր էինք: Արցախի կերթան: Թովմաս, քիչ մը անհանգիստ ըլլալուն, ընթրիքէն



Մնաք բարո՛վ, Գորիս, աշխարհ Բակունցի

անմիջապես ետք սենեակ կը բարձրանայ, մինչ մենք Յովսեփին հետ կը շարունակենք երկա ը գրուցել: Ինք եւ իր կինը հիմա աւելի շատ Հայաստան կ'ապրին եւ երկրին օգտակար կըլլան բարեգործութեամբ, իրենց օգնութիւնը հասցնելով յատկապէս գիտութեան զարգացման, եւ կը նպաստեն մեզի ծանօթ, մեծարժէք, բայց այնքան համեստ աստղագէտ-ֆիզիկոս, Արագածի ու Ամբերդի տիեզերական ճառագայթներու ուսումնասիրութեան կեդրոններու պատասխանատուն ու ոգին հանդիսացող փրոֆ. Աշոտ Զիլինգարեանի աշխատանքներուն:

Իրենց պէս որքա՛ն մարդոց պէտք ունինք...

«C'est la vie»

2009-04-30, հինգշաբթի

Առաւօտեան 9:30-ին կը մեկնինք Գորիսէն: Ի՛նչ տարբերութիւն եկած ու գացած ատեն: Մինչ անցնող կիրակի անձրեւին, ապա մառախուղին պատճառաւ գրեթէ ոչինչ կը տեսնէինք մեր շուրջը, հիմա ամբողջովին կը վայելենք Ակսել Բակունցի երկիրը, Համօ Սահեանի լեռները: Եւ Սարեանի գոյները:

Իրապէս, Արցախն ու Զանգեզուրը Հայաստանի ամենէն չքնաղ վայրերէն են: Եւ Վայոց ձորը:

Ճամբան, որ կրնար թերեւս 2 ժամէն, կամ 3 ժամէն կտրուիլ, մենք 7,5 ժամէն կ'ընենք, հայր ու աղջիկ տեւաբար մեր վարորդ ընկերոջ «հրահանգել»ով՝ հո՛ս կեցիր, քիչ մը առջէ՛ւ գնա, կա՛նգ առ՛, եւ այլն: Իրականութեան մէջ Արտաշը յաճախ ինք կը կեցնէ ինքնաշարժը, ենթադրելով, որ այս կամ այն տեսարանը մեզ կը հմայէ ու պիտի ուզենք իջնել լուսանկարել: Ճի՛շտ ենթադրելով:



Գորիսէն դէպի Եղեգնաձոր

Երբոր կ'անցնինք Վայքը ու կը հասնինք Եղեգնաձոր, կ'առնենք Գլաձոր տանող ճանապարհը, դուրս գալով M-2 խճուղիէն, եւ կ'որոշենք անգամ մը եւս այցելել Թանահատի Վանքն ու Գլաձորի համալսարանը, անկէ առաջ Վերնաշէն գիւղին մօտ մտնելով նաեւ այդ աւելի քան 700-ամեայ համալսարանին նուիրուած թանգարանը, որ սարքուած է Ս. Յակոբ եկեղեցւոյ շէնքին մէջ: ԺԷ. դարու այս փոքրիկ տաճարը շատ յաջող ու ճաշակաւոր կերպով վերածուած է թանգարանի (յառաջացնելով ոմանց դժգոհութիւնը...):



Սուրբ Յակոբ հին եկեղեցին ու նոր թանգարանը

Բակին մէջ, մուտքին մօտ, եօթը խաչքարանման քարերու վրայ փորագրուած են համալսարանի դասաւանդած նիւթերը՝ ճարտասանութիւն, տրամաբանութիւն, իմաստասիրութիւն եւ այլն:

Ելքի պահուն, որպէս յիշատակ, կը ստանանք փոքր, 8 էջնոց հրատարակութիւն մը, «Ախթալա», լոյս տեսած 1984-ին՝ «Հայկ. ՄՍՀ պատմութեան եւ կուլտուրայի յուշարձանների պահպանութեան ընկերութեան» կողմէ: Ախթալայի տաճարը, վրացական սահմանին մօտ, որ անցեալ տարի էինք այցելէր...

Ապա կը շարունակենք մեր ճամբան եւ ամայի լեռնային դարձողարձիկ այդ ճանապարհով կը հասնինք վերը՝ վանքը, որ հոյակապ կերպով կը տիրապետէ շրջապատին վրայ:

Մենք ենք միայն, մենք չորսս, եւ կրնանք ժամերով յամենալ այստեղ, շնչել մեր լեռներուն օդը, յագենալ Վայոց ձորի գեղատեսիլ համայնապատկերներով:

Եկեղեցին իւրայատուկ սլացիկութիւն մը ունի: Իր մութ քարերով զօրաւոր հակադրութեան մէջ կը գտնուի պայծառ երկնքին դէմ առ դէմ: Ս. Ստեփանոսն է, որու կառուցումը աւարտած է 1273-ին, նախաձեռնութիւն՝ Պոռշեան իշխաններուն:



Գլաձոր – Եկեղեցին, վանք-համալսարանին աւերակները, ՀՕՄ-ի ծաղկոցի խորհրդանշանը դարձած ցածրաքանդակը ու լուսանկարիչ դուստրս պաշտօնի վրայ...

Եկեղեցիին շուրջ աւերակներն են, գետնին հաւասար, ուր կը կարդացուին սրահներու, դասարաններու, խուցերու յատակագիծերը: Գլաձոր համալսարանի մնացորդներն են:

Մնացած է նաեւ պեթոնէ հարթակ մը, հաւանաբար այն օրերէն, 80-ական թուականներու, երբ համալսարանի հիմնադրութեան բազմադարեան տարեդարձը կը նշուէր:

Բայց, պէտք է շարունակել: Ետ կիջնենք մեր եկած ճամբով, կանգ կ'առնենք Վերնաշէն գիւղը, ուրկէ մեղր պիտի գնենք: Արտաշ ծանօթ է բնակիչներէն մէկուն, եւ հակառակ որ տակաւին եղանակը չէ, մեղր կը ճարե՛նք իր քով: Գիւղական բարեկարգ տուն մըն է: Կակաչներու փոքր պարտէզ մը կայ մուտքին, ներսը՝ հայկական մեզի շատ հարազատ յարդարանք է, գորգերով, լուսանկարներով: Տանտիրուհին մեզի մեղր եւ խմիչք կը հրամցնէ, ապա կը գտնէ ապակի կճուճներ ու հինգ հատ կը լեցնէ մեզի համար: Ո՞վ էր, կը բացատրէր, որ երբ ընտիր մեղրը մեծ կաթի ամանի նման ամանէն շերտփով հանուի՝ կը ծորի կճուճին (կամ պնակին) մէջ՝ առանց փրթելու:

Մեր հոս տեսածը այդպէս ընտիր մեղր է: Չեմ կրնար չնկատել նաեւ, ննջարանին բաց

դռնեն, որ գիրքերու դէզ մը կայ անկողինի քովի փոքր պահարանին վրայ: Կը տեղեկանանք, որ տիկինը երգի ուսուցչուհի է եղած... իսկ տանտէրը, կամ իրենց զուակը՝ շրջան մը գիւղապետ էր, կամ ինչպէս հիմա կըսեն՝ համայնքապետ:

Յետոյ, մեզի հիմա արդէն այնքան ծանօթ M-2-ով կը վերադառնանք Երեւան, ճամբան նշմարելով Արենիի գողտրիկ եկեղեցին, Խոր վիրապը՝ Մասիսներու խորանկարին առջեւ, անկէ առաջ՝ ձկնաբուծութեան ասպանները, ճամբեգրին՝ պտուղ-բանջարեղէն վաճառողները եւ այլն, եւ այլն:

Երեկոն տարբեր անակնկալ մըն է վերապահած մեզի համար, – հրաւիրուած ենք դիտելու Նարեկ Դուրեանի «C'est la vie» մենաներկայացումը: Նարեկ Արագին հետ խօսած է, եւ խնդրած որ անպայման ներկայ ըլլանք: Թերեւս սիրենք եւ աշխատինք, որ Գանատա ալ գայ ու ներկայացնէ նոյն այս չափազանց խնդալիք եւ միեւնոյն ատեն չափազանց սուր եւ դիպուկ կատակերգութիւնը: Տեղի կունենայ Յ. Թումանեանի անուան Տիկնիկային թատրոնին մէջ՝ 4 Սայաթ Նովա փողոց: Թատերակը գրուած ու բեմադրուած է իր իսկ՝ Նարեկի կողմէ, իր 50-ամեակին առթիւ, ու ինքն ալ գայն կը խաղայ: Մեր բոլոր հարցերը մէջն են՝ հայրենիքէն հեռանալն ու հեռու ապրիլը, երոպական ու մանաւանդ ամերիկեան կեանքի անհեթեթութիւնները եւ այլն:

– Կը տեսնէք, որ հայաստանցիներու կեանքին չեմ դպչիր, բայց տեսնողը կը հասկնայ, որ ինչպէս կը քննադատեմ դուրսի այդ բարքերը, որոնք հոս ալ սկսած են որդեգրուիլ, – կը խոստովանի յետոյ մեզի Նարեկ, որ հիմա արդէն տարիներ է վեր Փարիզ «հաստատուած» է: Այո՛, կ'արժէ անպայման մեր քով ալ բեմադրել մեր իսկ առօրեայ կեանքին առնչուած է այս թատրոնը:

Ներկայացումէն ետք քալելով տուն պիտի վերադառնանք, մեզի հետ՝ երկու նոր գրքեր, որ ներկայացումէն առաջ

Լիլիթ Գալստեանը բերաւ մեզի յանձնեց թատերասրահին մուտքին. երկուքն ալ «Համազգային»-ի հրատարակութիւն են, մէկը իր եւ Արքմենիկ Նիկողոսեանի խմբագրութեամբ՝ «Անթողոզիա 18–33 -Արդի հայ արձակ» (Երեւան, 2009, 264 էջ), միւսը՝ Յակոբ Մողոմոնեանի թարգմանութեամբ՝ Օրհան Փամուքի «Զիւնը» (Երեւան, 2009, 408 էջ):



Մէկ գիրք ալ կուգեմ նշել այստեղ. դժբախտաբար չեմ արձանագրած քովս, թէ ո՞վ յանձնեց ինձի եւ ե՞րբ, բայց առաքողը հեղինակը ինքն էր՝ իմ հին ծանօթս, կորովի հրապարակագիր, իսկ հիմա նաեւ Ազգային ժողովի պատգամաւոր ընկի. Ռուզան Առաքելեանը, որ մէկ հատորի («Հաւատամք») մէջ է հաւաքել իր այն յօդուածները, ուր «քննութեան են

Վայքէն դէպի Երեւան



Ընտիր մեղր...

առնուած այն առանցքային հարցերը, որոնք արդիական եւ մտահոգիչ են» («Նայիրի» հրատ. Երեւան, 2008, 128 էջ):

Այո, գրադարանս կը հարստանայ տեւաբար...

Հանդարտ օր մը

2009-05-01, ուրբաթ

Առաջ մայիս 1-ը մենք «կարեւորութիւն» կը ներկայացնէր այստեղ, կը նշուէր որպէս բանուորութեան օրը, ինչպէս Եւրոպայի մէջ: Պաշտօնական հանդիսութիւններ, տողանցքներ եւ այլն: Հիմա, բացի փոքր համախմբումներէ հոս ու հոն՝ մասնաւոր աչքառու ոչինչ տեղի կ'ունենայ: Օրուան իմաստը այլեւս բան չը՝ սեր մարդոց հոգիներուն, մարդիկ դադրած են հաւատալէ ընկերային արդարութեան, թէ՛ պարզապէս նախորդ վարչակարգի թողած տխուր յիշատակները կը խանգարեն...

Այսօր աւելի հանդարտ են կ'առնենք մեր օրը, որ ամեն պարագայի բազմաթիւ հանդիպումներու առիթ պիտի ընծայէ, սկսելով, ինչպէս միշտ՝ Արթարիճէն, ժամը 10:00-ին: Նախաճաշի հրաւիրուած ենք Պաղտատեաններուն կողմէ: Տիրանին ընտանիքին անցեալ տարի ծանօթացանք: Նազիկին դասընկերուհիին գաւակն է, որ Լիբանանէն եկաւ ու Հայաստան հաստատուեցաւ, բոյն կ'ազմեց, գործ բացաւ: Չհանդիպիլ չէր ըլլար. ձագուկին՝ Մերլին մեծնալը տեսնել, իրենց լուրերը առնել, ուրախանալ իրենց յաջողութիւններով...

Ժամը 11:00-ին, նոյն վայրին մէջ ժամադրուած եմ Հայաստանի պետական Ա. ձայնասփիւռի թղթակից Աննա Սահակեանին հետ: Ճարտարապետական համաժողովին հանդիպած էինք, այդ մասին փոքր հարցազրոյց մը ունեցած տեղւոյն վրայ: Այժմ մեր խօսակցութիւնը կը շօշափէ երկու նիւթ, որոնք առանձնաբար պիտի ձայնասփռուին. մէկը՝ Գանատայի հայ գաղութը, իր կազմութեան օրերէն մինչեւ այսօր, իր հոգերով ու իր նուաճումներով: Միւսը՝ հայ դատը, Յեղասպանութեան ճանաչումէն մինչեւ հայ-թրքական յարաբերութիւններու ներկայ ընթացքը:

Մեր հարցազրոյցը մի քանի ընդմիջումներ ալ պիտի ունենայ. Գագիկ Յովհաննէսեան պիտի գայ ինծի փոխանցելու ամբողջ շաբթ մը հատորիկներ, «Շախմատային Հայաստան»-ի հրատարակութիւն՝ նուիրուած Հայաստանի ախոյաններուն եւ յաղթանակներուն՝ այդ մարզին մէջ. ապա Լարիսա Գեորգեան, գրական յաւելումի հաւատարիմ աշխատակիցս պիտի բերէ իր նոր վէպը՝ «Խիղճ» (Երեւան, Գասպրիստ հրատ. 2007, 440 էջ), թէ մեզի եւ թէ Մոնթրէալի «Համագային»-ի գրադարանին համար. հագիւ թէ մի քանի բառ պիտի կարենամ փոխանակել անոնց հետ:

Յաջորդ ժամադրութիւնս Գրիգոր Զանիկեանի հետ է, նոյնպէս սիրելի գրող մը, աշխատակից մը, գաղափարակից մը: Ստանձնած է մեր ողբացեալ ընկերոջ Ժիրայր Ղարիպեանի հարցազրոյցներու մէկ հատորին հրատարակութիւնը: Անշուշտ դժուարին յանձնառութիւն մըն է, իմբագրական հսկայ աշխատանք կայ կատարուելիք, եւ հակառակ Ժիրայրի կողակցին՝ Եւզինի ալ ամբողջական գործակցութեան եւ նուիրումին, Գրիգոր մարդուժի պէտք ունի. կը խոստանամ կարելիս ընել՝ այդ գործը յաջողութեամբ իրագործելու համար: Կը խօսինք նաեւ այլ ծրագիրներու մասին...

Անկէ ետք պահ մը Նազիկին հետ կ'անցնինք Լիզայէն, մեր ձեռքիները կը թողենք իր քով: Մեր բախտէն, «Գրքերու աշխարհ» գրատունը բաց է (մինչ Հրապարակին վրայ, «Նոյան

տապան»-ը՝ ոչ, քանի ամեն պարագայի տոնական օր է). կը մտնենք, կը փնտռենք ու կը գտնենք Մոնթրեալի մեր «Համագային»-ի գրադարանին խնդրած գիրքերը, սակայն նկատի առնելով ծաւալը՝ կը վերցնենք մի քանին միայն, եւ անոնք ալ վեր կը հանենք ու կը թողենք Լիզային, ապա իր ալ հետ, միասին քալելով կոլոդուինք «Square One»՝ այս մէկն ալ առանց հայերէն համագոր անուան («Քառակուսի մէկ», կամ «Հրապարակ մէկ»...), բայց եւ այնպէս հաճելի ճաշարանը, Արովեանի վրայ միշտ, ու կը տեղաւորուինք դուրսը՝ մայրի վրայ յարդարուած սեղաններէն մէկուն շուրջ:

Լիզան, գիտէք, մեր ընկերուհին է, Գանատայէն, որ հիմա արդէն տասնամեակ մըն է Հայաստան կ'ապրի ու իր կեանքի իմաստը ատո՛ր մէջ կը գտնէ: Պիտի խօսինք աջէն, ձախէն, հինէն, նորէն: Ան հօրաքրոջ, մօրաքրոջ դեր ալ կը խաղայ Արագին համար...


Ահա եւ Րաֆֆին ու Լարան (այս անգամ՝ Տուտագլեան), որոնք կ'անցնին մեր քովէն, իրենց ձագուկներուն հետ: Իրենց հետ հանդիպումը միշտ այսպէս պատահական է եղած: Անոնք ալ Գանատայէն եկած, հոս հաստատուած, հայաստանցի են դարձած: Իրենց հետ ալ շատ բան կ'այ խօսելիք...

Պահ մը կը վերադառնանք տուն, ուր Արագ ամբողջ օրը մաքրութիւն եւ լուացք էր ըրած: Սեփական յարկի տակ ապրիլը, այո՛, նման առաւելութիւններ ալ կ'ընձեռէ...

Կարինէ Աւագեանը, պատմաբան, գիտաշխատող, որուն հանդիպեր էի Ատանա-100 գիտաժողովին, կու գայ ու մեզի կը նուիրէ իր մէկ գիրքը՝ «Եղեռնայուշ մասունք կամ խոստովանողք եւ վկայք խաչի» (Զանգակ 97 - Մուղնի հրատ., Երեւան 2002, 122 էջ) եւ զայն ընդլայնելով (նոր տուեալներու հիման վրայ գրուած) յօդուած մը՝ «Չանդրըի 1915 թ. ապրիլ 11. յիշատակ... թանգարանային նմուշը» («Հանդէս ամսօրեայ» թիւ 1-12 (2008) - առանձնատիպ): Չափազանց խանդավառ է, որ նոր փաստեր կը գտնէ Մեծ եղեռնին վերաբերեալ իր աշխատանքները յառաջ տանելով:

Կը փորձենք վերջին անգամ մը եւս թատրոն երթալ, մեր ուզած ներկայացման տեղ չենք գտներ: Ուշ մնացած ենք:

Քալելով, Մատենադարանի ստորոտէն, կոլոդուինք դէպի տուն: Մի քանի անգամ քալած ենք այսպէս, Մաշտոցն ի վար, սակայն ամեն անգամ նորութիւններ կը յայտնաբերենք: Այս անգամ ուշադրութիւնս կը գրաւեն հին շէնքերը, իրենց կամարակապ, քանդակաշատ շքամուտքերով, որոնք յատուկ դրոշմ կու տան թէ՛ շէնքին, թէ՛ քաղաքին: Կը տեսնենք անհամար յուշատախտակները, երբեմն իրենք ալ քանդակուած, որ այս կամ այն անձնաւորութեան, յատկապէս գրողին, արուեստագէտին այդ շէնքին մէջ բնակած ըլլալը կը յայտնեն:



Հինը, որ պետք չէ կորսնցնենք... Յաջող ընդելուզում մը... Այստեղ ապրած է Վախթանգ Անանեան

Կը նկատենք հին եւ նոր շէնքերու երբեմն յաջող, երբեմն անյաջող ընդելուզումները, յարակցութիւնները:

Իսահակեան եւ Մոսկովեան փողոցներուն միջեւ երկարող կանաչ գօտին սկսող պուրակին մէջ, Կոմիտասի արձանին շուրջ մանուկներ կը վազվզեն, կը խաղան, կը ճռուողէն, եւ Կոմիտաս որքա՛ն երջանիկ կը թուի այդպէս, նստած ծառի մը կոճղին, հայեացքը դէպի ապագան յառած...

Երեկոյեան քանի մը հեռաձայնային խօսակցութիւններ՝ անոնց հետ, որոնց այս անգամ չենք կրցած տեսնել, կամ առնելու վերջին ժամադրութիւններ՝ վաղուան համար:

Կը մնայ մէկ օր՝ ամբողջացնելու համար այս ուղեւորութիւնը:

Եւ վերջին, նոյնպէս անմոռանալի օր մը

2009-05-02, շաբաթ

Եւ այսպէս՝ հասանք արդէն հայաստանեան մեր սոյն կեցութեան վերջին օրը. վերջինը՝ միշտ առաջին օրուան նման, նոր հանդիպումներու, նոր յայտնաբերումներու անյազ ակնկալութեամբ:

Կռահեցիք, Արթարիճէն պիտի սկսի մեր յայտագիրը: Կիրոն պիտի չկարենայ միանալ մեզի անհանգստութեան մը պատճառաւ: Նազիկն ու ես, սակայն, քալելով պիտի երթանք հոն, ուր մեզմէ առաջ արդէն տեղաւորուեր էին Արագն ու Լիզան:

Առաջինը՝ Դանիէլ Երաժիշտն է (Գրիգոր Դանիէլեանը), որ պիտի գայ. երրորդ տարին է, կը հանդիպիմ իրեն, ու մեր կապը աւելի ու աւելի կը սերտանայ: Ինձի կը յանձնէ իր նոր ստեղծագործութիւնը՝ Ապրիլ 24-ին նուիրուած, էսթոնացի բանաստեղծի մը խօսքերով, կը բերէ թէ՛ նոթաները եւ թէ՛ արձանագրութիւնը՝ Գեորգ Հաճեանի երգեցողութեամբ: Կը յայտնէ նաեւ, թէ Եղուարդ Միրզոյեան գրեր է «Չորս եղանակներ»-ը, հիմա հայկական տարբերակն ալ ունինք, կըսէ ուրախութեամբ՝ փայլփլող աչքերով, աւելցնելով, որ ասիկա կը հաղորդէ ինձի, որովհետեւ գիտէ, որ միշտ հետաքրքրուած եմ մեր նորութիւններով:

Յետոյ Մամուէլ Դանիէլեանին հետ սուրճ մը կ'առնեն:

«Հորիզոն»-ի գրական յաւելուածի խմբագրական կազմի պաշտօնակցիս՝ Էլիզա Չաքմաքչեանի թելադրութիւնն էր, եւ Երեւան հասնելու առաջին օրերէս կը փորձէի ժամադրուիլ բժիշկ Դանիէլեանի հետ, սակայն ահա ամենէն վերջին օրը միայն կարելի եղաւ հանդիպիլ: Ինքն ալ գրական-բանասիրական հետաքրքրութիւններ ունի եւ կրնայ աշխատակցիլ: Պիտի ուղարկեմ իրեն մեր յաւելուածի վերջին թիւերը՝ որպէսզի գաղափար մը ունենայ անոր բովանդակութեան մասին:

Հոս աւելցնեմ, որ աւելի կանուխ հեռաձայնով խօսեր էի «Ազգ»-ի մշակութային բաժնի պատասխանատու Մելանիա Բաղալեանի հետ, ու ինքն ալ պատրաստակամութիւն էր յայտնէր աշխատակցելու: Տեսնենք, եթէ այս բոլորը յարգեն իրենց խոստումները, մեր էջերը քիչ պիտի գան...

Մինչ կիսա ու աղջիկս զիրենք հետաքրքրող գործեր պիտի ընեն, ես մէկ-երկու ժամ մը ազատ թափառելու պատեհութիւնը ունիմ: Արթարիճէն, հանդարտ ճեմելով, կիջնեմ Աբովեանն ի վար, կը հասնիմ Հրապարակ: Նոյն տապան գրատունը կը փնտռեմ Հայաստանի ատլասի Բ. հատորը, որ պատմական Հայաստանի նուիրում պիտի ըլլայ: Առաջինը յատկացուած էր 1915-էն մինչեւ մեր օրերուն, ներառեալ ընդարձակուած Հայաստանը՝ ՀՀ եւ ԼՂՀ ու ազատագրուած տարածքներով. հոյակապ գործ մը: Այս նոր հատորը, որ լոյս տեսած է, գրատուները չի վաճառուիր: Հրատարակիչէն պէտք է ձեռք ձգել: Դարձեալ Կիրոն է, որ կը հասնի փրկութեան ու կը խոստանայ գտնել ու դրկել ինծի, ինչպէս ըրած էր այդ առաջին հատորին պարագային: Երախտապարտ պիտի մնամ...: Այս տողերը գրած ատենս ան արդէն յարգած է իր խոստումը...

Քանի մը քայլ եւս, ու կը մտնեմ պետական պատկերասրահ, դիտելու Մինաս Աւետիսեանի ցուցահանդէսը: Մինասը խորհրդային օրերու մեր գոհերէն է: Իր գործերէն շատեր փճացուած են: Լաւ որ նման ցուցահանդէս սարքելու համար բաւարար նիւթ ալ փրկուած է: Հետաքրքրական էր տեսնել իր զուակը, որ ճիշտ ու ճիշտ հօրը պատկերն է:

Ապա կանցնիմ Հանրապետութեան փողոց, կը հանդիպիմ «Երկիր»-ի խմբագրատունը. շատ մարդ չկայ, բայց հոն է ընկ. Ռուբէն Մարգարեանը՝ նորանշանակ խմբագիրը, որ բարեհամբոյր ու աշխատունակ մարդու տպաւորութիւն կը ձգէ վրայ: Մի քիչ կը զրուցենք:

Ձրոյց կունենամ նաեւ «Դրօշակ»ի խմբագրատունը՝ խմբագիր ընկ. Կարէն Խանլարեանի եւ աշխատակից ընկ. Գեորգ Խուսիսեանի հետ: Նիւթերը՝ օրուան հրատապ հարցերը, կառավարութենէն մեր քաջուիլը, հայելութիւնը յարաբերութիւնները եւ այլն, եւ այլն: Այս տողոց հետ կարելի է ժամեր ու ժամեր խօսակցիլ:

Արագն ու Նազիկն ալ, մեր վարորդ ընկերոջ՝ Արտաշին հետ, հեռու չեն բարեբախտաբար, կանցնին զիս ալ կը վերցնեն, կերթանք տուն՝ կարճ դադար մը առնելու եւ ճամպրուկները լեցնելու համար: Յետոյ, արագ, վերստին պիտի իջնենք՝ այս անգամ Արտաշին տունը երթալու համար:



Արա Սարգիսեան եւ Օննիկ Աւետիսեան՝ լուռ հերոսները

Սակայն, անկէ առաջ պիտի անցնինք կարելոր ուխտավայրէ մը՝ մօտակայ տուն-թանգարաններէն Յակոբ Կոջոյեանի եւ Արա Սարգսեանի, որոնք դրկից էին եւ միեւնոյն շէնքին բնակիչները (կողք-կողքի կամ վեր-վար): Թէեւ բացման ժամը անցած է, սակայն մեզի համար կը մնան եւ կը պտտցնեն ամեն կողմ: Կոջոյեանի պատասխանատու տիկինը ուուսախօս է, բայց լռիկ-մնջիկ կընկերանայ մեզի:

Կոջոյեանը խորհրդային շրջանի առաջին տասնամեակներուն մեծանուն գեղանկարիչ էր, իր իւրայատուկ ոճով եւ կարելի է ըսել բացառաբար ազգային բնանիւթերով արտայայտուած (Սասունցի Դաւիթ, Վարդանանց, եւ այլն): Իր գործերով նկարագարողուած են մեր դասական թէ արդի գրականութեան շատ երկեր:

Արա Սարգսեան ուրիշ հանգամանք մը կ'ունենայ մեզի համար այս անգամ: Մենք կու գանք այցելելու մեր ժամանակակից պատմութեան ամենէն կարելոր իրադարձութիւններէն՝ «Նեմեսիս գործողութեան» լուռ դերակատարներէն մէկուն տունը: Արդարեւ անուանի քանդակագործը եւ իր ընկերը՝ գեղանկարիչ Օննիկ Աւետիսեանը (նկարչութեան ուսուցիչս), իրենց ուսանողութեան օրերուն՝ անցեալ դարու 20-ական թուականներուն մասնակից եղած են թուրք դահճապետներու ահաբեկման սուրբ գործին՝ որպէս սուրհանդակ:

Կըսուի թէ Սարգսեան, որ բարձրագոյն պատիւներու հասած արուեստագէտ էր սովետներու օրով, իր կեանքի վերջին օրերուն, երբ հանգամանքներու բերումով գիտցուած է այդ իրողութիւնը, աննշան անհանգստութեան մը պատճառաւ հիւանդանոց մտնելէ ետք՝ հոն իսկ մեռած է խորհրդաւոր պայմաններու տակ:



Բաֆֆի... Բացատրությունները կունկնդրենք Թեքեանի հայեացքին տակ... Չարենց

Հակառակ որ շատ անյարմար օր է (Արայի զուակը՝ Արմենը մահացած է ու անյո օրն է թաղումը կատարուած), թողը՝ Աննան սիրով մեզ կընդունի ու երկու գիրք կը նուիրէ, մէկը մեծ հօր նուիրուած, խորհրդային օրերու փոքր պլոմ մը, միւսը՝ ռուսերէն, Նեմեսիս գործողութեան վերաբերեալ: Իսկ թանգարանը մեզ կը պտտցնէ Աննայի զարմուհին ու մանրամասն բացատրություններ կու տայ: Նաեւ առանց կաշկանդումի կը նկարենք մեծ վարպետի մեծ գործերը՝ Բաֆֆիին ու բազմաթիւ այլոց կիսանդրիները, ներառեալ Օննիկ Աւետիսեանիներ եւ Ալեքսանտր Սարուխանիներ:

Յետոյ պտուղի եւ քաղցրաւենիքի առատ սեղան մը, Արտաշին տունը, կնոջ՝ Մարգրիտին, աղջիկներուն՝ Այտային եւ Սիւզիին ներկայութեան: Նոյնիսկ Այտային մանչուկն ալ հոն է: Ընտանեկան մտերմիկ ջերմ պահ մը կը վայելենք, կը համտեսենք այնքան համեղ թխուածքներն ու Հայաստանի պտուղները:

Ապա քալելով պիտի վերադառնանք տուն, եւ ճամբան, ուրկէ՛ ուր, մեզի պիտի միանայ ու ընկերանայ նաեւ Արագին ընկերուհին՝ Անին, որուն հայրը՝ Աշոտը իր հետ մեզի նուէր մը դրկեր է՝ Ս. Գրիգոր Նարեկացիի «Մատեան ողբերգութեան»ը (Նարեկ), Լեզալ պլիւս հրատ., Երեւան, 2008, 484 էջ), աշխարհաբարի (արդի հայերէնի) վերածուած Աշոտ Պետրոսեանի կողմէ (ամբողջութեամբ դասական ուղղագրութեամբ): Շատ արժէքաւոր նուէր մը, որուն համար երբ կը հեռաձայնեմ Աշոտին՝ շնորհակալ ըլլալու համար, ան ուրիշ աւելի կարեւոր նուէր մըն ալ կընէ ըսելով՝ «Արագին համար անհոգ եղէք»,– այսինքն՝ եթէ որեւէ բանի պէտք ունենայ, մանաւանդ ծնողական խորհուրդի՝ իրենք հոն են...

Վերջին պատրաստութիւնները կը տեսնենք՝ առաւօտ կանուխ մեկնելու համար:

Վերադա՞րձ



2009-05-03, կիրակի

Երևանի Զուարթնոց օդակայանը: Պաշտօնական ձեռակերպությունները արագ կրնթանան, եւ մինչեւ թռիչքի ժամը, կամ աւելի ճիշտ՝ նստումի հրաւերը, մեզի ընկերացած Արազին ու Արտաշին հետ սուրճ մը կ'առնենք Արարատին դէմ յանդիման՝ ա՛յստեղի Square One սրճարանը...

Մեզի հետ Հայաստանէն կը վերադառնան նաեւ խումբ մը աստղագէտներ ու ֆիզիկոսներ, Գերմանիայէն ու Ֆրանսայէն, որոնք համագումարի են եկած մեր երկիրը: Ասիկա հպարտութեամբ կը լեցնէ մեր հոգիները...

Կը վերադառնանք Սոնթրէալ: Կը վարանիմ ըսելու կը վերադառնանք տուն: Ահա այդ իսկ պատճառաւ ալ պարոյկ մը կայ խորագրին վրայ:

Իրապէս ո՞ր կէրթանք, ինչո՞ւ կէրթանք...



2009-07-23, հինգշաբթի

Այսօր, մեր «վերադարձ»-ն երկուքուկէս ամիս ետք, երբ կ'աւարտեմ այս ուղեգրութիւնը, կամ ուղեպատումը (որպէս համազօրը անգլերէն travelogue-ին), անելի մը առաջնորդող այդ հարցադրումը չեմ ուզեր վերստին ընել ձեր, – մե՛ր, ի՛մ, – առջեւ: Բայց չեմ կրնար այլ հարցումներ չտալ ես ինձի ե՛ւ ձեզի, սիրելի ընթերցողներ:

Առաջին եւ գլխաւոր հարցումը սա է. այդ ինչպէ՞ս կ'ըլլայ, որ չենք յաջողիր աւելի հզօր հայրենիք մը կերտել ազգովին:

Երկրորդ հարցումը՝ այլապէս ունի՞նք այլընտրանք:

Առաջին հարցումը չի մեկնիր այն ժխտական տպաւորութենէն, որ կրնաք ենթադրել որ ունեցած եմ իմ այս վեցերորդ ուղեւորութենէն: Ընդհակառակն, հակառակ ամեն ինչի, իւրաքանչիւր այցելութենէ ետք կը վերադառնամ աւելի համոզուած, որ մեր «մի կտոր երկիր»-ը յառաջընթացի մեջ է: Հարցը, որ կը դրուի, այն է, թէ ինչո՞ւ աւելի մեծ ու հաստատ քայլերով տեղի չունենար այդ յառաջընթացը:

Անշուշտ կան արտաքին ազդակներ, կան արտաքին ուժեր՝ թշնամի եւ «բարեկամ», որոնք պիտի ամեն ինչ ընեն, որ այդ՝ այդպէ՛ս մնայ, ու իրենք կարենան աւելի մեծ հակակշիռ ունենալ Հայաստանի զարգացման վրայ: Չեմ կրնար ըսել, որ անտեսենք այդ ազդակները, ընդհակառակն, ամեն գնով պիտի պայքարինք հակազդելու համար մեզ կաշկանդող ուժերուն: Այդ, սակայն, քաղաքական հարց է, եւ այդ մասին մտահոգուիլ՝ կը թողում մեր երկրի իշխանութիւններուն, քաղաքական կեանքի մեջ դերակատար մեր կուսակցութիւններուն, հիմնարկներուն եւ այդ հարցերու հմուտ մեր մտաւորականներուն, հրապարակագիրներուն:

Բայց ես կը տեսնեմ նաեւ ներքին ազդակներ՝ ներազգային գործօններ, որոնց մասին բոլո՛րս պարտաւոր ենք մտածել:

Արդ, ինչպէ՞ս կ'ըլլայ, որ Հայաստանի վերանկախացումէն ահա արդէն 18 տարի ետք տակաւին բոլորս չենք, որ բոլորուած ենք մեր հայրենիքին շուրջ, բոլորս չենք, որ անվերապահօրէն զօրավիզ ենք անոր:

Կրնանք պատճառաբանութիւններ գտնել, բայց ընդունինք, որ ուրիշին աչքի շիւղը մատնանշելէ առաջ պէտք է տեսնենք մեր աչքի գերանը:



Եւ այդ գերանը ունի պատմական հիմքեր, ժառանգութիւն՝ խորհրդային օրերէն: Եւ խօսքս Հայաստանի եւ հայրենաբնակ մեր ազգակիցներուն չի վերաբերիր, կամ ամենէն առաջ անոնց չի վերաբերեր:

Այդ՝ հակախորհրդային, հակահամայնավար այն ուժեղ, անստեղիտալի կեցուածքն էր, որ Սփիւռքը (իմա՝ իմ պատկանած կուսակցութիւնը) ցոյց տուաւ մեր երկրի արիւնը քանդող, մեր ազգային արժէքները ոտնակոխ ընող, մեր Դատը ուրացող վարչակարգին հանդէպ, որ, փա՛ռք Աստուծոյ, փուլ եկաւ 1991-ին: Այդ ժամանակ, յանուն ազգային արժէքներու պահպանման, մենք չէինք կրնար այլ կեցուածք որդեգրել, սակայն կար մետալին միւս երեսն ալ: Վարչակարգին դէմ կեցուածքը ոչ միայն շահագործուեցաւ մեր դէմ, մեզի հակադրեալ ուժերու կողմէ, այլեւ մեր մէջ ստեղծեց Հայաստանի եւ հայոց պետականութեան դէմ տրամադրութիւններ, որոնք կը յամենան մինչեւ այսօր, հակառակ անոր, որ խորհրդային վերջին շրջանին Դաշնակցութիւնը ճի՛գ ըրաւ ըստ արժանւոյն գնահատելու դրական իրագործումները:

Նոյն կացութիւնը ստեղծուեցաւ, դժբախտաբար, նորանկախ Հայաստանի առաջին կառավարութիւններուն օրով, եւ իշխանաւորներու հակադաշնակցական մոլուցքը խրամատ մը յառաջացուց մեր հոգիներէն ներս, անգամ մը եւս մեզ խզեց իրարմէ:

Հայաստանի հանդէպ անվստահութիւն ու վերապահութիւն ստեղծուեցաւ նաեւ հայրենի իրականութեան ժխտական երեւոյթներուն ի հետեւանք. կաշառակերութիւնը, փտախտը, օրէնքի գիտակցութեան պակասը եւ մասամբ նորին պատճառ եղան, որ մեզմէ շատեր, շատ շատեր խանդավառութիւն ցոյց չտան Հայաստանի եւ Հայաստանէն եկող ամեն ինչի նկատմամբ:

Սակայն, ի վերջոյ անհրաժեշտ է անջատել երկիրն ու պետականութիւնը իշխանութենէն ու իշխանաւորներէն, նոյնիսկ քաղաքացիներէն:



(լուսանկարը՝ Արագ Արթինեանի)

Այո՛, տակաւին չէ կայացած ամենայն հայոց կառավարութիւնը, այո՛, բոլոր հայաստանցիները չէ, որ միշտ անկեղծ են, անշահախնդիր, երբ կը յարաբերին Սփիւռքի ու սփիւռքահայերու հետ: Սակայն նոյնը կարելի չէ՞ ըսել սփիւռքահայերուն մասին՝ հակառակ ուղղութեամբ կամ որեւէ այլ ժողովուրդի մասին... Անհրաժեշտ է ձերբազատիլ մեր բոլոր նախապաշարումներէն:

Երկրորդ, կը մտածե՞նք, թէ ի՛նչ կրնայ ըլլալ այլընտրանքը, եթէ չյաջողինք հայրենիքը դարձնել մեր էութեան առանցքը, եթէ Հայաստանը, Արցախն ու Ջաւախքը, այլեւ բանագրաւուած ամբողջ Արեւմտեան Հայաստանը չդառնայ իւրաքանչիւր հայու, իւրաքանչիւր դաշնակցականի, բոլոր կազմակերպութիւններու ամեն մէկ անդամի առօրեայ կեանքին մասը եւ գոյութեան իմաստը...

Վերադա՞րձ... մտածենք ա՛յս վերադարձին մասին:



(լուսանկարը՝ Արագ Արթինեանի)



(լուսանկարը՝ Արագ Արթինեանի)

(Հորիզոն, 2009-05-11 – 2009-09-28)

Վերջ կամ նոր սկիզբ